ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

12

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆ 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

# THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

# ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

А 97790 II

12

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ 78

ARCH. MESROB ASHJIAN BOOK SERIES 78

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ
Պատմության ինստիտուտ
2011

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Հ 282

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա.Ա. Խառատյան, պ.գ.դ. Է.Լ. Դանիելյան, պ.գ.դ. Է.Ա. Կոստանդյան, պ.գ.թ., դոցենտ Կ.Հ. Խաչատրյան, պ.գ.թ., դոցենտ Հ.Ղ. Մուրադյան, պ.գ.թ. Ա.Վ. Մաղալյան, պ.գ.թ. Հ.Կ. Սուքիասյան:

**Հ 282** Հայոց պատմության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու /Խմբ. խորհուրդ՝ Ա. Մելքոնյան, Ա. Խառատյան, Է. Դանիելյան, Է. Կոստանդյան, Կ. Խաչատրյան, Հ. Մուրադյան, Ա. Մաղալյան, Հ. Սուքիասյան. - Եր.: Պատմ. ինստ., 2011.- 272 էջ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» խորագրով գիտական հոդվածների ժողովածուի 12-րդ հատորում զետեղված աշխատություններն աղբյուրագիտական, արխիվային փաստաթղթերի և մամուլի հրապարակումների, պատմագիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց հին, միջնադարյան, նոր և նորագույն պատմության առանձին հիմնահարցերի վրա:

Ժողովածուում զետեղված են նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների 32-րդ նստաշրջանի (3-4 հուլիսի, 2011 թ.) գիտական զեկուցումները:

Նախատեսված է մասնագետ-պատմաբանների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-99941-73-64-8

©ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԼԻՍԱ ԴՈՒՍԻԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# ՏԱՅՔԸ (ԴԱՅԱԵՆԻ/ ԴԻԱՈՒԽԻ) ՍԵՊԱԳԻՐ ԵՎ ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Տայքը հին ժամանակներից եղել է Հայաստանի նահանգներից մեկը: Տայքի մասին տեղեկություններ են պահպանվել ասուրական ու բիայնական (արարատյան՝ ուրարտական) սեպագիր արձանագրություններում և հին հունական ու հայկական միջնադարյան սկզբնաղբյուրներում:

Հայկական լեռնաշխարհի արևմտյան մի շարք շրջանները ներխուժած ասորեստանյան արքաներ Թիգլաթպալասար I-ի (մ.թ.ա. 1115-1077 թթ.) և Սալմանասար III-ի (մ.թ.ա. 859-824 թթ.) արձանագրություններում հիշատակվում է Daiaeni (կամ Daiani) տեղանունը: Թիգլաթպալասար I-ի դեմ դուրս էին եկել Նաիրիի *երկրների* (ասուր.՝ mātāti(pl) Nairi) 23, իսկ մեկ այլ դեպքում՝ 60 *արքաները*, որոնց թվում նաև Daiaeni *երկրի արքան* էր[1]: Ա. Մեյսը

[1] King L.W., The Annals of the Kings of Assyria, London, 1902, vol. I, col. IV, 82-83, 96-97, p. 67- 68; col V, 9, 22, 29, p. 69-71: Luckenbill D.D., Ancient Records of Assyria and Babylonia, Chicago, v. I, 1926, p. 81, 82. Խնդրո առարկա սեպագիր և անտիկ սկզբնաղբյուրներում կիրառվող «երկիր» հասկացության առնչությամբ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ օրինակ՝ հին հունարենում *χώρα* բառն ունի «երկիր», «տարածք, շրջան» և այլ նշանակություններ (Liddell H.G., Scott R., Greek-English Lexicon, Oxford, 1996, p. 2015): Կղավդիոս Պտղոմեոսը նկարագրելով Մեծ Հայքը՝ նշել է. «Χῶραι δὲ εἶσιν ἐν τῇ Ἀρμενίᾳ...», որը լատիներեն թարգմանված է. «Regiones sunt Armeniae...» (Ptol. V.12. 4, p. 937): Հունական սկզբնաղբյուրներում այդպիսի փաստի ուշադրություն է դարձրել Հ. Բարթիկյանը՝ գրելով. «Բյուզանդական սկզբնաղբյուրներում հայկական «աշ-

Վանի՝ Մինուա (մ.թ.ա. 810-786 թթ.) և Արգիշտի I (մ.թ.ա. 786-764 թթ.) արքաների արձանագրությունները վերծանելիս, հիշատակելով ասսուրական արձանագրությունների Dayaeni (Daiaeni)-ն, կարծիք է հայտնել, որ այն համապատասխանում էր «Diaus անունով արքայի և նրա սերունդների թագավորությանը»[2]: Այդպիսի կարծիք է հայտնել նաև Ն. Ադոնցը՝ նշելով որ Թիգլաթպալասար II-ի (պետք է լինի Թիգլաթպալասար I-ին - Ա.Դ.) նվաճած երկրների մեծ մասը (օր.՝ Daiaeni, Abaeni և այլն), ունեին «հայրանվանական անուններ»[3]:

Բիայնական սեպագիր արձանագրություններում Diau(e)ḫe անվանաձևի հետ գործածված է *ті*՝ արական անձի դետերմինատիվը՝ LUGAL[4] («թագավոր»), KUR (*«երկիր»)* և URU («քաղաք,

---

խարհ»-ը փոխանցվում կամ թարգմանվում է χώρα», օրինակ՝ «Περὶ τῆς χώρας τοῦ Ταρῶν» (Constantine Porphyrogenitus. De administrando imperio. Greek Text edited by Gy. Moravcsik, Budapest, 1949, p. 188) (տես՝ Бартикян Р., О царском кураторе «ΜΑΝΖΗΚΕΡΤ ΚΑΙ ΕΣΩ ΙΒΗΡΙΑΣ» Михаиле в связи с восточной политикой Василия II (976-1025 гг.), - Պատմա-բանասիրական հանդես, 2000, N 1, էջ 131, ծան. 8): Ն. Ադոնցը հենվելով «Աշխարհացոյց»-ում *Տարուբերան աշխարհի* կապակցությամբ հիշատակվող «որ է Տարաւն» արտահայտության վրա՝ նշել է. «Таруберан определяется им» (այսինքն՝ Տարոն գավառով) (Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 309: Հմմտ. Երեմյան Ս.Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 85, 107):

[2] Sayce A.H., The Cuneiform Inscriptions of Van. - The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland (JRAS), London, 1882, p. 399, 544, հմմտ. Sandalgian J., Les inscriptions cunéiformes urartiques, Venise, 1900, p. 59.

[3] Adontz N., Histoire d'Arménie, Les origines du X[e] siècle au VI[e] (av. J. C.), Paris, 1946, p. 220.

[4] Ըստ Գր. Ղափանցյանի, սեպագրերում «թագավոր» տերմինը նույն բովանդակությունը չի ունեցել, քանի որ «ուրարտական «թագավոր» բառը ոչ միայն հնչվել է ereli, այլև ծագմամբ նշանակել է «ժողովրդապետ» և թերևս «ցեղապետ»: Այսպիսի ենթադրության համար նա բառի առաջին մասը՝ er-ը համարել է «ցեղ, ժողովուրդ», իսկ ereli՝ «ցեղապետ, ժողովրդապետ»: Գր. Ղափանցյանի մեկ այլ ենթադրությամբ՝ «եղել է և երկրորդ բառ, «թագավոր» նշանակությամբ և LUGAL դետերմինատիվով և հնչվել է *nu*՝ «արքա-իշխան» իմաստով»: Օրինակ բերելով Արգիշտի I-ի Խոռխոռյան արձանագրությունից հետևյալ տողը՝ -uštadi [m]Diaueḫiniedi LUGAL [m]Diaueḫi LUGAL-nu duubi[4] (col. I, 6), որը նա վերծանել է՝ «արշավեցի Դիաուայան ցեղի դեմ, թագավորին Դիաու ցեղի արքա արի», Գր. Ղափանցյանը ենթադրել է, որ այս *nu*-ն վասալական առումով է կիրառված (Գր.

քնակավայր») հետերոգրամների ուղեկցությամբ (վերջիններս հանդես են գալիս նաև որպես դետերմինատիվներ)[5]:

Ըստ Գ. Մելիքիշվիլու, ասորեստանյան սեպագրության I *(m)* անձի նշանն ուրարտական արձանագրություններում *ցեղ* նշանակություն ունի: Նա այդպես է եզրակացրել չհամաձայնելով Ի. Մեշչանինովի և Ա. Սեյսի այն կարծիքին, որ «Սարդուրի II-ի մի արձանագրությունում հիշատակված ururdani բառի մեջ ասորեստանյան Urartu-ի ուրարտական համարժեքն է»[6]: Գ. Մելիքիշվիլին այդ եզրահանգման պատճառ է համարել ururdani բառից առաջ օգտագործված AMELU[7] դետերմինատիվը, որն ինչպես ինքն

Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Ե., 1940, էջ 84-85 ): Սակայն, Ն. Հարությունյանը նշել է՝ «LUGAL-nu–«թագավոր»՝ հնչյունական - nu լրացումով հետերոգրամի ուրարտական համապատասխանությունը... Ուրարտական er(i)eli բառի հոմանիշ նույն նշանակությամբ » (տես՝ Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Е. 2001, с. 420, 443): Գր. Ղափանցյանը նույնացնելով Dayaeni և Diau(e)hi անվանաձևերը *Տայքի* հետ՝ միևնույն ժամանակ, Թիգլաթպալասար I-ի հիշատակած Նաիրիի 23 կամ 60 «երկրների» ստումով նշել է *ցեղեր* և *ցեղապետեր* (Ղափանցյան Գր., նշվ. աշխ., էջ 84: Հմմտ. Թուկուլթի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. 1244- մոտ 1208 թթ.) հիշատակության մեկնությունը՝ История древнего Востока, ч. II, М., 1988, с. 102, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Ե., 1971, էջ 282, այսուհետ՝ ՀԺՊ), նաև գրելով՝ «անշուշտ, խոսքը *ցեղերի* կամ *տոհմերի* քանակի մասին է», «դաշնությունը գլխավորում էր Dayaeni շրջանի արքան» (Капанцян Г.А., Историко-лингвистические работы, т. II, Е., 1975, с. 86-92): Այնինչ, ասորեստանյան արձանագրությունների matatu-ն նշանակում է «երկրներ» [The Assyrian Dictionary, Chicago (այսուհետ՝ CAD), 1977, vol. 10, part I, p. 414-415 (s. matu (Ibid.,); ... *mat Nairi* (CAD, 1980, vol. 11, part I, p. 254, 2006, vol. 18, p. 154-155)՝ Նաիրի երկիր (ՀԺՊ, էջ 283)] և չի կարող մեկնվել որպես «ցեղեր»:

5 Sayce A.H., op. cit., p. 421-422. Հմմտ. Арутюнян Н.В., Корпус..., с. 408-410, 418-419, 424.

6 Ա. Սեյսը Ururdani բառը Ararat ձևով է կարդացել (Sayce A. H., Some New Vannic Inscriptions - JRAS, London, 1929, p. 333, 335): Համաձայն Ի. Մեշչանինովի՝ խոսքը «ուրարտացիների» մասին է: (Мещанинов И.И., Шураа и Урурдан в клинописных памятниках Ванского бассейна, Доклады Академии наук, Серия B, 1924, с. 19-22).

7 Ըստ Ռ. Լաբայի՝ 𒇽 *homme* («մարդ») դրվում է մարդկանց հավաքական անունների (էթնիկական, մասնագիտությունների անվանումներ և այլն) առջև՝ «շում. lu, աքքադ. amil» (տես՝ Labat R., Manuel d'epigraphie akkadienne, Paris,

է նշում, «ասորեստանյան սեպագրության մեջ դրվում է մասնագիտությունների և ցեղերի անվանումներից առաջ»: Միաժամանակ, նա անընդունելի է համարել  -amelu դետերմինատիվի ընդգրկումը Ա. Սեյսի[8] և Ի. Մեշչանինովի[9] ուրարտական սեպագիր նշանների ցանկերում, որպես ցեղանունների դետերմինատիվ, քանի որ «ուրարտական տեքստերում իրեն չի հաջողվել գտնել գոնե մեկ դեպք, որ այդ դետերմինատիվը լինի ժողովրդի կամ ցեղային անվանման առջև»[10]: Սակայն Գ. Մելիքիշվիլու հիշատակած «ուրարտական գրում հազվադեպ օգտագործվող» այդ դետերմինատիվը, որին նա նույնական է համարել մեկ այլ ասորեստանյան սեպանշան . Ա. Սեյսի հետազոտությունում չունի *ցեղանունների* դետերմինատիվի նշանակություն, քանի որ վերջինս  դետերմինատիվը վերծանել է որպես people («մարդիկ»՝ «ժողովուրդ»), իսկ  ՝ man («մարդ»)[11]: *Ցեղ* նշանակության համար Ա. Սեյսը նշել է  (language[12], tribe) սեպանշանը[13]: Հետևա-

---

1952, p. 26, 151, հմմտ., Samuel A.B. Mecer, Introductory Assyrian Grammar, Dover Publications, 2003, p. 12).

[8] Sayce A.H., JRAS, 1882, p. 419-422.

[9] Мещанинов И.И., Халдоведение, Б., 1927, с. 74-75.

[10] Меликишвили Г.А., К вопросу о древнейшем очаге урартских племен// Вестник древней истории, (այսուհետ՝ ВДИ), N 4 (22), М., 1947, с. 26, прим. 2. Գ. Մելիքիշվիլին LÚurdani-ի կապակցությամբ LÚ դետերմինատիվի նշանակությունների մասին գրել է՝ «մասնագիտություններ, մարդկանց խմբեր և կատեգորիաներ» (Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, М., 1960, с. 289, այսուհետ՝ УКН): Ն. Հարությունյանը Սարդուրի II-ի նշված արձանագրության քարգմանությունում վերծանում է «ուրուրդացիներ» Մեշչանինովի վերոհիշյալ տեսակետի հիման վրա, իսկ բաղացանկում հետևելով Ֆ. Քյոնինգի կարծիքին, հնարավոր է համարում, որ LÚurdani-ին մասնագիտության անվանում է (König F.W., Handbuch der chaldischen Inschriften, II, Graz, 1957, տես՝ Арутюнян Н.В., Корпус…, с. 247, 473):

[11] Sayce A.H., op. cit., p. 421-422, տես նաև՝ Мещанинов И.И., ук. соч., с. 74-75, Дьяконов И.М., Урартские письма и документы, 1963, М.-Л., с. 99, 113: Տես նաև՝ anīlu (CAD,1968, vol. 1, part II, p. 48).

[12] Հմմտ. Labat R., Op. cit., p. 55.

[13] Sayce A.H., op. cit., p. 421. Հմմտ. “language, special language or dialect, nationality, person or people speaking a (foreign) language” (CAD, 1973, vol. 9, p. 213).

քար, *m* արական անձի դետերմինատիվը ուրարտական արձանագրություններում որպես ցեղանունների դետերմինատիվ օգտագործման մասին Գ. Մելիքիշվիլու ենթադրությունը բավարար հիմքեր չունի[14]:

Համաձայն Ն. Ադոնցի, -ḫi վերջավորությամբ հատուկ անունները, որոնք կիրառված են որպես լրացումներ, «ստանում են ածականի[15] ձև կամ գործածվում են որպես բացահայտիչ, օրինակ՝ «Eriaḫini ebani» «Էրիախիական երկիր»: Ուստի, «–ḫi-ով հայրանվանական Diau(e)ḫi, Abeliani/eḫi, Eriaḫi անվանումները գործածված են նաև որպես աշխարհագրական տերմիններ»[16]: Միաժամանակ, Ն. Ադոնցը -ḫi-ն[17] համարել է «էթնիկական ածանց», որը հանդիպում է «...հարավում՝ Ուրարտուի և Ասորեստանի միջև չեզոք գոտում բազմաթիվ անուններում, ինչպիսիք են Kutmu-ḫi, Bab-ḫi»[18]: Եզրակացնելով՝ Ն. Ադոնցը գրել է. «Ընդհանուր մի շարք անուններ բնորոշվում են -ḫi, -(i)ni, կամ -ḫi –ni, -zi, -ri վերջավորություններով: Ուրարտուի հյուսիսում գտնվող ամենակարևոր ցեղերը, որոնք թշնամի էին Տուշպայի տերերի գերիշխանությանը, կոչվում էին Diaue-ḫi, Eria-ḫi, Abiliani-ḫi և այլն»[19]:

Ըստ Գ. Մելիքիշվիլու՝ -ḫ$^{i}$/e(ni)-ն պատկանելություն արտահայտող ածանց է, որը «հաճախ հանդիպում է ցեղանունների վերջավորության դերում, որոնք, հավանաբար իմաստավորվում են

[14] Ն. Հարությունյանը նույնպես Դայաենիին նույնացնում է Դիաուխիի հետ (Арутюнян Н.В., Топонимика Урарту.. Е., 1985, с.70-71)՝ m-ն նշելով որպես ցեղանունների դետերմինատիվ: Նույնի՝ Корпус ..., с. 410, 503):

[15] Adontz N., Op. cit., p. 260. Ն. Ադոնցի գրքի հայերեն թարգմանությունում բնագրի՝ «la forme adjective» («ածականի ձևը») արտահայտությունը թարգմանված է «սեռականի ձև», ինչպես նաև չի թարգմանված «les patronymiques» բառը (Ադոնց Ն., Հայաստանի պատմություն: Ակունքները X-VI դդ. մ. թ. ա., Ե., 1972, էջ 260):

[16] Adontz N., Op. cit., p. 260.

[17] Հայերեն թարգմանությունում «-ni» է՝ ֆրանսերեն բնագրի «-ḫi»-ի փոխարեն (Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 270):

[18] Adontz N., Op. cit., p. 271.

[19] Ibid.

որպես «այսինչի (անվանդիր-նախնիի, աստծո) որդի»[20]: $^{m}$Diau(e)ḫi[21], $^{m}$Abeliani/eḫi, $^{m}$Eriaḫi, $^{m}$Erikuaḫi, $^{m}$Iganeḫi անվանաձևերի դիմաց արական անձնանունների *m* դետերմինատիվը, ըստ Գ. Մելիքիշվիլու, ցեղանունների դետերմինատիվ է[22]: Այս եղանակով նա ցեղանուններ է համարել արձանագրություններում m՝ անձի դետերմինատիվով հիշատակվող գրեթե բոլոր տեղանունները[23]՝ արդյունքում բազմաթիվ աշխարհագրական անուններ դիտելով որպես ցեղերի և ցեղային միությունների անվանումներ:

---

[20] Меликишвили Г.А., УКН, с. 51, 424.

[21] Ըստ Հ. Կարագյոզյանի, ավանդական ընթերցմամբ հայտնի *Դիաուեխի* երկրանունն անհրաժեշտ է վերծանել *Տեյավեխե* ($^{m}$Te-i-a-ú-e-ḫe): $^{KUR}$Daiaeni և $^{m}$Teiaueḫe տեղանունների լեզվական քննության արդյունքում նա եզրակացրել է. «$^{KUR}$Daiaenu-Տայք ենթադրյալ զուգահեռը առայժմ հնարավոր չէ հիմնավորել լեզվական ոչ մի օրինաչափությամբ, այն թերևս պատահական նմանության հետևանք է և հակառակը՝ $^{m}$Teiaueḫe > Տայք անցումը հաստատվում է վերին աստիճանի ճշգրտությամբ՝ ուրարտա-հայկական հնչյունական օրենքներին համապատասխան»: Հետազոտողը գտնում է, որ անհրաժեշտ է տարբերակել *Դայաենու* և *Տեյավեխե* «երկրները», քանի որ ասուրական աղբյուրներում հիշատակվող *Դայաենուն* տեղադրվում է Արածանի գետի ավազանում, իսկ *Տեյավեխեն*՝ իրականում, Ճորոխ գետի ավազանում գտնվող Տայքն է (Կարագյոզյան Հ., Սեպագիր աղբյուրների Դայաենու երկիրը, - «Լրաբեր», հաս. գիտ., 1978, N 6, էջ 71, 94: Տես նույնի՝ Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, Սեպագիր տեղանուններ, h. 1, գիրք 1, Ե., 1998, էջ 187-188): Ա. Սագոնան ենթադրելով Daiaeni-ի և Diau(e)hi-ի նույնությունը, նշել է նաև այլ կարծիքներ (տես՝ Sagona A.G., Archaeology at the North-East Anatolian Frontier. - Ancient Near Eastern Studies, Suppliment 14, Herent, 2004, p. 30, 34, այս վերնագրում «հյուսիս-արևելյան Անատոլիա» տերմինը սխալ կերպով կիրառված է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասի վերաբերյալ): Ըստ Ռ. Բարնետի, «որոշ հեղինակներ բավականին անհիմնորեն Dayaenu-ն նույնացնում են հետագա Diaue(khi) ուրարտացիների անվանած թագավորությանը, որոնք կարող են նույն այն ժողովուրդը լինել, որին հանդիպել էր Քսենոփոնը IV դարի (պետք է լինի մ.թ.ա. V դարի-Ա.Դ.) վերջին՝ Ταόχοι անվանումով» (Barnett R.D., The Cambridge Ancient History. Urartu. Vol. 3. 2008. p. 330. com. 123):

[22] УКН, с. 51-52, Հենվելով Գ. Մելիքիշվիլու տեսակետի վրա, որ $^{m}$Diau(e)ḫi-ն ցեղանուն է (УКН, с. 424), Մ. Սալվինին Dayaeni-ն նույնպես նույնացնելով Diau(e)ḫi-ի հետ, նշել է, որ Թիգլաթպալասար I-ի արձանագրություններում Նաիրիի «երկրների» արքաները «ցեղապետեր» են (Mirjo Salvini. Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt. 1995. S. 22. 54):

[23] Բացառություն կազմող անվանումներից են $^{m}$ կամ $^{KUR}$Igani. $^{m}$ կամ $^{KUR}$Išqigulu: $^{m}$I-ga-ni-e-ḫi-ին Գ. Մելիքիշվիլին վերծանում է, որպես «իգանիացի»՝ «иганиец »

Ի. Դյակոնովը անդրադառնալով -ḫe/-ḫi- ածանցի գործառույթին՝ նշել է, որ օրինակ՝ «$^{KUR}$Eriaḫe սովորաբար, փոխանցվում է որպես գոյական անուն «Էրիախի», մինչդեռ այն ածական է՝ «Էրիական», հմմտ. նաև $^{URU}$meliteal ḫe՝ «մելիտեցիներին, Մելիտեա քաղաքի բնակիչներին պատկանող», այլ ոչ թե՝ «Մելիտեալխի» քաղաք»[24]: Մինչդեռ նա նշում է, որ Տայքի տարածքում «ապրած ցեղի անվանումը, ինչպես ասորեստանյան (Դայաենի), այնպես էլ ուրարտական (Դիաուեխի)[25] և հունական (Տաոխոյ)[26]

(УКН, 155C$_{52}$, с. 302. 430; հմմտ., Арутюнян Н.В., Корпус ..., с. 509): Išqiguhi անվանման հարցում Ն. Հարությունյանը հետևել է Ֆ. Քյոնիգի և Պ. Զիմանսկու վերծանմանը՝ ընթերցելով $^{KUR}$Išqigulḫie. առանց $^{m}$դետերմինատիվի (տես. հոլովով «(страны) Ишкугулхи», տես՝ Арутюнян. Н.В. Корпус..., с. 331, 511): Գ. Մելիքիշվիլին այն ընթերցել է LUGAL $^{m}$Išqigulḫie «царь Ишкугулхи » (УКН, 286. с. 348. 432).

24 Дьяконов И.М., Урартские письма и документы, М.-Л., 1963, с. 30.

25 Գ. Մելիքիշվիլին $^{m}$Diau(e)ḫi-ն խուրրիերեն էթնոնիմ է ենթադրել՝ գրելով, թե Նուզիի արձանագրություններում հիշատակվող «Taiuki» խուրրիական անունը, հնարավոր է հենց «Tai(uki)» ձևով Daia(e)ni ‖ Diau(e)ḫi անվան նախատիպն է: Նա ենթադրել է, որ տեղական ձևը եղել է Daiuḫi (Daioḫi) կամ նույնիսկ Daiuki (Daioki) (Меликишвили Г.А., *Диаухи*// ВДИ, 1950, N 4, с. 30): Այնինչ, «Taiuki»-ն խուրրիական բազմաթիվ անձնանուններից մեկն է (տես՝ Gelb I.J., Nuzi Personal Names, Chicago, 1943, p. 144-145): Նուզիի (Առապխայի հարևանությամբ) արխիվներում պահպանված արձանագրություններում հիշատակվող այդ անձնանվան համեմատությունը տեղանվան հետ պատահական բնույթի է: Գ. Մելիքիշվիլու մի վերապահման համաձայն՝ -ḫi/ ḫa և (i/a, u)ni վերջածանցները եղել են տեղական անվանաձևերում (ըստ իր կարծիքի՝ դրանց միայն մի մասում) «և չեն կցվել ուրարտացիների կողմից», իսկ հետագայում շարունակել են գոյությունը հայկական շրջանների անուններում (Меликишвили Г., *Диаухи*, с. 30):

26 Է. Հերցֆելդը հիմք ընդունելով Ταόχοι=*Տայք* նույնացման կապակցությամբ Հ. Հյուբշմանի տեսակետը (Hübschmann H., Die altarmenischen Ortsnamen, Strasburg, 1904, S. 276-277)՝ նույնական է համարել՝ Daiaeni-Diaue-Ταόχοι-Տայքը (Herzfeld E., The Persian Empire, Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968, p. 119, 121): Բ. Պիոտրովսկին նշել է. «Կասկած չի հարուցում Դիաուեխի երկրի ուրարտերեն անվան (ասորեստանյան Դայանի) կապը հույն պատմիչների *Տաոխների* և միջնադարյան *Տայք* շրջանի միջև» (Пиотровский Б.Б., Ванское царство (Урарту), М., 1959, с. 31). Գ. Ջահուկյանը հետազոտելով ուրարտա-հայկական հնչյունական համապատասխանությունների և քերականական առանձնահատկությունների խնդիրը՝ նշել է, որ սեպագիր արձանագրությունների *d*-ն հայերենում արտասանվում է *տ*՝ Diau(e)ḫi–ի Tiau(e)ḫi, որով և բացատրվում է Տայք անվանաձևը: Իսկ «ուրարտական

տարբերակներում ունի խուրրի-ուրարտական -ini, -ḫi վերջավորություն, ընդ որում հունարեն փոխանցումը, որը հազիվ թե առաջացած լիներ ուրարտական ավանդույթից, հավանաբար, վերարտադրում է ինքնանվանումը: Խուրիերեն լեզվի համար բնորոշ է նաև բառասկզբի դ || տ հերթագայում»[27]:

Գ. Վիլհելմը -ḫe ածանցի կիրառման վերաբերյալ գրել է, որ այն կազմում է պատկանելություն արտահայտող ածականներ՝ «օգտագործվելով նաև աշխարհագրական անունների և ցեղանունների հետ [օրինակ՝ Abiliane=ḫə ebanə «Աբիլիանիի երկիր» (ցեղանուն /անձնանուն), Diaue=ḫə «Դիաուե-ական [արքա]»)]», իսկ -ḫə ածանցով հայրանունների կազմությունը համարել է որպես խուրրիերենում զուգահեռ չունեցող (Argiste=ḫə «Արգիշտիի որդի», Išpuine=ḫə, Minua=ḫə, Rusa= ḫə, Sardure= ḫə)[28]: Գ. Վիլհելմը նշում է -ḫə ածանցով բառակազմության հանգամանքը նաև հասարակ անուններից, օրինակ՝ babana=ḫə «լեռնային» բառը և այլն[29]: Ըստ այդմ, «ուրարտերենում -ḫe(-ḫi-)-ն լինելով պատկանելու-

---

հատկացական ḫi/e ածանցը, որ հաճախադեպ է տեղանունների մեջ և հունարեն արտահայտվում է χ-ով (հմմտ. Diau(e)ḫi-Ταόχοι), հայերի կողմից կարող էր ընկալվել որպես հոգնակերտ *ք*-ի համարժեք և արտահայտվել նրա միջոցով՝ Abiliani/eḫe-Աբեղյեանք, Diau(e)ḫi-Տայք և այլն» (Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան, Ե., 1987, էջ 430, 438): Ταόχοι անվան հետ միջնադարյան սկզբնաղբյուրների հիշատակությունները համեմատելիս որոշ հետազոտողներ նախ բերում են վրացական «Տաո» ձևը, ապա միայն՝ հայկական սկզբնաղբյուրների՝ *Տայք* անվանումը (УКН, с. 424; Меликишвили Г.А., Диаухи, с. 26-42; Sagona A.G., Op. cit., p. 36 և ուրիշներ): Սակայն հայտնի է, որ Տայքի հիշատակությունը հայկական սկզբնաղբյուրներում ավելի վաղ է:

[27] Համաձայն Ի. Դյակոնովի, «խուրրիական ցեղանունները կարող էին գոյություն ունենալ այս շրջանում նաև տեղի բնակիչների կողմից խուրրիերեն լեզվի կորուստից հետո, ինչպես նաև չի բացառվում, որ տաոխների ցեղը ժամանակի ընթացքում վրացականացվել է (ճանացվել): Արդյունքում սույն տարածքը հայճանական սերտ հարաբերությունների վայր էր» (Дьяконов И.М., Предыстория армянского народа, Е., 1968, с. 16, сн. 15): Այդպիսի մեկնաբանմամբ խեղաթյուրվում է հայկական Տայք աշխարհի (նահանգ) պատմությունը:

[28] Wilhelm G., Urartian. The Ancient Languages of Asia Minor. Cambridge. 2008. Chapter 10. p. 111.

[29] Wilhelm G., Urartian. The Ancient Languages of Asia Minor. Cambridge. 2004. Chapter 5. p. 125.

թյուն ցույց տվող (ածականակերտ) ածանց[30]՝ ᵐDiau(e)=ḫe անվանման ուղիղ ձևն է ᵐDiau(e)»[31]:

Այսպիսով, արարատյան՝ ուրարտական տեքստերում արական սեռի անձնանունների m դետերմինատիվով և -ḫe(-ḫi-) պատկանելիություն ցույց տվող ածանցով մի կողմից ունենք ᵐArgiste=ḫe «Արգիշտ-յան/ական (Արգիշտիի որդի)», ᵐIspuuine=ḫe «Իշպուին-յան/ական (Իշպուինիի որդի)» և այլն, իսկ մյուս կողմից՝ ᵐ/ᴷᵁᴿAbeliane=ḫe «Աբելիան-յան/ական/ցի», ᵐDiaue=ḫe «Դիաու(ե)-յան/ական/ցի» և այլն: Ինչից չի հետևում, որ վերջիններըը ցեղանուններ են:

Հայկական սկզբնաղբյուրներում Տայք տեղանվան հետ մեկտեղ հիշատակվող *տայեցիք* հասկացությունը Հայաստանի այս տարածքի հայ բնակչության տեղանվանական անվանաձևն է, այլ ոչ թե ցեղանուն, ինչպես երևում է նաև այլ նահանգների (զուգարացիք, մոկացիք)[32] ու գավառների անուններով հայ բնակչության հիշատակություններից: Այդ մասին առավել ցայտուն վկայություն է պարունակում Սեբեոսի (VII դ.) աշխատությունը՝ «Ապերացիքն..., և Մանաղայքն, և Դարանաղայքն, և որք յեկե-

---

[30] Մ. Խաչիկյանը, նշում է, որ ուրարտերենում արդյունավետ էր աշխարհագրական անվանումների ձևավորումն անձնանուններից -ḫə ածանցի միջոցով որոշյալ առումի՝ հոգնակի թվով բացարձակ հոլովի վերջավորության զուգակցությամբ. Rusa-ḫi/e-ne-lə («Ռուսախինելե (քաղաք)»), Argište-ḫi/e-ne-lə («Արգիշտեխինելե (քաղաք)»): Նա հավանական է համարում՝ որ նման ձևով, բայց առանց /-nə/ հոդի, ուրարտերենում ձևավորվել է աշխարհագրական կամ էթնիկական պատկանելության /-ḫalə// -lḫə/ածանցը, որը ստուգաբանորեն կապված է խուրրիական nomina actoris ձևութաամասնիկին (օրինակ՝ /Meliṭè-al-ḫə/ «մելիտեական»; /Komaha-ˡḫə/ «կոմախական») (Хачикян М.Л., Хурритский и урартский языки, Е., 1985, с. 67-68).

[31] Այվազյան Ս., Ուրարտերեն-հայերեն, Ե., 2008, էջ 135, 225-226: Հետազոտողը Գ. Մելիքիշվիլու կողմից LUGAL ᵐDiaueḫi արտահայտության՝ «արքա Դիաուեխի-ի» թարգմանության (УКН, $36_{12-13}$, с. 158) փոխարեն առաջարկել է՝ «... արքան (տոհմ) Դիաուե-ական/յան/ցի»՝ ᵐDiaue-ն համարելով անվան ուղիղ ձևը: Իսկ ըստ Մ. Սալվինիի, ᵐDiaueḫi նշանակում է «Diaue-ի ցեղ» (la tribu del Diau) (Mario Salvini, Corpus dei testi Urartei, vol. I, Roma, 2008, p. 190):

[32] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 114, 331:

ղեաց գաւառէ... և Կարնեացիք, և Տայեցիք, և Բասենցիք... Շիրա-կացիք...»[33]:

Գ. Մելիքիշվիլին նշելով, որ մ.թ.ա. II հազարամյակի կեսերին «Եփրատ գետի վերին hոսանքում գտնվող» Հայասայի բնակիչ-ները էին հայկական ցեղերը, միևնույն ժամանակ, առանց որևէ սկզբնաղբյուրային հիմքի, նրանց վաղեմի հարևաններ է հիշա-տակել «վրացական ցեղերին»[34]: Այնուհետև գրել է, որ մ.թ.ա. XII դ. «պատմական Վրաստանի հարավ-արևմտյան մասի տարածքում առաջացել էր ցեղերի խոշոր միություն, որն ասորեստանյան սկզբնաղբյուրներում անվանվում էր Daiaeni, իսկ ուրարտակա-նում՝ Diauehi-ի... այստեղ էլ ավելի ուշ գտնվել է հին վրացական *Տաո* նահանգը (հին հայկական սկզբնաղբյուրների *Տայքը*), որի անունը, անշուշտ, հասնում է մինչև Daiaeni - Diauehi - Ταόχοι[35]

[33] Պատմութիւն Սեբէոսի, Ե., 1979, էջ 165: Հմմտ. Ստեփանոս Սյունեցու (VIII դ.) /հաղորդումը հայերենի և նրա եզերական բարբառների («...զբառսն զեզերա-կանս, որպէս զԿորճայն եւ զՏայեցին եւ զԽութային եւ զՉորրորդ-Հայեցին եւ զՍպերացին եւ զՍիւնին եւ զԱրցախային...») մասին («Մեկնութիւն քերակա-նին» - տես՝ Ադոնց Ն., Դիոնիսիոս Թրակացին եւ հայ մեկնութիւնք նորին. – Երկեր, հ. Գ, Երևան, 2008, էջ 187):

[34] Меликишвили Г.А., К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 170-171.

[35] Գ. Մելիքիշվիլին որպես սկզբնաղբյուրներ նշել է Քսենոփոնի և Սոֆայնետոսի աշխատությունները: Անհրաժեշտ է նշել, որ Քսենոփոնը Ταόχοι հիշատակելիս ἔθνος-*ցեղ* բառը չի օգտագործել. «Καὶ Καρδούχους καὶ Ταόχους καὶ Χαλδαίους καίπερ βασιλέως οὐχ ὑπηκόους ὄντας ὅμως καὶ μάλα φοβερους...» (Xenophon, Anabasis, V.5.17; տես նաև՝ IV.4.18; 7.1): Իսկ Ստեփանոս Բյուզանդացին (VI դ.) հիշատակելով Ταόχοι [որպես սկզբնաղբյուր նշել է՝ «Σοφαίνετος ἐν τῇ ἀναβάσει φησί»: Ենթադրվում է, որ վերջինս Սոֆայնետոս Ստիմփալոսցին է, որին վերագրվում է նույնպես «Անաբասիս» անունով մի երկ, որից «չորս չնչին պատառիկներ են պահպանվել» Ստեփանոսի երկում (Gwynn A., Xenophon and Sophaenetus// Classical Quarterly, 23, 1929, p. 38-39, տես՝ Azoulay V., *Exchange and Entrapment: Mercenary Xenophon?* in *The Long March. Xenophon and the Ten Thousand*, New Haven, 2004, p. 289-304)]՝ օգտագործել է *ἔθνος* բառը (Stephani Byzantii Ethnicorum quae supersunt ex recensione A. Meinekii, t. 1, Berolini, 1849, p. 602), որը բյուզանդական սկզբնաղբյուրներում կիրառվում էր նաև *իշխանություն* (principality) իմաստով (օրինակ՝ բուն հայկական Ծոփք, Անձիտ, Հաշտեանք, Անգեղտուն, Բալահովիտ *ինքնավար իշխանությունները* բյուզանդական պաշ-տոնական փաստաթղթերում կոչվում էին *ἔθνη* և *gentes*, տես՝ Адонц Н., ук. соч., с. 29): Հայաստանի պարսկա-բյուզանդական երկրորդ բաժանումից (591թ.)

անվանումը»[36]: Այսպես աղավաղելով Հայաստանի հյուսիս-արևմտյան տարածքների՝ Տայքի և Բարձր Հայքի Կարինի (Էրզրում) շրջանի պատմաաշխարհագրական պատկերը, նա շարունակել է. «Diau(e)ḫi-ի երկրի տարածքը պետք է փնտրել պատմական Վրաստանի հարավ-արևմտյան շրջաններում... Ըստ ասուրական և ուրարտական սկզբնաղբյուրների, ժամանակակից Էրզրում քաղաքի և Արևմտյան Եփրատ գետի վերին հոսանքի շրջանը, թվում է թե արդեն մտնում էր Դիաուխիի մեջ»[37]:

Հին և վաղմիջնադարյան սկզբնաղբյուրներում հիշատակվող Տայքի, ինչպես նաև Կղարջքի մասին տեղեկությունների աղավաղումը և այդ տարածքները որպես «պատմական Վրաստանի հարավ-արևմտյան շրջաններ» ներկայացնելու կեղծիքը[38] ներկայումս շարունակվում է վրաց պատմագիտության և քարտեզագրության

---

հետո Մավրիկիոս կայսրը վարչա-տարածքային փոփոխությունների ընթացքում Տայք նահանգը կոչեց *Խորագույն Հայք* (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 68):

36 Հմմտ. УКН, с. 424, տես նաև՝ Меликишвили Г.А., *Диаухи*, с. 26-42: Հակառակ այդպիսի կարծիքի, օրինակ՝ «Վրաց ժամանակագրության» հայերեն թարգմանությունում Պ. Մուրադյանը պահպանել է Հայոց տեղանունները՝ Տայք, Կղարջք, Ջավախք, Թռեղք, Արտահան, Սպեր, Կարս, Կարին, Նախիջևան, Գեղարքունյաց և Արարատյան լեռներ, Այրարատ, Անի, Բարերդ, Բագավան, Բասեն, Բջնի, Գագ, Գանձակ, Գառնի, Դվին («Վրաց ժամանակագրություն» (1207-1318 թթ.): Թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Ե., 1971, էջ 66, 88, 109, 124, 129-130, 169):

37 Меликишвили Г.А., К истории древней Грузии, с. 176.

38 Գ. Մելիքիշվիլու խմբագրությամբ «Վրաստանի պատմություն» գրքի I-ին հատորում, Diau(e)ḫi անվանումը ներկայացվել է «Դիաոխի» ձևով, և կրկին հիշատակվել է իբրև «հին Վրաստանի հարավ-արևմուտքում» գտնվող՝ մինչև «ներկայիս Էրզրում քաղաքի շրջանը» ձգվող տարածք: Նույն հատորում օգտագործված է հայկական Տայք և Կղարջք տեղանունների «Տաո-Կլարջեթի» աղավաղված ձևը (История Грузии, т. I, Т., 1962, с. 28-30, 129; К истории древней Грузии, с. 136, տես նաև՝ Матиане Картлиса (Перевод, введение и примечания Лордкипанидзе М.Д.), Т., 1976, с. 8, տես նաև՝ Рамишвили П., Социально-политическая история Грузии – տես՝ Очерки истории стран Южного Кавказа, Мультиперспективный взгляд на историю, Е., 2009, с. 75, 80 և այլն):

մեջ[39]: Իսկ իրականում, ըստ հին հունական[40] և վաղմիջնադարյան հայկական սկզբնաղբյուրների, Վիրքը (Ἰβηρία) տեղադրված էր Հայաստանից հյուսիս և նրանց միջև սահմանը անցնում էր Կուր գետով: Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ի[41] համաձայն, Տայքը Մեծ Հայքի տասնչորսերորդ աշխարհն (նահանգ) է, Կղարջքը՝ Մեծ Հայքի տասներեքերորդ աշխարհի՝ Գուգարքի արևմուտքում գտնվող գավառը: Տայքի արևելքում գտնվող Կող գավառի *Կրի ակունք* գյուղից են բխում Կուրի աղբյուրները, այնուհետև գետը հոսում է Գուգարքի գավառներով և կազմում Հայաստանի հյուսիսային սահմանը՝[42] Վիրքի հետ: Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ «Աշխարհ Վիրք, յելից կալով Եգերայ, յերի Սարմատիոյ,

---

[39] Атлас Грузинской ССР, М., 1964, с. 245-250, Лордкипанидзе О., Наследие древней Грузии, Т., 1989, с. 32, Бахтадзе М.А., Вачнадзе М., Гурули В., История Грузии (с древнейших времен до наших дней), 2000 (http://krotov.info/lib_sec/04_g/ruz/ia_kr2.htm) և այլն:

[40] Strabo, Geographica, ed. A. Meineke, Leipzig: Teubner., 1877, I.3.21; VI. 4.2; XI.3.2, Ptol., V.10.1; 11.3; 12.1:

[41] «Աշխարհացոյց»-ի միջնադարյան ձեռագրերի մեծ մասը պահպանել է Մովսես Խորենացու անունը, որպես հեղինակ: Դեռևս XVIII-XIX դդ. մի շարք հետազոտողներ Մովսես Խորենացուն նշել են որպես V դ. պատմիչ՝ «Պատմութիւն Հայոց»-ի ու «Աշխարհացոյց»-ի հեղինակ (Mosis Chorenensis Historiae Armeniacae. Libri III. Praefatio... Accedit ejusdem Scriptoris Epitome Geographiae. Armeniace ediderunt, Latine verterunt, notísque illustrarunt Gulielmus & Georgius, Gul. Whistoni Filii, Londini, 1736; The London Encyclopaedia, vol. XV, L., 1829, p. 172, History of Armenia by Father Michael Chamich, translated from the original Armenian by Johannes Avdall, vol. I, Calcutta, 1827, p. 27, Langlois V., Collection des historiens anciens et moderns de l'Armnnie, Paris, 1867, v. 1, p. 385 և այլն): Հետազոտությունները ցույց են տալիս, որ Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ը խմբագրել և շարունակել է Անանիա Շիրակացին VII դարում (տես՝ Մուշեղյան Ա., նշվ. աշխ., էջ 111, 124, Դանիելյան Է.Լ., Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դդ.), Ե., 2000, էջ 37):

[42] Հատկանշական է, որ, Փավստոս Բուզանդը Հայոց զորավար Մուշեղ Մամիկոնյանի IV դարի 60-ական թթ. վերջում ծավալած գործունեության, մասնավորապես, Մեծ Հայքի թագավորության հյուսիսային սահմանի վերականգնման վերաբերյալ գրել է. «Եւ զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր…» (Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ե., 1987, էջ 322):

առ Կաւկասով, մինչեւ ցԱղուանից[43] սահման, եւ մինչեւ ցՀայոց սահման՝ առ Կուր գետովն»[44]:

Հայ պատմագրության մեջ Տայքի մասին վաղ տեղեկություն է պահպանել Մովսես Խորենացին (V դ.)՝ հաղորդելով, որ Վաղարշակ թագավորը. «կարգէ զկողմանս Մաժաքայ և զՊոնտացիս և զԵգերացիս. դառնայ զհիւսիսեաւ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց... գեղեցիկ իմն կարգելով զերկիրն...»[45]: Տայքի մասին Մովսես Խորենացու[46], ինչպես նաև մյուս հայ վաղմիջնադարյան պատմիչների՝ Փավստոս Բուզանդի[47], Եղիշեի[48], Ղազար Փարպեցու[49], Սեբեոսի[50], Հովհան Մամիկոնյանի[51], Ղևոնդի[52] Մովսէս Կաղանկատվացու[53] Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումները վկայում են Տայքի՝ հնուց Հայոց թագավորության նահանգներից մեկը, ինչպես նաև հայ նախարարական (Մամիկոնյաններ, Բագրատունիներ) ու հզոր իշխանությունների տիրույթը լինելու մասին[54]:

---

[43] Կուր գետի ձախ ափին՝ «... զբուն աշխարհն Աղուանից» (Երեմյան Ս. Տ. , նշվ. աշխ., էջ 105):

[44] Նույն տեղում, էջ 104:

[45] Մովսէս Խորենացի, էջ 108: Վաղարշակ թագավորը, ըստ Պատմահոր, եղբայրն էր պարթևական «Արշակ Մեծի» (ըստ Սարգսյանի Գ.Խ.՝ Միհրդատ I, մ.թ.ա. 170-139 թթ.), որի օրոք տեղի ունեցավ պարթևական թագավորության ընդարձակումը (Мовсес Хоренаци, История Армении, перев. с древнеарм. яз., введение и прим. Г. Саркисяна, Е., 1990, с. 222, прим. 56): Ա. Մուշեղյանը նշելով Յ. Մարկվարտի տեսակետը, ի դեմս ավանդական Վաղարշակի տեսնում է «Հայաստանի թագավոր Տրդատ I-ին՝ պարթև թագավոր Վաղարշ I-ի եղբորը» (Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, Ե., 2007, էջ 222):

[46] Մովսէս Խորենացի, էջ 313:

[47] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 106, 200:

[48] Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1989, էջ 54, 256, 428:

[49] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Ե., 1982, էջ 100, 172-174, 224, 266:

[50] Պատմութիւն Սեբէոսի, Ե., 1979, էջ 144, 146 165-169,175:

[51] Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Ե., 1941, էջ 280:

[52] Պատմութիւն Ղեւոնդեայ, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 26, 123, 168:

[53] Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983, էջ 122:

[54] Տես՝ Адонц Н., ук. соч., с. 231, 309, 403. Յովհաննէսեան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ - Ս. Ղազար, 1970, էջ 608, Հայ ժողովրդի պատմություն, h.

Տայք աշխարհի գավառների մասին «Աշխարհացոյց»-ում, հետևյալ տեղեկությունն է հաղորդվում. «Չորեքտասներորդ [աշխարհ] Տայք առ երի կայ Գուգարաց, ամրոցօք եւ բերդօք կառուցեալ, եւ ունի գաւառս ութ. զԿող յելից կուսէ, յորմէ բղխեն աղբիւրք գետոյն Կուրայ... ըստ մտից Կողայ՝ Բերդացփոր, Պարտիզացփոր, զԾակս... եւ ըստ հարաւոյ՝ զԲուղխա, զՈքաղէ, զԱզորդացփոր իւրեանց գետակօք, որք յիրար անկեալ իջանեն ի Յոհ (Ճորոխ). որոց ըստ մտից Արսեացփոր առ Պարխար լերամբն, ընդ որ իջանէ Յոհ, գալով ի Սպերայ, անցանէ առ Թուխարս բերդով ի Կլարջս, եւ անտի յԵգր ...»[55]:

---

III, Ե., 1976, էջ 35, 37, 48, 96, 107, Դանիելյան Է.Լ., Հայոց պատմական և քաղաքակրթական արժեհամակարգի պաշտպանության անհրաժեշտությունը. «Լրաբեր», հաս. գիտ., Ե., 2010, N 3, էջ 72 և այլ:

[55] Երեմյան Ս.Տ., նշվ. աշխ., էջ 110: Օտար հեղինակներից առաջիններից էին ֆրանսիացի հետազոտողներ Ժան Սեն-Մարտենը (1791-1832 թթ.) և Մարի Բրոսեն (1802-1880 թթ.), որոնք Հայաստանի պատմա-քաղաքական աշխարհագրությանն անդրադառնալիս՝ իրենց հետազոտական և թարգմանական աշխատություններում հենվելով հայկական սկզբնաղբյուրների, Միքայել Չամչյանի ու Ղուկաս Ինճիճյանի աշխատությունների վրա (Միքայէլ Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 208, Ղուկաս Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս. Ա, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 58), Մեծ Հայքի հյուսիսային նահանգներից հատուկ ուշադրություն են դարձրել Տայքի աշխարհագրական բնութագրի վրա: Սեն-Մարտենը գրել է. «Տայք (Տայոց) աշխարհը գտնվում էր Բարձ Հայքից հյուսիս-արևելք՝ Արարատ (իմա՝ Այրարատ-Ա.Դ.) աշխարհից հյուսիս, Գուգարքից արևմուտք, Խաղտիք և Լազիկա երկրներից արևելք... Կոլխիդայից (Կողքիս) և Իբերիայից (Վիրք) հարավ... Տայք նահանգը նախքան վրացիների ներխուժումը [Սեն-Մարտենն ուշ ժամանակների առումով նշել է, որ «վրացիների տիրապետումն ուժգնորեն հանգեցրել է նախկին՝ այստեղ գործածական անվանումների անհետացմանը և վրացերեն անունների ներմուծմանը» (Saint-Martin M. J.. Mémoire historique et géographique sur l'Arménie, t. I, Paris, 1818, p. 74, 76)] բաժանված էր 8 փոքր գավառների [Սեն-Մարտենը հիշատակելով Տայք նահանգի գավառներից Կողը, Բերդացփորը, Պարտիզացվորը, Ոքաղեն, և Բողխան, վերջինիս *Poukha* ձևով նույնացրել է Կղավդիոս Պտղոմեոսի (83-161 թթ.) Βόχας-ի հետ (Claudii Ptolemaei Geographia. vol. I. pars secunda. Parisiis. 1901. V.12.4. Saint-Martin M. J.. op. cit.. p. 76): Մ. Բրոսեն նշել է, որ Ճորոխի վերին ավազանում գտնվող *Հայոց Տայք* անվանման հոգնակի ձևը համապատասխանում է Քսենոփոնի Ταόχοι անվանաձևին (Brosset M., Histoire de la Georgie depuis l'antiquite jusqu'au XIX^e siecle, St.-Petersbourg. 1858. p. VIII. հմմտ. «*Հայ* անունը ըստ Պ. Կրեչմերի», - «Հանդէս

Հայ պատմիչների հաղորդումների շարքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Սեբեոսի տեղեկություններին, ինչպես Վարազտիրոց Բագրատունու Բյուզանդիայից 646 թ.[56] վերադարձի («եկն և ամրացաւ ի Հայս ի Տայս»[57]), այնպես էլ 647 թ. Հայաստան կատարված արաբական ներխուժման (խալիֆայության զորքը ասպատակելով Այրարատ նահանգը, հասավ «ի կողմանս Տայոց») և այնտեղից «Վրաց և Աղուանից» (բուն Աղուանք) կողմերն արշավելու կապակցությամբ[58]:

Այսպիսով, հայ վաղմիջնադարյան պատմիչների հաղորդումները վկայում են, որ Տայքը հնագույն ժամանակներից եղել է Հայոց աշխարհի հյուսիսային մասի կարևորագույն նահանգը:

## Եզրակացություններ

Հայկական վաղմիջնադարյան սկզբնաղբյուրների համաձայն, Տայքը հին ժամանակներից եղել է Հայաստանի նահանգներից մեկը:

Ասորեստանյան սեպագիր արձանագրություններում Daiaeni-ն

---

ամսօրեայ», 1933, N 7-8, էջ 429 [քաղվածաբար թարգմանություն՝ Պ. Կրեչմերի հոդվածից, տես՝ Kretschmer P.. Der nationale Name der Armenier// Anzeiger. 69. Jahrgang. 1932. Wien. 1933, էջ 28-36]: Թովմա Արծրունու և Անանունի «Պատմութիւն Տանն Արծրունեաց» երկի ֆրանսերեն իր թարգմանության ծանոթագրություններում Մ. Բրոսեն անդրադառնալով *Տայաստան* (Թովմա Արծրունու և Անանունի Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ե., 1985, էջ 455) անվանաձևին՝ նշել է, որ այն ընդգրկել է ամբողջությամբ Տայք նահանգը (la province entiere de Taik) (Brosset M., Collection d'historiens armeniens, Th. Ardzrouni. X$^e$ s.. Histoire des Ardzrouni. St.-Petersbourg, 1874, p. 236, com. 1, տես նաև՝ Даниелян Э.Л., Историко-географические комментарии М. Броссе к его переводам армянских источников. – Գիտական աշխատություններ, Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան, հաս. գիտ., պրակ առաջին, Ե., էջ 126-131):

[56] Բյուզանդական Կոստանդին (Կոստաս՝ Կոնստանս) II կայսեր (641-668 թթ.) գահակալության հինգերորդ տարում (Սեբեոս, էջ 144):

[57] Նույն տեղում: Մերձակա Տայքի Իշխան գյուղը նշել է որպես Ներսես Գ. Շինարար կաթողիկոսի (641–661 թթ.) ծննդավայր (Սեբէոս, էջ 165, Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1913, հ. Ա, էջ 730):

[58] Սեբէոս, էջ 146:



A 97790
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ

հիշատակվում է *Նաիրիի երկրների*, այսինքն՝ *Նաիրի երկրի* շրջանների թվում, ուստի, Daiaeni-ի հետ համադրվող բիայնական (արարատյան՝ ուրարտական) սեպագիր աղբյուրների Diau(e)ḫe-ն նույնպես այդ կարգի տեղանուններին է պատկանում:

Պատմագրության մեջ արտահայտված կարծիքը, թե բիայնական սեպագիր արձանագրությունների *m* անձի դետերմինատիվը՝ *ցեղի* դետերմինատիվ է, բավարար հիմքեր չունի: Daiaeni, Diau(e)ḫe և Ταόχοι անվանումների կապակցությամբ որոշ վիճահարույց մեկնությունների հետևանքով, հատկապես արդի վրաց պատմագրությունում, ընդհանուր առմամբ, աղավաղվում է Հայաստանի հյուսիսային տարածքների էթնո-աշխարհագրական և քաղաքական պատմությունը՝ հայկական այդ տարածքներն անհիմն կերպով ներկայացնելով որպես «պատմական Վրաստանի հարավ-արևմտյան շրջաններ»: Այնինչ, ըստ հին հունական և հայկական վաղմիջնադարյան սկզբնաղբյուրների, Վիրքը տեղադրված էր Հայաստանից հյուսիս և սահմանը նրանց միջև անցնում էր Կուր գետով:

[m]Diau(e)=ḫe վերծանվում է «Դիաու(ե)-յան/ակսւն/ցի», քանի որ -ḫe(-ḫi-)-ն, ոչ թե ցեղանուն կազմող, այլ պատկանելություն ցույց տվող (ածականակերտ) ածանց է: Նմանապես՝ հայկական սկզբնաղբյուրներում Տայքի հետ մեկտեղ հիշատակվող *տայեցիք* հասկացությունը ոչ թե ցեղանուն է, այլ՝ Տայք նահանգի հայ բնակչության տեղանվանական անվանաձևը, ինչպես երևում է Հայաստանի նաև այլ նահանգների ու գավառների անուններով հայ բնակչության հիշատակություններից՝ *գուգարացիք, մոկացիք, սպերացիք, դարանաղայք, կարնացիք, բասենցիք, շիրակացիք* և այլն:

Սեպագիր արձանագրությունների Daiaeni-ն և Diau(e)ḫe-ն (և դրանց հետ նույնացվող հունական սկզբնաղբյուրների Ταόχοι-ը) բուն հայկական Տայք աշխարհի (նահանգ) հնագույն հիշատակություններն են:

**АЛИСА ДУМИКЯН**
**ИИ НАН РА**

# ТАЙК (ДАЙАЕНИ/ДИАУЕХИ) В КЛИНОПИСНЫХ И ДРЕВНЕГРЕЧЕСКИХ И АРМЯНСКИХ РАННЕСРЕДНЕВЕКОВЫХ ИСТОЧНИКАХ

## РЕЗЮМЕ

Из армянских средневековых источников известно, что Тайк издревле являлся одной из провинций Армении.

В ассирийских клинописных надписях Daiaeni упоминается в числе *стран Наири*, т.е. областей *страны Наири*, следовательно, сопоставляемое с Daiaeni, Diau(e)ḫe биайнийских (араратских-урартских) клинописных надписей, принадлежит к той же категории топонимов.

Высказанное в историографии мнение, что детерминатив лица *m* биайнийских клинописей является детерминативом, указывающим на *племя*, не имеет достаточно оснований. Вследствие некоторых спорных интерпретаций в связи с названиями Daiaeni, Diau(e)ḫe и Ταόχοι, в особенности, в современной грузинской историографии, в общем, искажается этно-географическая и политическая история северных территорий Армении, эти армянские территории безосновательно представляя как "юго-западные области исторической Грузии" (Иверия). Однако, согласно древнегреческим и раннесредневековым армянским источникам, Иверия (Вирк) была расположена к северу от Армении и граница между ними проходила по реке Кура.

$^{m}$Diau(e)=ḫe расшифровывается "Диаух/ский/ец", ибо -ḫe(-ḫi-) не является суффиксом формирующим этнонимы, а представляет собой суффикс (формирующий прилагательные) указывающий на принадлежность. Таким же образом, упоминаемое в армянских

источниках, наряду с Тайком, понятие *тайкцы* не является этнонимом, а представляет собой топонимическую форму названия армянского населения провинции Тайк, как видно из упоминания армянского населения также по названиям других областей и округов Армении: *гугаркцы, мокцы, сперцы, манаглийцы, дараналийцы, каринцы, басенцы, ширакцы* и др.

Daiaeni и Diau(e)ḫe клинописных надписей (и отождествляемый с ними Ταόχοι греческих источников) являются древнейшими упоминаниями исконно армянской провинции Тайк.

**ALISA DUMIKYAN**
**IH NAS RA**

## TAIK' (DAIAENI/DIAU(e)ḫe) IN CUNEIFORM AND ANCIENT GREEK AND ARMENIAN EARLY MEDIEVAL SOURCES

### RESUME

According to the Armenian medieval sources, since ancient times Taik' had been one of the provinces of Armenia.

Daiaeni is mentioned in Assyrian cuneiform inscriptions among the *Nairi lands*, i.e. the regions of the Nairi land. Therefore, matching with *Daiaeni, Diau(e)ḫe* of the Biainian (Araratian-Urartian) cuneiform inscriptions also belongs to the same category of toponyms.

An interpretation of the Biainian cuneiforms' person determinative *m* in historiography as the determinative indicating *ethnos* does not have enough ground. Because of some arguable interpretations in relation to the names Daiaeni, Diau(e)ḫe and Ταόχοι, particularly, in the contemporary Georgian historiography, in general, is destorted the

ethno-geographic and political history of the Armenia's northern territories, these Armenian areas groundlessly presenting as "south-western regions of historic Georgia" (Iberia). But, according to ancient Greek and early medieval Armenian sources, Iberia (Virk) was situated to the north of Armenia and the border between them was along the Kur River.

$^{m}$Diau(e)ḫe is deciphered as "Diau(e)ḫe"-ian, because suffix -ḫe(-ḫi-) is not the ethnonym-forming, but an appurtenance indicating suffix (forming adjectives). Similarly the notion *Taikians*, mentioned in Armenian sources together with Taik', is not an ethnonym, but is a toponymic form of the name of the Armenian population of the province of Taik', as is seen from the mentioning of the Armenian population also under the names of other regions and districts (gavars) of Armenia: *Gugarkians, Mokkians, Sperians, Daranaghians, Karinians, Basenians, Shirakians* etc.

Daiaeni and Diau(e)ḫe of the cuneiform inscriptions (and identified with them Ταόχοι of Greek sources) are ancient mentionings of the proper Armenian province Taik'.

ԿԱՐԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

VIII դարի վերջին Բյուզանդական կայսրությունը ծփում էր ներքին գահակալական պայքարում: Հերակլիոս I (610-641) կայսեր հիմնադրած հարստության (610-711) վերջին կայսեր՝ Հուստինիանոս 11-ի (685-695, 705-711) առաջին գահակալությունից հետո, մոտավորապես քսան տարիների ընթացքում իրար են հաջորդում վեց կայսրեր, որոնք բյուզանդական գահին տիրանում են ճիշտ նույնքան հեղաշրջումներով: Երկրում մոլեգնում էր մի ահավոր անիշխանություն և նման պարագայում ամենևին զարմանալի չէր մշտապես ի հայտ եկող գահի հավակնորդների առկայությունը: Քսանամյա անիշխանության այս շրջանում (695-717) սպառնալիքի տակ էր հայտնվել անգամ կայսրության գոյությունը:

717 թ. բյուզանդական գահ բարձրացավ Բյուզանդիայի ամենաշնորհալի ու արմատական կայսրերից մեկը՝ Լևոն 111-ը (717-741). «717 թ. կայսրությունը գտավ իր փրկչին՝ ի դեմս Լևոն 111-ի»[1], որը գահ բարձրացրեց Իսավրական հարստությունը:

Հսկայական էին Լևոն 111-ի ջանքերը՝ VIII դարասկզբում արաբական ու բուլղարական հարձակումներից թուլացած ու անկայուն պետությունն ու բանակն ամրապնդելու և կայացնելու գործում:

Լևոն III-ի անվան հետ է շաղկապված VIII-IX դդ. կայսրությունը ցնցած, այսպես կոչված, պատկերամարտական շարժումը:

---

[1] Տե՛ս Դիլ Շ., Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի, Ե., 2005, էջ 34:

Միջնադարյան կրոնական հիմնախնդիրն առհասարակ շատ խոր արմատներ ուներ հասարակության գիտակցության մեջ: Վաղ միջնադարում աստվածաբանական վեճերը եկեղեցական տարատեսակ ծիսակատարությունների ու դավանական դոգմաների հանդեպ կարծեք եկեղեցու և եկեղեցական դասի մենաշնորհը չէր, այն շատ զգայուն էր ընկալվում հասարակության մյուս շերտերի կողմից ևս: Ահա թե ինչու սրբապատկերների պաշտամունքի դեմ ուղղված կայսերական ձեռնարկումները, որ կարծես պետք է վերաբերեր միայն եկնղեցուն և եկեղնցական դասին, խորությամբ ընդունվեց հասարակության ամենատարբեր շերտերի կողմից, ավելի քան մեկ դարաշրջան (726-842) փոթորկելով բյուզանդական պատմությունը: Պատկերապաշտության շուրջ ընթացող պայքարը շատ շուտ դուրս գալով եկեղեցու շրջանակից, դարձավ համընդհանուր մի խնդիր:

Լևոն III-ի գահակալության առաջին տարիներն իսկ նշանավորվում են քրիստոնյաների հանդեպ մահմեդական հալածանքներով[1]: Խալիֆ Օմար II իբն Աբդ ալ-Ազիզը (717-720) հավատափոխություն պարտադրելով խալիֆայության բոլոր քրիստոնյաներին՝ դավանական բնույթի մի նամակ էլ ուղղում է բյուզանդական կայսրին: Հիշյալ նամակում, քրիստոնեական կրոնն անարգանքի ենթարկելու ճանապարհով, խալիֆը փորձում է կայսրին ևս համոզել՝ հավատափոխ լինելու: Ի դեպ, Օմար II-ի և Լևոն III-ի թղթակցությունը, նամակ-պատասխանը, որոնց բնագրերը կորած են համարվում, պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ, Ղևոնդի «Պատմության» մեջ[2]: Նշենք, որ առանձին մասնագետներ Օմար խալիֆին ուղղված Լևոն III-ի նամակը համարում են ոչ թե բնագրի թարգմանություն, այլ հետագա դարերում կատարված կեղծ գրություն, որն ապա զետեղ-

---

[1] Տե՛ս Թեոփանես Խոստովանող, Ժամանակագրություն, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի, Ե., 1983, էջ 109:
[2] Տե՛ս Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 43-98:

վել է Ղևոնդի երկում[1]: Հարկ է նշել, որ նամակի մասին հիշում է Թեոփանեսը[2]: Մի կողմ թողնելով այս թղթակցության վավերականության անչափ վիճահարույց հարցը, անդրադառնանք խնդրի թեմային վերաբերող շատ այլ կարևոր հարցի:

Հիշյալ նամակ-պատասխանից պարզ է դառնում, որ Լևոն III-ն իր գահակալության սկզբնական շրջանում արդեն պատկերամարտական որոշ նկրտումներ է ունեցել: Այսպես, սուրբգրքային փաստարկներով փորձելով հիմնավորել քրիստոնեության՝ ճշմարիտ ուսմունք լինելու հանգամանքը, այնուհանդերձ, պատկերներին վերաբերող հատվածում, Օմար II-ի այն դիտողությանը, թե «Ընդէ՞ր ... զնշան խաչին, որ դատապարտութեան գործարան էր ըստ օրինաց, կամ զպատկերս, զոր պատուէք...»[3], Լևոն III-ը պատասխանում է. «...իսկ որ յաղագս նշանի խաչին և պատկերի յիշեցեր՝ պատուեմք վասն յիշատակի չարչարանացն զխաչն մարմնացելոյ Աստուծոյ Բանին ի վերա նորա... Այլ վասն պատկերի չունեմք այսպիսի կարծիս, զի ոչ ընկալաք ի գրոց այսպիսի պատուէրս»[4]: Այս տողերի արանքում կարելի է զգալ ապագա պատկերամարտական շունչը:

Թեոփանես Խոստովանողն իր «Ժամանակագրության» մեջ բավական մանրամասնորեն տալիս է պատկերամարտական շարժման ու գաղափարախոսության հանգամանալից շարադրանքը: Պետք է նշել, որ պատմիչն ինքը, լինելով ջերմ պատկերապաշտ, սրբապատկերների պաշտամունքի ջատագով, շարունակ անարգանքի է ենթարկում պատկերամարտ կայսրերի գահակալության շրջանը:

Ստորև տալիս ենք պատմական համառոտ անդրադարձ հիշյալ շարժմանը վերաբերող: Համաձայն Թեոփանեսի, մոտավորապես 724 թ., Արաբական խալիֆայությունում, Եզիդ II իբն

---

[1] Տե՛ս, օր. Gero S., Notes on byzantine Iconoclasm in the eight century, Byzantion, t. XLIV, 1974, p. 26.

[2] Տե՛ս Թեոփանես Խոստովանող, էջ 109:

[3] Ղևոնդ, էջ 44:

[4] Ղևոնդ, էջ 90:

Աբդալմալիքի (720-724) օրոք, մի շարժում է սկսվում՝ ընդդեմ քրիստոնեական եկեղեցիներում առկա սրբապատկերների: Հրաման է տրվում եկեղեցիներից վերացնել բոլոր սրբապատկերները[1]: Ըստ բյուզանդական պատմիչի, սրբապատկերների դեմ ուղղված «անօրեն այս ամբարշտությունը»[2] ընդունում է Լևոն III կայսրը՝ այս հարցում համախոհ գտնելով քրիստոնեությունն ուրացած ու արաբների կրոնն ընդունած նախկին մի քրիստոնյայի[3]: Հատուկ նշում ենք այս հանգամանքը, որովհետև պետք է ընդգծել, որ հետագայում պատկերապաշտները Լևոն III Իսավրացուն և առհասարակ պատկերամարտներին մեղադրում էին տվյալ հարցում արաբներին հետևելու, անգամ՝ աշակերտելու մեջ:

Թեոփանեսն ինքը քանիցս արտահայտվում է, ինչպես օր.՝ «սարակինոսամիտ այս Լևոնը»[4], «ամենապիղծն իր ուսուցիչների՝ արաբների նման խորշում էր նրանց (իմա՝ սրբերի) մասունքներից»[5], և կամ «աստվածամարտը... արաբական մտածելակերպով զինված»[6]: Նորություն չէ իհարկե սրբապատկերների երկրպագության արգելքը իսլամական կրոնում:

Մյուս կողմից, ինքը՝ կայսրը, ծնված և ապրած լինելով ոչ թե զուտ հունական, բյուզանդական միջավայրում, ուր եկեղեցական ծիսակատարություններում չափազանց առատ էր սրբապատկերների առկայությունը, այլ արևելյան, ասիական միջավայրում[7], շատ ավելի հեշտությամբ է կարողանում ընկալել ու յուրացնել պատկերամարտության էությունը, անշուշտ, որոշ

---

[1] Թեոփանես, էջ 111, հմմտ. խալիֆը «...տայր հրաման փշրել և խորտակել զկենդանագրեալ պատկերս ճշմարիտ մարդեղութեան տեառն մերոյ և փրկչին և նորին աշակերացն», Ղևոնդ, էջ 100:

[2] Թեոփանես, էջ111:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 114:

[5] Նույն տեղում, էջ 115:

[6] Նույն տեղում, էջ 120:

[7] Լևոն III-ը ծնունդով Հյուսիսային Ասորիքի Մարաշ քաղաքից էր:

ներգործություն կրելով նաև իսլամի կողմից քրիստոնեությանն ուղղված մեղադրանքներից:

Այսպիսով, շուրջ 726 թ. Բյուզանդական կայսրությունում անողոք մի պայքար է սկսվում սրբապատկերների պաշտամունքի դեմ: Հրապարակվում է Լևոն III-ի հայտնի էդիկտը՝ սրբապատկերների վերացման մասին: Բազմաթիվ սրբապատկերներ այրվում ու ոչնչացվում են, դաժան հալածանքների են ենթարկվում պատկերապաշտ հոգևորականներն ու հասարակ հավատացյալները: Այս ամենը բողոքի հուժկու մի ալիք է առաջացնում Կ. Պոլսի բնակչության շրջանում[1]: Մայրաքաղաքում բռնկվում է ապստամբություն, որը պայմանավորված էր առաջին հերթին հույների շրջանում սրբապատկերների պաշտամունքի լայն տարածմամբ: Մակայն, կարճ ժամանակ անց, կայսրին հաջողվում է ճնշել ապստամբությունը:

Լևոն III-ի որդու և հաջորդի՝ Կոստանդին V Կոպրոնիմոսի օրոք էլ ավելի է սաստկանում պայքարը սրբապատկերների և պատկերապաշտների հանդեպ: Կայսրն ավելի գործուն միջոցներ է ձեռնարկում հօգուտ պատկերամարտության՝ փորձելով իր ձեռնարկումներին տալ եկեղեցական-օրինական դաշտ:

Կ. Պոլսի պատրիարքության 338 եպիսկոպոսների մասնակցությամբ 754 թ. Հիերիայի պալատում գումարված ժողովն ուղղված էր պատկերամարտության դիրքերի ամրապնդմանը: Քանի որ ժողովին իրենց մասնակցությունը չունեցան Հռոմի, Ալեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի նվիրապետական աթոռների ներկայացուցիչները, պատկերապաշտների կողմից ժողովը որակվեց որպես «անգլուխ»: Թեոփանես Խոստովանողն ինքը «Ժողովի» փոխարեն այն արհամարհաբար կոչում է «ատյան»[2]:

Ժողովի նիստերը գումարվեցին փետրվարի 10-ից մինչև օգոստոսի 8-ը: Վերջին նիստը հանդիսավորությամբ գումարվեց

---

[1] Տե՛ս Թեոփանես, էջ 114:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 138:

Կ. Պոլսի պատմական Վլախեռնա շրջանում գտնվող Ս. Աստվածածնի եկեղեցում[1]: Այս եկեղեցին, որը ժամանակին զարդարված էր ավետարանական թեմաներով հարուստ խճանկարներով, ավերել էր հենց Կոստանդին V-ը:

754 թ. ժողովը խստիվ արգելում է սրբապատկերների պաշտամունքը, կարգադրվում է անխտիր ոչնչացնել դրանք: Ի դեպ, Կոստանդին V-ի թագավորության հենց առաջին տարում, 741 թ., ժողովուրդն ապստամբում է՝ դժգոհ կայսեր պատկերամարտ քաղաքականությունից: Շուտով ապստամբությունը վերաճում է յուրատեսակ քաղաքացիական պատերազմի[2]: Այն գլխավորում էր հայազգի զորավար Արտավազդը, որը Կոստանդին V-ի փեսան էր[3]: Ժողովուրդը, Կոստանդին V-ին գահընկեց հայտարարելով, կայսր է հռչակում Արտավազդին, որպես ուղղափառ վարդապետության պաշտպան[4]: Արտավազդը Կ. Պոլսում կրկին վերականգնում է սրբապատկերների պաշտամունքը:

Արտավազդը թագը կրեց շուրջ 1,5 տարի: Նա անգամ հասցնում է ոսկեդրամները հատել: Հետաքրքիր է այն փաստը, որ նրան կայսր ճանաչեց անգամ Հռոմի պապ Զաքարիա 1-ը (741-752)[5], անշուշտ, ելնելով առաջին հերթին այն հանգամանքից, որ նա սրբապատկերների երկրպագության կողմնակից էր:

Քաղաքացիական պատերազմն ի վերջո ավարտվում է Կոստանդին V-ի հաղթանակով: Կայսրը, բռնելով ապստամբ Ար-

---

[1] Ճակատագրի հեգնանքով, շուրջ մեկ դար անց, Վլախեռնայի նույն այս եկեղեցում է գումարվում նաև պատկերամարտությունը դատապարտող եկեղեցական ժողովը (842թ.): Վլախեռնայի Աստվածամոր տաճարի որմնանկարների ոչնչացման մասին տես Попова О., Эпоха иконоборчества 730-843 гг., Византийские иконы VI-XV веков.

[2] Տե՛ս Թեոփանես, էջ 125, 128:

[3] Ժամանակին Արտավազդը սատարել էր Լևոն III-ին՝ Թեոդոսիոս III (715-717) կայսերը ընդդիմանալու գործում: Լևոն III-ն իր երախտիքն էր հայտնել դառերը՝ Աննային, կնության տալով նրան, Թեոփանես, էջ 98:

[4] Այսինքն՝ սրբապատկերների երկրպագության պաշտպան:

[5] Տե՛ս, Ostrogorsky G., Historie de l'Etat Byzantin, Paris, 1956, p. 196:

տավազդին ու նրա երկու որդիներին, կուրացնում է նրանց[1]: Մահապատժի են ենթարկվում Արտավազդին դաշնակցած բազում մարդիկ:

Կոստանդին VI-ի և նրա մայր Իրենեի գահակալության[2] հենց սկզբնական շրջանում (780-790) խավրացի առաջին կայսրերի պատկերամարտական քաղաքականությունը ետ է մղվում: Աստվածաբանական բազում վեճեր վաղ միջնադարում հանդես էին գալիս առաջին հերթին որպես քաղաքական հարցեր՝ խառնվելով կայսրության անդորրը: Այս տեսակետից բացառություն չէ նաև պատկերամարտությունը: Եվ քանի որ եկեղեցու կարգուկանոնը կայսրության նեցուկն էր, ապա կայսրերն իրենք էին նախաձեռնում ժողովներ հրավիրել:

Այն գումարվում է 787 թ. Բյութանիայի Նիկիա քաղաքում, սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 13-ը: Ժողովի աշխատանքներին մասնակցում էին 350 եպիսկոպոսներ, ներառյալ՝ Հռոմի Ադրիանոս պապի (772-795), ինչպես նաև Անտիոքի, Ալեքսանդրիայի և Երուսաղեմի պատրիարքների ներկայացուցիչները, որոնց մեկ տարի շարունակ Կ. Պոլսում էր պահել կայսրուհին՝ 786 թ. չկայացած ժողովից հետո: Ըստ այդմ, ժողովն ունենալով նվիրապետական հինգ գերագահ աթոռների ներկայացուցիչների մասնակցությունը, բոլոր իրավունքներն ունեցավ կոչվելու տիեզերական: Այն հայտնի է որպես VII տիզերական ժողով և վերջինն է, որի տիեզերականությունն ընդունում է նաև Արևելյան Ուղղափառ եկեղեցին:

Ժողովը նախագահում էր Կ. Պոլսի Տարասիոս պատրիարքը: Այն, դատապարտելով պատկերամարտությունը, վերահաստատեց սրբապատկերների պաշտամունքը: Կարևոր է այն փաստը, որը նաև ժողովի արձանագրություններում էր շարունակ նշվում, որ դավանանքի մեջ որևէ նորամուծություն, որևէ նորա-

---

[1] Տե՛ս Թեոփանես, էջ 130:

[2] Կոստանդին VI-ի և Իրենեի գահակալությունն ընդգրկում է 780-797 թթ., որից հետո կայսրուհին, կուրացնելով հարազատ որդուն, միահեծան կառավարում է 797-802 թթ.:

բարություն չէր արվում, այլ ընդամենը վերականգնվում էր ս. Հայրերից ժառանգած հինավուրց դրույթները: Ժողովը նզովքի ենթարկեց շուրջ կես դար պատկերահալած քաղաքականությանն աջակցած Կ. Պոլսի երեք՝ Անաստասիոս (730-754), Կոստանդին II (754-766) և Նիկետաս I (766-780) պատրիարքներին:

Եվ թեև Կոստանդին VI-ի և Իրենեի կայսրության շրջանում թուլացած պատկերամարտության դիրքերը կրկին ամրապնդվում են Նիկեփոր I (802-811) և Լևոն V Հայկազն (813-820) կայսրերի օրոք՝ ուղեկցվելով պատկերապաշտների նոր հալածանքներով, արդեն իսկ հեռու չէր պատկերապաշտության լիակատար հաղթանակը: Հայազգի Թեոդորա կայսրուհին (842-856) իր գահակալությունն սկսում է՝ վերականգնելով սրբապատկերների պաշտամունքը: Նա հռչակվեց ուղղափառ եկեղեցու սուրբ, իսկ դեպքն անվանվեց «ուղղափառության տոն» և քառասնօրյա պահքի առաջին կիրակին տոնվում է որպես «Ուղղափառության կիրակի»: Ի նշան պատկերապաշտության հաղթանակի, 843 թ. հետո դրամների և կնիքների վրա կրկին հայտնվում է Քրիստոսի պատկերը[1]:

Ընդհանրապես պատմագիտության մեջ հաճախ շատ խիստ գնահատականներ են տալիս պատկերամարտ կայսրերին, սակայն Իսավրական հարստության կայսրերի պատկերամարտական քաղաքականությունը, ըստ էության, զուտ կրոնական հարց չէր, այլ «նրանց ձեռնարկած վերակառուցողական գործի մի մասն էր ընդամենը»[2]: Պատկերամարտական քաղաքականության դրդապատճառները հետազոտողները բաժանում են երկու խմբի. ա) կապված հրեականության և իսլամի հետ: Պատկերամարտության միջոցով բյուզանդական կայսրերը փորձում էին վերացնել հրեաների և հատկապես մահմեդականների հետ մերձեցման գլխավոր խոչընդոտը, մահմեդականների, որոնք բացա-

---

[1] Տե՛ս Grabar A., L'Iconoclazm Byzantin, Dossier archeologique, Paris, 1957, p. 127.
[2] Դիլ Շ., նշվ. աշխ., էջ 34:

սաբար էին վերաբերվում սրբապատկերներին, որովհետև իսլամն արգելում է մարդկային պատկերումը:

Այս ճանապարհով ծրագրավորվում էր ենթարկեցնել հիշյալ կրոնը խոստովանող ժողովուրդներին կայսրությանը[1]:

Սակայն շատ ավելի կարևոր էր երկրորդ դրդապատճառը՝ բ) պայքարը եկեղեցական իշխանության դեմ: Պատկերամարտության կրոնական քողի տակ ծավալված շարժումն իրականում նպատակ ուներ սահմանափակելու եկեղեցու քաղաքական դերն ու աճող կշիռը, կանխելու վանականության ծայրահեղ աճը:

Հայտնի է, թե VIII դ. որքան խոշոր էին եկեղեցական կալվածքները, և թե գնալով որքան ազդեցիկ էր դառնում եկեղեցին: Պատկերամարտությունն ուղղված էր սահա առաջին հերթին եկեղեցու ազդեցության թուլացմանը, պետական իշխանությունից նրա կախվածության խորացմանը:

Կոստանդին V օր. հիմնահատակ կործանում է բազմաթիվ մենաստաններ ու կուսանոցներ, շատ վանքեր տրամադրում է զինվորների բնակությանը՝ վերածելով սովորական զորանոցների[2]: Բազմաթիվ մենաստանների հարուստ սեփականությունը՝ արծաթյա սպասքը, հողերը, անասունները, վաճառքի են հանվում՝ եկամուտը գանձելով պետական բյուջե[3]: Նիկեփոր I-ն (802-811) իր հերթին կարգադրում է բարձրացնել եկեղեցիների ու վանքերի՝ պետությանը վճարվող հարկերը[4]: Չմոռանանք այն հանգամանքը, որ VIII դ. արաբական ու բուլղարական հարձակումներից թուլացած բյուզանդական կայսրությանը նոր վտանգներին դիմագրավելու և պատերազմներ մղելու համար հսկայական միջոցներ էին անհրաժեշտ: Մյուս կողմից, սկսած վաղ միջնադարից, Բյուզանդական կայսրության մեջ վանականության

---

[1] Այս մասին հանգամանորեն տե՛ս Васильев А.А., История Византийской империи, т. 1, гл. 5, раздел 4. Религиозные противоречия первого периода иконоборчества.

[2] Տե՛ս Թեոփանես, էջ 154:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 157:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 201-202:

շարունակական աճը ստեղծել էր մի ուժ, որի հետ հարկ էր հաշվի նստել: Վանականները ղեկավարում էին հասարակական գիտակցությունը և շատ հաճախ սեփական հայեցողությամբ կողմնորոշում բյուզանդական ոգին[1]: Դրանով հանդերձ վանքերն անչափ հարուստ էին:

Զորեղ վանական համայնքները վերածվել էին մի այնպիսի ուժի, որը բազմիցս միջամտում էր պետության կարևորագույն հարցերին: Վանականները մեծ դեր խաղացին նաև պատկերամարտության շրջանում՝ համառ դիմադրություն ցուցաբերելով պատկերամարտ կայսրերին: Դրանով էր պայմանավորված իսավրացի կայսրերի անողոք պայքարը հատկապես վանականության հանդեպ:

Թեոփանեսի «Ժամանակագրության» բազում էջեր լի են այն անլուր ու սարսափելի բռնություններով ու հալածանքներով, որոնք արվում էին պատկերապաշտների նկատմամբ՝ սկսած Լևոն III Իսավրացու գահակալության շրջանից[2]:

Եթե նախկինում վանականը, և առհասարակ հոգևորականը վայելում էր բյուզանդական ողջ հասարակության անսահման հիացմունքը, ապա պատկերամարտության շրջանում վտանգված էր սովորական հոգևորականի կյանքն անգամ: Վանքապատկան սեփականության բռնազավթումները հանգեցրին վանականության զանգվածային գաղթին այնպիսի վայրեր, ուր հասու չէր կայսերական քաղաքականությունը: Լևոն III-ի և հատկապես Կոստանդին V-ի գահակալության ժամանակ շուրջ 50 հզ վանականներ գաղթում են Հարավային Իտալիա: Գաղթավայրեր են դառնում նաև Սև ծովի հյուսիսային ափերն ու Ասորիքի և Պաղեստինի ափերը[3]: Այս ամենով հանդերձ, երբ պատկերամարտությունը դիտարկում ենք առաջին հերթին սոցիալ-տնտեսա-

---

[1] Տե՛ս Դիլ Շ., նշվ. աշխ., էջ 63:

[2] Տե՛ս, Թեոփանես, էջ 118-119, 124, 149, 153, 154, 157, 160, 201 և այլն:

[3] Տե՛ս Андреев И.Д., Герман и Тарасий, патриархи Константинопольские: их жизнь и деятельность в связи с историей иконоборческой смуты, М., 1907, с. 78.

կան տեսանկյունից, անշուշտ այն հանդես է գալիս նախ և առաջ որպես առաջադիմական սոցիալական շարժում:

***

Արդ, ո՞րն էր հիմնական էությունն աստվածաբանական այս պայքարի ու հակառակության: Վաղ միջնադարյան պատմությունը ցույց է տալիս, որ պատկերների դեմ հակառակությունն առհասարակ ծագել է շատ ավելի վաղ, քան այն հսկայածավալ պայքարը, որ գրեթե 120 տարի ցնցեց Բյուզանդական կայսրությունը:

Տակավին քրիստոնեության տարածման առաջին շրջանում քրիստոնյաները ստիպված էին ապացուցել սրբապատկերների օրինականության անչափ խրթին ու վիճահարույց հարցը:

Ապացուցելու համար պատկերների օրինականությունը, առաջին քրիստոնյաները դիմում էին նախ և առաջ Հին Կտակարանի վկայություններին: Ավելի ուշ միայն, նման վիճաբանությունները հարստացվում են Նոր Աստվածաշնչյան փաստարկումներով ու Եկեղեցու Հայրերի աշխատություններից քաղված մեջբերումներով:

Հարկավ, պատկերների պաշտամունքի ծավալումն անխուսափելիորեն պետք է առաջ բերեր առաջին հերթին կռապաշտական մեղադրանքներ: Եվ պատկերների կարևորությունն ապացուցող վկայությունների փնտրտուքը մտահոգել է շատ աստվածաբանների ու Եկեղեցու Հայրերի՝ շատ ավելի վաղ, քան 8-րդ դարի խլրտումները: Հարկավոր էր Սուրբգրական ճշմարիտ փաստարկումներով բացատրել, թե ինչու են պատկերներ մեծարում այն դեպքում, երբ Աստված ինքն արգելել է կուռքեր պաշտել, քանզի պատկերամարտներն իրենց հայացքներում հիմնվում էին Մովսեսին տրված Աստծո՝ Հին Կտակարանյան հայտնի 10 պատվիրաններից մեկի վրա[1]:

---

[1] Ելից Ի., էջ 4:

Բացահայտելով քրիստոնեության և կռապաշտության միջև առկա հսկա տարբերությունը՝ քրիստոնյաները ցույց էին տալիս, թե սրբապատկերների պաշտամունքը տարբերվում է կուռքերի պաշտամունքից, իսկ Քրիստոսի պատկերը բոլորովին այլ է հեթանոս աստվածների պատկերներից:

Ի դեպ, առաջ անցնելով նշենք, որ 8-9 դարերում, ի թիվս այրված ու ոչնչացված բազմաթիվ սրբապատկերների և անգամ պատկերներին վերաբերող Հին Կտակարանյան մեկնությունների, պատկերամարտները ոչնչացրել են նաև ի նպաստ պատկերների գրված բազմաթիվ աշխատություններ: Ընդ որում, այդ խնդրով զբաղվել են անգամ որոշ պատկերամարտ պատրիարքներ[1]:

Զարմանալի չէ այս հանգամանքը, որովհետև պաշտոնական պատկերամարտական շարժման 726-842 թթ. ընկած ժամանակաշրջանում քիչ չէր ջերմեռանդ պատկերամարտ պատրիարքների թիվը:

Առհասարակ աստվածային բարեպաշտության ուսուցման հարցում պատկերապաշտների կողմից շարունակ առաջ է քաշվել սրբապատկերների օգտակարության խնդիրը: Ջերմեռանդ պատկերապաշտ, միջնադարյան եկեղեցական փիլիսոփայության հիմնադիր Հովհան Դամասկացու (675-749) ճառերում օրինակ քանիցս կրկնվում է պատկերի՝ որպես հիշողության դռույթը[2]:

Վրթանես Քերթողի «Յաղագս պատկերամարտաց» գրության մեջ ևս կարդում ենք «... Եւ մեք պատկերաց նկարուք... ոչ ասեմք թէ իսկ է Աստուածն, այլ յիշողութինն Աստուծոյ և ծա-

---

[1] Mansi J.D., Sacrorum Conciliorum Nova et Amplissima Collectio, vol. XIII, G.-Austria, 1961, p.182

[2] Migne J., Patrologiae cursus completus, series graeca, (P. G.), t. XCIX, Paris, 1864, p. 1248:

ռայից նորա», և կամ «... նկարք յիշողութին է Աստուծոյ և ծառայից նորա»[1]:

Հիշյալ գրության մեջ շատ դիպուկ է տրված սրբապատկերների երկրպագության բուն բովանդակությունը. «... մեք ոչ եթէ Աստուած ճշմարիտ ասեմք զպատկերն և զնկարս, այլ յանուն Աստուծոյ նկարեմք»[2]: Նույն ձևով, «զի զպատկերասերն և զպատկերագործն և զպատկերապաշտսն յիւր պատկեր աստուածութեան հնազանդեցուսցէ»[3]:

Իսկ Հռոմի պապ Գրիգոր Մեծն իր նամակներում գրում էր, որ սրբապատկերները հասարակ ժողովրդի համար փոխարինում են գրքերին, ուստի հոգևոր հոտին առաջնահերթ պետք է բացատրել սրբապատկերների երկրպագության ճիշտ ձևը[4]: Արևելաքրիստոնեական աստվածաբանական գիտակցությունը զատորոշում էր սրբապատկերների ուսուցողական, խորհրդապաշտական և ծիսական տարաբնույթ ընկալումները: Մի կողմից, սրբապատկերները, փոխարինելով գրքերին, հանդես են գալիս որպես ուսուցման միջոց՝ հորդորելով և մղելով դեպի բարեպաշտություն և կրոնասիրություն: Մյուս կողմից, և ավելի հաճախ, նրանք հանդես են գալիս այսպես կոչված «նախատիպի» օրինակ: Եվ եթե առաջին վերաբերումը կարելի է անվանել «պատկերահարգություն», ապա երկրորդը, անշուշտ, տանում է դեպի «պատկերապաշտություն»[5]:

Սրբապատկերների երկրպագության մերժման հարցում պատկերամարտների հիմնական փաստարկներից մեկն էլ այն էր, որ Քրիստոս, մարդկայինի հետ միասին, իր վրա կրում է նաև Աստծո պատկերը, և նման պարագայում ոչ մի նկարիչ չի կարող

---

[1] Վրթանես Քերթող, Յաղագս պատկերամարտաց, Ս. Տեր-Ներսեսյանի հրատարակությամբ, «VII դար մի երկ, նվիրված պատկերների պաշտպանությանը», Հայ արվեստը միջնադարում, Ե., 1975, էջ 13, 15:

[2] Նույն տեղում էջ 8:

[3] Նույն տեղում էջ 9:

[4] Տե՛ս Карташев А.В., Вселенские соборы, Калининград, 2004, с. 576:

[5] Տե՛ս Նիկողայոս Ադոնց, Պատկերների խնդիրը, խմբագրությամբ՝ Շահե արք. Աճեմյանի, Աշխատասիրել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պ. Հովհաննիսյանը, Ե., 2003, էջ 16:

նրան վերարտադրել, իսկ ոչ արժանավայել պատկերումն անթույլատրելի է[1]: Դրան հակառակ, պատկերապաշտները, իբրև օրինակ, թվում են նաև պատկերամարտների կողմից մեծարված այնպիսի իրեր, որոնք նմանապես մարդկային ձեռքով են պատրաստված ու կառուցված, ինչպես որ Խաչը, Եկեղեցին և այլն:

Կոստանդին V-ի օրոք գումարված 754 թ. պատկերամարտական հայտնի ժողովից հետո, սրբապատկերների, այսպես կոչված, «օրինականության» և երկրպագության անհրաժեշտության ապացուցման հարցում պատկերապաշտները սկսում են վկայակոչել Քրիստոսի մարդեղության ուսմունքը[2]: Քրիստոսի մարդկային բնությունն ինքնին, ըստ պատկերապաշտների, անգամ պարտադրում է պատկերել Քրիստոսին[3]: Այս փաստարկումը, զարմանալիորեն, չէր կիրառվում ավելի վաղ դարերում, երբ ավելի բուռն ու սրդիական էին Քրիստոսի մարդկային և աստվածային բնությունների շուրջ վեճերն ու տարաձայնությունները: IV դարի նշանավոր Հայրերից Եվսեբիոս Կեսարացին, օրինակ, գրում էր, թե քրիստոնյաներին վայել չէ իրենց Աստծուն պատկերել մարդկային կերպարանքով[4]:

Դեռ նախքան VIII դարի սուր վեճերը, սրբապատկերների պաշտամունքի հարցը հուզում էր բյուզանդական պաշտոնական եկեղեցուն: Իրենց ժամանակ պատկերների դեմ են արտահայտվել այնպիսի նշանավոր Հայրեր, ինչպես Եվսեբիոս Կեսարացին, Եպիփան Կիպրացին, նշանավոր միաբնակ Փիլոքսենոս (Քսենայաս) Մաբուգեցին:

Պատմագիտության մեջ կարծիքներ են արտահայտվել թե VIII դարասկզբի բյուզանդական պատկերամարտությունը կապված էր կայսրության արևելյան նահանգների՝ այդ թվում Հայաս-

---

[1] Տե՛ս «Յաղագս պատկերամարտաց» գրության մեջ կարդում ենք «… պատկերացն է նկարուց, և ասէք, թէ ձեռագործք են և մեզ չեն արժանի, նա է եկեղեցիք ձեռագործք են և կոչին տաճարք Աստուծոյ», էջ 15:

[2] Տե՛ս Ladner G., Origin and significance of Byzantine Iconoclastic Controversy, Medieval Studies, II, 1940, p. 145:

[3] Տե՛ս Migne P.G., t. XCIX, 1245:

[4] Տե՛ս Migne P.G., XX, 1547:

տանից Բյուզանդիա տեղափոխված բնակչության հետ[1]: Ֆրանսիացի նշանավոր բյուզանդագետ Շառլ Դիլը նս ընդգծում է, թե VIII դ. պատկերապաշտությանը նպաստող չափազանց հզոր ազդեցությունները մայրաքաղաքում նվազեցնելու նպատակով պատկերամարտ կայսրերը Ասիայից Կ. Պոլիս բերեցին բազմաթիվ ասորիների[2] և հայերի[3]:

Հիմքեր կայի՞ն արդյոք հայերին պատկերամարտ անվանելու և արդյոք պատկերամարտությունը տարածված էր նաև Հայաստանում:

Պետք է նշել, որ VIII դարի բյուզանդական պաշտոնական պատկերամարտությունը ընդհանուր շատ քիչ աղերսներ ուներ վաղ շրջանի պատկերամարտության հետ: Այս տեսակետից բացառություն չէ նաև պատկերամարտության, այսպես կոչենք, հայկական տարբերակը և կամ դրսևորումները, որոնք ի հայտ են գալիս ավելի վաղ, արդեն VI-VII դդ:

Վաղ շրջանի պատկերամարտությունն, ի տարբերություն VIII դարի պաշտոնական պատկերամարտության, զուտ դավանաբանական էր, ուներ ասելիք և իր ասելիքի ու հետապնդած նպատակների մեջ ազնիվ էր: Եթե VIII-IX դդ. պատկերամարտական պաշտոնական շարժումը, հանդես գալով որպես կրոնական քողով ծածկված շարժում, իրապես հետապնդում էր բոլորովին այլ նպատակներ, այն է՝ առաջնահերթ, եկեղեցու ուժեղ ազդեցության թուլացմանն ու նրա հարստության յուրացմանը, ապա շատ ավելի վաղ շրջանում, պատկերամարտության դրսևորումները զուտ դավանական երանգավորում ունեին:

---

[1] Տե՛ս История Византии в трёх томах, т. II, М., 1967, с. 52:

[2] Պետք է նշել, որ արդարև Ասորիքն այս շրջանում իսլամի պատկերամարտ կրոնի ազդեցության տակ էր գտնվում:

[3] Տե՛ս Դիլ Շ., նշվ. աշխ., էջ 28: Այս փաստարկի ժխտումը ակադ. Հ. Բարթիկյանի կողմից տե՛ս, Շ. Դիլի նշված մենագրության ծանոթագրություններում՝ էջ 245-246, գլ. II, ծանոթ. 23, ինչպես նաև Թեոփանես Խոստովանող, էջ 285-287, ծանոթ. 718:

Հայոց եկեղեցին, դարեր ի վեր, խիստ զգուշավոր է եղել սրբապատկերների կիրառության հարցում[1]: Հայոց եկեղեցիներում, վաղ միջնադարում, երբևէ չի եղել սրբապատկերների այն հաճախ ծայրահեղ առատությունն ու նրանց հանդեպ այն աներկբա երկրպագությունը, ինչը որ առկա էր հունադավան եկեղեցիներում: Եկեղեցական ծիսակատարություններտւմ գործածվող սրբապատկերների թիվը եղել է խիստ չափավոր, պարտադիր՝ օծված: Հայոց եկեղեցին սրբապատկերների պաշտամունքի նկատմամբ բացասական 'դիրք չբռնելով՝ այդ պաշտամունքը երբևէ չհասցրեց այնպիսի ծայրահեղությունների, ինչպես բյուզանդական եկեղեցում էր:

Հայոց եկեղեցում սրբապատկերների հանդեպ վերաբերմունքը շատ ավելի տեղին է որակել որպես «պատկերահարգություն», ի հակակշիռ պատկերապաշտության, որն իր մեջ կրելով «պաշտամունք» բառը, կարծես յուրատեսակ ծայրահեղություն է արտահայտում իր բովանդակությամբ և էությամբ: Ինչպես ցանկացած դավանաբանական խնդրում, սրբապատկերներին վերաբերող հարցում ևս, վեճը և պատկերապաշտներին, և պատկեբամարտներին իրենց դիրքորոշման մեջ տանում էր դեպի ծայրահեղություն, մինչդեռ, ինչպես մեծանուն գիտնական Ն. Ադոնցն էր ընդգծում, ճշմարտությունը միջին ուղու վրա էր՝ պատկերահարգություն և ոչ պատկերապաշտություն[2]: Իսկ Հայոց եկեղեցին, հենց վերանշյալ միջին ուղու վրա էր:

Սրբապատկերների «պաշտամունքը», որպես երևույթ, նշանակալից տեղ չի գրավել հայոց եկեղեցու կյանքում: Հայ մատենագրության մեջ ևս քիչ են այն երկերը, որոնք նվիրված են սրբապատկերների խնդրին: Իր վարդապետական դիրքորոշումն այս խնդրի շուրջ Հայոց եկեղեցին ճշտել էր շատ ավելի վաղ դարերում՝ չխառնվելով այն դավանաբանական վոթորկուն իրադար-

---

[1] Այս մասին տե՛ս նաև Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 1, Էջմիածին, 2001, սյունյակ 964, 1053:

[2] Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 69:

ձություններին, որոնք ցնցեցին Բյուզանդական կայսրությունը ողջ VIII և IX դ. I կեսին:

Արդեն V դարից Հայաստանում հայտնի էր Հիսուս Քրիստոսի անձեռագործ պատկերի մասին առասպելը: Խոսքը կտավի կամ թաշկինակի վրա Տիրոջ դեմքի ուղղակի արտատպումից առաջացած անձեռագործ մի պատկերի մասին պատումը կամ հրաշապատումն է, որը, ըստ Մովսես Խորենացու, Եդեսիա է բերվում Աբգար թագավորի դեսպան Անանիայի միջոցով. «... կայ յեդեսացւոց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի»[1]: Ի դեպ, Վրթանես Քերթողն ավելի է մանրամասնում վայրը. «...զպատկեր Տեառն՝ ... զոր և այժմ ասեն զոլ ի մեծ եկեղեցւոջն Ուռհայու»[2]:

Առհասարակ սրբապատկերների երկրպագության թույլատրելիության մասին բանակռվում, սա ամենազորավոր փաստարկն էր պատկերապաշտների ձեռքում, առ այն, որ Քրիստոսն անգամ նման ճանապարհով հասկացնում և թույլատրում էր պատկերների պաշտամունքը:

Սրբապատկերների չափազանց սահմանափակ քանակը Հայոց եկեղեցում կարող է բացատրվել միայն մեր եկեղեցու ծայրահեղ նախանձախնդրությամբ և զգուշավորությամբ՝ այդ ձևով խուսափել պատկերների պաշտամունքը կռապաշտության կամ դիվապաշտության հետ նույնացման մեղադրանքներից: Հայ պատկերամարտներն օրինակ, փորձելով սրբապատկերների պաշտամունքը սկզբնապես շաղկապել Պապ թագավորի գահակալության հետ, որի ժամանակ, կարծես աշխուժանում է հեթանոս ծեսերի կիրարկությունը, ինչպես Ս. Տեր-Ներսեսյանն է նկատում, դրանով մի կարևոր փաստարկ էին գտնում՝ պատկերների պաշտամունքը փորձելով կապել կռապաշտության հետ[3]:

Այնուհանդերձ, հայոց եկեղեցու դիրքորոշումն այս հարցում խիստ արմատական է: Հայոց Կանոնագրքում զետեղված և վաղ միջնադարյան շրջանին պատկանող, խաչին և նրա օծմանը

[1] Մովսես Խորենացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 611:

[2] Յաղագս պատկերամարտաց, էջ 9:

[3] Տե՛ս Տեր-Ներսեսյան Ս., VII դար մի երկ, էջ 14, ծանոթ. 32:

վերաբերող բազմաթիվ կանոնների կողքին չկան որևէ կանոններ կամ որոշումներ, որոնք վերաբերեին պատկերներին և նրանց գործածությանը: Խաչը խիստ պահպանվում է և երկրպագվում, մինչդեռ պատկերը, կարծես, բացասվում է: Իսկ սա պատկերամարտական ուրույն երանգ է հաղորդում այս հարցում եկեղեցու դիրքորոշմանը: Շատ ավելի ուշ միայն կազմվում են որոշ կանոններ, որոնք վերաբերում էին պատկերների օծմանն ու եկեղեցական ծիսակատարություններում նրանց գործածությանը:

Ինչպես տեսնում ենք՝ Հայոց եկեղեցին, իր դավանաբանության մեջ, մի կողմից հատուկ ընկալում հաստատելով խաչի հանդեպ, մյուս կողմից զուսպ վերաբերմունք է ձևավորում սրբապատկերների նկատմամբ: Պատկերապաշտությունը ետին պլան է մղվում նախ և առաջ խաչի պաշտամունքի կողմից[1]: Խնդրի շուրջ հետաքրքիր պարզաբանում է տալիս Ա. Սահակյանը: Նրա համոզմամբ, սրբապատկերների հարցում Հայոց եկեղեցու զուսպ դիրքորոշման պատճառը հետևանք էր այն մտածողության, թե և՛ պատկերապաշտությունը, և պատկերամարտությունը, քաղկեդոնականներին հատուկ երևույթ է, ուստի Հայոց եկեղեցին, բավարարվելով պատկերամարտության արգելմամբ, լռությամբ է շրջանցում պատկերների քարոզչությունն ու նրանց պաշտամունքի խրախուսումը[2]:

Ավելորդ չէ պատմական համառոտ ակնարկը՝ Հայաստանում պատկերամարտական որոշ դրսևորումների մասին:

Արդեն VI դարի վերջում Հայաստանում պատկերամարտական շարժման մասին են վկայում երկու աղբյուրներ. ա) Վրթանես Քերթողի «Յաղագս պատկերամարտաց» գործը, գրված VI դարի վերջ - VII դարի սկիզբ և բ) Մովսես Կաղանկատվացու «Պատմության» մեջ պահպանված Հովհաննես Մայրագոմեցու մի թուղթ՝ «Դաւթայ Մեծ Կողմանց եպիսկոպոսի վասն պատկերաց

---

[1] Տե՛ս Սահակյան Ա., Միջնադարյան պատկերապաշտության հայկական տարբերակը, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 2, էջ 152:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 153:

և նկարագրութեանց հայցուած ի Յոհաննէ Մայրագոմեցւոյ»[1] խորրագրով, գրված շուրջ 683 թ.[2]:

Այս երկու փաստաթղթերից տեղեկանում ենք, որ Մավրիկիոս (582–602) կայսեր ժամանակ Հովհան Բագարանցու գլխավորությամբ հայոց հակաթոռության ստեղծման և հայոց կաթողիկոսության պառակտման հետևանքով եկեղեցու կյանքում այլ դավանական տեղաշարժեր էլ են տեղի ունենում: Ի թիվս այլ հրահանգների, կաթողիկոս Մովսես Եղիվարդեցին (574–604) խստուկ կոնդակով արգելում է հոռոմներից, այսինքն հայ-քաղկեդոնականներից սրբապատկերներ ընդունել. «հրամայէր ամենևին չհաղորդել ընդ Հոռոմսն՝ հնազանդեալսն քաղկեդոնական

---

[1] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, Ե., 1983, էջ 266–269:

[2] Հովհան Մայրագոմեցու կյանքի և գործունեության ժամանակաշրջանի վերաբերյալ տարաբնույթ փաստերի առկայությունը բավական տարակարծությունների տեղիք է տվել պատմագիտության մեջ: Հայ միջնադարյան շատ պատմիչներ, շարադրելով կաթողիկոս Եզր Փառաժնակերտցու հետ վարդապետի հանդիպման փաստը, վկայում են այնուհետ նրա մահվան մասին (Յովհաննէս Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս,1912, էջ 79, Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 88, Կիրակոս Գանձակեցի,Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի,Երևան,1961, էջ 55): Քաղկեդոնական ուղղվածության որոշ աղբյուրներ Հովհան Մայրագոմեցու մահվան թվականը դնում են 7-րդ դարի վերջ. օրինակ, Արսեն Սափարացին նրա մահվան տարեթիվ է նշում հայոց ՃԼԳ թվականը, որը համապատասխանում է 684 թ., (Արսեն Սափարացի, Վրաց և հայոց բաժանման մասին, Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, h. 1,Երևան, 1934, էջ 47): Narratio-ն փաստում է միայն, թե վարդապետը վախճանվեց խոր ծերության մեջ ("Narratio de rebus Armeniae" հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, Հ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, Երևան, 2002, էջ 109) : Մեր կարծիքով, այս հարցում ավելի վստահելի են քաղկեդոնական աղբյուրների հաղորդած տեղեկությունները, քանի որ Մայրագոմեցու կյանքի վերաբերյալ իրենց մանրամասներում նրանք շատ ավելի հարուստ նյութ են պարունակում: Մյուս կողմից, եթե հաշվի առնենք սույն թղթում նշված այն փաստը , թե այն գրվել է Դավիթ Մեծկողմանց եպիսկոպոսի խնդրանքով, իսկ վերջինս, համաձայն Մովսես Կաղանկատվացու, եպիսկոպոսությունը վարում էր Աղվանից Եղիազար կաթողիկոսի (682-688) հենց առաջին տարիներին, (684 թ. նրան արդեն փոխարինում է Իսրայել եպիսկոպոսը, Մովսես Կաղանկատվացի էջ 265), ապա մեկ անգամ ևս ապացուցված է համարվում թղթի՝ 684-ից առաջ գրված լինելու փաստը, քանի որ 684 թ. վախճանվել էին և Հովհան Մայրագոմեցին և Դավիթ եպիսկոպոսը:

ժողովոյն չարի: Մի՛ գիրս, մի՛ պատկերս, մի՛ նշխարս ի նոցանէ ընդունել»[1]:

Կաթողիկոսական այս կոնդակը որոշ հոգևորականների մոտ ծնունդ է տալիս ծայրահեղ պատկերամարտական տրամադրություններ: Հոգևորականներ Հեսուն, Թադեոսը և Գրիգորը, Դվինից հեռանալով Սյունյաց Մոթք (Մոդք) գավառը, «սկսան ուսուցանել, եթէ զպատկերս, որ յեկեղեցիս են նկարեալ ի բաց ջնջեցէք»[2]: Այն հանգամանքը, որ հայ իրականության մեջ հենց այս հոգևորականներն էին առաջին լուրջ պատկերամարտները, վկայում է նաև Վրթանես Քերթողը «... և ոչ ոք... վասն պատկեբաց և նկարուց եկեղեցոյ բանս ինչ ոք արար, բայց միայն պիղծն մոլին Թադէոս և Եսայի և ընկերք նոցուն...»[3]: Պատկերամարտ այս հոգևորականները, չանսալով կաթողիկոս Մովսես Եղիվարդեցու վերադարձի պահանջին, շարունակում են իրենց քարոզչությունն Արցախում, Ուտիքում, ապա ձերբակալվելով Գարդմանաց իշխանի կողմից, ուղարկվում են Դվին: Այն հարցին, թե ինչու են նրանք մերժում սրբապատկերները, պատկերամարտների պարագլուխներն, ավանդական պատասխանն են տալիս. «արտաքոյ է պատուիրանաց և եթէ կռապաշտից գործդ այդ»[4], ապա և հիմնական փաստարկը. «մեք ոչ պագանեմք երկիր պատկերաց, զի ոչ ունիմք հրաման ի Գրոց»[5]: Ինչպես տեսնում ենք, կռապաշտության հետ պատկերապաշտության նույնացման ցավոտ հարցը շարունակ ուղեկցում է սրբապատկերների խնդրին:

VII դարի վերջերում Աղվանից Ուխտանես (668/70-682) և Եղիազար (682-688) կաթողիկոսների ժամանակ Աղվանքում կրկին ախուժանում են պատկերամարտները:

Հովհան Մայրագոմեցու գրությունը որոշ հետաքրքիր փաստեր է հաղորդում նրանց մասին. «Եհաս համբավ իմն ի նոսա

---

[1] Նույն տեղում, էջ 267-268:

[2] Նույն տեղում, էջ 268:

[3] Յաղագս պատկերամարտաց, էջ 14:

[4] Մովսես Կաղանկատվացի, էջ 269:

[5] Նույն տեղում:

եթէ ոմանք պատկերս ոչ ընդունին, ոմանք մկրտութիւն ոչ առնեն, ոչ աղ օրհնեն, ոչ պսակ դնեն հարսանեաց»[1]: Այս պատկերամարտներն անշուշտ, գաղափարապես չեն կարող նույնացվել այն շարժման հետևորդների հետ, որոնք երևան էին եկել նույն դարի սկզբներին: Առաջին պատկերամարտներն, նախ և առաջ, հոգևորականներ էին, չէին մերժում եկեղեցին, ընդունում էին Ս. Գիրքը և Խաչի պաշտամունքը. «...նշանին երկիր պագանէք, և ի թագաւորն քարաձիգ լինիք, զխաչն պատուէք և զխաչեալն թշնամանէք»[2]: Այս տողերը վկայում են, որ նրանք ընդդիմանում էին միայն սրբապատկերների հարցում:

Այդուհանդերձ թվում է, թե արդեն VII դարի վերջերին նոր թափ ստացած պատկերամարտական շարժումն իր գաղափարական ակունքների համար ամենայն հավանականությամբ պարտական էր առաջին պատկերամարտների՝ Աղվանքում ծավալած գործունեությանը:

Ընդհանրապես պատկերամարտությունն իր գաղափարաբանությամբ միշտ էլ նույնացվել է զանազան աղանդավորական շարժումների հետ: Դավանաբանական և եկեղեցական-ծիսական ոլորտ դրույթների մերժումն, իրոք ընդհանուր էր թե՛ պատկերամարտների և թե՛ զանազան հերձվածների համար: Սկզբնապես այն նույն հարթության վրա էր դրվում մանիքեցիների և մարկիոնացիների հետ[3]:

Կաթողիկոս Հովհան Օձնեցու (717-728) «Ընդդեմ պաւղիկեանց» ճառը բացահայտում է, որ արդեն VIII դարում աղանդավորների կողմից պատկերների դեմ հրահիրված պայքարը վեր է ածվում խաչի դեմ ուղղված պայքարի[4]:

---

[1] Նոյն տեղում, էջ 267:

[2] Յաղագս պատկերամարտաց, էջ 9:

[3] Տե՛ս նոյն տեղում, հմմտ. Mansi, XII, 1031:

[4] Տե՛ս Յովհաննու Իմաստասէրի Աւձնեցւոյ, Մատենագրութիւնք, էջ 79:

Փաստորեն, տակավին VII դարում խաչը երկրպագող պատկերամարտները, շուրջ մեկ դար անց, ի դեմս պավլիկյանների, սկսում են մերժել ու չընդունել խաչը[1]:

Նիկիայի VII տիեզերաժողովում (787 թ.) պատկերապաշտները պատկերամարտության մեջ էին մեղադրում քաղկեդոնական վարդապետությունը չբաժանող զանազան նշանավոր միաբնակների՝ Փիլոքսենոս Մաբուգեցուն, Պետրոս Թափիչին, Սևերոս Անտիոքացուն, Հուլիանոս Հալիկառնասացուն և այլոց[2]: Պատկերամարտությունն, այսպիսով, տեսական հողի վրա կապվում էր միաբնակության հետ[3]:

Ավելի ուշ պավլիկյանների հետ միասին պատկերամարտ էին կոչվում նաև թոնդրակեցիները: Գրիգոր Մագիստրոսն օր.՝ պավլիկյանների ու թոնդրակեցիների մասին գրում էր «կռապաշտութիւն զմերս պաշտօն համարելով իբր եթէ պատուողացն զնշան խաչին և զպատկերս սրբոց»[4]:

Ամփոփելով, նշենք, որ Նիկիայի VII տիեզերական ժողովը, որը որպես իրադարձություն կարծես բեկում մտցրեց ողջ պատկերամարտական շարժման մեջ՝ ի նպաստ պատկերապաշտների և հիշյալ ժամանակաշրջանում բյուզանդական իրականու-

---

[1] Նշենք, որ Հովհան Օձնեցու աթոռակալության ժամանակ գումարված Դվինի ժողովում (719 թ.) ընդունված ժողովական կանոնների եթե թվով ԻԷ և ԻԸ-րդ կանոնները վերաբերում են խաչի երկրպագությանը, նրա օրհնման և օծման հարցերին, ապա մյուս կողմից, զուգահեռ որևէ հիշատակություն չկա պատկերի մասին: Կանոնագիրք Հայոց, Ա, Աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Ե., 1964, էջ 532-533: Այսպիսով, Հովհան Օձնեցին, սրբապատկերները օտարելով ու առանձնացնելով խաչերից, սկիզբ է դնում զուտ խաչապաշտության պաշտպանությանը, տե՛ս, Աահակյան Ա., նշվ. աշխ., էջ 155: Թեև պետք է նշել, որ «օտարումը» գործնականորեն սկսվել էր ավելի վաղ, VI-VII դդ., իսկ արդեն VIII դ. վերջնականապես հաստատված խաչի պաշտամունքի համեմատ, պատկերապաշտությունը շատ համեստ դեր ուներ Հայաստանում:

[2] Mansi, XIII, 317, XII, 1031:

[3] Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 18:

[4] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը: Բնագիրն առաջաբանով և ծանոթագրություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ.Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 168:

թյան մեջ իր ողջ կարևորությամբ հանդերձ, գրեթե անհայտ մնաց հայոց եկեղեցու և հայ իրականության համար: Հիշյալ ժողովը տիեզերական համարվելով թե՛ հունադավան, և թե՛ լատինադավան եկեղեցիների կողմից, նույն հեղինակությունը չունեցավ հայոց համար: Առհասարակ ժաղովն իր ընդունած որոշումներով հոգեհարազատ լինելով նան հայոց եկեղեցուն, այնուհանդերձ չընդունվեց վերջինիս կողմից՝ նախընթաց 3 ժողովները ևս չընդունելու (Քաղկեդոնի IV (451 թ.), Կ. Պոլսի V (553 թ.), Կ. Պոլսի VI (680/81 թթ.) և ընդհանրական եկեղեցուց մեկընդմիշտ տարանջատվելու հետևանքով:

Հետաքրքիր է, որ Յայսմավուրքի մեջ Նիկիայի VII տիեզերական ժողովը հիշատակվում է որպես «եօթներորդ սուրբ ժողով»[1]: Սակայն այդ հանգամանքն այնքան էլ էական չէ, նկատի ունենալով նրա՝ Մ. Օրմանյանի դիպուկ խոսքերով. «անտեղի եւ անճահ յաւելուածներով ատեն ատեն խճողուած լինելը»[2]: Ժողովի մասին միջնադարյան մեր պատմիչներն անգամ անիրազեկ են:

КАРИНЕ МЕЛИКЯН
ИИ НАН РА

## СУТЬ ИКОНОБОРСТВА И ИКОНОБОРЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ В АРМЕНИИ

### РЕЗЮМЕ

В 726 г. император Лев III Исавр запретил почитание икон. Массово стали уничтожаться иконы,мозаики,иллюминированные рукописы. Иконоборчество было официально признано на Иконоборческом соборе в 754 г. при поддержке императора Конс-

---

[1] Յայսմաւուրք ըստ օրինակի Տէր Իսրայէլի, հրա. Մատթէոս վարդ. Ջուխաճեան, Կ. Պոլիս, 1834, Բ, 185:

[2] Օրմանյան Մ., նշվ. աշխ., սյունակ 1054:

тантина V Копронима. В 787 состоялся Седьмой Вселенский собор, где были отвергнуты постановления иконоборческого собора 754 г., преданы анафеме иконоборцы и установлен догмат о иконопочитании. В 842 г. состоялся церковный собор, который провозглашал необходимость восстановления почитания икон и окончательно анафематствовал иконоборчество. Результатом иконоборчества стало уничтожение тысяч икон,а также мозаик, фресок, статуй святых.

Изображение Христа, Богородицы и святых известны в христианстве начиная со II в. И хотя живописные изображения Христа и святых были известны уже древней церкви, но единообразный канон отношения к иконам отсутствовал.

Среди критиков Армянской церкви существует мнение, что в ранний период ей было свойственно иконоборчество. Такое мнение возникло из-за того, что в целом в армянских храмах мало икон и нет иконостаса. Сама Армянская церковь заявляет о своём отрицательном отношении к иконоборчеству и осуждает его, поскольку имеет свою историю борьбы с этой ересью. Ещё в конце VI –начале VII вв., то есть более чем за столетие до возникновения иконоборчества в Византии, в Армении появились проповедники иконоборчества. Против них идеологически выступила Армянская церковь в лице католикоса Мовсеса Егивардеци и богослова Иоанна Майрагомеци. Но борьба с иконоборцами не ограничилась только богословием. Иконоборцы подверглись гонениям и, схваченные гардманским князем, отправились на суд Церкви в Двин. Таким образом, внутрицерковное иконоборчество было быстро подавлено, но нашло почву в сектанских народных движениях середины VII в. и начала VIII в.

KARINE MELIKYAN
IH NAS RA

# THE ESSENCE OF ICONOCLASTIC MOVEMENT AND ITS DISPLAYS IN ARMENIA

## RESUME

In 726 Byzantine Emperor Leo III the Isaurian began the iconoclast campaign. Iconoclasm condemned the making of any lifeless image, painting or statue,that was intended to represent Jesus Christ or one of the saints.The ban on icons was confirmed and established as dogma under Constantine V, who summoned the Council in 754. In period of iconoclasm complex theological arguments appeared, both for and against the use of icons.Byzantine Empress Irene initiated a new ecumenical council, the Council of Nicea in 787, supporting icon veneration. Like the empress Irene 50 years before her, the empress Theodora mobilized the iconodules and proclaimed the restoration of icons in 842. So, the controversy spanned roughly a century and imperial legislation barred the production and use of figural images.

Before this controversy broke out in the eight century, there had been sporadic expressions of an opposition to the representation of sacred subjects.

The Iconoclastic tendencies appeared at various times in Armenia. During the reign of the Catholicos Moses (574-604), three priests began to preach that the images painted in the churches should be destroyed.The Armenian iconoclasts proclaimed that the practice of representing sacred subjects in the churches was contrary to the commandments of the scriptures, that image-worship was a form of idolatry, of adoration of vile matter. The refutation is based first of all on scriptural arguments.The Church made every effort to suppress this Iconoclastic movement, but it spread further when it was revived by the Paulicians.

ՄԱՐԻԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# ՇԻՐԱԿԱՎԱՆԻ 862 Թ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

9-րդ դարում Հայաստանի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների համգույցում առանձնակի հետաքրքրական է ներկայացնել Շիրակավանի եկեղեցական ժողովի, ինչպես նաև հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների ուսումնասիրությունը: Դրանցում առնձնահատուկ տեղ է զբաղեցնում Հայոց կաթողիկոս Զաքարիա Ա Ձագեցուն (855-877) Կ. Պոլսի պատրիարք Փոտի (858-867, 877-886) հղած նամակը:

Պատրիարքը 9-րդ դարի երկրորդ կեսին նվիրվում է հայերին «դարձի» բերելու գործին: Հայոց և հունադավան եկեղեցիների միության խնդրի շուրջ շուտով սկսվում է նամակագրություն նրա ու Զաքարիա Ա Ձագեցու միջև: Նամակագիրներն արծարծում էին Քաղկեդոնի 451 թ. ժողովի՝ Քրիստոսի միաբնակության ու երկաբնակության առնչվող հարցերը: Առանձնակի կարևորություն ունի Հայոց կաթողիկոսին պատրիարքի հղած նամակը, որը մեզ է հասել միայն հայերեն, իսկ հունարեն բնագիրը ցարդ հայտնի չէ[1]:

---

[1] Այն հատվածաբար և թարգմանություններով հրատարակվել է մի քանի անգամ: Առաջին անգամ լույս է տեսել Ա. Մայի կողմից, 1844 թ. (տես Mai A., Spilegium Romanum X, Romae, 1844), ապա տեղ է գտել Մինիեի նշանավոր Հունական հայրաբանություն շարքում (տե՛ս Patrologie cursus comletus. Series graece, ed. J. Migne, 102, c. 703–714): Այնուհետև 19-րդ հարյուրամյակի վերջում այն Ն. Մառի և Ա. Պապադոպուլո -Կերամեվսի աշխատասիրությամբ հրատարակվեց Սանկտ-Պետերբուրգում ռուսերեն թարգմանությամբ հանդերձ (տե՛ս Фотия Архиепископа Константинопольского, О гробе Господа нашего Иисуса Христа и другие малые его творения на греческом и армянском язике, изданные и передисловием А. И. Пападопуло-Керамевсом и переведенные Г. С. Дестунисом и Н. Я. Марром, Православный Палестинский Сборник, 31–й выпуск, С. Петербург, 1892, с. 179–226): Այս հրատարակությունը նշանակալից է այն բանով, որ նրա մեջ օգտագործվել է Երուսաղեմի Մատենադարանի թիվ 633

Հայկական աղբյուրներում՝ Վարդան վարդապետի աշխատությունում և Փոտի՝ Աշոտ իշխանաց իշխան Բագրատունուն ու Զաքարիա Ա Ձագեցուն ուղղած նամակի հիշատակարանում, պատրիարքի նամակի գրության թվականի վերաբերյալ պահպանված հիշատակությունները համերաշխ չեն:

Համաձայն Վարդան պատմիչի՝ Փոտ պատրիարքը հայոց 318 թ.[1] Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու մոտ է ուղարկում Նիկիայի Հովհան[2] մետրոպոլիտին. «որ ուներ թուղթ

---

ձեռագիրը, բայց այն ևս լիակատար չէ: Փոտի նամակի ամբողջական տեքստը հրատարակել է Ներսես Ակինյանը (տե՛ս Թուղթ Փոտայ Պատրիարքի առ Զաքարիա Կաթողիկոսի Հայոց Մեծաց, - Հանդես Ամսօրեայ, Վիեննա, 1968, թիւ 1-3, սյն., 65-100: Նույնի թիւ 4-6, սյն. 129–156): Այս կապակցությամբ սույն նամակի հրատարակիչ Պ. Տեր–Պողոսյանը ծանուցում է դեռևս 1935 թ. Ն. Ակինյանի կողմից Երևանի Մատենադարանի թիվ 500 ձեռագրի մանրաժապավենը ստանալու և Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի թիվ 623 և 731 ձեռագրի ու Ն. Մառի հրատարակած բնագրերի հետ համեմատելու և նոր լիարժեք բնագիր պատրաստելու մասին: Հարկ է նշել նաև, որ Ն. Ակինյանի տեքստը հրատարակվեց Պ. Տեր–Պողոսյանի կողմից բնագրային որոշ շտկումներ կատարելուց հետո (տե՛ս Հանդէս ամսօրեայ, - Վիեննա, 1968, թիւ 1-3, սյն, 61–64):

[1] Պատմիչի հիշատակած հայոց 318 թ. համապատասխանում է 869–870 թթ.: Սակայն, այս թվականը հավաստի չէ: Քանզի Փոտն այդ ժամանակ աթոռանկ էր արվել: Տե՛ս Աղոնց Ն., Վասիլ Հայազն (Մեծագործ կայսր 867-868), - Երկեր, Ե., 2006, հ. Ա, էջ 421:

[2] Կ. Պոլսի պատրիարքի նամակաբերի վերաբերյալ հիշատակությունները համերաշխ չեն: Վարդան Վարդապետն իբրև նամակաբեր հիշատակում է Թրակիայի Նիկե քաղաքի արքեպիսկոպոս Հովհաննին (տե՛ս Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսաբանեալ աշխատասիրութեամբ Ղ. Ալիշանի (այսուհետն՝ Վարդան վարդապետ), Վենետիկ, 1862, էջ 82): Սակայն Փոտի նամակի հիշատակարանում պատրիարքի նամակաբերը՝ Նիկիայի արքեպիսկոպոս Վահանն է (տե՛ս Ակինյան Ն., Վահանայ Նիկիայ Եպիսկոպոսի Բանք, - Հանդէս ամսօրեայ, Վենետիկ, 1968, թիւ 7–9, սյն. 257–258): Այդուհանդերձ, նախապատվությունը տրվել է Վարդան վարդապետի հիշատակությանը, քանզի այն նույնական է Փոտի՝ հայերին ուղղված հունարեն նամակներից մեկի բովանդակությանը (տե՛ս Darrouze's J. Deux letters inédites de Photius aux Arméniens, Revue des études Byzantines, t. XXIX, Paris, 1971, p. 140. Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия IX – XI вв., М., 1988, с. 261–262):

առ Զաքարիա պատասխանի հարցմանն, թէ վասն է՞ր եղն չոր-րորդ ժողովն»[1]:

Համաձայն Փոտի նամակի հիշատակարանի. «ՅԺԱ. թուա-կանութեանն Հայոց առաքեաց Փոտ Կոստանդնուպոլսի հայրա-պետն զՎահան Նիկիոյ արքեպիսկոպոս ի Հայս առ Զաքարիա Հայոց մեծաց կաթողիկոս վասն հաւատոյ միաբանութեան: Իսկ Զաքարիա Հայոց կաթողիկոս արար ժողով ի Շիրակաւան եպիս-կոպոսաց բազմաց եւ կրաւնաւորաց, առաջի Աշոտոյ Հայոց սպարապետին, քանզի անդ նստէր ի բանակի ազատակոյտ զաւրաւք իւրովք, զոր զումարեալ էր վասն հիւսիսական կող-մանց ապստամբութեան: Անդ էր եւ Նանան ասորի, սարկաւագ մեծ եւ հռչակեալ վփղիսոփոս, իսկ ի յայն ի ժողովին խաւսեցաւ զբանս զայսոսիկ Վահան Նիկիոյ եպիսկոպոսն»[2]: Հայոց ՅԺԱ թ. ընդգրկում է 862 թ. ապրիլի 25-ից 863 թ. ապրիլի 24-ն ընկած ժա-մանակահատվածը, այսինքն՝ Փոտի պատրիարքության (858-867 թթ.) առաջին շրջանը: Մ. Օրմանյանը վերոհիշյալ նամակի գրության ժամանակաշրջան է դիտել 864-867 թթ[3]., որը, սակայն, չի փաստվում սկզբնաղբյուրների տվյալներով:

Այսպիսով, Փոտի նամակի գրության թվականը ճշգրտվում է այդ նամակի հիշատակարանով: Բացի այդ, 862 թ. ստույգ լի-նելն ամրապնդվում է Շիրակավանի ժողովի գումարման ժամա-նակ Աշոտ Բագրատունու՝ Հայոց սպարապետ լինելու իրողու-թյամբ: Իրավամբ, մինչն 862 թ. Աշոտ Բագրատունին զբաղեցնում էր Հայոց սպարապետի պաշտոնը, որն այդ թվականին նա փո-խանցեց իր եղբորը՝ Աբասին[4]:

Զաքարիա Ձագեցուն ուղղված նամակը վերնագրված է «Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա Կաթողիկոս Հայոց

---

[1] Վարդան վարդապետ, նույն տեղում:

[2] Մայր ցուցակ հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենե-տիկ, հ. երկրորդ, յօրինեց Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 1311, Ակինեան Ն., Վահանայ Նիկիայ Եպիսկոպոսի Բանք, նույն տեղում:

[3] Օրմանեան Մ., Ազգապատում, Ե., 2001, հ. Ա, էջ 1136:

[4] Юзбашян К., նշվ. աշխ., էջ 262:

Մեծաց, վասն երկու միաւորեալ բնութեանցն մի անձնաւորութիւն գոլոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ վասն ճշմարտախոհութեան ժողովոյ սուրբ Հարցն որ ի Քաղկեդոն»: Նամակը սկսում է կաթողիկոսին ուղղված երկարաշունչ գովեստներով[1]:

Նամակից իրազեկվում ենք, որ այն պատասխանն է՝ Հայոց կաթողիկոսի մինչ այդ Փոտին ուղղած նամակի: Թեն այն չի պահպանվել, սակայն այդ մասին վկայություն կա Փոտի նամակում: Վերջինից պարզ է դառնում, որ Հայոց կաթողիկոսը մերժողական դիրքորոշում է ունեցել Քաղկեդոնի ժողովի վերաբերյալ. «...վասն որոյ գրեալ էիք (Զաքարիա կաթողիկոս - Մ. Գ.) յաղագս ժողովոյն Քաղկեդոնի, թէ Կեղակարծութիւն եւ երկբայութիւն ունիմք ի համբաւոց ուստեք կարծեալ զնա հակառակ գոլ ճշմարտութեան»[2]: Փաստորեն, հերքվում է Մ. Չամչյանի այն պնդումը, թե Հայոց հայրապետը տեղյակ չի եղել Քաղկեդոնի կանոններին և միայն Փոտի նամակից հետո է, որ իրազեկվել է դրանց մասին[3]: Դա անհավանական է նաև այն պատճառով, որ Քաղկեդոնի ժողովը, կայացման օրվանից սկսած, բուռն քննարկման առարկա էր քրիստոնյա աշխարհում, որից դարեր շարունակ անմասն չմնաց նաև Հայոց եկեղեցին:

Պատրիարքը Զաքարիա կաթողիկոսին ուղղած նամակում անդրադառնում է ուղղափառության և հերետիկոսության միջև հայերի ցուցաբերած տատանումներին: Ի մասնավորի, նա նշում է, որ մինչև Ներսես Բ Աշտարակեցի (548-557 թթ.) կաթողիկոսի կողմից հրավիրված Դվինի (554 թ.) երկրորդ ժողովը, հայերն ընդունում էին Քաղկեդոնի ժողովի որոշումները[4]: Փոտի նամակում հայերի, մինչ Դվինի ժողովը, Քաղկեդոնի ժողովի որոշումների ընդունումը փաստվում է հետևյալ կերպ. «Բայց հակառակութիւն

---

[1] Ակինեան Ն., Թուղթ Փոտայ պատրիարք առ Զաքարիա Կաթողիկոս Հայոց Մեծաց (այսուհետև՝ Թուղթ Փոտայ), - Հանդէս ամսօրեայ, Վենետիկ, 1968, թիւ 1–3, սյն. 65 – 66:

[2] Նույն տեղում, սյն. 67 – 68:

[3] Չամչյանց Մ., Հայոց պատմություն, Ե., 1984, հ. Բ, էջ 685:

[4] Թուղթ Փոտայ, նույն տեղում:

վասն ժողովոյն ի Հայք ինչ ոչ գոյր. այլ ամենեքեան ընդունէին զժողովն մինչեւ ի ժողովն Դունայ. որ լինին ամենայն ամք Զ եւ Դ. (84 - Մ. Գ.) յերկրորդ ամէն Մարկիանոսի կայսեր մինչեւ ցտասներորդ ամն Յուստիանոսի, եւ մինչեւ ցվեցերորդ ամն Ներսէսի կաթողիկոսի, որ յԱշտարակացն էր. որ արար զժողով ի Դուին, ի սկզբան թագաւորելոյն Հայոց Պարսից. եւ ի չորեքտասաներորդ ամին Խոսրովու Պարսից արքային...»[1]:

Վտրդան պատմիչի աշխատությունը որոշ պարզություն է մտցնում Փոտի տեղեկությունների մեջ: Պատրիարքի նամակում նշված ԶԴ-ի (84) փոխարեն Վարդանը հիշատակում է Հայոց 104 թ.[2] այսինքն՝ ՃԴ:

Փոտի նամակի այս հատվածը սրբագրվում է հայերեն մեկ այլ սկզբնաղբյուրի միջոցով: Հովհաննես Գ Օձնեցուն (717-728 թթ.) վերագրվող «Սակս ժողովոց որ եղեն ի Հայք» գրության համաձայն, Փոտի նամակում նշված «Ի սկզբան թագաւորելոյն Հայոցի» փոխարեն կարդում ենք. «Ի սկզբան թուականութեանս Հայոց, Վեցերորդ ժողով արար Տէր Ներսէս ի Դունի, ի չորրորդ ամի կաթուղիկոսութեան իւրոյ, եւ ի ԻԴ. ամի թագաւորութեանն Խոսրովու արքային Պարսից. եւ ի ԺԴ ամի Յուստիանոսի կայսեր»[3]:

Դվինի վերոհիշյալ եկեղեցական ժողովի և հարակից հարցերի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ ենք հանդիպում նաև «Հայ քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան հայոց եկեղեցու պատմության կարևոր սկզբնաղբյուր» ("Narratio de rebus Armeniae") երկում[4]: Համաձայն երկի՝ «Երբ Ներշապուհ եպիսկոպոսը այդ հայտնեց Ներսես կաթողիկոսին, որն Աշտարակից էր և ուրիշ եպիսկոպոսների և ազատների, որոշվեց մեծ ժողով գումա-

---

[1] Նույն տեղում, այն., 67-68:

[2] Վարդան վարդապետ, էջ 84:

[3] Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 221:

[4] Փոտ պատրիարքի նամակի և "Narratio de rebus Armeniae" երկի սկզբնաղբյուրների մասին առավել մանրամասն տե՛ս Մելիքյան Կ., "Narratio de rebus Armeniae" Հայ – քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան հայոց եկեղեցու պատմության կարևոր սկզբնաղբյուր, Ե., 2007:

րել Դվին քաղաքում նույն այս Ներսես կաթողիկոսի քսաներորդ տարում, Հուստինիանոս կայսեր ԺԳ (13) տարում, և Պարսից Խոսրով արքայի ԻԴ (24) տարում, Ցիստբուզիտի նախատակության տարում, Հայոց թվականության սկզբում, այն ժամանակ, երբ նզովեցին Քաղկեդոնի սուրբ ժողովը որպես նեստորական ըստ Աբդիշոյի գրության, որովհետև այդ (նույն) տարում թարգմանեցին Աբդիշոյի կողմից բերված վերոհիշյալ գրությունները, որոնք գրվել էին Տիմոթեոսի և սարի Ֆիլիքսի կողմից և որոնք ուղղված էին Քաղկեդոնի ժողովի և նրանց դեմ, ովքեր ի վերա Քրիստոսի, մեր աստուծո խոստովանում էին երկու բնություն...»[1]:

Հայերի կողմից Քաղկեդոնի ժողովի մշակած սկզբունքներն ընդունելու մասին Փոտի նամակի հաջորդ դրվագը վերաբերում է Վարդան Մամիկոնյանի (Կարմիր Վարդան) գլխավորությամբ 571-572 թթ. Պարսկաստանի դեմ բարձրացրած ապստամբության անհաջողությունից հետո նրա՝ Կ. Պոլիս մեկնելուն ու քաղկեդոնականությանը հարելուն[2]: Պարսից տիրապետության դեմ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ բարձրացված ապստամբության և սրան հաջորդող իրադարձությունների մասին որոշ տեղեկություններ ենք քաղում 9–րդ դ. վրացական մի սկզբնաղբյուրից, որի հեղինակ է դիտվել վրաց կաթողիկոս Արսեն Սափարացին: Այս սկզբնաղբյուրը, ի տարբերություն Փոտի նամակի և «Narratio»-ի, որոշ տարբերություններ է պարունակում վերը նշյալ իրադարձությունների մասին. «... խանգարվեց հոգևորական նոր բոլոր բարի սովորույթն ու կարգը, և որեցոր հաստատվեց չարն, յեպիսկոպոսարանները դարձան կռատներ... այս մեծ անպատվությունը չհանդուժեց Վարդան Մամիկոնյանը... և նրա ազգական ուրիշ նախարարները, վորոնց անպատվել եյին, սպանեցին ոմն պարսիկ Սուրեն մարզպանին՝ նրա տունը կրակի յեն-

---

[1]Բարթիկյան Հ., "Narratio de rebus Armeniae", հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ քաղկեդոնական սկզբնաղբյուր, - Հայ – բյուզանդական հետազոտություններ, Ե., 2002, հ. I, էջ 104 – 105:
[2]Թուղթ Փոտայ, այն. 69-70:

թարկելով, և ընտանիքով hանդերձ փախուստի դիմեցին դեպի Կոստանդնուպոլիս: Գնալով այնտեղ, նրանք բարյաց[ակամ] ընդունելություն գտան Հուստինիանոս (Իստվինիան) թագավորի կողմից: Սակայն նրանք չմիաբանեցան հույների հետ (բերձենների) հետ. և թագավորը զարմացավ և հարցրեց պատճառը: Յեվ նրանք ասացին, «վոր վեճ յեղավ Քաղկեդոնի ժողովի մասին, վորը մեր վարդապետները չընդունեցին»»[1]:

Պատրիարքի նամակում Կ. Պոլսի Սուրբ Սոֆիայի տաճարի կառուցման թվական է հիշվում է 553 թ., և պնդում է, որ հայերը մասնակցել են Կ. Պոլսի հինգերորդ տիեզերական ժողովին[2]: Սակայն, իրականում, 553 թ. ոչ թե Սուրբ Սոֆիայի տաճարի կառուցման թվականն է, այլն Կ. Պոլսի հինգերորդ տիեզերական ժողովի հրավիրման թիվն է: Հակառակ պատրիարքի պնդմանը, հայերը այս ժողովին չեն մասնակցել: Նրանք մասնակցել են 572 թ. հայ և հույն եպիսկոպոսների միության ժողովին[3]:

Այս իրադարձությունների շարադրանքը հանդիպում ենք նաև «Հայ–քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան հայոց եկեղեցու պատմության կարևոր սկզբնաղբյուր»-ում՝ փաստական ու ժամանակագրական անճշտություններով լեցուն[4]:

Փոտը Զաքարիա հայրապետին ուղղած նամակում անդրադառնում է հայերի կողմից քաղկեդոնականություն ընդունելու մեկ այլ պատմության, որը տեղի է ունեցել դարձյալ Բյուզանդիայի մայրաքաղաքում, այս անգամ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ: Ըստ այսմ Մուշեղ Մամիկոնյանը, երբ բյուզանդական և հայոց զորքերով նվաճեց պարսից Խոսրովի թագավորությունը և ինքը մեծարվելով պարսից թագավորի կողմից՝ ուղարկվեց Բյուզանդիայի Մորիկ (582–602 թթ.) կայսեր մոտ:

---

[1] Մելիքսեթ–Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. I (Ե-ԺԲ դար), Ե., 1943, էջ 41 - 42:

[2] Թուղթ Փոտայ, սյն. 69 – 70:

[3] Վարդանյան Վ., Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 264, Մելիքյան Կ., նշվ. աշխ., էջ 98:

[4] Այս մասին մանրամաս տե՛ս Մելիքյան Կ., նշվ. աշխ., էջ 91-100:

Վերջինս հրամայեց ժողով գումարել: Հավաքվեցին 21 հայ եպիսկոպոսներ և գումարեցին վեցերորդ ժողովը և հայերն ընդունեցին Քաղկեդոնի որոշումները Հայոց կաթողիկոս Մովսեսի օրոք[1]:

Արսեն Սափարացու հաղորդմամբ՝ այս տեղեկությունները համեմատաբար հանգամանալից են և որոշ իմաստներով ևս հակասում են Փոտի տվյալներին[2]:

The state of Cilician Armenian has brilliant, but short life from the end of the 13$^{th}$ to the third quarter of the 14$^{th}$ centuries. Formed through forced resettlement, Cilicia during its existence was subjected to numerous invasions. So the state was forced to constantly develop its defensive potential and a strong military organization. The study of the Cilician soldier uniforms and arms is a part of the defence history of Cilician Armenia. Similar research experience may also serve as a progress indicator for the study of the history of Cilicia, but not through enlarging the geographical or temporal scopes, but by deepening of the study, which is the themes novelty. Numismatic and seal-study data, together with the written and archaeological data, and comparative analysis of the detailed design, give a notion of a Cilician Armenian soldier's uniform and equipment. The attempt of this study is an important step for research of the history of defensive and military policy of Cilician Armenia.

ԶՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1201–1337 թթ.*)

Միջազգային առևտուրն առաջնային նշանակություն ուներ Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսության համար: Լայն սպառում ապահովելով բազմատեսակ ապրանքների համար՝ այն խթանում էր երկրի արհեստների ու գյուղատնտեսության զարգացումը, ինչպես նաև մեծ եկամուտներ բերում պետական գանձարան: Արդեն XIII դ. սկզբից Կիլիկյան Հայաստանն առևտրական կապեր հաստատեց միջերկրածովյան երկրների՝ մասնավորապես Վենետիկի և Ջենովայի Հանրապետությունների հետ, որոնք անմիջապես սկսեցին մրցակցել Հայոց թագավորությունում ամուր դիրքեր գրավելու համար: Գրեթե հարյուր քառասուն տարի Հայկական Կիլիկիան կարևոր դերակատարում էր պահպանում միջերկրածովյան առևտրում, ինչը չէր կարող չանդրադառնալ պետության արտաքին քաղաքականության վրա: Հոդվածում փորձելու ենք վերհանել միջազգային առևտրի ազդեցության աստիճանը Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքական հարաբերությունների վրա: Ընդ որում, հատուկ ուշադրության է արժանանալու առևտրի գործոնը՝ որպես Հայոց թագավորության անկման հիմնախնդիրը: Վերոնշյալ հարցերին հնարավորինս ամբողջական մոտեցում ցուցաբերելու նպատակով հարկ ենք համարում ներկայացնել այն գլխավոր սկզբունքը, որի միջոցով իրականացնելու ենք մեր վերլուծությունը: Այսպես, առաջին հերթին առանձնացնելու ենք XIII-XIV դդ. թե Արևելքում, և թե Արևմուտքում տեղի ունեցած ռազմաքաղաքական

---

* Հոդվածի ժամանակային սահմանները պայմանավորել ենք Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական պայմանագրի կնքման (1201) և Այաս նավահանգիստը մամլուքներին հանձնելու (1337) թվականներով:

վճռորոշ իրադարձությունները, որոնք շրջադարձային նշանակություն էին ունենում նաև միջազգային առնտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար: Ապա, համադրելով աշխարհաքաղաքական այդ կարևոր փոփոխությունների և Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրային պայմանագրերի կնքման ժամանակագրական տվյալները՝ փորձելու ենք երևան հանել դրանց միջև եղած պատճառահետևանքային կապը, ինչի օրինակով կարելի է բավական փաստարկված դիրքերից ներկայացնել տնտեսական շահի և քաղաքական հարաբերությունների փոխազդեցության ընթացքը:

1096-1270 թթ. տեղի ունեցած խաչակրաց արշավանքներն իրականություն չէին դառնա, եթե չլինեին Վենետիկի (Ս. Մարկոսի Հանրապետություն), Ջենովայի, Պիզայի և իտալական այլ հանրապետությունների ու քաղաքների տրամադրած մեծաքանակ նավերը, որոնց դիմաց նրանք արտոնություններ էին ստանում նվաճված տարածքներում: Իտալական հանրապետությունները ծանրակշիռ դիրքեր ունեին Եվրոպայի քաղաքական կյանքում՝ հաճախ լուրջ ազդեցություն գործելով նույնիսկ պապական դիվանագիտության վրա: Միաժամանակ լինելով միջազգային առևտրի նախաձեռնող գլխավոր կողմը՝ նրանք մեծ եկամուտներ էին ապահովում Արևելքի գերտերություններին՝ հատկապես Եգիպտոսի մամլուքյան սուլթանությանն ու մոնղոլական պետություններին, ինչը վերջիններիս վրա քաղաքական ազդեցություն ունենալու բավական լայն հնարավորություններ էր ընձեռում: Ի տարբերություն XIII-XIV դդ. Մերձավոր Արևելքում խորացող տնտեսական ճգնաժամի, Արևմտյան Եվրոպայում այդ նույն ժամանակամիջոցում տեղի էին ունենում ֆինանսատնտեսական խորքային ձևափոխումներ: Դրանց շնորհիվ տնտեսական շահն ավելի կատարելագործված և արդյունավետ էր սկսում ներազդել քաղաքական գործընթացների վրա: Այդ փոխազդեցությունն ամենից ցայտուն արտահայտվում էր միջազգային առևտրի ասպարեզում: Եվրոպայում ֆինանսադրամական հարաբերություններում հեղափոխական փոփոխությունների բնութագրիչ օրի-

նակներից էր բանկային համակարգի ձևավորումն ու զարգացումը: Ֆլորենցիայի մեծահարուստ ընտանիքներին պատկանող ու նրանց իսկ ազգանուններով անվանված Բարդի, Պերուցցի, Աչիայուլլի, Մոցցի և մի շարք այլ բանկերն իրենց մասնաճյուղերն էին հիմնել Արևմտյան Եվրոպայի մեծ քաղաքներում: Դրանցից առավել հզոր Բարդի և Պերուցցի տները կարճ ժամանակամիջոցում սկսեցին ոչ միայն ներգրավվել միջազգային առևտրում, այլ իրենց ֆինանսների միջոցով կարողանում էին ներթափանցել նաև Եվրոպայի քաղաքական կյանք: Բանկերը հաճախ միջնորդի դեր էին կատարում պապական գանձարան ուղղվող տարբեր հարկերի և դրամական այլ մուտքերի համար: Հայտնի է, որ նրանք ներկայացուցչություն ունեին Ավինյոնում, որը Բարդիի ու Պերուցցիի ծաղկման ժամանակաշրջանում (1309-1343 թթ.) պապության նստավայրն էր: Միևնույն ժամանակ նրանք մեծ ֆինանսներ էին տրամադրում արևմտաեվրոպական շատ միապետերի: Բավական է միայն հիշատակել, որ Ֆրանսիայի հետ Հարյուրամյա պատերազմի (1337-1453 թթ.) մեջ գտնվող Անգլիայի թագավոր Էդուարդ 111-ը (1312-1377 թթ.) 1339 թ. Բարդի և Պերուցցի բանկերին 1355000 ֆլորինի[1] պարտք ուներ, որն ահռելի գումար էր: Հենց այդ պարտքերն էլ 1340-ական թվականներին ֆլորենտական բանկերի սնանկացման գլխավոր պատճառ դարձան[2]:

XII դ. վերջին խաչակրաց պետություններին Այյուբյան սուլթանության տիրակալ Սալահ ադ-Դինի (1171-1193 թթ.) հասցրած ռազմական ծանր հարվածները սասանում էին նաև դրանցում

---

[1] Ֆլորին ոսկե դրամը սկսել է հատվել 1252 թ. Ֆլորենցիայում և կշռել է 3,5 գր (տե՛ս Луццатто Дж., Экономическая история Италии. Античность и средние века, М., 1954, с. 411).

[2] Տե՛ս Рутенбург В., Очерк из истории раннего капитализма в Италии: флорентийские компании XIV века, М.-Л., 1951, с. 51-92, 102-104. Дживелегов А., Торговля на Западе в средние века, СПб., 1904, с. 162. Hunt E., The Medieval Super-companies. A Study of the Peruzzi Company of Florence, Cambridge, 1994, p. 127-156.

ամրացած Ջենովայի, Վենետիկի և Պիզայի դիրքերը, ինչը չէր կարող նրանց չստիպել փնտրելու նոր, այլընտրանքային առևտրական հենակետեր: Այդ դերում, անշուշտ, հզորացող Կիլիկյան Հայաստանն անփոխարինելի էր: Եվ արդեն 1201 թ., մի քանի ամսվա տարբերությամբ, Ջենովայի և Վենետիկի Հանրապետությունները պայմանագրեր են կնքում Հայոց արքա Լևոն Ա-ի (որպես Կիլիկյան Հայաստանի իշխան՝ 1187-1198 թթ., որպես թագավոր՝ 1198-1219 թթ.) հետ: Ուշագրավ է, որ ջենովացիներն ավելի վաղ էին սկսել բանակցությունները և, ամենայն հավանականությամբ, իրենց իսկ խնդրանքով հայկական կողմից հնարավորություն ստացել նույնիսկ բնակվել Սիսում, Մամեստիայում և Տարսոնում, մինչդեռ վենետիկցիներին Կիլիկյան Հայաստանն այդ ժամանակամիջոցում առավելապես հետաքրքրում էր որպես տարանցիկ երկիր[1]:

Քաղաքական հետագա զարգացումները ցույց տվեցին, որ դրանք նախապատրաստական, ռազմավարական քայլեր էին: Այսպես, նույն 1201 թ. Վենետիկի և 1199 թ. մեկնարկած խաչակրաց IV արշավանքի առաջնորդների միջև կնքվում է պայմանագիր, որով վերջիններին տրամադրվելու էին բավարար քանակությամբ նավեր՝ 33500 զինվորների, 9000 ձիերի և անհրաժեշտ բոլոր սպառազինությունների տեղափոխման համար: Ի դեպ, արշավանքին մասնակցելու էին նաև վենետիկյան զինված ուժերը՝ 94-ամյա դոժ Էնրիկո Դանդոլոյի (1192-1205 թթ.) գլխավորությամբ: Սակայն, Սուրբ Երկիր ուղղվելու փոխարեն խաչակիրները 1204 թ. նվաճելով Կոստանդնուպոլիսը՝ հիմնում են Լատինական կայսրությունը[2]: Դրանում Վենետիկի դերն այնքան մեծ է եղել, որ նույնիսկ XIV դ. ստեղծագործած Հեթում Նղիրցին այդ իրադարձությունների մասին գրում է. «Ի թվին ՈԾԳ (1204 թ.)

[1] Langlois V., Le Trésor des chartes d'Armenie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise, 1863, p. 105-112.

[2] Commandant B., Histoire des Républiques Maritimes Italiennes, Venise, Amalfi, Pise, Genes, Paris, 1955, p. 71-76.

զունդ լ-Ֆլանդրն եւ տուկն Վէնետկաց առին զԿոստանդնուպօլիս ի Յունաց, եւ եղեւ կայսր Կոստանդնուպօլսի Պաղտինն»[1]:

Վենետիկը ոչ միայն արտոնյալ կարգավիճակ ստացավ սևծովյան առևտրում, այլև մեծ թափով սկսեց ընդարձակվել Արևելյան Միջերկրականում: Կիլիկյան Հայաստանի հետ առևտրական պայմանագրի ստորագրմանը հետևեց Կրետեի գաղութացումը: 1207 թ. նվաճելով այդ կղզու գլխավոր նավահանգիստ Կանդիան՝ վենետիկցիներն այն վերածեցին առևտրական կարևոր հանգրվանի[2]: Ջենովային գրեթե դուրս մղելով Սև ծովից՝ Վենետիկյան Հանրապետությունը փորձում էր գերակայություն հաստատել նաև Միջերկրական ծովում՝ այդ թվում մահմեդական պետությունների հետ տարվող առևտրական շփումներում: Հենց վերոնշյալ գործընթացներն էին, որ Իկոնիայի սուլթանության մղեցին անցնելու վճռական քայլերի: Փոքր Ասիայում սելջուկների արշավանքների գլխավոր թիրախները դարձան կարևոր նավահանգիստներն ու ճանապարհային հանգուցակետերը: 1205 թ. ձախողելով Տրապիզոնի նվաճումը՝ սելջուկները 1207 և 1214 թթ. կարողացան գրավել Ատտալիա (Անտալիա) ու Սինոպ քաղաքները՝ դուրս գալով Միջերկրական և Սև ծովեր[3]: Նկատենք, որ 1205-1210 թթ. միջակայքում Վենետիկի և սուլթան Քեյ-

---

[1] Գունդ լ-Ֆլանդրն՝ Ֆլանդրիայի կոմս. այստեղ խոսքը վերաբերվում է Ֆլանդրիայի կոմս և Լատինական կայսրության առաջին կայսր Բալդուին I-ին (1204-1206): «Տուկն Վէնետկաց»՝ խոսքը Վենետիկի դոժ Էնրիկո Դանդոլոյի մասին է (տե՛ս Հեթում Նղիրցի, Համառօտ պատմութիւն ժամանակաց, – Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Ե., 2007, էջ 539):

[2] Բարթիկյան Հ., Նյութեր Կրետեի հայկական գաղութի վերաբերյալ, – Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Ե., 2002, էջ 493: Jacoby D., La colonisation militaire vénitienne de la Crete au XIIIe siècle: Une nouvelle approche, - Le partage du monde, échanges et colonisation dans la Méditerranée mediévale, Paris, 1998, p. 298-299.

[3] Տե՛ս Микаелян Г., История Киликийского Армянского государства, Е., 1952, с. 191-196. Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե., 2005, էջ 67: Heyd W., Histoire du commerce du Levant au moyen âge, t. I, Amsterdam, 1967, p. 301-304, 366.

Խուլտով I-ի (1204-1210) միջև կնքվել էր առևտրական պայմանագիր[1]: Հետաքրքրական է, որ Կիլիկիայից առևտրական կապ էր պաշտպանվում թե՛ Սինոպի, և թե՛ Անտալիայի հետ: Ասորիքից Սինոպ ապրանքների տեղափոխման գլխավոր ուղիներից մեկն անցնում էր Կիլիկյան Հայաստանով[2]: Պատահական չէ, որ 1201 թ. Լևոն Ա-ն իր արտոնագրով վենետիկցիներին հնարավորություն էր ընձեռել առանց տարանցիկ մաքսատուրքի առևտուր անել Հայոց թագավորության ամբողջ տարածքում՝ բացառությամբ Կիլիկիան և Ասորիքը միմյանց հետ կապող Պորտելլա լեռնանցքի, որն անցնելիս նրանք պարտավոր էին վճարել այդ հարկատեսակը[3]:

Փորձելով կասեցնել Վենետիկի առաջխաղացումը՝ Ջենովան 1215 թ. Կիլիկյան Հայաստանից, իսկ 1218 թ. Կիպրոսի թագավորությունից ձեռք բերեց նոր արտոնագրեր[4]: Սակայն շատ չանցած՝ 1219 թ., Նիկիայի կայսրությունից, իսկ 1220 թ. կրկին Իկոնիայի սուլթանությունից Վենետիկի Հանրապետությունը ստացավ իր հերթական առևտրական շնորհագրերը[5]:

1243 թ. Քյոսե-դաղի ճակատամարտում Իկոնիայի սուլթանությունը ջախջախիչ պարտություն է կրում մոնղոլական զորքերից, ինչը վերջ է դնում նրա գերիշխանությանը Փոքր Ասիայում: Դրանով սելջուկները զրկվում էին նաև առևտրական կարևոր ճանապարհների տնօրինումից: Նույն թվականին Կեսարիայում Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների միջև կնքվում է համաձայ-

---

[1] **Heyd W.**, նշվ. աշխ., հ. I, էջ 301-304:

[2] **Տեր-Ղևոնդյան Վ.**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, Ե., 1994, էջ 136-137:

[3] **Langlois V.**, նշվ. աշխ., էջ 110: **Микаелян Г.**, նշվ. աշխ., էջ 192:

[4] **Langlois V.**, նշվ. աշխ., էջ 126: **Otten-Froux C.**, Les «Italiens» a Chypre (fin XIIe-XVe siècles), - Identités croisees en un milieu méditerranéen: le cas de Chypre (Antiquité-Moyen âge), Mont-Saint-Aignan, 2006, p. 281.

[5] Տե՛ս **Heyd W.**, նշվ. աշխ., հ. I, էջ 301-306: **Соколов Н.**, Колониальная политика Венеции в XIII в., - Средние века, Вып. 5, М., 1954, с. 176.

նազիր[1]: Երկու տարի անց՝ 1245 թ., Հեթում Ա-ը վերահաստատում է Վենետիկին շնորհած արտոնագրերը[2]:

Անկասելի արագությամբ առաջ շարժվող մոնղոլական ռազմական մեքենան, այնուամենայնիվ, շրջանցում է Հայկական Կիլիկիան և Տրապիզոնի կայսրությունը: Այս երկու պետությունները Միջերկրական և Սև ծովեր դուրս եկող լավագույն դարպասներն էին, իսկ դրանց ասպատակումը կնշանակեր վերջնականապես խաթարել տարածաշրջանում ձևավորված առևտրական կապերի համակարգը, ինչը հետագայում մեծ եկամուտներ էր ապահովելու մոնղոլներին:

1245 թ. Լիոնի տիեզերական ժողովում պապությունը որոշում է պատվիրակություն ուղարկել Արևելք, որի գերնպատակն էր բանակցել մոնղոլների հետ: Այս և հետագայում իրականացված բոլոր առաքելությունների գլխավոր դերակատարները Դոմինիկյան և Ֆրանցիսկյան միաբանությունների անդամներն էին: Պլանո Կարպինիի, Անդրե դե Լոնժյումոյի, Ասցելինի և Խաչակրաց VII արշավանքի (1248-1254 թթ.) առաջնորդ՝ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ի (1226-1270 թթ.) կողմից ուղարկված ֆրանցիսկյան միաբան Վիլհելմ Ռուբրուքի պատվիրակությունները մոնղոլների հետ բանակցություններում մեծ հաջողությունների չհասան[3]: Մինչդեռ Հեթում Ա-ը (1226-1269 թթ.) կարողացավ առաջ անցնել եվրոպացիներից՝ մոնղոլների հետ արդյունավետ բանակցություններ արձանագրելու մեջ և 1254 թ. Կարակորումում բացառիկ պայմանավորվածություններ ձեռք բերեց Մանգու խանի (1251-1259 թթ.) հետ[4]:

---

[1] Գալստյան Ա., Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները, - Պատմաբանասիրական հանդես, 1964, N 1, էջ 96-100:

[2] Langlois V., նշվ. աշխ., էջ 143-145:

[3] Նշենք, որ Արևելքում եվրոպական առևտրական հենակետերը գրեթե մշտապես համընկնում էին միաբանությունների քարոզչական օջախների հետ, ինչը վկայում է նրանց սերտ համագործակցության մասին (տե՛ս Свет Я., После Марко Поло, М., 1968, с. 13-26, 56-57):

[4] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 367: Richard J., La Papauté et les missions d'Orient

Ամենևին չի բացառվում, որ Հեթում Ա-ը մոնղոլական արքունիքում, ի թիվս շատ հարցերի, շոշափել է նաև միջազգային առևտրին առնչվող որոշակի խնդիրներ, ինչպիսիք կարող էին լինել, օրինակ, հեռավոր Չինաստանից ձգվող Մետաքսի ճանապարհի՝ Միջերկրական Արևելք մտնող ճյուղավորումների ճշգրտումը, ինչպես նաև Վենետիկի և Ջենովայի հետ առևտրական կապերի հաստատումը, որտեղ Կիլիկյան Հայաստանը միջնորդական կարևոր դեր ստանձնելու մեծ հնարավորություններ ուներ: Առավել ևս, որ Հայոց թագավորությունն իտալացիների հետ առևտրական սերտ փոխհարաբերությունների արդեն հիսուն տարվա ավանդույթներ ուներ:

Մանգու խանի հրամանով Չինգիզ խանի թոռը՝ Հուլավուն, 1256 թ. հաստատվելով Իրանում, հիմնում է մոնղոլական տերության ուլուսներից մեկը՝ Իլխանությունը (1256-1353 թթ.), որը 1261 թ. մեծ խան Խուբիլայի (1259-1294 թթ.) կողմից ճանաչվեց որպես ինքնուրույն պետություն: Եվ արդեն 1258 թ. Հուլավուն նվաճում է Բաղդադը և կործանում Աբբասյան խալիֆայությունը: Այս իրադարձությունը շրջադարձային նշանակություն ունեցավ Միջերկրական Արևելքի ոչ միայն քաղաքական իրավիճակի համար, այլև դեռ մեծ փոփոխություններ պետք է առաջացներ նաև տարածաշրջանի տնտեսական կյանքում: Այսպես, եթե մինչ այդ Հնդկաստանից և Չինաստանից ապրանքները Պարսից ծոցով բերվում էին Բաղդադ, որտեղից դրանք քարավանային ճանապարհներով ուղղվում էին խաչակրաց նավահանգիստներ, ապա Հուլավյանները ճանապարհային գլխավոր հանգուցակետը տեղափոխում էին դեպի հյուսիս՝ իրենց մայրաքաղաք Թավրիզ[1]: Պարզ է, որ նախկին բոլոր ճանապարհները կորցնելու էին երբեմնի նշանակությունը և արդեն անհրաժեշտ էր փնտրել առևտրական նոր մայրուղի, որը պետք է դուրս գար մի կողմից Միջերկրական, իսկ մյուս կողմից էլ՝ Սև ծովեր: Հենց Այաս-Թավրիզ

---

au moyen âge (XIII[e]-XV[e] siècles), Ecole Française de Rome, Paris, Rome, 1998, p. 70-81.

[1] **Микаелян Г.**, նշվ. աշխ., էջ 352:

ճանապարհն էլ դառնում է այդ ռազմավարական ծրագրերի արդյունքը: Ուղու միջնամասում այն ճյուղավորվում և ուղղվում էր Տրապիզոնի կայսրություն: Բացի այն, որ մոնղոլներն այդպիսով հեշտությամբ կապվում էին ամբողջ սևծովյան ավազանի հետ, Թավրիզը շատ ավելի հարմար կետ էր հյուսիսի հետ առևտրական կապ պաշտպանելու համար: Հուլավուն թույլ է տալիս իտալացի վաճառականներին առևտրական գործունեություն ծավալել իր տերության սահմաններում, ուր վերջիններս առավելապես թափանցում էին Կիլիկիայի տարածքով: Պատահական չէ, որ ջենովական նոտարական սկզբնաղբյուրներում Այասի մասին առաջին վկայությունները թվագրվում են 1257, 1259 և 1266 թթ.[1]:

Ռազմաքաղաքական այս նշանակալից փոփոխություններն էլ ավելի են սրում Վենետիկի, Ջենովայի և Պիզայի Հանրապետությունների միջև անզիջում պայքարը միջազգային առևտրում գերակայություն հաստատելու համար: Այդ հակամարտությունն ի վերջո վերաճում է պատերազմի: 1256 թ. սկսվում է ջենովա-վենետիկյան առաջին պատերազմը (1256-1270 թթ.), որը պատմության մեջ հայտնի է Սուրբ Սաբա անվամբ: 1258 թ. հունիսին Աքքայի ափերի մոտ նրանց միջև տեղի է ունենում խոշոր ծովամարտ: Չնայած նավերի թվային գերակշռությանը՝ ջենովական կողմը ջախջախիչ պարտություն է կրում[2]:

Նիկիայի կայսրությունը, դաշնակցելով Ջենովայի հետ, 1261 թ. ազատագրում է Կոստանդնուպոլիսը և վերականգնում Բյուզանդական կայսրությունը: Թեև ջենովացիների կողմից իրականում որևէ օժանդակություն չէր ցուցաբերվել, սակայն

---

[1] Racine P., L'Aïas dans la seconde moitie du XIIIe siecle, - Rivista di bizantinistica, N 2, 1992, p. 181-183.

[2] Տե՛ս Հեթում Պատմիչի ժամանակագրությունը, - Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1956, էջ 70: Sopracasa A., I trattati con il regno armeno di Cilicia, 1201-1333, Roma, 2001, p. 41-42: Lane F., Venice. A Maritime Republic, London, 1973, p. 74-77. Dotson J. E., Venice, Genoa and the Control of the Seas in the Thirteenth and Fourteenth Centuries, - War at Sea in the Middle Ages and Renaissance, New York, 2003, p. 120.

պետության տնտեսական ծանր կացությունը որևէ կերպ շտկելու, ինչպես նաև վենետիկցիների դեմ պայքարն ավելի արդյունավետ կազմակերպելու համար, բյուզանդական նոր՝ Պալեոլոգոսների արքայատոհմի հիմնադիր և Լատինական կայսրության դեմ ապստամբության առաջնորդ Միքայել VIII Պալեոլոգոսը (1261-1282 թթ.) 1261 թ. մարտի 13-ին Նիմֆե քաղաքում Ջենովայի հետ կնքում է պայմանագիր: Սևծովյան բոլոր նեղուցներն այդուհետև համարվում էին փակված բոլոր՝ ոչջենովական և ոչբյուզանդական նավերի համար[1]:

Պատահական չէ, որ աշխարհաքաղաքական այս վճռորոշ գործընթացների պայմաններում, Նիմֆեյան պայմանագրի ստորագրումից մի քանի ամիս անց՝ 1261 թ. նոյեմբերին, Հեթում Ա-ը վենետիկյան պատվիրակությանը հանձնում է հերթական արտոնագիրը: Այստեղ արդեն վենետիկցիները շատ ավելի մեծ շահագրգռվածություն էին ցուցաբերել Կիլիկիայի հետ առևտրական կապերի զարգացման համար, քանի որ իրենց իսկ ցանկությամբ նրանց տարածքներ էին հատկացվելու Միսում և, իհարկե՝ Այասում[2]:

Օգտվելով Իլխանության՝ Ոսկե Հորդայի և Չաղաթայի ուլուսի հետ ունեցած սուր հակամարտությունից՝ 1266 թ. մամլուքյան բանակը Բայբարսի (1260-1277 թթ.) գլխավորությամբ ներխուժում է Կիլիկյան Հայաստան: Մարի բնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայկական զորքերը, որոնց առաջնորդում էին Հեթում Ա-ի որդիներ Լևոնը և Թորոսը, պարտվում են: Ավերի ու թալանի են ենթարկվում Այասը, Մամեստիան, Տարսոնն ու Ադանան, Միսում հրի է մատնվում Մայր տաճարը և թալանվում արքունական ամբողջ գանձարանը: Երկու տարի անց՝ 1268 թ., Բայբարսը նվաճում է Անտիոքի դքսությունը[3]: Սա ծանր հարված էր խաչակիրների մյուս տիրույթնե-

---

[1] Տե՛ս Lane F., նշվ. աշխ., էջ 74-77: Commandant B., նշվ. աշխ., էջ 91-93: Свет Я., նշվ. աշխ., էջ 39-42:

[2] Sopracasa A., նշվ. աշխ., էջ 43-46:

[3] Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 71-72:

րին, որոնք, փաստորեն, զրկվեցին Կիլիկյան Հայաստանի հետ ցամաքային տնտեսական կապից, որն ապահովվում էր Պորտելլայով: Դժվար չէր կանխատեսել, որ մամլուքյան կործանարար ուժն ի վերջո հասնելու էր Արևելքում խաչակիրների տիրապետության տակ գտնվող մյուս տարածքներին ևս, ինչն ահազանգ էր նաև դրանցում հանգրվանած իտալական հանրապետությունների համար, ուստի վերջիններս պետք է էլ ավելի ամրացնեին իրենց դիրքերը թե՛ Կիլիկյան Հայաստանում, և թե՛ Կիպրոսի թագավորությունում: Առավել ևս, որ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ի՝ 1270 թ. առաջնորդած խաչակրաց VIII արշավանքը ձախողվել էր: Եվ ահա, ջենովա-վենետիկյան առաջին պատերազմի ավարտվելուն պես, Լևոն Բ-ը (1269-1289) Վենետիկի դեսպան Տոմազո Բոնդումիերին հանձնել էր բազմաթիվ արտոնությունների խոստումներ պարունակող նամակ՝ ուղղված դոժ Լորենցո Տիեպոլոյին: Նամակը թվագրվում է 1270-1272 թթ. միջակայքով: Իսկ արդեն 1272 թ. հունվարին Հայոց արքան վենետիկցիներին շնորհում է հերթական արտոնագիրը[1]:

1275 թ. մամլուքները կրկին ներխուժում են Կիլիկյան Հայաստան՝ ավերելով ու թալանելով Այասը, Մամեստիան և Տարսոնը: 1281 թ. հոկտեմբերի 30-ին մոնղոլական զորքերը, հայկական, վրացական և դաշնակից այլ ուժերի հետ միասին, Ասորիքի Հոմս քաղաքի մոտակայքում տեղի ունեցած ճակատամարտում ծանր պարտություն են կրում մամլուքներից: Վերջիններս 1282 և 1283 թթ. կրկին թալանում ու հրի են մատնում Այասը: Ի վերջո 1285 թ. մայիսի 7-ին Տաճարական ասպետների միջնորդությամբ Լևոն Բ-ի և սուլթան Կալաունի (1280-1290 թթ.) միջև կնքվում է խաղաղության պայմանագիր: Այն ուներ խորհրդանշական 10 տարի, 10 ամիս և 10 օր ժամկետի ուժ: Կիլիկյան Հայաստանը պարտավորվում էր տարեկան 500000 թագվորին[2]

---

[1] **Sopracasa A.**, նշվ. աշխ., էջ 48-60 (ըստ Վ. Լանգլուայի՝ 1271 թ.): **Langlois V.**, նշվ. աշխ., էջ 151-153:

[2] Թագվորին (իտալերեն սկզբնաղբյուրներում՝ tacorin, taccolini) արծաթյա դրամը Կիլիկյան Հայաստանում սկսել է հատվել XIII դ. վերջից: Այն կշռել է 2,48 գր

վճարել մամլուքներին, ինչպես նաև ուղարկել ձիեր, ջորիներ և մեծ քանակությամբ երկաթ[1]: Պայմանագրում ներառվել էին երկու երկրների առևտրական կապերի կարգավորմանը նվիրված բազմաթիվ կետեր: Այն, որ Կալաունը խիստ շահագրգռված է եղել Կիլիկյան Հայաստանի հետ առևտրական շփումների ավելի ամրապնդմամբ, կարելի է հիմնավորել մի շարք փաստարկներով: Հայտնի է, որ մամլուքներն առաջնային նշանակության պարենամթերքի՝ հատկապես հացահատիկի, ինչպես նաև ռազմամթերքի, այն է՝ փայտանյութի ու մետաղի և, իհարկե, ստրուկների մեծ պահանջարկ ունեին: Դեռևս Հեթում Ա-ը քաջ գիտակցելով, որ Եգիպտոսի սուլթանությանը ճնշելու միակ հնարավորությունը տնտեսական շրջափակումն էր, իր քաղաքացիներին խստորեն արգելել էր մամլուքների հետ փայտի և երկաթի առևտուր անել[2]: Հատկանշական է, որ 1260-ական թթ. կեսին Բայբարսն իր տերությունում տիրող սովը[3] մեղմելու նպատակով՝ 1266 թ. Կիլիկիայի դեմ ձեռնարկած արշավանքից հետո Հեթում Ա-ից պահանջել էր հացահատիկ ներկրել հայկական նավահանգիստներով[4]: 1285 թ. պայմանագրում տեղ գտած կետերից մեկը հուշում է, որ Հեթում Ա-ի՝ ռազմամթերքի առևտրի վրա սահմանած արգելքը դեռ գործում էր և զարմանալիորեն այն այստեղ էլ էր մնում անփոփոխ. «Արգիլեալ առարկայք, զէնք, ռազմամթերք եւն., որոնց՝ Սուլթանի երկիրը մտնելն արգիլուած էր, միեւնոյն արգելքին ենթարկուած պիտի մնան»[5]: Սակայն. «Լեւոն թագաւոր

---

(տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 384-385: Պառկեան Զ., Կիլիկեան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963, էջ 59-60):

[1] Տե՛ս Բոնկարեան, Դաշնագիր խաղաղութեան ընդմէջ Լեւոն Գ թագաւորի եւ Եգիպտոսի Մէմլուքեան սուլթան Գալաունի, կնքուած 1285 մայիս 7-ին, – Բանասէր, N Դ, թիւ 1, 1902, էջ 69-79: Микаелян Г., նշվ. աշխ., էջ 414:

[2] Գրուսե Ռ., Պատմություն խաչակրաց և Երուսաղեմի ֆրանկ թագավորության, – Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 319:

[3] Lane-Poole S., A History of Egypt in the Middle Ages, London, 1901, p. 273.

[4] Ցովհան Դարդել, Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ ԿԷ:

[5] Բակուրան, նշվ. աշխ., էջ 75-77, Սուքիասյան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Ե., 1978, էջ 220-222:

չպիտի արգիլէ զանոնք, վաճառական լինին կամ ուրիշ (որ այր կամ կին ստրուկի, ձիու, ջորիի, եւ ամեն տեսակ համեմներու առեւտուր կը կատարեն), իրենց վաճառքները Սուլթանին երկիրը տանելէ. զանոնք չպիտի կալանէ երբէք եւ թոյլ չպիտի տայ ոեւ է մէկու որ կալանեն: Անոնց առջեւ անցքերը բաց պիտի թողու, որպէսզի կարենան իրենց նպատակակէտին հասցնել գերիները եւ գերուհիները, ապրանքները, ձիերը, ջորիները եւ բոլոր ուրիշ առարկաները, - եւ ամեն կարգէ եւ ամեն ազգէ այր եւ կին ստրուկները, առանց անոնցմէ բան մը վար դնելու»[1]: Թե՛ հայ, և թե՛ մահմեդական վաճառականներին երկու երկրներում ազատ և ապահով առևտուր անելու իրավունք էր երաշխավորվում:

Եթե մինչ այդ Եգիպտոսի սուլթանությունը վերոնշյալ ապրանքները կարող էր ստանալ նաև խաչակրաց նավահանգիստներով, ապա դրանում նրանց դերը, Այաս-Թավրիզ մայրուղու ձևավորման հետ, կտրուկ նվազում էր: Ավելին, նվաճելով Անտիոքը՝ մամլուքները խաչակիրների տիրույթները կտրեցին Կիլիկյան Հայաստանից, որը նրանց համար տարատեսակ ապրանքների ձեռք բերման կարևոր աղբյուր էր դարձել: Ուստի պատահական չէ, որ Կիլիկիայի հետ պայմանագրի կնքումից անմիջապես հետո Եգիպտոսի սուլթանությունն անցնում է վճռական քայլերի: Նույն 1285 թ., երբ Լևոն Բ-ի պատվիրակությունը Կիլիկյան Հայաստանի Տաճարականների առաջնորդի ուղեկցությամբ՝ հաշտություն կնքելու նպատակով ուղևորվել էին Կալաունի մոտ՝ վերջինս գտնվում էր Աստիքում և զբաղված էր Տրիպոլիի կոմսության հյուսիսում գտնվող Մարկաբ բերդի գրավմամբ: 1287 թ. մամլուքները նվաճում են Լաթաքիա նավահանգիստը, իսկ արդեն 1289 թ. ապրիլի 24-ին Տրիպոլին՝ կոտորելով քաղաքի բնակչությանը: 1291 թ. մամլուքներն իրենց հարվածն ուղղում են Երուսաղեմի թագավորության դեմ՝ մեկը մյուսի ետևից նվաճելով նշանավոր նավահանգիստներ Աքքան, Տյու-

---

[1] Բակուրան, նշվ. աշխ., էջ 75-77:

րոսը, Սիդոնը, Բեյրութը և ծովափնյա մյուս քաղաքներն ու բերդերը[1]:

Այս իրադարձությունների բովում Ջենովայի Հանրապետությունն իր հռչակավոր ծովակալ Բենեդետտո Զաքարիային ուղարկում է Արևելք, որտեղ նա 1288 թ. սեպտեմբերի 21-ին Կիպրոսի թագավոր Հենրի II-ի (1285-1324 թթ.)[2], իսկ նույն թվականի դեկտեմբերի 23-ին Կիլիկիայի արքա Լևոն Բ-ի հետ[3] կնքում է բովանդակալից առևտրական պայմանագրեր: Ի դեպ, 1289 թ.՝ իր թագադրման առաջին տարում, Հեթում Բ-ը (1289-1306 թթ.) ջենովացիներին շնորհում է ևս մի արտոնագիր[4]: Փաստորեն՝ Արևելյան Միջերկրականում եվրոպացիների համար որպես հենակետեր մնում էին միայն Կիլիկյան Հայաստանը և Կիպրոսը:

Տրիպոլիի անկումից շատ չանցած՝ 1289 թ. դեկտեմբերի 28-ին, Հռոմի պապ Նիկողայոս IV-ը (1288-1292 թթ.) արգելքներ սահմանեց Եգիպտոսի սուլթանության հետ ռազմամթերքի (երկաթ, փայտանյութ), ձիերի, ինչպես նաև պարենամթերքի առևտրի վրա: Իսկ արդեն 1291 թ. օգոստոսի 23-ին Աքքայի և Տյուրոսի անկումից անմիջապես հետո պապությունը տասը տարով արգելեց մամլուքների տերության նավահանգիստների հետ առևտրական բոլոր տեսակի շփումները: Օրինախախտները խստորեն պատժվելու էին: 1292 թ. հունվարի 23-ի վճռով Նիկողայոս IV-ը Տաճարականներին հրամայում է իրենց գալերներով Հայոց թագավորությանը պաշտպանել մահմեդականների հարձակումներից[5]: 20 գալերից կազմված մի նավակազմ տրամադրվելու էր Տաճարականների և Հյուրընկալների միաբանությունների ապետների

---

[1] Տեր-Ղևոնդյան Ա., նշվ. աշխ., հ. Ա, էջ 98, 112-113:

[2] Близнюк С., Мир торговли и политики в королевстве крестоносцев на Кипре 1192-1373, М., 1994, с. 34-35.

[3] Langlois V., նշվ. աշխ., էջ 154:

[4] Նույն տեղում, էջ 162:

[5] Les registres de Nicolas IV, Recueil des bulles de se Pape, pub. par Langlois M., Fascicule VI, - Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, V. 6, Paris Ernest Thorin, 1891, p. 445, 901-905, 913-914.

րին, որոնք տեղակայվելու էին Կիլիկյան Հայաստանում ու Կիպրոսում: Բացի եգիպտական նավերի վրա հարձակումներ գործելուց, նրանց հանձնարարվել էր նաև արգելափակել մամլուքների հետ առևտուր անող բոլոր մաքսանենգների գործունեությունը[1]:

Արևելքում խաչակիրների անկումը, ի թիվս աշխարհաքաղաքական վերոնշյալ մյուս խոշոր իրադարձությունների, ամենաշրջադարձային նշանակությունն ունեցավ միջազգային առևտրում Կիլիկյան Հայաստանի դերի բարձրացման համար: Այսպես, պապական արգելքների սահմանման արդյունքում Կիլիկյան Հայաստանը, Կիպրոսի թագավորությունը, ինչպես նաև Կրետեն վերածվեցին գլխավոր միջնորդների՝ Եգիպտոսի սուլթանության և եվրոպացիների միջև ընթացող առևտրական կապերում: Ընդ որում, դրանցում Հայկական Կիլիկիայի դերակատարությունն էլ ավելի առանցքային էր, քանի որ Եգիպտոսի սուլթանություն ներմուծվող ռազմամթերքի և ստրուկների զգալի մասը կուտակվում էր կիլիկյան նավահանգիստներում: Միջնադարյան առևտրի պատմության հայտնի մասնագետ Է. Աշթորը նշում է, որ մահմեդական Լևանտի (Եգիպտոս և Ասորիք) և Հարավային Եվրոպայի միջև առևտրական փոխհարաբերություններում Հայոց թագավորության դերն ավելի մեծ է եղել, քան Կրետեի և Կիպրոսի[2]: Պատահական չէ, որ Ջենովայի և Վենետիկի Հանրապետությունների միջև տեղի ունեցած երկրորդ պատերազմի (1294-1299 թթ.) սկզբից նեթ կիլիկյան ծովափը հայտնվեց իրադարձությունների կիզակետում: Ինչպես նկատում է Վենետիկի Հանրապետության պատմության հայտնի մասնագետ

---

[1] Տե՛ս **Микаелян Г.**, նշվ. աշխ., էջ 425: **Ashtor E.**, Levant Trade in the Later Middle Ages, Princeton, New Jersey, 1983, p. 5, 17-21. **Sopracasa A.**, նշվ. աշխ., էջ 64-65: **Richard J.**, Le Royaume de Chypre et l'embargo sur le commerce avec l'Egypte (fin XIIIe – début XIVe siecle), - Académie des Inscriptions & Belles – Lettres, Comptes rendus des seances de l'Année, Janvier – Mars, Paris, 1984, p. 120-123.

[2] **Ashtor E.**, նշվ. աշխ., էջ 43-44, 104:

Ֆ. Լեյնը՝ Աքքայի անկումից հետո Այասը դարձավ իտալական հանրապետությունների հակամարտության կենտրոնը[1]:

1294 թ. մայիսի 22-ին Այասի ափերի մոտ ջենովական նավերը, Նիկոլո Սպինոլայի հրամանատարությամբ, բախվում են վենետիկյան ընդհանուր թվով 32 գալերի և տարիդաների հետ, որոնց առաջնորդում էր ծովակալ Մարկո Բազիլիոն: Չնայած անհամեմատ քիչ նավեր ունենալուն՝ ջենովացիները փայլուն հաղթանակ են տանում՝ զավթելով վենետիկյան 24 նավ և գերի վերցնում Մարկո Բազիլիոյին: Վենետիկցիներից բռնագրավվում է ավելի քան 500000 սառակինոսյան բյուզանդ գումարի ապրանք: Որպես պատասխան՝ 1297 թ. վենետիկյան մի նավի նավապետ Տեոֆիլո Մորոզինին իր հայրենակիցների հետ ավերում է Այասում ջենովացիներին պատկանող շուկան[2]: Ի վերջո, 1298 թ. սեպտեմբերի 7-ին Ադրիատիկ ծովում գտնվող Կուրցոլե կղզու մոտակայքում ջախջախիչ պարտություն կրելուց հետո, Վենետիկը 1299 թ. Միլանում խաղաղության պայմանագիր է կնքում Ջենովայի հետ[3]: Միլանի հաշտությունից հետո երկու հակառակորդների ռազմավարությունը Կիլիկյան Հայաստանում շատ ավելի պարզ է դառնում: 1302 թ. Կահիրեում Վենետիկի պատվիրակությունն Եգիպտոսի սուլթանից նոր արտոնագիր է ձեռք բերում[4]: Իսկ արդեն 1306 թ. Կիպրոսի[5] և 1307 թ. մայիսին Կիլիկյան

---

[1] Lane F., նշվ. աշխ., էջ 82-83:

[2] Հեթում Բ-ի տարեգրությունը, – Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1951, էջ 86: Հեթում Պատմիչի ժամանակագրությունը, էջ 80: Rime istoriche di un Anonimo Genovese: Vissuto nei secoli XIII e XIV, Tratte da un codice, dell'Avv. Matteo Molfino di Genova, per cura del Bonaini F., - Archivio Storico Italiano, Appendice 18, T. IV, Firenze, 1847, p. 10-15. Барсегов Ю., Борьба Киликийской Армении против пиратства в Средиземном море, – Պատմա-բանասիրական հանդես, 1970, N 3, էջ 81:

[3] Տե՛ս Микаелян Г., նշվ. աշխ., էջ 383: Sopracasa A., նշվ. աշխ., էջ 65-66: Commandant B., նշվ. աշխ., էջ 114-117:

[4] Ashtor E., նշվ. աշխ., էջ 27:

[5] Близнюк С., նշվ. աշխ., էջ 36:

Հայաստանի[1] հետ Ս. Մարկոսի Հանրապետությունն առևտրական նոր պայմանագրեր է կնքում: Ակնհայտ է, որ անհաջողություն կրելով Ան ծովում, Վենետիկը փորձում էր գերակայություն հաստատել Հարավային Եվրոպայի և մահմեդական Լևանտի միջև ընթացող առևտրական փոխհարաբերություններում: Մակայն Ջենովան փաստորեն մամլուքների և Ոսկե Հորդայի միջև ռազմամթերքի և հատկապես ստրուկների առևտրի գլխավոր միջնորդ լինելով հանդերձ, չէր ցանկանում թուլացնել իր դիրքերն Արևելյան Միջերկրականում ևս[2]: Հիշենք, որ 1288 թ. Լևոն Բ-ի՝ ջենովացիներին շնորհած արտոնագրում ամրագրվել էր ստրկավաճառությանը վերաբերող մի կետ, ըստ որի՝ հայկական կողմը միայն արգելում էր մահմեդականներին քրիստոնյա ստրուկներ վաճառել[3]: Իսկ այն, որ մամլուքների համար Կիլիկյան Հայաստանը ստրուկների ձեռք բերման կարևոր աղբյուր է եղել, վկայում է հայ-մամլուքյան 1285 թ. խաղաղության պայմանագիրը[4]:

Այս իրադարձություններն ընթանում էին Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական որոշիչ ուժերի հարաբերակցության անընդհատ տատանումների պայմաններում: Թեև Հուլավյան խան Ղազանը (1295-1304 թթ.) Եգիպտոսի սուլթանության դեմ առաջին արշավանքում (1299 թ.) կարողացել էր հաղթանակ տանել, սակայն նրա կազմակերպած մյուս երեք արշավանքները (1300, 1303 թթ.) ձախողվել էին: 1305 թ. Հալեպի էմիրի զորքերը ներխուժում են Կիլիկյան Հայաստան, սակայն Այասի մոտ ջախջախվում են Հեթում Բ-ի գլխավորած հայկական ուժերի կողմից: Նույն թվականին Հայոց թագավորության և Եգիպտոսի սուլթանության միջև կնքվում է խաղաղության պայմանագիր, որից հետո 15 տարի մամլուքները չեն արշավում Կիլիկյան Հայաստանի

---

[1] Sopracasa A., նշվ. աշխ., էջ 62-79:

[2] Ashtor E., նշվ. աշխ., էջ 27-29, Amitai-Preiss R., Mongols and Mamluks: The Mamluk-Ilkhanid War, 1260–1281, Cambridge, 1995, p. 94.

[3] Langlois V., նշվ. աշխ., էջ 155:

[4] Բակուրան, նշվ. աշխ., էջ 75-77:

դեմ[1]: Անտարակույս, մամլուքների համար այս զինադադարի կնքման հիմնական շարժառիթը միմյանց անընդհատ հաջորդած պատերազմներից քայքայված և խիստ խոցելի իրենց տնտեսության վերականգնումն էր: Թեև ուղղակի վկայությունների չենք հանդիպել, սակայն չի բացառվում, որ հիշյալ պայմանագրի կնքման մեջ բավական մեծ է եղել նաև Վենետիկի, Ջենովայի և Արագոնի թագավորության դերակատարությունը, որոնց համար Կիլիկյան Հայաստանը և Կիպրոսը, պապական արգելքների խստացման պայմաններում, անփոխարինելի էին մամլուքների հետ առևտրական կապ պաշտպանելու համար: Արգելքների երկարատև իրականացման պայմաններում Եգիպտոսի սուլթանությունում ապրանքների՝ հատկապես սննդամթերքի գներն արագորեն աճում էին[2]: Մի հիշատակության համաձայն՝ 1296 թ. սովի հետևանքով Ալեքսանդրիան, առանց ապօրինի ներկրված հացահատիկի, կարող էր նույնիսկ անմարդաբնակ դառնալ[3]: Պատահական չէ, որ 1308 թ. Կղեմես V պապն (1305-1314 թթ.) ավելի է խստացնում արգելքները՝ սպառնալով այն խախտողներին զրկել քաղաքացիական իրավունքներից: Նա արտոնում է Հյուրընկալների միաբանության ասպետներին բռնագրավել քրիստոնյաների նավերը, որոնք առևտուր էին անում մամլուքների տիրապետության տակ գտնվող բոլոր տարածքների հետ[4]: Հուլավյանների և պապության ու եվրոպական միապետերի միջև երկար բանակցությունները, որոնց նպատակն էր միասնական պայքար կազմակերպել Եգիպտոսի սուլթանության դեմ, անցնում են ապարդյուն[5]:

---

[1] Տե՛ս **Микаелян** Г., նշվ. աշխ., էջ 434-435, Սուքիասյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Ե., 2001, էջ 459:

[2] Muir S., The Mamluke or Slave Dynasty of Egypt, London, 1896, p. 49.

[3] Ashtor E., նշվ. աշխ., էջ 21:

[4] Menache S., Clement V, New York, 1998, p. 105. Ashtor E., նշվ. աշխ., էջ 19-21: Housley N., The Avignon Papacy and the Crusades, 1305-1378, Oxford. 1986, p. 12-13.

[5] Տե՛ս **Микаелян** Г., նշվ. աշխ., էջ 439: Boyle J., The Il-Khans of Persia and the Christian West, - The Mongol World Empire, XIII, London, 1977, p. 557-563

Հենց այս ժամանակամիջոցում էր հակամամլուքյան ակտիվ գործունեություն ծավալել վենետիկցի քաղաքական հայտնի գործիչ Մարինո Սանուտո Տորսելլո Ավագը: 1306-1321 թթ., Սանուտոն մշակում էր ռազմաքաղաքական նախագծեր՝ ուղղված մամլուքների դեմ ավելի արդյունավետ պայքար կազմակերպելուն: Եվ արդեն 1321 թ. սեպտեմբերին նա Հռոմի պապ Հովհաննես XXII-ին (1316-1334 թթ.) է ներկայացնում իր գաղտնի ծրագիրը, ըստ որի՝ մամլուքների դեմ պայքարը պետք է ընթանար երեք փուլերով: Ինչպես ժամանակին Հեթում Ա-ն, այնպես էլ Մարինոն Սանուտոն, առաջին հերթին խորհուրդ էր տալիս տնտեսապես շրջափակել Եգիպտոսի սուլթանությանը: Քանի որ վերջինս չուներ թանկարժեք մետաղների պաշարներ, հացահատիկի ինքնաբավ մշակություն և, եթե հաջողվեր արգելափակել Աղենով գնացող ծովային ուղին, իսկ հարավեվրոպական ծովային պետություններն, իրենց հերթին, դադարեցնեին ապրանքների մատակարարումը եգիպտական նավահանգիստներին, ապա շատ կարճ ժամանակամիջոցում մամլուքներն ամբողջովին կհայտնվեին տնտեսական ծայրահեղ ճգնաժամի առջև: Եվ միայն դրանից հետո կարելի էր ներխուժել քրիստոնյաների համար չարիք դարձած այդ երկիր և բավական հեշտությամբ կործանել այն: Իր ծրագրերում Մարինո Սանուտոն ռազմավարական հույժ կարևոր նշանակություն էր տալիս Հայոց թագավորությանը: Թե՛ պապությանը, և թե՛ եվրոպական միապետերին հղած նամակներով նա կոչ էր անում օգնել Կիլիկյան Հայաստանին՝ մամլուքների և Փոքր Ասիայի թյուրքական ցեղերի դեմ պայքարում: Սանուտոյի կարծիքով Թավրիզով, Սև ծովով ու Կիլիկիայով իրականացվող առևտուրը կարող էր ամբողջովին լրացնել ապրանքների այն քանակությունը, որ ստացվում էր Ալեքսանդրիայի միջոցով[1]: Իրականում, նրա ծրագրերի հիմքում խաչակրաց նոր արշավանքի կազմակերպման գաղափարն էր, որն

---

[1] Տե՛ս Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье в. XIII-XV вв.: проблемы торговли, М., 1990, с. 110. Aziz S. Atiya, The Crusade in the Later Middle Ages, New York, 1970, p. 119-124.

այս անգամ պետք է իրագործվեր բոլորովին այլ, բազմակողմանիորեն մշակված դիրքերից: Սակայն այդ նախագիծն այդպես էլ իրականություն չդարձավ:

Սանուտոյի կողմից պապին ծրագիրը ներկայացնելուց մոտ վեց ամիս առաջ՝ 1321 թ. մարտի 19-ին, Լևոն Դ-ի և Վենետիկի միջև կնքվել էր առևտրական նոր պայմանագիր: Նրանց բանակցությունները սկսվել էին դեռ 1320 թվականից՝ Լևոն Դ-ի (1320-1342 թթ.) գահակալման առաջին իսկ տարում: Ի դեպ, նախաձեռնությունը պատկանում էր Վենետիկի Հանրապետությանը, որը մի շարք պատվիրակություններ էր ուղարկել Հայոց արքունիք: Ուշագրավ է, որ 1320 թ. հոկտեմբերից մինչև 1321 թ. մարտի 19-ի միջակայքով թվագրվող՝ դոժ Ջիովաննի Սորանցոյին ուղղած իր նամակում հայկական կողմը, ի թիվս այլ երաշխավորումների, խոստանում էր ազատ և անվտանգ անցում ապահովել Թավրիզ և նույնիսկ Ասորիք ուղևորվող վենետիկցի վաճառականների համար[1]: Նույն ամսին Լևոն Դ-ը[2] վերահաստատել էր նաև Մոնպելիեի վաճառականներին իր հոր՝ Օշին արքայի 1314 թ. շնորհած արտոնագիրը[3]: Իսկ մինչ այդ, Օշինը վերահաստատել էր նաև կատալոնացի առևտրականների արտոնությունները[4]: Արևմուտքի հետ քաղաքական և տնտեսական մերձեցումները, անշուշտ, անուշադրության չմատնվեցին ո՛չ մամլուքների, և ո՛չ էլ Փոքր Ասիայի թյուրքերի կողմից: Դժվար չէր համոզվել, որ տասնամյակների ընթացքում թմբկահարված խաչակրաց նոր արշավանքի կազմակերպումն այլևս իրատեսական չէր: Մյուս կողմից՝ արդեն 1320-ական թվականներին ավելի նկատելի էր

---

[1] **Sopracasa A.**, նշվ. աշխ., էջ 82-93:

[2] Հարկ է նկատել, որ Լևոն Դ-ն այդ ժամանակ դեռևս անչափահաս էր, ուստի, ամենայն հավանականությամբ, Վենետիկի և մոնպելիեցիների հետ բանակցությունները վարել են արքայի խնամակալները, հավանաբար նրանցից առավել ազդեցիկ Օշին Կոռիկոսցին:

[3] **Langlois V.**, նշվ. աշխ., էջ 178-179, 185-186.

[4] **Finke H.**, Acta Aragonensia, Quellen zur deutschen, italienischen, franzosischen, spanischen, zur Kirschen u. Kulturgeschichte aus der diplomatischen Korrespondenz Jaymes II (1291-1327), B. II, Berlin, Leipzig, 1908, p. 741-742:

դարձել Մերձավոր Արևելքում Իլխանության դիրքերի անկումը: Ուստի ժամանակն էր, որ Եգիպտոսի սուլթանությունը վերսկսեր իր նվաճողական քաղաքականությունը: Ավելին, հակառակ պարագայում, Փոքր Ասիայում Իկոնիայի սուլթանության մասնատման (1307 թ.) հետևանքով ձևավորված թյուրքական պետական կազմավորումներն իրենք կարող էին ստանձնել այդ դերը: Կարամանյան թուրքմենների առաջնորդ Թիմուրդաշը 1321 թ. ներխուժում է Կիլիկիա և մեծ ավերածություններ պատճառում: Կարճ ժամանակ անց՝ 1322 թ. գարնանը, մամլուքյան զորքերը ներխուժում են Կիլիկյան Հայաստան և գրեթե հիմնովին ավերում Այասի բերդերը: 1323 թ. Հայոց կաթողիկոս Կոստանդին Դ Լամբրոնացին (1323-1326 թթ.) Կահիրեում սուլթան Ալ-Նասիր Նասրեդդին Մուհամմեդի (1294-1295 թթ., 1299-1309 թթ., 1309-1340 թթ.) հետ կնքում է խաղաղության պայմանագիր, որով Կիլիկյան Հայաստանը պարտավորվում էր Այասի բաժանից տարեկան 1200000 դրամ (ըստ Ղ. Ալիշանի՝ 50000 ֆլորին)[1] վճարել Եգիպտոսի սուլթանությանը: Իսկ սուլթանը հանձն էր առնում սեփական միջոցներով վերականգնել իրենց ավերած քաղաքներն ու բերդերը՝ բացի Այասից[2]: Ընդ որում, մինչ այդ մամլուքները ձեռնամուխ էին եղել Ասորիքում վերականգնելու Լաթաքիա նավահանգստի երբեմնի հզորությունը, որը պետք է հնարավորինս նվազեցներ Այասի առևտրական նշանակությունն Արևելյան Միջերկրականում: Մակայն հայկական քաղաքն ասպատակելուց հետո նրանք դադարեցնում են այդ ձեռնարկումը[3]:

Կիլիկիայի առևտրական գլխավոր դարպասի կարևորությունն այնքան մեծ էր, որ նրա ավերումն Արևմուտքում քաղաքական որոշ գործողությունների ալիք առաջացրեց[4]: Ջենոս

---

[1] Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 390-391:

[2] Տե՛ս Langlois V., նշվ. աշխ., էջ 232-233: Михаелян Г., նշվ. աշխ., էջ 454:

[3] Labib S., Egyptian Commercial Policy in the Middle Ages, - Studies in the Economic History of the Middle East, From the Rise of Islam to the Present Day, Oxford, 1978, p. 67.

[4] Richard J., Le Royaume de Chypre et l'embargo sur le commerce avec l'Egypte (fin XIIIe – debut XIVe siècle), p. 86.

1320 թ. Հովհաննես XXII պապը եվրոպական պետություններից կտրականապես պահանջել էր դադարեցնել Եգիպտոսի սուլթանության հետ առևտրական շփումները: Տեղի տալով պապության ճնշումներին՝ 1323 թ. վենետիկյան իշխանությունները նույնպես նման արգելքներ սահմանեցին իրենց հպատակների համար, որոնք տարածվում էին նույնիսկ հասարակ ճանապարհորդությունների վրա: Ալեքսանդրիայում վենետիկցիները ստիպված են լինում նույնիսկ փակել իրենց հյուպատոսությունը: Հովհաննես XXII-ը 1326 թ. կայացնում է աննախադեպ որոշում՝ իրեն նախորդած պապերի գահակալման ժամանակ մամլուքներին ռազմամթերք վաճառած բոլոր անձինք այդուհետն համարվելու էին հերետիկոսներ[1]:

Նույն՝ 1323 թ., Հովհաննես XXII-ը որոշում է 30000 ֆլորին գումար ուղարկել Կիլիկյան Հայաստան՝ Այասը վերականգնելու համար[2]: Լևոն Դ-ին ուղղած նամակում պապը գրել էր, որ իր նվիրակներին պատվիրել էր այդ 30000 ֆլորինը փոխ առնել ֆլորենտական Բարդի ընկերությունից և տրամադրել Հայոց թագավորությանը, միաժամանակ նշելով, որ այդ ձեռնարկումն իրեն հորդորել է իրականացնել Մարինո Սանուտոն: Այդուհանդերձ, գումարը բավական ուշացումով է տեղ հասնում, իսկ մինչ այդ հայերը սեփական ուժերով և կարճ ժամանակում վերականգնել էին Այասը[3]:

Լևոն Դ-ը վարձում է էլ ավելի սերտացնել Կիլիկյան Հայաստանի առևտրական կապերն արևմտաեվրոպական պետությունների հետ: Հայոց արքան 1330 թ. ամուսնանում է Սիցիլիայի թագավոր Ֆրեդերիկ III Արագոնցու (1296-1337 թթ.) դստեր՝ Կոնստանսի հետ[4], իսկ մեկ տարի անց երկու թագավորությունների

---

[1] Տե՛ս Ashtor E., նշվ. աշխ., էջ 44-49: Housley N., նշվ. աշխ., էջ 203-204:

[2] Ներսես Պալիենցի ժամանակագրական համառոտները, – Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, էջ 70:

[3] Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 390-391:

[4] Ցովհան Դարդել, էջ 29-30:

միջև կնքվում է առևտրական պայմանագիր[1]: Բավական երկար բանակցություններից հետո 1333 թ. նոյեմբերի 10-ին Լևոն Դ-ը Վենետիկի դոժ Ֆրանչեսկո Դանդոլոյի (1328-1339 թթ.) դեսպանին նոր արտոնագիր է շնորհում[2]: Նկատենք, որ թեև Այասի անկմանն ընդամենը մեկ տարի էր մնացել, ըստ Պեգոլոտտիի՝ այնտեղ առևտուր էին անում ոչ միայն ջենովացի ու վենետիկցի, այլ նաև կատալոնացի, պրովանսցի ու սիցիլացի վաճառականները[3]:

1335 թ. իլխան Աբուսայիդի (1317-1335 թթ.) մահից հետո Իլխանությունը սկսում է արագորեն քայքայվել: Հովհաննես XXII և նրան հաջորդած Բենեդիկտոս XII (1334-1342 թթ.) պապերի՝ Լևոն Դ-ին ուղղած հավաստիացումները, թե Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ VI Վալուան (1328-1350 թթ.) նախապատրաստում է խաչակրաց նոր արշավանք՝ մնացին սոսկ խոսքեր: Եվ արդեն 1335 թ. Եգիպտոսի սուլթանի հրամանով Հալեպի մամլուք էմիր Ալթուն-Բուղայի զորքերը ներխուժում են Կիլիկյան Հայաստան և հասնելով Տարսոն՝ ճանապարհին թալանի ենթարկում Մամեստիան և Ադանան: Հաջորդ տարի մամլուքները և կարամանյան թուրքմենները կրկին ներխուժում են Կիլիկիա: Միայն 1337 թ. Եգիպտոսի սուլթանը համաձայնում է խաղաղության պայմանագիր կնքել՝ ծանր պայմաններ դնելով Լևոն Դ-ի առջև: Կիլիկյան Հայաստանը զրկվում էր մինչև Պիրամոս գետն ընկած տարածքներից՝ այդ թվում և Այասից[4]: Հայկական խոշորագույն նավահանգստի կորուստը ծանր հարված էր երկրի տնտեսությանը: Պատահական չէ, որ մինչ այդ Կիլիկիայի վրա իրականացված բոլոր՝ նույնիսկ ամենաավերիչ ասպատակություններից հետո էլ միջազգային մեծածավալ առևտրից գոյացող եկամուտների շնորհիվ բավական կարճ ժամանակում պետության տնտեսական

---

[1] Լեւոն Ե եւ իր հրովարտակը, - Բազմավէպ, 1847, էջ 92:

[2] Sopracasa A., նշվ. աշխ., էջ 102-112:

[3] Francesco Balducci Pegolotti, La Pratica della Mercatura, New York, 1970, p. 59-63.

[4] Տե՛ս Микаелян Г., նշվ. աշխ., էջ 457: Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 405-407:

կյանքը բնականոն հունի մեջ էր ընկնում: Փաստորեն կարելի է ասել, որ Այասի կորուստը միջազգային առևտրում Հայկական Կիլիկիայի փառահեղ դերակատարության վերջակետն էր:

Եվ այսպես, միջերկրածովյան առևտրում Կիլիկյան Հայաստանի ներգրավումը, աշխարհաքաղաքական վճռորոշ իրադարձություններով պայմանավորված՝ ընթացել է հստակ արտահայտվող ժամանակավալլերով. ա) Առաջին փուլը հարկ ենք համարել նախանշել հենց 1201 թվականով, երբ Սալահ ադ-Դինի արշավանքներից հետո խաչակիրների նավահանգիստներում առևտրական գործունեություն ծավալող իտալական հանրապետություններն իրենց հայացքներն ուղղեցին արդեն լայն ծովափ ունեցող Կիլիկյան Հայաստանին: Զարգացումներին մեծ թափ հաղորդեց նաև Լատինական կայսրության ձևավորումը, որից հետո հատկապես ջենովացիներն ավելի մեծ շահագրգռվածությամբ ձգտեցին դեպի Կիլիկիա. բ) Հաջորդ փուլը սկզբնավորելու համար որպես ժամանակային սահման անհրաժեշտ ենք համարել ամրագրել Մերձավոր Արևելքում 1240-ական թվականներին մոնղոլական արշավանքներով, սակայն դրա գագաթնակետն, անկասկած, Հուլավուի կողմից 1258 թ. Բաղդադի գրավումն էր: 1261 թ. Բյուզանդիայի կայսրության վերականգնումն ու Նիմֆեյան պայմանագիրը սրեցին ջենովա-վենետիկյան հակամարտությունը: Եթե Ջենովայի առջև լայն բացվեցին Սև ծովի դարպասները, ապա Վենետիկը սկսեց ավելի կայունացնել իր դիրքերն Արևելյան Միջերկրականում՝ հատկապես Կիլիկյան Հայաստանում: Իսկ 1268 թ. Անտիոքի նվաճումը խաչակրաց տիրույթների մոտալուտ անկման ահազանգն էր, որից հետո իտալական հանրապետությունները սկսեցին էլ ավելի ամրացնել իրենց դիրքերը Հայոց թագավորությունում. գ) Երրորդ՝ ամենավճռական ժամանակափուլը մեկնարկեց 1291 թ. Արևելքում խաչակիրների անկումով, որից հետո Կիլիկյան Հայաստանը հաբավեվրոպական պետությունների և Եգիպտոսի սուլթանության տիրույթների միջև ընթացող առևտրական փոխհարաբերություններում ստանձնեց կարևորագույն միջնորդ երկրի դեր: Այդ դերա-

կատարումն ավելի ընդգծված բնույթ էր կրում հատկապես պապական արգելքների խստացման ժամանակամիջոցների ընթացքում: Ընդ որում, ընդհուպ մինչև 1337 թ. Այասի անկումը, միջազգային առևտրում Կիլիկյան Հայաստանի նշանակությունը մշտապես վերելք է ապրել:

Հետագոտելով Եվրոպայում և Արևելքում XIII-XIV դդ. տեղի ունեցած քաղաքական շրջադարձային իրադարձությունների և Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական պայմանագրերի կնքման ժամանակագրական տվյալները՝ անմիջապես աչքի է զարնում դրանց փոխպայմանավորվածության բարձր աստիճանը: Սովորաբար քաղաքական նշանակալից յուրաքանչյուր փոփոխությանն անմիջապես հաջորդել է Վենետիկի, Ջենովայի կամ եվրոպական այլ պետությունների հետ առևտրական պայմանագրերի ստորագրումը: Դա թույլ է տալիս փաստելու, որ Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում միջազգային առնտրի վրա խարսխված տնտեսական շահի գործոնն առաջնահերթ նշանակություն է ունեցել:

XIII դ. կեսից՝ մամլուքների իշխանության հաստատումից սկսած, Եգիպտոսի սուլթանության արտաքին քաղաքականության գերխնդիրն է դառնում հնարավորինս չեզոքացնել Իլխանության և Եվրոպայի դաշինքի համար ամուր նախապայմաններ ձևավորող յուրաքանչյուր գործոն: Հայկական Կիլիկիան այդ բազմակողմանի համագործակցության հիմնական դերակատարներից էր: Ընդ որում, առանձնահատուկ կարևորություն ուներ Կիլիկիայի դերն առևտրական փոխհարաբերություններում, որի հետ մեկտեղ, Հայկական թագավորությունը կամրջի դեր էր կատարում Հուլավյանների տերության և Եվրոպայի միջև ընթացող թանկարժեք մետաղների շրջանառության համար[1]: Քանի դեռ Մերձավոր Արևելքում Հուլավյանները ռազմաքաղաքական գերակայություն ունեին, իսկ Արևմուտքը, հանձինս խաչակրաց արշավանքների սպառնալիքների ու արգելքների քաղաքակա-

---

[1] Spufford P., Money and Its Uses in Medieval Europe, Cambridge, 1988, p. 149-156.

նությամբ իրականացվող տնտեսական շրջափակման, ազդեցիկ քաղաքական լծակներ ուներ, մամլուքներն իրենց ռազմավարական ծրագրերում ստիպված էին բավական զգուշություն ցուցաբերել: Եթե XIV դ. առաջին քառորդին Եվրոպայում հնչող խաչակրաց արշավանքների կոչերից Եգիպտոսի սուլթանությունը կարող էր նույնիսկ շատ չզգուշանալ, ապա տնտեսական շրջափակումը նրան ճնշելու թերևս ամենաազդեցիկ գործիքն էր: Նման պարագայում Կիլիկիան և Կիպրոսը մամլուքների համար կենսական նշանակության ապրանքների կարևորագույն աղբյուրների էին վերածվում: Արդեն նշել ենք, որ այդ միջնորդական դերում Հայոց թագավորության նշանակությունը շատ մեծ էր: Չունենալով թանկարժեք մետաղների մեծ ծավալների արդյունահանում՝ Եգիպտոսի սուլթանության պետական գանձարանի համար միջազգային առևտուրը դրանց կուտակման հիմնական միջոցն էր: Սակայն XIV դ. 30-ական թվականների վերջին, երբ այլևս չկար մոնղոլական վտանգը, խաչակրաց նոր արշավանքի հիմնական կազմակերպիչներ Ֆրանսիան և Անգլիան աստիճանաբար ընկղմվում էին Հարյուրամյա պատերազմի մեջ, իսկ պապության գործածած արգելքների մտրակը սպառել էր պիտանելության ժամկետը՝ Եգիպտոսի սուլթանությունն իր ռազմաքաղաքական նախագծերում գրեթե լիակատար ազատություն էր ստանում: Մյուս կողմից՝ Փոքր Ասիայում գնալով հզորացող թյուրքական պետական կազմավորումները սպառնում էին իրենց ձեռքը վերցնել Մերձավոր Արևելքում նվաճողական քաղաքականության գերակայությունը: Առաջ անցնելով մամլուքներից՝ թուրքերն իրենք կարող էին նվաճել թե՛ Կիլիկյան Հայաստանը, և թե՛ Կիպրոսը, ինչն ի վերջո կհանգեցներ նրանց առևտրատնտեսական, իսկ ապա նաև քաղաքական գերակայությանն Արևելյան Միջերկրականում ու Մերձավոր Արևելքում: Այս դեպքում արդեն Եգիպտոսի սուլթանությանը մնում էր անցնել վճռական քայլերի, որոնցում Հայոց թագավորության նվաճմանն առաջնահերթ նշանակություն էր տրված:

ЗОГРАБ ГЕВОРКЯН
ИИ НАН РА

## ГЕОПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ И МЕЖДУНАРОДНАЯ ТОРГОВЛЯ В КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ (1201-1337 ГГ.)

### РЕЗЮМЕ

Международная торговля имела первостепенное значение для экономики Киликийского армянского государства. Обеспечивая широкое потребление различных товаров, она служила стимулом для развития ремесел и сельского хозяйства страны, а также приносила огромные доходы в государственную казну. В течение почти 140 лет Киликийская Армения сохраняла важную роль в средиземноморской торговле, что не могло не повлиять на внешнюю политику государства. В данной статье мы пытались выявить степень влияния международной торговли на внешние политические отношения Киликийской Армении. Это дает возможность для более комплексного представления о геополитических процессах данного периода и роли государства Киликийской Армении в этих процессах.

ZOHRAB GEVORGYAN
IH NAS RA

## GEOPOLITICAL PROCESSES AND INTERNATIONAL TRADE IN CILICIAN ARMENIA (1201-1337)

### SUMMARY

International trade was of prime importance to the economy of the Armenian state of Cilicia. It provided widespread consumption of various goods which served as a stimulus for the development of handicrafts and agriculture, but also brought huge revenues to the state treasury. For nearly 140 years Cilician Armenia retained an important role in the Mediterranean trade, which could not affect the foreign policy of the state. In this paper, we tried to identify the degree of influence of international trade on the external political relations of Cilician Armenia. This allows for a more comprehensive understanding of the geopolitical processes of this period and the role of the state of Cilician Armenia in these processes.

ԱՐՄԵՆ ՎԻՐԱԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՄԲ

Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրություն»-ը կարևոր տեղեկություններ է պարունակում Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և վարչաքաղաքական կենտրոն Երևանի խանության XVII դ. սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ: Պատմիչի հաղորդումները մեզ թույլ են տալիս գաղափար կազմելու նաև Երևանի խանության այդ շրջանի վանական տնտեսության, գյուղական համայնքի, հայ բնակչության սոցիալական վիճակի, հարկային պարտավորությունների ու պարտադիր աշխատանքի մասին:

Զաքարիա Քանաքեռցին գերազանցապես անդրադառնում է Էջմիածնի և Հովհաննավանքի, մասամբ էլ Բջնիի վանական հաստատությունների տնտեսական կարողություններին, վանքապատկան գյուղացիության հետ դրանց փոխհարաբերություններին և այլն:

Էջմիածնի վանական տնտեսության վերաբերյալ իր վկայությունները Զաքարիա Քանաքեռցին գերազանցապես ներկայացնում է Հայոց հայրապետ Հակոբ Ջուղայեցու (1655-1680 թթ.) գործունեության տեսանկյունից, ում պաշտոնավարումը նշանավորվեց Էջմիածնի վանական տնտեսության զարգացմամբ: Պատահական չէ, որ Եսայի Հասան-Ջալալյանը Հակոբ Ջուղայեցու պաշտոնավարման տարիները, բնութագրում է որպես Հայոց աշխարհի և Էջմիածնի նորոգության ժամանակաշրջան[1]:

---

[1] Եսայի Հասան-Ջալալյան, Պատմութիւն յաշխարհին Աղուանից, Երուսաղեմ, 1868, էջ 11-12:

Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ Հակոբ Ջուղայեցին, ստանձնելով կաթողիկոսի պաշտոնը, սկսեց պարբերաբար շրջել «Ի վանօրայսն, եւ զոր ինչ պակասութիւն տեսանէր վանիցն՝ թէ՛ հոգեւոր եւ թէ՛ մարմնաւոր կարիս լցուցանէր»[1]: Նրա ջանքերով ավարտվեց Էջմիածնի եկեղեցու զանգակատան շինարարությունը, որն սկսվել էր դեռևս Փիլիպոս Աղբակեցու (1633-1655 թթ.) օրոք[2], վերակառուցվեց Դարաշամբի Սբ. Նախավկայի վանքը[3]: Նան նոր կարգ է սահմանվում, ըստ որի ամեն տարի Էջմիածնի վանքն երկրի բոլոր եկեղեցիներին և վանքերին պետք է տար 10 լիար ձեթ՝ տնտեսական կարիքների և 20 լիտր գինի՝ վանական հաստատություններում հյուրընկալվողներին հյուրասիրելու համար[4]:

Բացի այդ, Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ, Հակոբ Ջուղայեցին շահ Աբբաս Բ-ին (1642-1666 թթ.) խնդրում է կաթողիկոսարանին վերադարձնել Վաղարշապատ գյուղից տասանորդ հարկ գանձելու իրավունքը[5], որն Էջմիածնից խլել էին Երևանի խաները՝ հայոց կաթողիկոսների թուլության պատճառով[6]: Խնդրագրի էությունը ներկայացնելով հանդերձ, Զաքարիա Քանաքեռցին չի անդրադառնում գյուղի հանդեպ մուլքատիրոջ իրավունքներից Էջմիածնի զրկման մանրամասներին: Այս խնդրի վրա լույս է սփռում շահական հրովարտակներից մեկը, ըստ որի՝ 1650 թ. Էջմիածնի վանքապատկան Վաղարշապատ գյուղից

---

[1] Զաքարիա Սարկաւագ, Պատմագրութիւն, հ. II, Վաղարշապատ, 1870, էջ 60 (այսուհետև՝ Զաքարիա Սարկաւագ, հ. I–III, Վաղարշապատ, 1870):

[2] Նույն տեղում, էջ 46, Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 23 (այսուհետև՝ Ջամբռ):

[3] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. II, Ս. Էջմիածին, 2001, էջ 2918:

[4] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 60:

[5] Վաղարշապատ գյուղը Էջմիածնի կաթողիկոսարանի սեփականությունն էր դարձել դեռևս 1431 թ. (Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ I, կազմեց՝ Հ. Աբրահամյան, Ե., 1941, էջ 16 (այսուհետև՝ Կալվածագրեր):

[6] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 62:

զանձվող տասանորդ հարկը թիուլի[1] իրավունքով հատկացվել է Երևանի ազգությամբ վրացի Խոսրով խանին (1647-1653 թթ.)[2]:

Շահ Աբբաս Բ-ն կատարում է Հակոբ Ջուղայեցու խնդրանքը: Պատմիչը նաև նշում է Էջմիածնին հարկատու գյուղերից մի քանիսը. «զՔասախուն՝ որ է ի Նիգ գաւառ, զԹևնեացն, զՄանտոյն, զԱնաւեր, զՆորք, զՆորազեղ, զԲադոինճ, զԲիւրական, և այլ բազում տեղաց, որ է այժմ ընդ իշխանութեամբ սուրբ Էջմիածնի»[3]: Զաքարիա Քանաքեռցու այս վկայության և այլ աղբյուրների համեմատությունից պարզվում է, որ մինչև XVII դ. վերջերը Էջմիածնին է պատկանել 23 գյուղերի սեփականության իրավունքը[4]: Դրանց մեծ մասի հանդեպ Էջմիածնի միաբանությունը օժտված էր մաղաֆության[5] (ապահարկման) իրավունքով, ըստ որի վանքապատկան «Անդք, այգիք և կալք... ջրաղաց և այլք այսպիսիք... ոչ տալ զգլխահարկս, զհնգորդս, տասանորդս, զտնախարճս, զանասնախարճս և զմլքախարճս»[6]:

Բացի տասանորդից, Էջմիածնի վանքը կաթողիկոսական գանձարանը համալրում էր նաև այլ ճանապարհով: Ըստ Զաքարիա Քանաքեռցու, Էջմիածինը նվիրատվություններ էր հավա-

---

[1] Թիուլը պետական ծառայությունների դիմաց տրվող պարգևատրումն էր, որը չէր կարող ժառանգաբար փոխանցվել՝ առանց արքունական հրամանի (Петрушевский И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении XVI - начале XIX вв., Л., 1949, с. 124):

[2] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, պրակ II (1601-1650), կազմեց Հ. Փափազյան, Ե., 1959, էջ 140-143, վավ. 39 (այսուհետև՝ Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ):

[3] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 62:

[4] Զամբռ, էջ 99-129, Կալվածագրեր, էջ 16, Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ցուցակ 21, թղթ. 242, վավերագիր 2, 202:

[5] «Մուղաֆ»-ն արաբերեն բառ է, որը նշանակում է ազատ (Арутюнян Б., Крупное монастырское хозяйство в Армении в XVII-XVIII вв., Е., 1940, с. 13): Հ. Թորոսյանն առանձնացնում է մաղաֆության իրավունքի երեք տեսակ՝ 1. ամբողջական ապահարկում, 2. բահրայի մասնակի ապահարկում, 3. ապահարկում՝ ռենտայի վճարման պարտականությամբ (Թորոսյան Հ., Էջմիածնի վանական տնտեսությունը XV–XVIII դդ., Ե., 2007, էջ 108 - 110):

[6] Զամբռ, էջ 130:

քում[1] տարբեր երկրների իրեն ենթակա հայ հոգևոր թեմերից. «Ամենայն ազգ Հայոց՝ ուր եւ իցէ՝ թէ յաշխարհին Օսմանցւոց, թէ՛ ի Ֆռանգաց, թէ՛ Հնդկաց, թէ Մոսկովաց, եւ ուր եւ գտանի յազգէն Հայոց, ամենեքեան հնազանդին Էջմիածնի ... եւ ըստ օրինաց մերոց հարկս տան բնակչաց Էջմիածնին, եւ նոքա զարքունական հարկն տան»[2]: «Արքունական հարկ» ասելով՝ պատմիչը նկատի չունի պետությանը վճարվող բնահարկը՝ բերքի 1/5-րդ մասը (հինգանորդ) կամ բահրան: Խնդիրն այն է, որ մաղաֆության իրավունքով գլխահարկից, տասանորդից, հինգանորդից և այլ հարկերից ազատված հոգևոր հաստատությունները պարտավորվում էին տարեկան գումարային ռենտա վճարելու[3]: Հենց այս հարկատեսակի մասին է խոսում Զաքարիա Քանաքեռցին: Հետաքրքիր է հատկապես այն հանգամանքը, որ պարսից արքունիքն արգելք չէր դնում Էջմիածնի միաբանների ու կաթողիկոսական նվիրակների առջև և շահական հրովարտակներով ապահովում էր տուրքեր հավաքելու նպատակով վերջիններիս ազատ երթևեկը[4]:

Վանքապատկան հողերի հանդեպ Էջմիածնի կաթողիկոսարանի սեփականատիրական իրավունքները Հակոբ Ջուղայեցին փորձում էր հաստատագրել այլ եղանակներով ևս: Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ նա կաթողիկոս ընտրվելուց հետո ձեռնամուխ է լինում Էջմիածնի շրջակայքի անջրդի հողատարածքները ոռոգովի դարձնելուն[5]: Երկար տարիներ ապրած լինելով Նոր Ջուղայում՝ Հակոբ Ջուղայեցին շատ լավ ծանոթ էր Իրա-

---

[1] Տուրքերի հավաքումը կատարվում էր Էջմիածնի կաթողիկոսական նվիրակների միջոցով, որոնք նաև Հայաստանի ու հայկական համայնքների կապը պահպանելու անչափ կարևոր գործառույթ ունեին (Թորոսյան Հ., նշվ. աշխ., էջ 225):

[2] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 81:

[3] Ըստ Սիմեոն Երևանցու՝ այդ գումարը կազմում էր 17 թուման 500 դինար (Ջամբռ, էջ 145):

[4] Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ II, էջ 117-118, վավ. 27, Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ III (1652-1731), կազմեց Ք. Կոստիկյան, Ե., 2005, էջ 40-41, վավ. 9:

[5] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 62:

նում լայնորեն տարածված քանքանների (ստորանցքների) օգտագործմանը: Նա նույն վարձն սկսեց կիրառել նաև Էջմիածնի վանական տնտեսությունում: Քանքանների[1] օգտագործման շնորհիվ Հակոբ Ջուղայեցին ապահովեց մի շարք հողատարածքների ոռոգումը և իր կառուցած ջրաղացների ու բրնձաղացների աշխատանքը: Ստորգետնյա ջրերի օգնությամբ կառուցվեց նաև արհեստական լիճ՝ Էջմիածնի միաբանների համար դառնալով հանգստյան գոտի[2]:

Նոր ոռոգման համակարգեր կառուցելու Հակոբ Ջուղայեցու շահագրգռությունը պայմանավորված էր նաև արևելյան երկրներում տարածված, այսպես կոչված, մավաթիե իրավունքով: Ըստ վերջինիս՝ ոռոգման ճանապարհով անպիտան հողը մշակելի դարձնող անձը դառնում էր այդ հողի սեփականատերը[3]: Բացի այդ, ջրատիրոջը նաև բերքից տասանորդ ստանալու արտոնություն էր վերապահվում[4]: Հօգուտ այս տեսակետի է խոսում նաև Սիմեոն Երևանցու այն վկայությունը, ըստ որի Հակոբ Ջուղայեցու կառուցված քանքաններով ոռոգվում էին հատկապես, «մեծ և բազմախարճ» գյուղերը[5]:

Էջմիածնի վանքապատկան գյուղերից տասանորդ հարկ գանձելու իրավունքից Էջմիածինը զրկվում է նաև Երևանի ազգությամբ լեզգի խան Սեֆիղուլիի (1666-1674 թթ.) պաշտոնավար-

---

[1] Հակոբ Ջուղայեցու նախաձեռնությամբ կառուցված քանքանները գտնվում էին Քասաղ գետից 5-6 կմ հեռավորության վրա, որտեղից էլ ջուրը հասցվում էր շրջակա գուղեր՝ ոռոգման նպատակով (Շիրմազան Գ., Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Ե., 1962, էջ 46):

[2] Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 62:

[3] Թումանյան Հ., Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, Ե., 1960, էջ 272:

[4] Ավդալբեկյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Բահրան ու մյուլքը XVII և XVIII դդ., Ե., 1969, էջ 428, Հ. Փափազյան, Ջրատիրության մասին դիվանական վավերագրերը և շահ Սաֆիի 1638 թ. հրովարտակը, – Բանբեր Մատենադարանի, 1973, № 11, էջ 223:

[5] Զամբռ, էջ 24:

ման ընթացքում[1]: Նրա և կաթողիկոսի հարաբերություններն ի սկզբանե լարված էին: Դրա հիմնական պատճառն Էջմիածնի պարտքերն էին, որոնք առաջացել էին Հակոբ Ջուղայեցու և Երուսաղեմի պատրիարք Եղիազար Այնթապցու հակամարտության պատճառով[2]:

Ըստ Սիմեոն Երևանցու՝ տասանորդի հարկման Էջմիածնի իրավունքը վերականգնելու նպատակով Ջուղայեցին դիմում է շահ Սուլեյմանին (1666-1694 թթ.): Սակայն պատմիչն սխալմամբ այս իրադարձությունը թվագրում է 1642-ով[3]: Զաքարիա Քանաքեռցին իր հերթին շահին Հակոբ Ջուղայեցու դիմելու տարեթիվը չի նշում և, բացի այդ, թերի է ներկայացնում նաև կաթողիկոսական խնդրագրի էությունը: Ըստ նրա՝ կաթողիկոսը շահին է դիմում միայն խանական բռնություններից ազատվելու խնդրանքով[4]: Մատենադարանի պարսկերեն հրովարտակներից մեկից պարզ է դառնում, որ շահ Սուլեյմանը 1674 թ. հրապարակված հրամանագրով արգելում է տեղական պաշտոնյաների ապօրինի պահանջները Էջմիածնի վանքի եկամուտների հանդեպ[5]:

Չնայած այն հանգամանքին, որ պարսից արքունիքն Էջմիածնի կաթողիկոսարանին զիջած հարկերի պատճառով տնտեսական բավականին մեծ կորուստներ էր ունենում, այդ վնասները փոխհատուցում էր այլ եղանակներով: Էջմիածինը չէր կարող լուծել վանքի համար քիչ թե շատ կարևորություն ունեցող որևէ խնդիր, առանց կաշառք տալու: Վերջինիս պաշտոնական

---

[1] Զամբռ, էջ 219:

[2] Հակոբ Ջուղայեցու և Երուսաղեմի պատրիարք Եղիազար Այնթապցու միջև շուրջ 20 տարի (1664–1679 թթ.) ծավալվել էր պայքար, որի հրահրողը Երուսաղեմի պատրիարքն էր՝ հպատակ ունենալով թուրքահայ թեմերն անջատելու Էջմիածնի վերահսկողությունից և դառնալու թուրքահայ անկախ և ընդհանրական կաթողիկոս (Հովհաննիսյան Աշ., Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը և տաճկահայ նուիրակության խնդիրը, Պատմագիտական ուսումնասիրություններ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2007, էջ 45):

[3] Զամբռ, էջ 219:

[4] Զաքարիա Սարկաւագ, h. II, էջ 81:

[5] Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ III, էջ 97-98, վավ. 39:

արտահայտությունն էր «փիշքաշը» (նվիրատվությունը), որի միջոցով էին լուծվում վարչական մարմինների հետ կապված բոլոր հարցերը[1]: Նույնիսկ հայոց կաթողիկոսները մինչև 1629 թ. պարտավորվում էին տարեկան 100 թուման «փիշքաշ» տալ պարսից արքունի գանձարանին[2]: Բացի այդ, կաթողիկոսն իր պաշտոնի հաստատումը փաստող շահական հրամանի դիմաց պարտավորվում էր 300 ոսկի վճարել: Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ՝ Հակոբ Ջուղայեցին կաթողիկոս հաստատվելու համար Աբբաս Բ-ի մեծ վեզիրին վճարել է 300 ոսկի: Ընդ որում, դա կատարվում էր «ըստ սահմանի առաջին Կաթուղիկոսացն»[3]: Կաթողիկոսական պաշտոնի հաստատման այս կարգի մասին է վկայում նաև Առաքել Դավրիժեցին[4]: Հակոբ Ջուղայեցուն նախորդած Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը ևս հարկադրված էր կաշառքի միջոցով լուծել Էջմիածնի համար կարևոր խնդիրները: Նա Գրիգոր Լուսավորչի աջը Նոր Ջուղայից Էջմիածին փոխադրելու թույլատվություն ստացավ միայն շահական արքունիքում կաշառք բաժանելուց հետո[5]:

Հակոբ Ջուղայեցու մահից երկու տարի անց նրան հաջորդեց Եղիազար Այնթափցին (1682-1690 թթ.), որն աչքի ընկավ բեղուն գործունեությամբ՝ նպատակ ունենալով վերականգնել 1679 թ. Երևանի հուժկու երկրաշարժի հետևանքով վնասված վանքերն ու եկեղեցիները: Նա վերակառուցեց Սբ. Հռիփսիմեի և Սբ. Գայանեի վանքերը: Երկուսում էլ հիմնադրվեցին հոգևոր միաբանություններ: Պարսպապատվեց Սբ. Գայանեի վանքը, տաճարի արևմտյան հատվածում կառուցվեց խորան, իսկ հյուսիսային կողմում կաթողիկոսը կառուցեց իր գերեզմանը, խուցը

---

[1] Դանեղյան Լ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դ. պատմության սկզբնաղբյուր, Ե., 1978, էջ 145:

[2] Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ II, էջ 104-106, վավ. 19:

[3] Զաքարիա Սարկավագ, հ. II, էջ 60-61:

[4] Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Խանլարյանի, Ե., 1990, էջ 202:

[5] Նույն տեղում, էջ 262-263:

և տնտեսական բնույթի կառույցներ[1]: Կառուցվեց նաև Զորագյուղի եկեղեցին[2]:

Եկեղեցաշինական գործունեությամբ է աչքի ընկնում նաև 1690 թ.[3] կաթողիկոս դարձած Նահապետ Եդեսացին, որը «Շինեցաւ եւ նորոգեցաւ բազում վանորայս եւ եկեղեցիս»[4]: Չնայած պատմիչը չի հիշատակում այդ վանական հաստատությունների անունները, սակայն այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ Նահապետ Եդեսացու ջանքերով 1691 թ. վերանորոգվել է Երևանի Սբ. Անանիա եկեղեցին, որն ավերվել էր 1679 թ. երկրաշարժի հետևանքով[5], Սբ. Շողակաթ եկեղեցին[6], իսկ Կարբի գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին[7]:

Զաքարիա Քանաքեռցին Հովհաննավանքի տնտեսական վերելքի շրջանը կապում է Զաքարիա Վաղարշապատցու (1637-1659 թթ.) անվան հետ, որը, 1637 թ. ստանձնելով Հովհաննավանքի վանահոր պաշտոնը. «Սկսաւ առնել շինութիւն: Եւ շինեաց ի մէջ հին պարսպին պարիսպ ի հարաւոյ կողմն եկե-ղեցւոյն, զտնտեսատունն, զսեղանատունն, զխցերն, եւ զհոյակապ աղիւսաշէն հրուանդանքն: Եւ ժողովեաց բազում անասունս, զձիս եւ զջորիս, եւ զերամակս մատակ ձիոց, եւ զեզինս, եւ զգոմէշս, եւ զխաշինս, եւ զհօղս, եւ զայգիս»[8]: Վերջինիս մասին գովասանքով է խոսում նաև Առաքել Դավրիժեցին՝ նշելով, որ Զաքարիա Վաղարշապատցու նախաձեռնած Հովհաննավանքի վերակառուցման և օժանդակ կառույցների շինարարական աշխատանքներն

[1] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 106:

[2] Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. III, Ե., 1987, էջ 720, Սրվանձտյանց Գ., Թորոս Աղբար, հ. II, Կ.Պոլիս, 1884, էջ 407:

[3] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 107:

[4] Նույն տեղում:

[5] Շահխաթունյաց Հ., Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատա, հ. II, Էջմիածին, 1842, էջ 144:

[6] Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. II, էջ 408:

[7] Կոստանյան Կ., Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 197:

[8] Զաքարիա Սարկաւագ, հ. III, էջ 34:

ավարտվեցին ընդամենը երկու տարում[1]: Նրա ջանքերով վերականգնվեց նաև տասանորդ հարկ գանձելու Հովհաննավանքի իրավունքը[2]:

Պատմիչն այդ իրավունքի սկզբնական ձեռքբերումը կապում է 1441 թ. Էջմիածնի կաթողիկոս ընտրված Կիրակոս Վիրապեցու անվան հետ[3]: Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ՝ վերջինիս պաշտոնավարման տարիներին էլ (1441–1442 թթ.)[4] տասանորդի հարկման իրավունքը հանձնվում է Հովհաննավանքին, ուր 1441 թ. առաջնորդ էր ընտրվել Կարապետ եպիսկոպոսը[5]:

Հովհաննավանքին տասանորդ հարկ վճարող գյուղերն էին Հովհաննավանքը, Որդկանան, Սերկնիլը, Փարպին և Բրնձաղաց ը հետևյալ չափով. «գՁ (6) ստակ[6] մուլք Յոհանավանուց, Ձ (6)

---

[1] Առաքել Դաւրիժեցի, էջ 282:

[2] Զաքարիա Սարկաւագ, հ. III, էջ 34:

[3] Որպես այս վկայության աղբյուր՝ Զաքարիա Քանաքեռցին հիշատակում է Թովմա Մեծոփեցուն և Առաքել Դավրիժեցուն. «Զայս ուսայ ի Թումայ պատմագրէն եւ յԱռաքել վարդապետէն (Զաքարիա Սարկաւագ, հ. III, էջ 31): Սակայն, Մեծոփեցու «Հիշատակարան»-ում այդ մասին ոչ մի վկայություն չկա: Այնտեղ նշվում է միայն, որ 1441 թ.՝ Կիրակոս Վիրապեցու ձեռնադրման ժամանակ, այլ եռգնորականների կողքին ներկա է գտնվել նաև «Տէր Կարապետ Յովհաննուվանից»-ը (Թովմա Մեծովեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Ե., 1999, էջ 220): Նման տեղեկության չկա նաև Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ում: Ինչպես վկայում է Զաքարիա Քանաքեռցին, ինքն այդ մասին տեղեկացել է Առաքել Դավրիժեցու հետ զրուցելիս (Զաքարիա Սարկաւագ, հ. III, էջ 31):

[4] Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. II, էջ 2486:

[5] Զաքարիա Սարկաւագ, հ. III, էջ 30:

[6] Հողատարածքն ստարման ենթարկվելու դեպքում բաժանվում էր 6 հավասար մասերի, որն իրանական աղբյուրներում կոչվում էր դանգ, իսկ հայկականում՝ ստակ: Սեկ ամբողջական կալվածքը վեց դանգ (ստակ) էր (Թորոսյան Հ., Արևելահայ գյուղացիության սոցիալ-տնտեսական դրությունը XVI–XVIII դդ., Ե., 1991, էջ 147, Պողոսյան Ս., Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում 17–18-րդ դարերում և Էջմիածինը որպես խոշոր կալվածատեր, Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. III, Ե., 1940, էջ 120):

ստակ մուլք Որդկանայ, Ա (1) ստակ եւ կէս Սերկեւիլոյ, Ա (1) ստակ Փարպի, եւ Ա (1) ստակ Բրնձաղաց»[1]:

Զաքարիա Քանքեռցու վկայությամբ Հովհաննավանքին հարկատու է եղել նաև Կարբի գյուղը, որը, սակայն, հետագայում ազատվել է հարկերից: Խնդիրն այն է, որ կարբեցիների ջանքերով Մուղնիում կառուցվում է մատուռ, որտեղ պահվում էին սրբերի մասունքներ: Կարբի գյուղի ավագանիների որոշմամբ՝ դեպի այդ մատուռ ամեն աշնանը կատարվող ուխտագնացություններից ստացված եկամուտը՝ դրամով և բնամթերքով, բաժանվելու էր 2 մասի՝ Հովհաննավանքի և Կարբիի միջև: Դրա հաշվին Կարբի գյուղն ազատվում էր Հովհաննավանքին վճարվելիք տասանորդ հարկից[2]:

Գյուղերից բացի, Հովհաննավանքի առաջնորդարանին հարկատու էին նաև Քասախից մինչև Ախուրյան գետ տարածվող հոգևոր թեմերը, որի վերաբերյալ տեղեկության պարունակող կոնդակը, Զաքարիա Քանաքեռցու հաղորդմամբ, անհայտացել է դեպի Հովհաննավանք ջալալի հրոսակների արշավանքներից մեկի ժամանակ[3]:

Զաքարիա Քանաքեռցու հաղորդմամբ՝ Հովհաննավանքին հարկատու հոգևոր հաստատությունները պարտավորվում էին վճարել հետևյալ հարկատեսակները՝ 1. հաս և իրավունք (տուրք), 2. պտուղ և սրբադրամ, 3. հոգեբաժին[4]: Պատմիչը, սակայն, չի անդրադառնում այն խնդրին, որ դրանց հավաքումն ունեցել է եռաստիճան բնույթ, ըստ որի՝ քահանաները գյուղերից հավաքված հարկերը տալիս էին առաջնորդարանին, վերջինս էլ դրանից բաժին էին տալիս կաթողիկոսարանին[5]:

---

[1] Զաքարիա Սարկաւագ, հ. III, էջ 34, հմմտ. Զամբռ, էջ 291:

[2] Զաքարիա Սարկաւագ, հ. III, էջ 41:

[3] Նույն աեղում, էջ 7-8: Խոսքը վերաբերում է ջալալիների 1605 թ. կողոպտչական արշավանքին (Մանր ժամանակագրություններ (XIII–XVIII դդ.), հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1951, էջ 179):

[4] Զաքարիա Սարկաւագ, հ. III, էջ 7-8:

[5] Թոփոսյան Հ., Էջմիածնի վանական տնտեսությունը, էջ 228:

Ստացված եկամուտներից Հովհաննավանքի առաջնորդարանը պարսից պետությանը հարկ չէր վճարում[1]: Դա արդյունքն էր այդ վանքի վանահայր Զաքարիա Վաղարշապատցու ջանքերի: Նա Նոր Ջուղայի մեծամեծերի միջոցով Աբբաս Բ-ից համապատասխան հատուկ իրավունք էր ստացել. «Եւ առաքեաց (Զաքարիա Վաղարշապատցին - Ա. Վ.) թուղթ օրհնութեան,- գրում է Զաքարիա Քանաքեռցին,- ի վերայ Ջուղայու մեծամեծացն. որ հանին նօմոս արքունական ի փոքր Շահ-Աբասէն Պարսից, որ ազատ լինի ի հարկաց արքունի՝ թէ այգի, թէ հող, եւ թէ՛ այլ ամենայն ինչ, զոր ինչ վարեմք եւ ցանեմք, առանց հնգորդի եւ տասանորդի զամենայն ժողովեմք յշտեմարանս՝ եւ վայելեմք առանց աշխատանաց»[2]: Այսպիսով, ըստ Զաքարիա Քանաքեռցու, պարսից արքունիքը Հովհաննավանքին, փաստորեն, էջմիածնի նման օժտել էր մաղաֆության (ապահարկության) իրավունքով, որով վանական կալվածքներն ազատվում էին պետական հարկերի վճարումից[3]: Չնայած, տասանորդ և հինգանորդ հարկերից բացի Հովհաննավանքը Զաքարիա Վաղարշապատցու պաշտոնավարման ընթացքում ազատվում էր նաև, այսպես կոչված, «արքունական հարկ»-ից, որի էության արդեն անդրադարձել ենք, սակայն Սիմեոն Երևանցու վկայությունից պարզ է դառնում, որ հետագայում Հովհաննավանքն Երևանի խանության մի քանի այլ վանական հաստատությունների նման ամեն տարի պարտավորվում էր վճարելու նախատեսված դրամական ռենտան՝ 17 թուման 500 դինար չափով: Հովհաննավանքի առավելությունն այն էր, որ վերջինս, ըստ Սիմեոն Երևանցու «մէկ թուման ԳՃԼ (330) դիանի (դինար - Ա.Վ.) մաղաֆութիւն ունի նաղտից կողմանէ»[4]:

---

[1] Закарий Канакерци, Хроника, перевод с армянского, предисловие и комментарий М. О. Дарбинян-Меликян, М.,1969, с. 258.

[2] Զաքարիա Սարկաւագ, հ. III, էջ 34–35:

[3] Մարկոսյան Ա., Խմունիտետի իրավունքը Արարատյան երկրում XVII-XVIII դդ., Ե., 1975, էջ 42:

[4] Ջամբռ, էջ 145:

Պատմիչը դրական գույներով է ներկայացնում նաև Զաքարիա Վաղարշապատցուն հաջորդած Հովհաննես Կարբեցու (1659-1679 թթ.) պաշտոնավարումը, որն իր բեղմնավոր գործունեությունը շարունակեց նաև Հովհաննավանքի սահմաններից դուրս՝ կառուցելով Սերկնիլի վանական միաբանությունն իր օժանդակ տնտեսական կառույցներով և Կարբիի ձիթհանը[1]:

Էջմիածնից և Հովհաննավանքից բացի, Զաքարիա Քանաքեռցին անդրադառնում է նաև Բջնիի վանական տնտեսությանը: Խոսելով եպիսկոպոս Փիլիպոս Քանաքեռցու մասին՝ նա հաղորդում է, որ վերջինս, դառնալով Բջնիի վանքի առաջնորդը, վերակառուցելով տեղի տնտեսական շինությունները[2]:

Ի տարբերություն վանական տնտեսությանը բնորոշ ապահարկության իրավունքի, ըստ որի վանական հաստատություններին պատկանող գյուղերի բնակիչներն ազատված էին պետությանը հողային ռենտա վճարելու ծանր պարտականությունից, պետական հողերի վրա ապրողները պարտավորվում էին պարսից պետությանը վճարել հողային ռենտա, այն է՝ ստացված հինգանորդը (բահրա)[3]:

Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ խանական վարչությունը հատուկ պաշտոնյայի միջոցով, որը հայտնի էր, հազարչիե անունով, հաշվում էր ստացված բնամթերքի չափը, որպեսզի ճշտորեն իրականացնի պետությանը հասանելիք հարկի՝ հինգանորդի գանձումը, որն իրականացվում էր պարսից հարկահանների միջոցով[4]:

Մասնակի դեպքերում, սակայն, գյուղերի հարկերը կարող էին հավաքվել գյուղապետերի, այլ ոչ թե հարկահանների միջո-

---

[1] Զաքարիա Սարկաւագ, հ. III, էջ 36:

[2] Նոյն տեղում, հ. I, էջ 76:

[3] Սիմեոն Երևանցին այդ մասին գրում է. «Զի որպէս է սովորութիւն երկրիս, որք ի յամենայն գեօղօրայս զոր ինչ սերմանեն՝ ի հնգէն մէկ՝ զհնգորդ տան յարքունիս, որ բահրա ասի, եւ ի տասնէն մէկ՝ զտասանորդ տան մլքատեարն՝ որ մուլք ասի» (Ջամբռ, էջ 159):

[4] Զաքարիա Սարկաւագ, հ. I, էջ 68:

ցով: Այդպիսի օրինակ Զաքարիա Քանաքեռցին բերում է Մահմադղուլի խանի (1693-1696 թթ.) պաշտոնավարման հետ կապված: Ըստ պատմիչի՝ վերջինս «Ոչ առաքէր հարկահանս յերկիրն, զի մի՛ նեղեսցեն զռամիկսն, այլ ինքեանք ժողովեալ առ սակաւ սակաւ հատուսցեն»[1]: Բնատուրքից բացի գյուղապետի վրա էր դրված նաև դրամական հարկերի հավաքագրման պարտականությունը: Նման օրինակ Զաքարիա Քանաքեռցին բերում է Քանաքեռ գյուղի հետ կապված: Գյուղապետ Ամիրջանը մեկ տարվա ընթացքում գյուղից հավաքել էր 340 թուման: Կատարած ծախսերի վերաբերյալ վերջինիս ներկայացրած հաշվետվության ժամանակ գյուղի ավագանին 60 թումանի պակասորդ է արձանագրում և բողոքագիր ներկայացնում Երևանի խանին: Իրավիճակը պարզելու համար խանը Քանաքեռ է ուղարկում իր պաշտոնյաներից Գուլնազարին, ով փորձում է դաժան ծեծի միջոցով Ամիրջանից ստանալ պակասող գումարը: Վերջինիս աղերսանքներին ի պատասխան՝ գյուղացիները հավաքում և Գուլնազարին են հանձնում 30 թուման, իսկ մնացած 30 թումանի դիմաց գյուղապետն առաջարկում է խանին հանձնել իր չորս որդիներին և գեղեցկուհի դստերը: Սակայն, խանը մերժում է Ամիրջանի խնդրանքը և հրամայում շարունակել վերջինիս տանջահարելը[2]:

Հարկային համակարգի պաշտոնյաներից էր նաև քալանթարը: Վերջինս, Զաքարիա Քանաքեռցու համաձայն, Երևանի խանության հարկային տեսչության ատենապետն էր, որը Երևանի խանի կողմից հաստատագրված հարկը բաշխում էր գավառապետերի վրա: Վերջիններս էլ իրենց հերթին որոշում էին իրենց գավառում գտնվող գյուղերի հարկաչափը: Հավաքված հարկը պարսիկ ոստիկանների միջոցով և քալանթարի վերահսկողությամբ հանձնվում էր խանին[3]:

Տասանորդից և hիսգանորդից բացի, Երևանի խանության գյուղացիները վճարում էին նաև անասնահարկ ու գլխահարկ:

---

[1] Զաքարիա Սարկաւագ հ. II, էջ 135:

[2] Նոյն տեղում, էջ 2-4:

[3] Նոյն տեղում, էջ 40:

Չնայած Արևելյան Հայաստանում պարսից տերության մնացած հատվածների նման գերազանցապես տարածված էր, քոդավե կամ «չոբանբեկի» կոչվող մանր եղջերավոր անասունների դիմաց անասնահարկի գանձումը[1], սակայն Զաքարիա Քանաքեռցու վկայություններից պարզվում է, որ բնակչության համար ծանր բեռ էին դարձել նաև խոշոր եղջերավոր անասուններից գանձվող հարկերը: Ըստ պատմիչի՝ Ամիրգունա խանը հատուկ պաշտոնյայի միջոցով հարկերի գանձման նպատակով հաշվառում էր նաև խորշոր եղջերավոր անասունները[2]:

Հարկային պարտավորություններից բացի, գյուղացիները պարտավոր էին նաև պետության համար կատարել ձրի պարտադիր աշխատանք՝ կոռ: Այդ կապակցությամբ հաճախ կատարվում էր մարդահամար, որի ընթացքում հատուկ ուշադրություն էր դարձվում գյուղացիներից առողջներին ընտրելու հանգամանքի վրա: Դրա արտահայտություններից մեկը Քանաքեռ գյուղում խանական պաշտոնյա Ասլան աղայի իրականացրած մարդահամարն էր[3]: Վերջինս նպատակ էր հետապնդում բռնության միջոցով ստիպելու գյուղացիներին, որպեսզի նրանք չթաքցնեն հարկման ենթակա իրենց արու զավակներին:

Ամփոփելով Երևանի խանության XVII դ. վանական տնտեսության և հարկային համակարգի վերաբերյալ Զաքարիա Քանաքեռցու վկայությունները՝ կարող ենք արձանագրել, որ հոգևոր հաստատությունների տնտեսական վերելքը մեծապես պայմանավորված էր հոգևոր առաջնորդների անձնական հատկանիշներով: Իսկ վանքապատկան հողատարածքների ընդարձակումը, տնտեսական շահույթ ապահովելուց զատ, նպատակ է հետապնդել հայ բնակչությանն ազատելու պարսից հարկահանների կեղեքումներից:

---

[1] Առաքել Դավրիժեցի, էջ 165, Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. I, ԺԳ-ԺԶ դդ. (1253-1582), Ե., 1932, էջ 350, Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ II, էջ 127, վավ. 34, նույն տեղում, պրակ III, էջ 136, վավ. 36:

[2] Զաքարիա Սարկավագ, հ. I, էջ 67-68:

[3] Նույն տեղում, էջ 66:

Ինչ վերաբերում է նույն շրջանի Երևանի խանության հարկային համակարգին, ապա թեև վերջինս գերազանցապես խարսխված էր շահական արքունիքի ընդունած օրենքների և որոշումների վրա, սակայն շատ հաճախ Երևանի խաներն իրենց ենթակա հարկային պաշտոնյաների միջոցով իրականացնում էին սեփական շահերից բխող հարկային քաղաքականություն:

**АРМЕН ВИРАБЯН**
**ИИ НАН РА**

## МОНАСТЫРСКАЯ ЭКОНОМИКА И НАЛОГОВАЯ СИСТЕМА ЕРЕВАНСКОГО ХАНСТВА В ОСВЕЩЕНИИ ЗАКАРИЯ КАНАКЕРЦИ

### РЕЗЮМЕ

Хроника Закария Канакерци содержит важные сведения относительно социально-экиномической истории ереванского ханства – социально–экономического и политико–административного центра Восточной Армении XVII в. Свидетельства историка дают представления о монастырской экономике, сельской общине, социальном положении армянского населения, налоговых обязательствах и обязательном труде ереванского ханства этого периода.

Свои свидетельства о монастырской экономике ереванского ханства XVII в. Закария Канакерци представляет с точки зрения деятельности духовных наставников, так как подьем экономики духовных учреждении был обусловлен их личными качествами. Из свидетельств историка становится ясно, что расширение монастырских территорий, кроме обеспечения экономической выгоды, преследовало цель освобождение армянского населения от гнета персидских налоговых чиновников.

Что касается налоговой системы ереванского ханства того же периода, то хотя оно в основном было основано на законах и решениях, принятых шахским двором, очень часто ереванские ханы посредством нижеподданных налоговых чиновников, осуществляли налоговую политику, исходящую из их личных интересов.

**ARMEN VIRABIAN**
**IH NAS RA**

## MONASTIC ECONOMICS AND TAX SYSTEM OF YEREVAN ILLUSTRATED BY ZAKHARIA KANAKERTSY

### RESUME

The «Chronicle» by Zakharia Kanakertsy includes important information concerning social-economic history of Yerevan khanate – the social-economical and political-administrative centre of Eastern Armenia in XVII century. The historian's evidence gives us idea about monastic economics, village community, social situation of Armenians, tax duties and obligatory labour of Yerevan khanate of that period.

Zakharia Kanakertsy represents his evidence about monastic economics of Yerevan khanate from the point of view of spiritual tutors' activity as the increase in economics of spiritual institutions was due to their personal merits. From the historian's evidence it becomes clear that broadening of monastic territories besides providing economic profits was aimed to setting free Armenian population from Persian tax officials force.

As for tax system of Yerevan khanate of the same period, though it was based on the laws and decisions adopted by shakh court, Yerevan khans very often realized tax policy coming from their personal interests.

ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻԻ ԵՎ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

XVIII դարի առաջին տասնամյակներում Հայաստանը դեռևս բաժանված էր Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև: Այդ դժվարին պայմաններում հայությանը միավորող միակ ամբողջական կառույցը շարունակում էր մնալ Հայ Առաքելական Եկեղեցին: Հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հայության երկու հատվածներից որևէ մեկը վտանգի տակ չդնելու համար, ստիպված էր գործել մեծ զգուշավորությամբ[1]: Ստեղծված իրավիճակում հայ ժողովրդի ազատագրական պայքարի կազմակերպման գործում կարևոր նշանակություն ունեին Արցախը և Սյունիքը՝ շնորհիվ հայկական պետականության մարմնավորումը հանդիսացող մելիքությունների, ինչպես նաև այդ գործում ղեկավար դեր ստանձնած Հայ Առաքելական Եկեղեցու արևելյան թեմերն առաջնորդող Գանձասարի կաթողիկոսության[2]:

Ս. Էջմիածինը, ուշադրության կենտրոնում պահելով Գանձասարի կաթողիկոսության ներքին՝ նվիրապետական և տնտեսական կյանքի հիմնական ոլորտները, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ ծավալած գործունեությունը, ձգտում էր ուժեղացնել նրա դիրքերը: Այդ տեսակետից կարևոր էր Գանձասարի կաթողիկոսությունում երկաթոռության[3] հետևանքով առաջացած

---

[1] Տե՛ս Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 3114:

[2] Դանիելյան Է., Գանձասարի պատմություն, Ե., 2005, էջ 201, 204, 219:

[3] Դեռևս XVI դարի կեսից աթոռակալական պայքար էր ծավալվել Գանձասարի կաթողիկոսական աթոռը զբաղեցնող Խաչենի Հասան-Ջալալյան իշխանական տան ներկայացուցիչ հոգևորականների և կաթողիկոսական աթոռին ժառանգաբար տիրելու նրանց իրավունքը վիճարկողների միջև: Պայքարը, որ հատկապես սրվել էր Գանձասարի Երեմիա կաթողիկոսի (1676-1700 թթ.) և նրան հա-

խնդիրների լուծման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը: Պատահական չէր, որ 1709 թ. հունիսի 18-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցին (1706-1714 թթ.) նամակով հորդորում էր Գանձակի մելիքներ Քյամալին և Բայանդուրին վերջ դնել Գանձասարի կաթողիկոսությունում տիրող երկպառակությանը, իսկ եթե դա չհաջողվի, կաթողիկոսներից մեկին՝ Եսայի Հասան-Ջալալյանին, կամ Ներսես Ջրաբերդցուն կաթողիկոս ճանաչել, ծայրահեղ դեպքում «երկուքն ևս կայցեն կաթողիկոսական պատուով»[1]: Այդ ընթացքում Արցախի մելիքների ջանքերով Եսայի Հասան-Ջալալյանը և Ներսես Ջրաբերդցին հաշտվում են: Նրանց համագործակցության մասին հետագայում Րաֆֆին գրել է. «Եսայի և Ներսես միացած Ղարաբաղի մելիքների հետ՝ գործում էին հայրենիքի փրկության համար»[2]: Համերաշխության հաստատումը հնարավորություն էր տալիս համախմբել ուժերը և նախապատրաստվել ազատագրական պայքարի կազմակերպմանը:

XVIII դարի սկզբներին հայ ազատագրական շարժման նոր ավելի կազմակերպված փուլի սկզբնավորումն անխզելիորեն կապված է Իսրայել Օրիի (1659-1711 թթ.)[3] անվան հետ: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Օրին, վերջնականապես հույսը կտրելով արևմտաեվրոպական տերություններից օգնություն ստանալուց, Հայաստանի ազատագրման խնդիրը կապեց Ռուսաստանի հետ[4]: Դեռնս 1708 թ., ռուսական պատվիրակության ղեկավարի

---

կաթող Սիմեոն Խոտորաշենցու (1675-1701 թթ.) աթոռակալության տարիներին, շարունակվում էր նաև նրանց հաջորդած Եսայի Հասան-Ջալալյանի (1701-1728 թթ.) և Ներսես Ջրաբերդցու (հակաթոռ 1706-1728 թթ., կաթողիկոս 1736-1763 թթ.) միջև (Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Ե., 2006, էջ 54, 69-78):

[1] Մատենադարան, ձեռագիր N 4331, էջ 19ա:

[2] Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ.10, Ե., 1964, էջ 476:

[3] 1699 թ. ապրիլի 29-ին Սյունյաց մելիքների կողմից Պետրոս I-ին ուղղված նամակում նշվում էր, որ Իսրայել Օրին սերում էր Պռոշյան իշխանական տնից (Эзов Г., Сношения Петра Великого с Армянским народом, СПб., 1898, с. 17):

[4] Իսրայել Օրին այդ վճռական և բախտորոշ քայլին դիմեց Պֆալցի կուրֆյուրստ Հովհան-Վիլհելմի և Հռոմեական Կայսրության կայսր Լեոպոլդի խորհրդով

կարգավիճակում ժամանելով Պարսկաստանի մայրաքաղաք Սպահան, Իսրայել Օրին ընդունվել էր շահի Սուլթան Հուսեյնի կողմից ռուսական դեսպաններին հատկացվող պատվով[1]: Իր մերձավոր ընկեր և զինակից Մինաս վարդապետ Տիգրանյանի[2] հետ նամակագրական կապի միջոցով Օրին պետք է կարևոր տեղեկություններ հաղորդեր ռուսական արքունիքին Պարսկաստանի ներքին կյանքի և քաղաքական կացության վերաբերյալ[3]:

Սակայն Պարսկաստանում Օրին միայն դիտողի և հետախույզի դերում չէր: Նրա հիմնական նպատակը շարունակում էր մնալ Հայաստանի ազատագրման ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը: Պատահական չէ, որ Պարսկաստան գնալիս և այնտեղից վերադառնալիս Օրին հանդիպել էր ինչպես Ամենայն Հայոց կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցու, այնպես էլ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի հետ[4]:

---

(Эзов Г., նշվ. աշխ., էջ 133, հմմտ. Տոլբագյան Ե., XVIII դարի հայ ազատագրական շարժումները և ռուսական կողմնորոշումը: Պետրոս Ա և հայերը, Մ., 2005, էջ 18-19):

[1] Տե՛ս Эзов Г., նշվ. աշխ., էջ 247: Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մաքի պատմության, գիրք 2, Ե., 1959, էջ 599:

[2] Իսրայել Օրին և Մինաս վարդապետ Տիգրանյանը ծանոթացել էին դեռևս 1699 թ. Անգեղակոթի ժողովի ժամանակ: Այստեղ էլ մելիքները, հաշվի առնելով վարդապետի՝ բանիմաց և վստահելի մարդ լինելը՝ նրան դարձրել էին Օրիի ուղեկիցը և վստահեցրել, թե «երկուսը միասին ինչ-որ ասեն ու հաստատեն Ռուսաստանի թագավորին, իրենց համար ընդունելի և հաճելի պիտի լինի» (Эзов Г., նշվ. աշխ., էջ 17): Մինաս վարդապետն Օրիի եվրոպական ճանապարհորդությունների ժամանակ նրա քարտուղարի և Հայաստանին վերաբերող տեղեկությունների հայթայթողի ու խորհրդատուի դերում էր, իսկ երբ Օրին ուղևորվում էր Պարսկաստան և նրան պետք էր մեկը Ռուսաստանում, ում միջոցով կկարողանար ռուսական կողմին տեղեկություններ հաղորդել իր պատվիրակության գործերի մասին, Մինաս վարդապետն ստանձնեց այդ պարտականությունը (Նույն տեղում, էջ 254):

[3] Эзов Г., նշվ. աշխ., էջ 254:

[4] Նույն տեղում, էջ 243-244, Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 610:

1709 թ. հունիսի 7-ին Ալեքսանդր Ջուղայեցին Պետրոս Մեծին գրեց մի կոնդակ, որից տեղեկանում ենք, որ այդ ընթացքում Օրին այցելել էր Էջմիածին, ուր արժանացել էր սիրալիր ընդունելության[1]: Ցարին ուղղված երկար բարեմաղթություններից և օրհնություններից հետո Ալեքսանդր կաթողիկոսը գրում էր, որ Օրին պատմել է Պետրոս Մեծի հայ ժողովրդի նկատմամբ ունեցած սիրո և հարգանքի մասին, «...և մեք ուրախացեալ ցնծացաք և քո հրամանքդ օրհնելով օրհնեցաք, զոր Տէր Աստուած զքեզ հաստատ և պայծառ պահեսցէ ի պարծանս ազգիս քրիստոնէից»[2]: Այնուհետև, նշելով, որ Իսրայել Օրին հիացրել էր բոլորին՝ բարձր պահելով Պետրոս Մեծի պատիվը, Ամենայն Հայոց կաթողիկոսը վերջինիս մաղթում էր երկարակեցություն և թշնամիներին դիմակայելու կարողություն[3]:

Այն հանգամանքը, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը հարկ էր համարել օրհնության գիր հղել Պետրոս Մեծին և հաղորդել նրան Օրիի այցելության մասին, հիմք է տալիս ենթադրելու, որ Օրին Էջմիածին էր ժամանել Պետրոս Մեծի հատուկ հանձնարարություններով[4]: Կարևորելով Ամենայն Հայոց կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցու և ռուսաց թագավորի միջև նամակագրական կապի հաստատումը, Լեոն եզրակացրել է, որ «Օրին այլևս պատճառ չուներ դժգոհ լինելու հայ հոգևորականությունից, որն այժմ նրա հետ միասին կանգնած էր հայրենիքի գործն առաջ տանելու համար»[5]: Միաժամանակ Լեոն ընդգծել է Եսայի կաթողիկոսի ունեցած դերը Ս. Էջմիածնում տիրող տրամադրությունների հարցում. «Գուցե առանց նրա ջանքերի չէր, որ նույն ճանապարհի վրա կանգնած ենք տեսնում և Էջմիածնի աթոռը»[6]:

---

[1] Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть I, Е., 1964, с. 284.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 604:

[5] Լեո, Հայոց պատմություն, հ. 3, գ. 2, Ե., 1973, էջ 99:

[6] Նույն տեղում:

Ինչպես տեսնում ենք, արդեն իսկ նամակագրական կապի հաստատումն Ամենայն Հայոց կաթողիկոսի և ռուսական ցարի միջև Լեոյի կողմից դիտվում էր որպես առաջընթաց քայլ ազատագրական շարժման գործում: Հարկ է նշել, որ նամակում շատ են հաճոյախոսություններն ու բարեմաղթանքները, սակայն այնտեղ չի խոսվում Իսրայել Օրիի ձեռնարկած գործի մասին: Հնարավոր է, որ Ամենայն Հայոց կաթողիկոսն ստիպված էր ի պաշտոնե զգուշություն դրսևորել և հնարավորություն չուներ ավելին գրելու[1]:

Հետաքրքիր է դիտարկել նաև Գանձասարի կաթողիկոսության վերաբերմունքը Օրիի և նրա ձեռնարկած գործի նկատմամբ: Դեռևս 1699 թ. Գանձասարի հոգևոր ներկայացուցիչները մերժողական դիրքորոշում էին դրսևորել Օրիի նկատմամբ՝ զգուշանալով, որ, լինելով Պֆալցի կողմից ուղարկված դեսպան, Օրին կփորձի կաթոլիկություն սերմանել հայ ժողովրդի մեջ: Ներկայացնելով Պֆալցյան ծրագրի նշանակությունը՝ Օրին ամեն կերպ աշխատում էր մեղմել դրա կաթոլիկ ուղղվածությունը, սակայն հենց Հռոմի պապի գերակայության ճանաչման ակնարկը հանդիսացավ այն պատճառը, որ Օրին մերժողական պատասխան ստացավ Գանձասարի միաբանությունից[2]: Այժմ, երբ Օրիի արևմտաեվրոպական կողմնորոշումը փոխարինվել էր ռուսականով, կաթոլիկություն ընդունելու պայմանը վերացել էր: Ուստի Գանձասարի կաթողիկոսության դիրքորոշումը միանշանակ էր՝ ամեն կերպ աջակցել Իսրայել Օրիին[3]: Երբ Օրին, ավարտե-

---

[1] Ամենայն Հայոց կաթողիկոսությունը բազմաթիվ թեմեր ուներ Պարսկաստանում և Օսմանյան կայսրությունում, ուստի ակնհայտ ռուսամետ դիրքորոշման դեպքում կարող էր վտանգի տակ դնել դրանց հետագա գործունեությունը (Մկրտումյան Լ., նշվ. աշխ., էջ 87):

[2] Տես Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 3112-3116: Հմմտ. Դանիելյան Է., նշվ. աշխ., էջ 213:

[3] Հայ հոգևորականությունը՝ հանձին Եսայի Հասան-Ջալալյանի, այս անգամ օգնություն ցուցաբերեց Իսրայել Օրիին: Գանձասարի կաթողիկոսը դարձավ քաղաքական շարժման ղեկավար, որովհետև, ինչպես նշել է Եղիշե Գեղամյանցը, «մեջտեղում եկեղեցու միության հարց չկար, և խնդիրը վերաբերում էր հայ-

լով ռուսական պատվիրակության ղեկավարի առաքելությունը, մեկնում էր Մոսկվա, մի քանի եկեղեցականների ուղեկցությամբ նրա հետ էր նաև Գանձասարի Եսայի կաթողիկոսը, որը նպատակ ուներ անձամբ հանդիպել Ռուսաց թագավորի հետ և պայմանավորվել Հայաստանի ազատագրության հարցերի վերաբերյալ[1]: Հետագայում այս մասին Եսայի կաթողիկոսը գրում էր Պետրոս Մեծին. «Իսրայել Օրի դեսպանն եկն երկիրս Հայոց և զհամբաւ բարեյաղթութեանդ ախոեալ տարածեաց ի լսելիս մեր ամենեցուն. և այնքան յորդորեցաք ի սէր քո մինչ ես իմովք միաբանիւք ելեալ ընդ նմա հանդերձ եկինք մինչև ի Յաշթարաքան քաղաք առ ի տեսութիւն և երկրպագութիւն մեծ և բարձր թագավորութեանդ»[2]:

Իսրայել Օրին և Եսայի Հասան-Ջալալյանը մեծ դժվարություններով միայն 1711 թ. օգոստոսին հասան Աստրախան, սակայն հենց այդտեղ էլ ընդհատվեց նրանց ուղևորությունը, քանի որ նույն ամսում Օրին մահացավ: Եսայի կաթողիկոսը, որպես հավատարիմ զինակից, մնաց Օրիի կողքին մինչև նրա կյանքի վերջին օրերը: Օրիի մահից հետո Եսայի կաթողիկոսը վերադարձավ Գանձասար[3]:

---

կական քաղաքական անկախությանը» (Գեղամյանց Ե., Իսրայել Օրին և իր քաղաքական ծրագիրը, Բաքու, 1914, էջ 52):

[1] Տե՛ս Эзов Г., նշվ.աշխ., էջ 312:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 316:

[3] Պետրոս Մեծին ուղղված վերռհիշյալ գրության մեջ Եսայի Հասան-Ջալալյանն անդրադարձել է Իսրայել Օրիի մահվանը. «...դեսպանն անդ մեռաւ և զամենայն ինչս նորա և մեր ցիր ու ցան արարին, և ոչ որք չունէաք ասպնջական և ծանօթ, դարձեալ դարձաք յետս և եկաք յերկիրս մեր» (Эзов Г., նշվ. աշխ., էջ 316): Հենվելով ռուսական պաշտոնական գրությունների վրա, որոնց համաձայն Օրիի թաղումը տեղի էր ունեցել Աստրախանի հայկական եկեղեցու բակում «լուսավորչական եկեղեցու ծեսով» (Նույն տեղում, էջ 277-278)՝ Ա. Հովհաննիսյանը գրել է, որ Գանձասարի Եսայի կաթողիկոսը և նրա հետ ժամանած եկեղեցականները, «թաղման կարգ կատարելով, հարգանքի տուրք էին մատուցել անժամանակ մեռած հայ քաղաքական գործչին, որն անձնապես լինելով հավատացյալ կաթոլիկ՝ ի վերջո խախտել էր դարերի տրադիցիան՝ դնելով հայ ազատագրական շարժումը դավանաբանական բացառությունների հաղթահարման շավիղի վրա» (Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 621):

Մինաս վարդապետ Տիգրանյանը և Եսայի Հասան-Ջալալյանը, համագործակցելով Արցախի մելիքների հետ, ստանձնեցին ազատագրական պայքարի հետագա կազմակերպման գործը: Հայտնելով Պետրոս Մեծին Օրիի մահվան մասին Մինաս վարդապետը խնդրում էր իրեն մոռացության չտալ և խոստանում էր ծառայություններ մատուցել ռուսական կառավարությանը[1]: Օգտվելով իր ձեռք բերած ծանոթություններից Մինաս վարդապետը շարունակում էր դիմումներ անել և խնդրանքներ ուղղել ռուսական կառավարությանը հայ ազատագրական պայքարի գործում օգնություն ստանալու նպատակով: Իսկ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը դարձավ այն մարդը, ով շարունակություն տվեց Իսրայել Օրիի սկսած գործին: Լեոն այդ մասին գրել է. «Այդ մարդն էր, որ եկեղեցու հովվի պաշտոնի հետ միացրեց զինվորական գործունեությունը... Շատ բան չէր կարող անել Օրին, եթե նրա հետ միաժամանակ Գանձասարում չլիներ Եսայի կաթողիկոսը: Պատմության ընթացքը ցույց է տալիս, որ ազատության գաղափարը Օրիի հետ վաղաժամ գերեզման կմտներ, եթե Եսային իր վրա վերցրած չլիներ սկսած գործի շարունակությունը»[2]:

Պատմագրության մեջ եղել է ակնարկ, որ Իսրայել Օրիի ազատագրական պայքարի ռուսական ծրագիրն ընդունվել էր Եսայի Հասան-Ջալալյանի կողմից, քանզի Գանձասարի հայրապետը ձգտում էր իր եկեղեցական ազդեցությունը տարածել նաև Մոսկվայի, Աստրախանի և Ռուսաստանի ամբողջ հարավի հայության վրա[3]: Եթե նույնիսկ ճիշտ համարենք այդ տեսակետը, միևնույն է, ակնհայտ է, որ Հասան-Ջալալյանի այդ ձգտումը նույնպես ծառայեցվելու էր Հայրենիքի ազատագրման խնդրին: Ուստի առավել հավանական է, որ Եսայի կաթողիկոսը զինվորագրվել էր հայ ժողովրդի ազատագրությանը և այն հաջողու-

---

[1] Տե՛ս Эзов Г., նշվ.աշխ., էջ 311-313:

[2] Լեո, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1986, էջ 486:

[3] Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть I, с. 22.

թյամբ իրականացնելու, այդ գործին Ռուսաստանի հայությանը ևս մասնակից դարձնելու համար, հարկ էր, որ իր ազդեցությունը տարածեր նաև Ռուսաստանում[1]: Բացի այդ Եսայի Հասան-Ջալալյանը, կողմնորոշվելով դեպի Ռուսաստան, ձգտում էր բարեկամական կապեր պահպանել նաև այլ պետությունների հետ, որոնցից այս կամ այն օժանդակությունը կարելի էր ակնկալել Օրիի ձեռնարկած ծրագրի իրագործման համար[2]: Այս ամենից հետևում է, որ Եսայի կաթողիկոսը, հավանություն տալով Օրիի ծրագրին, վարձում էր օգտագործել բոլոր հնարավոր միջոցներն ընդհանուր նպատակի իրականացման համար:

Եվ իրոք, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Եսայի Հասան-Ջալալյանն իր ողջ կյանքն ու գործունեությունը նվիրեց հայ ժողովրդի ազատագրական պայքարի կազմակերպմանն ու ղեկավարմանը: Նա դրսևորեց իրեն որպես հայրենասեր և ազատասեր անձնավորություն, տաղանդավոր քաղաքագետ ու դիվանագետ, ով ներքին ու միջազգային բարդ իրադրության պայմաններում կարողանում էր արագ կողմնորոշվել և ճիշտ ուղղություն տալ ազատագրական պայքարին: Հայկական ադնախների կազմակերպումը, հայ-վրացական և հայ-ռուսական ռազմա-քաղաքական դաշինքի գաղափարը, որի ոգեշնչողներից ու ակտիվ կենսագործողներից մեկն էր նա, դրա վառ ապացույցն է[3]:

Այսպիսով, այն քայլերը, որ ձեռնարկվել էին Իսրայել Օրիի կողմից, կարևոր հիմք հանդիսացան ազատագրական գործի հետագա կազմակերպման համար, և արդեն XVIII դարի 20-ական թթ. վերածվեցին լայնածավալ ազատագրական շարժման Սյունիքում և Արցախում:

---

[1] Տե՛ս Ուլուբաբյան Բ., Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Ե., 1998, էջ 218-219:

[2] Տես Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 612:

[3] Տես Պարսամյան Վ., Ղարաբաղի ազատագրական շարժումների պատմությունը Եսայի Հասան-Ջալալյանի լուսաբանությամբ. - Բանբեր Երևանի համալսարանի, 1985, էջ 144-145, 155:

**АЙК КАРАПЕТЯН**
**ИИ НАН РА**

# К ВОПРОСУ О СОТРУДНИЧЕСТВЕ ИСРАЭЛА ОРИ И АРМЯНСКОГО ДУХОВЕНСТВА В ОРГАНИЗАЦИИ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ АРМЯН

## РЕЗЮМЕ

В первые десятилетия XVIII в. Армения оставалась разделенной между Сефевидской Персией и Османской империей. Положение армянского народа было крайне тяжелым. В таких условиях, чтобы не поставить под угрозу жизнь армянского народа в восточной и западной частях Армении, Св. Престол Эчмиадзина действовал с большой осторожностью. В сложившейся ситуации активную роль в деле освободительного движения играл католикосат Гандзасара, возглавлявший восточные епархии Армянской Апостольской церкви.

Именно в это время Исраэл Ори, окончательно убедившись в необоснованности обещаний западноевропейских стран оказать помощь армянскому народу, связал свои надежды в организации освободительного движения с Россией. Прибыв в Армению, Исраэл Ори встретился с Католикосом Всех Армян Александром Джугаеци и католикосом Гандазасара Есаи Хасан-Джалаляном, который оказал всяческую помощь Исраэлу Ори и даже изъявил желание лично встретиться с Петром I, чтобы обсудить вопросы об освобождении Армении. Ори и католикос Есаи, направляясь в Москву, добрались до Астрахани, где Ори неожиданно скончался. Есаи организовал похороны Исраэла Ори по всем обрядам Армянской Апостольской церкви и, вернувшись в Армению, продолжил руководство по организации оосвободительного дела армянского народа.

Таким образом, шаги, предпринятые Исраэлом Ори, и его сотрудничество с представителями армянского духовенства стали основой для дальнейшей организации освободительного движения, которая переросла в вооруженную борьбу в 20-ые годы XVIII в. в Сюнике и Арцахе.

HAYK KARAPETYAN
IH NAS RA

# THE ISSUE OF COLLABORATION OF ISRAEL ORY AND ARMENIAN PRIESTHOOD IN THE ORGANIZATION OF ARMENIAN LIBERATION STRUGGLE

## SUMMARY

In the first decades of XVIII century, when Armenia remained divided between of Safavid Persia and Ottoman Empire, the condition of Armenian people was extremely hard. In such situation, in order not to put the lives of Armenian people, living in Eastern and Western parts of Armenia, under threat, the Mother See of Holy Etchmiadzin acted with great caution. In such situation the Catholicossate of Gandzasar, leading the eastern eparchies of the Armenian Apostolic church, played an active role in the liberation struggle.

Exactly at that time Israel Ory, finally convinced in the baselessness of promises of Western European countries to help the Armenian people, relied on Russia in organizing the liberation struggle. Arriving in Armenia, Israel Ory met the Catholicos of All Armenians Alexander Djughayetsi and the Catholicos of Gandzasar, Yesayi Hasan-Jalalyan. The latter supported Israel Ory and even wished to meet Peter the Great personally to discuss the matter of liberation of Armenia. On the way to Moscow Ori and Catholicos Yesayi reached Astrakhan, where Ori unexpectedly died. Yesayi Hasan-Jalalyan organized the burial of Israel Ory, according to all rites of the Armenian Apostolic church. Returning to Armenia, he continued leading the organization of liberation struggle of the Armenian people.

Thus, the steps taken by Israel Ory and his collaboration with the representatives of the Armenian priesthood became the basis for further organization of liberation movement, which later regenerated into an armed struggle in Syuniq and Artsakh in the twenties of XVIII century.

ՍԱՄՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԵՊՀ

# ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Սիմեոն Ա Երևանցին (1763-1780 թթ.) իր գահակալության տարիների ընթացքում աչքի ընկավ շինարարական բուռն գործունեությամբ: Կաթողիկոսն իր հայրապետության տասնյոթ տարիների ընթացքում շինարարական բազմապիսի աշխատանքներ կատարեց՝ բարեկարգելով Մայր տաճարը և նրան հարակից տարածքները. «որն իր 17 ամեայ գահակալութեան տարիները նշանաւորեց ոչ միայն եկեղեցական-հոգևոր, ազգային-հայրենասիրական, պատմագրական և տաղերգական, կրթական-մշակութային բեղմնավոր գործունէութեամբ, այլն շինարարական մեծածաւալ իրագործումներով»[1]:

Անդրադառնալով Սիմեոն Ա Երևանցու իրականացրած շինարարական աշխատանքներին՝ նախ պետք է հաշվի առնել այն ժամանակաշրջանը, երբ Սիմեոն Երևանցին բազմեց հայրապետական գահին:

XVIII դարի երկրորդ կեսին երկիրը գտնվում էր օտար զավթիչների իշխանության ներքո: Մահմեդական կառավարիչներն ամեն կերպ հալածում էին ազգային եկեղեցուն և կրոնին վերաբերող ցանկացած գործունեություն: Արդեն պարզ է, որ օտարների կողմից իրականացվող հարկային ծանր քաղաքականության հետևանքով ինչ տաժանակիր պայմանների մեջ էր հայտնվել հայ գյուղացին: Ավերվում էին եկեղեցիներն ու դպրոցները, որոնք հանդիսանում էին ազգային նկարագրի կրողը և պահպանողը: Նման պայմաններում չէր կարող զարգանալ տնտեսությունը, բնականաբար չէին զարգանում նաև գյուղերն ու քաղաքները: Այս ամենին գումարվում էր բռնությամբ դավանա-

[1] Յարութիւնեան Վ., Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, Ս. Էջմիածին, 1996, էջ 64:

փոխության խնդիրը: Նման ծանր պայմաններում 1763 թ. Սիմեոն Ա Երևանցին ստանձնեց կաթողիկոսական պաշտոնը և հասցրեց իրականացնել մեծածավալ գործունեություն մշակութային տարբեր բնագավառներում:

Սիմեոն Երևանցու շինարարական գործունեության մեջ չափերով ամենամեծը և ծախսատարը Մայր աթոռի շուրջ կառուցապատված կրկնապարսպի շինարարությունն է: Կաթողիկոս Մովսես Գ Տաթևացու (1629-1633 թթ.) օրոք կառուցված պարիսպը Սիմեոն Երևանցին փոխարինեց նորով: Երևանցին ձեռնամուխ եղավ ամրացնել Մայր աթոռի շրջակա պարիսպն այն պատճառով, որ նախ՝ շատ փոքր էր, հազիվ էր շրջափակում վանքի տարածքը և երկրորդ՝ պարսպի սահմաններից դուրս էին գտնվում վանքի սննդի մթերման ամբարներն ու անասնագոմերը: Այդ պատճառով էջմիածնի վանքը շատ հաճախ ենթարկվում էր ավազակային հարձակումների: Նշված հանգամանքներից ելնելով՝ Սիմեոն Երևանցին նախաձեռնում է ընդլայնել Մայր աթոռի տարածքը և ամրապնդել նրան շրջապատող պարիսպները, որպեսզի տաճարը զերծ մնար ամեն տեսակ ոտնձգություններից: Սիմեոն Երևանցին տեղավոխել է տալիս նաև Վաղարշապատ գյուղի մի հատվածը, որը ազդեղ տեսք էր հաղորդում Մայր տաճարին: Գյուղը տեղափոխելուց անմիջապես հետո կաթողիկոսը սկսում է պարսպի շինարարությունը: Որպեսզի պարիսպն ավելի ամուր լինի, նրա ներքին հատվածը կառուցվում է երեք շարք կարծր քարերից, իսկ մնացած շարունակությունը լրացվում է հում աղյուսից: Պարսպի կառուցապատման ընթացքում դարպասներ են թողնվում հարավ-արևելյան և հյուսիսային հատվածներում, որոնցից գլխավորը Վաղարշապատ գյուղի կողմն ընկած հյուսիսային մուտքն էր: Պարսպի մաս կազմող դարպասները կամարաձև էին և շարված էին կարծր քարերով. «Վանքը շրջապատեց նոր հաստահիմն պարսպով, որ չորս դուռն ունի,

մեկը փոքր, իսկ երեքը մեծ և կամարայարկ, որոնցից մեկը կոչւում է՝ Շուկայի դուռն, միւս՝ Կալի դուռն, իսկ երրորդը՝ Մսրի դուռն, ինչպէս ասում են դռնապաններից մէկի անունով: Պարսպի մէջն առնուեցան և վանքի պատկանեալ մնացած շինութիւնները, որով վանքն իսպառ անջատուեցաւ գիւղից»[1]: Արդեն պարզ է դառնում, որ պարսպի ամրացման գործը խույժ կարևոր էր Մայր աթոռի ամրության համար և իզուր չէ, որ Սիմեոն Ա Երևանցին իր գահակալման հենց սկզբնական շրջանում ձեռնարկեց պարսպի կառուցումը, որը տևեց երեք տարի՝ 1763-1766 թթ[2].:

1766 թ. կառուցապատված պարսպի վրա կան այլ արձանագրություններ ևս: Դրանց բովանդակությունից պարզ է դառնում, որ պարսպի շինարարության ժամանակ, որոշ բարերարներ նյութական օժանդակություն են հատկացրել: Պարսպի վրա արված հետևյալ արձանագրություններում նշվում է.

*«Շինեցաւ մեծ բուրգն արդեամբք ի*
*յԱստրախայ (Աստրախանայպոլսի) սառաֆ մահտեսի*
*Զաքարիային և հանգուցեալ եղբօրն իւրոյ*
*մահտեսի Գրիգորին ի յիշատակ ամենից*
*կենդանեաց և ննջեցելոցն իւրեանց: Թվին*

---

[1] Ըէւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմէոն կաթուղիկոսի Յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ ՁԷ:

[2] Վազգեն Ա կաթողիկոսի (1955-1994 թթ.) գահակալության տարիներին, երբ էջմիածնի պարիսպը փոխարինվեց քարե նոր պարսպով՝ հաշվի առնելով Սիմեոն Երևանցու կողմից կառուցած պարսպի պատմական արժեք լինելու կարևորությունը, արևմտյան պարսպից հարավային և հարավարևելյան կողմերում որոշ հատվածներ պահպանվեցին: Տե՛ս Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992, էջ 483:

*(հայոց) ՌՄԺԵ, ին»*[1]:

*Շինեցաւ բուրգս այս արդեամբք սրբոյ Սաղիմայ պատրիարգ տեառն Կարապետի աստուածաբան վարդապետին ի յիշատակ իւրեան, եւ հոգևոր եւ մարմնաւոր ծնողաց իւրոց ի ՌՄԺԶ (թուին հայոց. 1767)»*[2]:

Սիմեոն Երևանցու կողմից կառուցապատված պարսպի վերաբերյալ մանրամասն ուսումնասիրություններ է կատարել հայտնի ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը. «Տարբեր են հեռավորությունները արտաքին և ներքին պարիսպների միջև: Միջպարիսպային տարածքներն աւելի ընդարձակ են արևելեան կողմում և հարաւարևելեան անկիւնում: Մասշտաբի բացակայութիւնը թոյլ չի տալիս գաղափար կազմել իւրաքանչիւր կողմի արտաքին և ներքին պարիսպների երկարութիւնների, հատկապէս նաև դրանց գումարը կազմող ընդհանուր չափերի մասին: Դարպասներից որոշակի նկատելի է միայն հարաւայինի տեղը: Այն գտնւում է նշուած կողմի պարսպի բեկման անկիւնում, երկու բուրգերի միջև: Դրանից դուրս եկող ճանապարհը տանում էր դեպի Սարդարապատ: Վաղարշապատ գիւղը տարածւում էր հիւսիսային կողմում, որոշ հեռաւորութեամբ այդ կողմի պարսպապատից»[3]:

Ինչպես վերը նշեցինք, Սիմեոն Երևանցին Վաղարշապատ գյուղը տեղափոխեց և նորակառույց պարսպով այն առանձնացրեց Մայր աթոռից: Սակայն այս պարագայում գյուղը և նրա բնակիչները կտրվում էին Մայր աթոռից: Եվ որպեսզի գյուղի բնակչությունը դժվարություններ չունենար եկեղեցու հետ կապված, կաթողիկոսը պարսպի շինարարությունն ավարտելուց անմիջա-

---

[1] Շահխաթունյանց Յովհ.,Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Այրարատեայ, հ. Ա, Էջմիածին, 1842, էջ 95:

[2] Նույն տեղում:

[3] Յարութիւնեան Վ., Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 66:

պես հետո ձեռնամուխ եղավ Վաղարշապատ գյուղի համար առանձին մի եկեղեցի կառուցելու գործին: Եվ կարճ ժամանակահատվածում՝ 1767 թ. կառուցվում է սբ. Աստվածածին փայտածածկ եկեղեցին[1]:

1764 թ. Սիմեոն Ա Երևանցին ս. Գայանե եկեղեցու բակում գետնափոր մի սառնարան է կառուցել տալիս: Այդ շինությունը կոչվում էր Մաղազա: Սառնարանի ճակատային մասում՝ քարի վրա, արված է հետևյալ արձանագրությունը.

*«թվ. ՌՄԺԳ (1764)*
*Շնորհիւն ԱՅ շինեցաւ մաղազայս*
*ի ժամանակս ան Սիմէօն գերիմաստ*
*կաթողիկոսին Երևանցւոյ. եւ առաջնորդութեամբ*
*սրբոյ ուխտիս տն Եղիազարա վարդապետին,*
*արդեամբք եւգոյիւք տրին որնէ վաղեամբ սբ. Էջմիածնի»[2]:*

Սիմեոն Երևանցին համառ պայքար էր մղում մահմեդական քոչվոր ցեղերի դեմ, որոնք զավթում էին հայկական գյուղերը և ավանները: Դրանցից էր «բայատ» քոչվորական ցեղը, որը հաստատվել էր Խոր Վիրապի վանքին հարող շրջակա այգիներում՝ վանքը վերածելով անասնագոմի: Երկար պայքարից հետո Սիմեոն Երևանցուն հաջողվում է վանքը և նրա շրջակա տարածքն ազատագրել քոչվոր ցեղից: Եվ որպեսզի Խոր Վիրապի եկեղեցին կանոնավոր կերպով գործեր նա այնտեղ մի առաջնորդ է նշանակում և եկեղեցին ամբողջովին կարգի է բերում. «Ու ամեն մի պակասություն հոգալով՝ վանքը դարձրեց միաբնակյացների (հա-

---

[1] Սբ. Աստվածածին եկեղեցու զանգակատունը ինչ-ինչ պատճառներով մնում է կիսակառույց, որն ամբողջովին վերանորոգվում է Վազգեն Ա հայրապետի գահակալության տարիներին:

[2] Յարութիւնեան Վ., Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 66:

մար տեղ), ինչպիսին առաջ էր»[1]: Սիմեոն Երևանցու հաջորդ քայլը Գոշավանքի մենաստանի վերանորոգումն էր: 1765 թ. կաթողիկոսը վերականգնում է Գոշավանքի մենաստանը, որը մոտ քսան տարի անգործության էր մատնված և անմխիթար վիճակում էր: Կաթողիկոսը վճարում է բոլոր հարկերը, որոնք տարիների ընթացքում կուտակվել էին վանքի վրա: Վերանորոգելուց հետո վանքին առաջնորդ է նշանակում՝ վերականգնելով միաբանության խաթարված կյանքը: Կաթողիկոսի կողմից Մայր աթոռի անունով գութան է նվիրաբերվում Գոշավանքի միաբանությանը:

Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի օրոք (1655-1680 թթ.) կառուցված ջրամբարը, որը գտնվում էր Երևան տանող ճանապարհի ներքին հատվածում, 1765 թ. վերանորոգվում է Սիմեոն Երևանցու ջանքերով:

Սիմեոն Երևանցին 1765 թ. նորոգել է տալիս նաև Վաղարշապատ գյուղին կից գտնվող «Նորք»[2] կոչվող այգու ջրաղացը, որը ամբողջովին խարխլված էր:

1766 թ. Սիմեոն Երևանցին «Ղոի»[3] կոչված խաղողի այգում կառուցում է մի գեղեցիկ հնձան՝ իր շինություններով: Այնուհետև «Ղնոնդենց»[4] կոչված այգու հողերը միացնում է «Վերին»[5] այգու հողերին և դարձնում մի մեծ գեղեցիկ այգի՝ պարսպապատելով ամբողջ այգու տարածքը:

Սիմեոն Ա Երևանցին իր կաթողիկոսության հինգերորդ տարում՝ 1768 թ., դեռևս Փիլիպոս Ա Աղբակեցի (1655-1680 թթ.) կաթողիկոսի կողմից կառուցված Քանքան կոչվող աղբյուրի ջուրն ավելացնելու համար, Մայր աթոռի տարածքում գետնի

---

[1] Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, Ե., 2003, էջ 52:

[2] Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, Ե., 2003, էջ 256:

[3] Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմէոն կաթուղիկոսի Յիշատակարանը, էջ ՂԲ:

[4] Նոյն տեղում:

[5] Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, էջ 51:

տակից ջուր է հանել տալիս և միացնում այդ աղբյուրի ջրին, որպեսզի Էջմիածնի վանքը չունենա ջրի սղություն:

Որպեսզի Մայր աթոռը և միաբանների խցերը զերծ մնային խոնավությունից՝ կաթողիկոսը 1768 թ. նախաձեռնում է Մայր տաճարի կողքերը ստորգետնյա հորեր փորել: Այս նոր կառուցված հորերի հետ մեկտեղ Սիմեոն Երևանցու թելադրանքով վերանորոգվում են Հակոբ Ջուղայեցու կաթողիկոսության օրոք կառուցված ստորգետնյա հորերը: Նրա հաջորդ քայլը Փիլիպոս Ա կաթողիկոսի կառուցած Էջմիածնի վանական դպրոցի հիմնովին վերանորոգումն էր. «Փիլիպոս կաթուղիկոսի կառուցած Ս. Էջմիածնի վանական դպրոցը, որին ժամանակակիցները «ակատեմիայ ուսման» են անուանում, զետեղված էր հինաւուրց նեղ, խարխուլ և անյարմար շինութեան մեջ. Սիմէոնը դորա փոխարէն երկու պարիսպների մէջ առանձին տեղը, վանքի հիւսիսակողմը, երկու շինութիւն կանգնեց՝ ամարան և ձմրան. շինեց նաև նորա մօտ մոմատան համար մի շինուածք մեղրամոմ թափելու և սպիտակացնելու յարմարութիւններով, ջրի քարեայ աւազանով, առանձին պարիսպներով և պարտէզներով»[1]:

Օշական գյուղը, որը հնուց ի վեր եղել էր Էջմիածնի իրավասության ներքո, 1740-ական թվականներից ընկել էր մահմեդական ցեղերի իշխանության տակ, սակայն Սիմեոն Երեւանցին ամեն ինչ անում է, որպեսզի գյուղը կրկին վերադարձնի Մայր աթոռին: Եվ ինչպես «Ջամբռ» աշխատության մեջ է ասվում. «այս արիասիրտ հայրապետը, մի քանի տարի կանգնելով իր հոտի գլուխ, այնքան ջանք թափեց, որ երանց արմատախիլ անելով հալածեց այնտեղից»[2]: Երկար մաքառումից հետո կաթողիկոսին հաջողվում է 1768 թ. գյուղն ազատել մահմեդականներից և վերաբնակեցնել հայերով:

Մայր աթոռին պատկանող այլ գյուղեր ես՝ Աշտարակը, Եղվարդը, Աղավնատունը, նույնպես զավթվել էին մահմեդական

---

[1] Դիւան, էջ ՁԹ:

[2] Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, էջ 51:

ցեղերի կողմից այնքան վաղուց, որ կարծես ոչ ոք չէր հիշում այն մասին, որ վերը նշված գյուղերը ժամանակին պատկանել են Մայր աթոռին: Միայն Սիմեոն Երևանցուն է հաջողվում պրպտել Մայր աթոռի կալվածագրերը և այնտեղից դուրս բերել այդ գյուղերին վերաբերող փաստաթղթերը, որոնցով ապացուցում է, որ Աշտարակը, Եղվարդը և Աղավնատունը պատկանում են Էջմիածնին: Նրան հաջողվում է Երևանի խանի հետ նոր պայմանագիր ստորագրել՝ այդ գյուղերը վերցնելով մահմեդականներից. «Ապա մի օր կանչեցինք Երեւանի (խան) Հուսեին Ալի խանին Աթոռ՝ իբրև թե պատվելու: Եվ երբ նա եկավ, մենք առանձնացանք եւ նրանց ցույց տվեցինք Գրիգոր կաթողիկոսի մեծ կտակագիրը եւ Եղւարդի կտակագիրը՝ ծանոթացնելով նրան հանգամանքներին: Եվ Աստծու ողորմածությամբ, որի ձեռքում է իշխողների սիրտը, խանը փակվեց: Այն գյուղերը, որոնք իր ձեռքի տակ էին եւ որոնց մուլքն ինքն էր վերցնում, տվեց մեզ հաստատուն թղթով: Այդ գյուղերն են Աշտարակ, Եղւարդ...»[1]:

1770 թ. Սիմեոն Երևանցին Մայր Աթոռում կառուցում է երկհարկանի մի շինություն, որը պետք է կաթողիկոսի համար ծառայեր որպես ամառանոց: Ամառանոցը կառուցապատելուց անմիջապես հետո հայոց հայրապետը նախաձեռնում է նորոգել Մայր տաճարի տանիքը: Եկեղեցու տանիքը վերանորոգվում է սրբատաշ, գեղեցիկ քարերով: Տանիքի հետ մեկտեղ Սիմեոն Երևանցին վերանորոգել է տալիս Էջմիածնի վանքի երկու խորանները, որոնք կրում էին սբ. Հակոբի և սբ. Գրիգոր Լուսավորչի անունները: Այս ամենի հետ մեկտեղ կաթողիկոսը քանդել է տալիս եկեղեցու առաստաղը և փոխարենը կառուցում է մի մեծ պահարան:

Սիմեոն Երևանցու ջանքերով 1770 թ. Ղազար Ջահկեցի (1737-1751 թթ.) կաթողիկոսի կողմից կառուցված կաթողիկոսական ձմեռային բնակարանին կից կառուցվում է տասը սենյակից

---

[1] Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբռ, էջ 51:

բաղկացած մի շինություն՝ վանքի միաբանների կեցության համար:

Սիմեոն Երևանցու կաթողիկոսության տարիներին վերանորոգվում և կարգի են բերվում Մայր տաճարի ներսի սյուները: Վանքի սյուների վերանորոգման վերաբերյալ նս կան արձանագրություններ, որոնք արված են հարավային և արևմտյան սյուների վրա: Նրանցից հարավայինի վրա գրված է հետևյալ արձանագրությունը.

*«Նորոգեցաւ սիւնս մինչեւ ի վերին*
*կամարսն հոգաբարձութեամբ Տեառն*
*Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին ամենայն*
*Հայոց. արդեամբ Երեւանու բլրից ի*
*Քրիստոս հանգուցեալ Եաղուբի որդի*
*մելիք Մինասին ի յիշատակ իւրեանց*
*եւ իւրայնոցն. Ի ՌՄԻԶ (1777) թուոջս»[1]:*

1771 թ. վերանորոգվում են նաև Մայր տաճարի կտրասալերը: Այն ավարտելուց անմիջապես հետո Սիմեոն Երևանցին վերականգնում է դեռևս Փիլիպոս կաթողիկոսի օրոք կառուցված և գրեթե փլուզման նզրին գտնվող միաբանների սեղանատունը, որը վերակառուցվում է սրբատաշ քարերով:

Հայոց հողի վրա ստեղծված առաջին տպարանի հիմնումը կապված է Սիմեոն Ա Երևանցու անվան հետ: Կաթողիկոսն այն հաստատեց իր կողմից կառուցված կաթողիկոսական ձմեռային կացարանին կից տասը սենյակներից բաղկացած շինության արևմտյան հատվածում:

Տպարանը հաստատելուց հետո առաջացավ թղթի խնդիրը: Եվ որպեսզի եվրապական երկրներից չբերվեր թուղթը, որը մեծ ծախսերի հետ էր կապված, 1776 թ. Ղազարապատին նայող

---

[1] «Արձագանք», 1894, N 23, էջ 2:

դրան մոտ՝ պարսպից դուրս դեպի հարավ, կառուցել է տալիս թղթի գործարան:

Սիմեոն Երևանցին 1776 թ. իր և հարազատ եղբոր՝ Սելիք-սեթի միջոցներով վերակառուցում է Երևան քաղաքում գտնվող երկու եկեղեցիների տանիքները: Եկեղեցիներից մեկը Սբ. Պողոս-Պետրոս է: Պահպանվել է եկեղեցու տանիքը վերանորոգ-ած վարպետների գրությունը. «...որ ես սբյ. էջմիածնի միաբան Եղվարդեցի Գրիգոր վարդապետս, և ես Երևանցի դերձակ Պօղոսի որդի դերձակ Աղաբաբս հրամանաւ և հարկադրութեամբ Գերերջանիկ տն. մերոյ վէքիլ և վերակացու եղաք, զի նորագել տացուք զտանիքն Երևանու քաղաքի ներքին մէծ եկեղեցւոյն, որ յանուն սբյ Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի կառուցեալ էայ»[1]:

Սիմեոն Երևանցին 1777 թ. կառուցել է տալիս մի ամբար, որը հայտնի էր Օշականի ամբար անունով: Այս շինությունն ուներ նաև ներքնահարկ և Օշականից ստացվող ամբողջ բերքը պահեստավորվում էր այս ամբարում:

Սիմեոն Երևանցու շինարարական գործունեության մեջ է մտնում նաև Օշական գյուղի հայտնի կամրջի վերանորոգումը, որը կառուցել էր Նահապետ Եդեսացի (1691-1705 թթ.) կաթողի-կոսը: Վերանորոգված քարե կամրջի վրա թողած արձանագրու-թյունը հետևյալ բովանդակությամբ է.

***«Նորոգեցաւ կամուրջս՝ ի ձեռն Տեառն***
***Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին սրբոյ***
***Էջմիածնի Երեւանցոյ՝ ի մերոյ***
***ՌՄԻԷ. (1778) թուին».[2]***

Սիմեոն Երևանցին կառուցել է տալիս մի պարիսպ ևս, որը վեհարանի նորակառույց սենյակների ետին մասով՝ Տրդատի դռնից ձգվում էր մինչև իր իսկ կողմից 1766 թ. կառուցապատված

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ց. 1, թղթ. 5, վավ. 13:

[2] «Արձագանք», 1894, N 23, էջ 3:

պարսպի մոտ: Այս ամենից հետո հայոց հայրապետը կառուցում է մի բաղնիք, որը պետք է ծառայեր վանքի հոգևորականների և գյուղի բնակչության համար: Բաղնիքին տեղ հատկացվեց կրկնապարսպի արտաքին մասի հարավ-արևմտյան մասում:

Շինարարական աշխատանքներին զուգահեռ կաթողիկոսը հոգացել է նաև Մայր աթոռի հոգևոր դասի անհրաժեշտ պարագաների մասին:

Սիմեոն Երևանցին շինարարական գործունեությունն իրականացնում էր հիմնականում հայկական գաղթավայրերից (օրինակ՝ հնդկահայ մեծահարուստ Գրիգոր Չաքիկյանը, ում ֆինանսական օգնությամբ Մայր աթոռում հիմնադրվեց առաջին տպարանն ու թղթի գործարանը) ստացվող նյութական օժանդակության և հայ եկեղեցու նվիրակությունների միջոցով[1]:

Ավարտելով Սիմեոն Ա Երևանցու շինարարական գործունեությանը վերաբերող մեր փոքրիկ ուսումնասիրությունը՝ հույս ունենք, որ ժամանակը նոր լույս կահի կաթողիկոսի կատարած այլ աշխատանքների վրա ևս, որոնք առայժմ մեզ հայտնի չեն:

---

[1] Նվիրակները Մայր աթոռի կողմից նշանակված պաշտոնյաներ էին, սովորաբար եպիսկոպոս կամ վարդապետ, որոնք գնում էին Հայաստանի սահմաններից դուրս հայերին քարոզելու ազգային եկեղեցու ծեսերն ու սովորությունները, քանի որ հայրենիքի սահմաններից դուրս լինելով՝ շատ հաճախ ազգային եկեղեցական տոների մեջ ներ էին մուծվում օտար սաներ ևս: Նվիրակները դրսում հավաքում էին այն ամբողջ տուրքերն ու նվերները, որոնք դրսի հայերը տալիս էին սբ. Էջմիածնի բարեկեցության համար: Նվիրակության մեկնելուց առաջ կարևոր էր, որպեսզի նա իր հետ ունենա մյուռոն՝ ժողովրդին տալու համար, այլապես հա իրավունք չուներ առանց մյուռոնի դուրս գալ Էջմիածնից: Նվիրակները չեն ունենում հաստատուն բնակավայր, նրանք շրջում են տարբեր վայրեր, որտեղ կա հայություն և հանդիսանում են որպես կաթողիկոսի փոխանորդ: Տե՛ս Կանայան Խ., Էջմիածնի նվիրակությունը ԺԸ դարում, Էջմիածին 1977, Բ, էջ 48-54:

САСУН АРУТЮНЯН
ЕГУ

## ДЕЯТЕЛЬНОСТЬ СИМЕОНА I ЕРЕВАНСКОГО

Католикос Симеон I Ереванский (1763-1780 гг.) отличался также плодотворной строительной деятельностю. Сразу же после возвышения на престол он взялся за строительные работы в разных отраслях. В строительной деятельности Симеона Ереванского примечательна также выстроенная в 1766 г. стена вокруг Кафедрального сбора, целью которой была защита Собора от разбойничьих нападений, неоднократно повторяющихся до постройки стены.

Следующим главным делом было основание в 1771 г. типографии, которая было единственной в то время на армянской земле. После основания типографии возникла проблема бумаги, которая до того завозилась из европейских стран и стоила очень дорого. Католикос решил производить ее на месте и в 1776 г. основал фабрику по производству бумаги.

Перечисленные строительные работы являются всего лишь небольшой частью развернутой строительной деятельности католикоса Симеона I Ереванского.

SASUN HAROUTYUNYAN
YSU

## ACTIVITIES OF THE CATHOLICOS SIMEON I YEREVANTSI

The Catholicos Simeon I Yerevantsi (1763-1780) was famous for his fertile constructing activities. After taking charge of the Catholicos seat he undertook constructions in different spheres.

The most prominent construction done by Simeon I Yerevantsi was first of all the wall around the Holy See in 1766, which was aimed

at protecting the church from gang invasions, which had happened quite often by that time.

The next important work was the Publishing House in the Holy See, built in 1771. It was the first Publishing House of its type in Armenia.

After the construction of the Publishing House there was also the problem of pepar which had been imported from Europe by that time and cost rather expensive. The Catholicos decided to produce it locally and built the first paper factory in 1776.

The above mentioned constructions make only a small part of what Simeon I Yerevantsi did. This is only a brief description of the works by Catholicos.

ՄԱՆՅԱ ՆԱԶԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1863-1866 ԹԹ.

XIX դարում հայ իրականության մեջ սահմանադրական-խորհրդարանական գործունեության առաջին քայլ կարելի է համարել 1860 թ. արևմտահայերի Ազգային սահմանադրությունը: Պետականության բացակայության պայմաններում Կ. Պոլսի հայ համայնքը կարողանում է կազմակերպել իր գոյությունը և Ազգային ժողովի միջոցով ընդունել օրենքներ, կանոններ: Դրանք ներքին օգտագործման համար էին, սակայն կարևոր նշանակություն ունեցան արևմտահայության մեջ հարաբերությունների կարգավորման, որոշակի չափանիշներ հաստատելու համար:

1863 թ. մարտի 17-ին, երեք տարի ձգձգելուց ու բազմաթիվ վերափոխություններից հետո, Բ. Դուռը հաստատեց Ազգային սահմանադրությունը և հանձնեց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին՝ ի գործադրություն:

Անշուշտ, զգալի տարբերություններ կային 1860 և 1863 թթ. սահմանադրությունների միջև: 1863 թ. Սահմանադրության մեջ առավել ընդգծված էր նրա կանոնադրական բնույթը, նվազեցվել էր պատրիարքի, եկեղեցու և հոգևորականության դերն Ազգային ժողովում: Տարբերություններ կային նաև 1863 թ. Սահմանադրության հայերեն ու թուրքերեն տեքստերի միջև[1]:

Սահմանադրության ամենամեծ թերությունն այն էր, որ չէր ապահովում արևմտահայերի կյանքի ու գույքի անվտանգությունը և, ինչպես բելգիացի իրավաբան Մ. Գ. Ռոլեն-Ժեկմենն է նշում, Սահմանադրության մեջ «ամեն ինչ կա, բացառությամբ

---

[1] 1860 և 1863 թթ. սահմանադրությունների տարբերությունների մասին տես Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 39-42: Խառատյան Ա., Դարձյալ արևմտահայերի Ազգային սահմանադրության մասին, - Պատմա-բանասիրական հանդես, Ե., 2008, N 2 (178), էջ 86-88:

այն կետի, որին կարող էր հենվել հայը, որպեսզի թույլ չտար քրդին՝ խլելու նրա ոչխարը, բեյին՝ բռնաբարելու նրա աղջկան և ամայացնելու նրա հողը, հարկահավաքին՝ նույն հարկը երկու կամ երեք անգամ պահանջելուն, այսինքն՝ ամեն ինչ, բացի այն հրահանգից, որ կարող էր իրականում երաշխիք հանդիսանալ ընդդեմ թուրքական կառավարության ամենաթողության»[1]:

1863 թ. Սահմանադրության վավերացման մասին սուլթանական կառավարությունը տեղեկացրեց Կ. Պոլսի հայոց պատրիարքական տեղապահ Ստեփաննոս արքեպիսկոպոս Մաղաքյանին:

1863 թ. մարտի 23-ին Ազգային ժողովի տասնմեկերորդ նիստում[2] ութսունհինգ երեսփոխանների ներկայությամբ հանդիսավոր կերպով հրապարակվեց Սահմանադրության վավերացման լուրը: Նույն օրն Ազգային ժողովը հաստատեց վավերացված Սահմանադրությունը, շնորհակալական ուղերձ հղեց Բ. Դռանը, նաև որոշեց կազմել նոր հանձնաժողով Սահմանադրության հիման վրա ընտրություններ կատարելու համար:

Մարտի 26-ին տեղի ունեցավ հանձնաժողովի տաս անդամների ընտրության քվեարկությունը[3]: Ազգային ժողովի երեսփոխանների ընտրությունները մայրաքաղաքում ավարտվեցին սեպտեմբերի սկզբին[4]:

Սեպտեմբերի 20-ին, Ազգային պատրիարքարանի մեծ սրահում, պատրիարքի տեղապահ Ստ. Մաղաքյանի նախագահությամբ և ութսուն երեսփոխանների մասնակցությամբ հրավիրվեց Սահմանադրության հիման վրա ընտրված Ազգային ժողովի առաջին նիստը: Մինչև Ազգային Վարչության անդամների

---

[1] Ролен-Жекмен М.Г., Армения, армяне и трактаты, - Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., М., 1896, с. 19:

[2] 1860-1863 թթ. ընթացքում գումարվել է Ազգային ժողովի 10 նիստ, որից վերջինը՝ տասներորդը հրավիրվել էր 1862 թ. փետրվարի 20-ին Սահմանադրությունը վերաքննելու նպատակով հանձնաժողով ստեղծելու համար:

[3] Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, Կ. Պոլիս, 1860-1870, էջ 87:

[4] Տե՛ս Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Գ, Էջմիածին, 2001, էջ 4700:

ընտրությունը, որոշվեց ժամանակավոր ատենապետ ընտրել երեսփոխաններից տարիքով ավագին՝ Յաղուպ էֆենտի Յաղուպյանին, իսկ ատենադպիր՝ տարիքով ամենակրտսերին՝ Գրիգոր Օտյանին: Այնուհետև ընտրվեցին նաև Դիվանի անդամները. ատենապետ՝ Սերովբե Վիչենյան (Սերվիչե), ատենադպիր՝ Գրիգոր Օտյան, իսկ փոխատենապետի, փոխատենադպիրի, Քաղաքական ու Կրոնական ժողովների անդամների ընտրությունները կատարվեցին սեպտեմբերի 23-ին և 27-ին[1]: Ազգային վարչության կազմն երկամյա ժամկետում անփոփոխ մնաց՝ չնայած Քաղաքական ու Կրոնական ժողովների անդամներից շատերն անընդհատ հրաժարական էին տալիս, նորերն էին ընտրվում:

Ազգային ժողովը 1863 թ. հոկտեմբերի 12-ին ձեռնամուխ է լինում Կ. Պոլսի հայոց պատրիարքի ընտրությանը, որովհետև երկու տարի շարունակ տեղապահն էր իրականացնում պատրիարքի գործառույթները[2]:

Ատենապետն Ազգային ժողովին է ներկայացնում Սահմանադրության՝ պատրիարքի ընտրությանը վերաբերող 2-րդ հոդվածը, ըստ որի՝ տեղապահը Կրոնական ժողովին է ներկայացնում Թուրքիայում գտնվող եպիսկոպոսների ընդհանուր ցուցակը, իսկ Կրոնական ժողովն եկեղեցական ժողով է գումարում, գաղտնի քվեարկությամբ կազմվում է պատրիարքի թեկնածուների ցուցակը, որից Քաղաքական ժողովն ընտրում է հինգ թեկնածու: Բոլոր ցուցակները ներկայացվում են Ազգային ժողովին: Վերջինս իրավունք ուներ Քաղաքական ժողովի կազմած ցուցակից դուրս մնացած եպիսկոպոսի օգտին քվեարկել, սակայն Եկեղեցական համագումարը ժողովի կազմած ցուցակում չընդգրկված այլ հոգևորականի չէր կարող ընտրել[3]:

Պատրիարքի ընտրությունը կատարվում է Սահմանադրության ոգուն համապատասխան: Առավելագույն քվե ստացած եր-

---

[1] Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, էջ 93-95:

[2] Պատրիարք Սարգիս Գույումճյանը հրաժարական էր տվել 1861 թ. հոկտեմբերին (տե՛ս Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 4666):

[3] Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860-1870, էջ 98-99:

կու թեկնածուներից (Զմյուռնիայի հոգևոր առաջնորդ Պողոս արքեպիսկոպոս Թաքթաքյան, Վանի հոգևոր առաջնորդ Իգնատիոս արքեպիսկոպոս Գագմաճյան) հիսուննութ քվեով Կ. Պոլսի հայոց պատրիարք ընտրվեց Պողոս արքեպիսկոպոս Թաքթաքյանը[1]:

Ազգային ժողովի 1863 թ. նոյեմբերի 7-ի նիստում պատրիարք Թաքթաքյանը հանդիսավոր կերպով երդվում է «Տէրութեան և Ազգին հաւատարիմ մնալու և Սահմանադրութեան անթերի գործադրութեանը հսկելու»[2],նան ակնկալում է Ազգային ժողովի ու ժողովրդի աջակցությունը Սահմանադրության իրագործման համար. «...Ազգը զիս իրեն գլուխ կամ նաւապետ կանուանէ, բայց նաւու մը բարւոք կառավարութեանը համար հմուտ ղէկավարի եւ աչալուրջ գործակիցներու կը կարօտի նաւապետը, ուստի այս Ազգային նաւը մրրիկներէ զերծ պահելու եւ անվնաս նաւահանգիստը հասցնելու համար Պատկառելի Ժողովոյդ օժանդակութեանը կը դիմեմ... Ազգին բարւոք Վարչութիւնն ու յառաջադիմութիւնը՝ Սահմանադրութեան անթերի գործադրութենէն կախեալ են եւ առանց անթերի գործադրութեան՝ Սահմանադրութիւնը մեռեալ տառ մը համարելու է»[3]:

Սահմանադրության գործադրման առաջին շրջանում Ազգային ժողովում քննարկվել են տարբեր հարցեր (Երուսաղեմի պատրիարքի ընտրության ու կանոնադրության, ազգային տուրքի, Էջմիածնի, Սսի, Աղթամարի կաթողիկոսների ու այլ հարցեր), փորձ է արվել դրանց լուծում տալ, չնայած որ գրեթե բոլոր կարևորագույն հարցերն անլուծելի են մնացել, և երևի թե դրանց նշանակությունը կայացել է նրանում, որ հասարակական կարծիքն ու միտքը բևեռել է դրանց վրա[4]:

Այս ընթացքում Ազգային ժողովում քննարկված հարցերից մեծ հետաքրքրություն է ներկայացնում «ազգային տուրքի» հար-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 101:

[2] Նույն տեղում, էջ 105:

[3] Նույն տեղում:

[4] Խառատյան Ա., Դարձյալ արևմտահայերի Ազգային սահմանադրության մասին, էջ 89:

ցը: Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր հայ պետք է ըստ իր կարողության տարեկան տուրք վճարեր: Տուրքը բաժանվում էր 2 տեսակի՝ ընդհանուր, որի գումարը որոշում էր Քաղաքական ժողովն ու ներկայացնում Ազգային ժողովի հաստատմանը, և մասնավոր, որը հավաքվում էր Թաղային խորհուրդների կողմից՝ թաղի կարիքները հոգալու համար: Յուրաքանչյուր անձի համար իր կարողության չափով տուրք վճարելու պարտավորությունից բացի, Սահմանադրությունը սահմանում էր նաև տարեկան 75 ղուրուշ ազգային տուրք՝ ակտիվ ընտրական իրավունք ունեցող (քսանհինգ տարին լրացած, օսմանահպատակ) անձանց համար:

Ազգային տուրքի հարցը քննարկվում է Ազգային ժողովի չորրորդ և հինգերորդ նիստերում (1864 թ. մայիսի 8-ին և հունիսի 26-ին)[1]: Ինչպես իրավացիորեն նշում է Ատոմը, քննարկման ժամանակ տեղի են ունենում «անվերջ վէճեր, երկպառակութիւններ, օրակարգեր, փայլուն, օդային ծրագրեր ու առաջարկութիւններ, քննադատութիւններ, բայց երբէ՛ք գործնական աշխատանք ու արդիւնք»[2]: Ի վերջո, Ազգային ժողովը, առանց քննելու երևմուտքի մանրամասները, հաստատում է տուրքի հարցը հետևյալ կետերով.

1. Ազգային տուրքի գումարը հավաքել 400 հազար ղուրուշ:
2. Տուրքի բաշխման ու հավաքման կարգը հաստատել ոչ թե Քաղաքական ժողովի, այլ այդ նպատակով կազմված Հանձնաժողովի տեղեկագրով:

Ազգային ժողովի ատենագրությունները, Քաղաքական ժողովի տեղեկագրերը, մամուլի (հատկապես «Մեղուի») հրապարակումները[3] վկայում են, որ Ազգային վարչությունը միշտ էլ դժվարություններ է ունեցել տուրքի հավաքման հարցում: Թեև ոլորշ քայլեր էին ձեռնարկվում, տարբեր հանձնաժողովներ էին

[1] Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, էջ 107-130:
[2] Ատոմ, Ազգային Սահմանադրութիւնը, Կ. Պոլիս, 1914, էջ 85:
[3] Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860-1870, էջ 115-117, 121-125: «Մեղու», 1865, N 263, էջ 65-67, N 264, էջ 76-80, N 265, էջ 83-86, N 266, էջ 93-95:

վում, տեղեկագրեր կազմվում, բայց ապարդյուն: Դրա համար Քաղաքական ժողովը մեղադրում էր ժողովրդին, որ վերջինս չի ցանկանում կատարել իր պարտավորությունն ու տուրք վճարել: Իրականում, Ազգային ժողովի որոշումները տուրքի բաշխման ու հավաքման վերաբերյալ հիմնականում չէին կիրառվում արևմտահայության սոցիալ-տնտեսական ծանր վիճակի պատճառով: Շատ հաճախ թաղերում ակտիվ ընտրական իրավունք ունեցողներն ի վիճակի չէին լինում անգամ 75 ղուրուշ վճարել ու մասնակցել երեսփոխանական ընտրություններին: Ելնելով ընտրությունների արդյունքներից՝ առաջարկվում է փոխել հարկատվության ձևը: Նախկին ձևի փոխարեն, երբ հարկատուները չորս կարգի էին բաժանվում[1], այժմ առաջարկվում է նրանց տաս կարգի բաժանել. առաջինը պետք է վճարեր 5, տասներորդը՝ 500 ղուրուշ, իսկ ընդհանուր գումարը կազմելու էր 400 հազար ղուրուշ:

Չնայած Քաղաքական ժողովի գործադրած ջանքերին, այնուամենայնիվ, Ազգային ժողովում օրենքի սահմաններում երբեք բյուջե չի կազմվել, գործադրվել ու վերահսկվել:

1863-1866 թթ. Ազգային ժողովում քննարկված կարևորագույն հարցերից էր Երուսաղեմի հարցը: Հայտնի է, որ վերջինս կլ առիթ դարձնելով՝ սուլթանական կառավարությունը դադարեցրել էր 1860 թ. Սահմանադրության գործադրումը:

Նշենք, որ Ազգային ժողովը գրեթե իր ամբողջ գործունեության ընթացքում զբաղվել է Երուսաղեմի պատրիարքության հարցով: 1863 թ. Սահմանադրության մեջ հեղինակները «Պատրիարք Աթոռյ Երուսաղեմի» գլխի յոթ հոդվածներում ճշտել էին Ազգային Վարչության դերն այս հարցում, և Ազգային ժողովը փորձում էր վերջ տալ Երուսաղեմում տիրող խառն իրավիճակին ու օրինական հունի մեջ դնել նրա գործունեությունը:

Երուսաղեմի պատրիարքական ընտրության և Կանոնագրի հարցով Ազգային ժողովն սկսում է զբաղվել Թաքթաքյանի՝ Կ.

---

[1] 1861 թ. տուրքի վճարման կարգի մասին տե՛ս Նաջարյան Մ., Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի գործունեությունը 1860-1863 թթ., - Հայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու), N 11, Ե., 2010, էջ 115:

Պոլսի հայոց պատրիարք դառնալուց անմիջապես հետո, բայց քանի որ նիստերի ժամանակ երեսփոխանների սահմանված քանակ չէր ապահովվում, հարցի լուծումը հետաձգվում էր: Ըստ Սահմանադրության՝ նախ պետք է լուծվեր Կանոնագրի հարցը, հետո միայն պատրիարքի ընտրություն կատարվեր: Ելնելով խնդրի կարևորությունից՝ Ազգային ժողովը առաջնահերթ որոշեց պատրիարքի ընտրություն կատարել: Համապատասխան հրահանգներ են ուղարկվում Երուսաղեմ, այնտեղ կազմվում է տեղեկագիր և ուղարկվում Կ. Պոլիս[1]:

Հարցը քննարկվում է Ազգային ժողովի չորրորդ նիստում: Արդեն յոթերորդ նիստում (օգոստոսի 14-ին) Ազգային ժողովը քվեարկության արդյունքում Երուսաղեմի աթոռի օրինավոր պատրիարք է հռչակում Եսայի վարդապետ Կարապետյանին: Փաստորեն, երկար ժամանակ տևած «ներսեն-դուրսեն» պայքարն[2] ավարտվում է «ներսենականների» հաղթանակով:

Մամուլը, հատկապես «Մեղուն», ուշադիր հետևում էր տեղի ունեցող իրադարձություններին և հույս էր հայտնում, որ Եսայի պատրիարքը, տեսնելով «իր նախորդին համար ազգին բրած գանգատները, կը խելամտէ՛ ի հարկէ լավ աշխատի»[3]:

Արդեն հաջորդ նիստում, 1865 թ. փետրվարի 19-ին, սկսվում է Երուսաղեմի վանքի Կանոնագրի քննարկումը, որը շարունակվում է մի քանի նիստ[4]: Այդ ընթացքում քննարկվում են Կանոնագիրն ու Երուսաղեմի պատրիարքի հղած դիտողությունները: Վերջինս չէր ընդունում Կանոնագրի մի քանի հոդվածներ և առաջարկում էր փոխել դրանք: Այս մասին Մ. Մամուրյանը

---

[1] Տե՛ս Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 4705:

[2] Սահմանադրությամբ ստեղծված Հոգևոր խորհրդի որոշմամբ Երուսաղեմի պատրիարքի թեկնածությունն առաջադրվելու էր դրսից, իսկ Երուսաղեմի միաբանությունը խնդրում էր պատրիարք ընտրել ներսից: Հենց այս հողի վրա էլ սկսվում է «ներսեն-դուրսեն» պայքարը (Խառատյան Ա., Դարձյալ արևմտահայերի Ազգային սահմանադրության մասին, էջ 89: Նաջարյան Մ., Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի գործունեությունը 1860-1863 թթ., էջ 117- 120):

[3] «Մեղու», 1865, N 261, էջ 50:

[4] Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, էջ 150-206:

գրում է, թե Երուսաղեմի պատրիարքը «...ազգային ժողովներուն գլխին վրայ մուրճի պէս կ՚ իջնէ ե կ՚ սպառնայ որ կանոնին այս կէտը ընդունելու կամ չընդունելու ազատ է...»[1]: Տեղի են ունենում վիճաբանություններ, հատկապես մի քանի հարցերի շուրջ (օրինակ՝ Երուսաղեմի պատրիարքին Կ. Պոլիս հրավիրել Կանոնագիրը քննարկելուց հետո, թե պատրիարքը ներկա պետք է լինի քննարկումներին, որտեղ պետք է երդվի Երուսաղեմի պատրիարքը՝ Կ. Պոլսում, թե՝ Երուսաղեմում, վանքի՝ տուրք տալու հարցը և այլն): Ի վերջո, Երուսաղեմի միաբանության և Կ. Պոլսի պատրիարքության հարաբերությունները կանոնակարգելու և հետագայում խռովություններից խուսափելու համար 1865 թ. մարտի 19-ին Ազգային ժողովը հաստատեց Կանոնագիրը, որում հստակեցվում էին պատրիարքի ընտրության կարգը, միաբանության ընդհանուր ժողովի իրավասությունները, միաբանների իրավունքներն ու պարտականությունները: Նույն օրը Ազգային ժողովում տեղի է ունենում նաև Եսայի պատրիարքի երդման արարողությունը. «Առաջի Աստուծոյ եւ ի ներկայութեան Ազգիս, որ Սահմանադրապէս ներկայացած է այս Ժողովին մէջ, ուխտեմ՝ հաւատարիմ մնալ Տէրութեան եւ Ազգիս, եւ հսկել բոլորով սրտիս Ս. Երուսաղէմի Կանոնադրութեան անթերի գործադրութեանը»[2]: Հարցն առժամանակ փակվում է:

1863-1866 թթ. Ազգային Վարչությունը լրջորեն զբաղվում է երեք կաթողիկոսների (Էջմիածնի, Սսի, Աղթամարի) հարցով: Ազգային ժողովի 1865 թ. դեկտեմբերի 24-ի նիստում (քսաներորդ նիստ) քննարկվում է Ամենայն Հայոց կաթողիկոսության խնդիրը:

Հարցը նրանում էր, որ օգոստոսի 22-ին վեցամյա հայրապետությունից հետո մահացել էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթեոս Ա-ն: Էջմիածնի Սինոդի կողմից պաշտոնագրեր էին

---

[1] Մամուրյան Մ., Հայկական նամականի, Զմյուռնիա, 1872, էջ 50: «Ծաղիկ», 1865, N 106, էջ 376:

[2] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860-1870, էջ 206:

ուղարկվել Քաղաքական ու Կրոնական ժողովներին[1], որոնցում նշված էր, որ կաթողիկոսական ընտրությունը կայանալու է 1866 թ. սեպտեմբերի 17-ին, որին մասնակցելու համար պետք է պատգամավորներ մեկնեն Էջմիածին:

Կաթողիկոսի ընտրության հարցը սուր վիճաբանության տեղիք տվեց: Հատկապես 1865 թ. դեկտեմբերին տեղի ունեցած նիստերում Ազգային ժողովը պայքար է սկսում 1836 թ. մարտի 11-ին Ռուսաստանի Նիկոլայ Ա ցարի կողմից հաստատված եկեղեցական կանոնադրության՝ «Պոլոժենիեի» դեմ: «Պոլոժենիեի» 13-րդ հոդվածով նախատեսվում էր, որ կաթողիկոսի ընտրությանը մասնակցելու համար յուրաքանչյուր թեմ աշխարհիկ և հոգևոր մեկական պատգամավոր էր ուղարկելու Էջմիածին, իսկ Ազգային Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովն էր իրավասու ընտրել հայոց կաթողիկոսին: Այս հարցի շուրջ խնդիրներ են առաջանում: Ելույթ են ունենում Խորեն վարդապետ Գալֆայանը, Ներսես եպիսկոպոս Վարժապետյանը: Վերջինս կարծում էր, որ պետք է հանձնաժողով կազմել, ուսումնասիրել ընտրության կարգը, նաև պարզել Մայր Աթոռի՝ Սսի ու Աղթամարի հետ ունեցած հարաբերությունները, իսկ Գալֆայանը գտնում էր, որ Ազգային ժողովը չպետք է կաթողիկոսության վերաբերյալ օրենքներ ընդունի, այլ միայն պետք է մասնակցի ընտրությանը: Որոշվում է ընդունել Վարժապետյանի առաջարկը, կազմվում է հանձնաժողով (աշխարհիկ և հոգևոր 4-ական գործիչներից), որը, աշխատելով հինգ ամիս, 1866 թ. մայիսի 27-ին ներկայացնում է տեղեկագիր, որում մանրամասն վերլուծված էին «Պոլոժենիեի» հոդվածները, նրա համապատասխանությունն ազգային ավանդույթներին, Ազգային Սահմանադրությանը[2]:

[1] Պաշտոնագրերն ուղարկվել էին սեպտեմբերի 11-ին, սակայն Կ. Պոլիս էին հասել նոյեմբերի 19-ին՝ երեք ամիս ուշացումով:

[2] Տեղեկագրի քննարկման մասին մանրամասն տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860-1870, էջ 290–314, Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 4750, Սարուխան, նշվ.

Երկարատև քննարկումներից հետո, 1866 թ. հուլիսի 22-ին Ազգային ժողովը որոշում է կաթողիկոսության ընտրությանը ներկայացուցչական ձևով մասնակցել, այսինքն՝ Ազգային ժողովի գավառները ներկայացնող երեսփոխանների միջոցով վերջնական ընտրություն է կատարում և Էջմիածին ներկայացնում մեծամասնություն ստացած ընտրելիների եռանուն ցանկը[1]: Ազգային ժողովի կողմից ընտրված երկու պատգամավորները (Ներսես եպիսկոպոս Վարժապետյան, Հակոբ էֆենդի Նորատունկյան) հրահանգ են ստանում Էջմիածնում տեղի ունենալիք ընտրությունների ժամանակ Արևմտյան Հայաստանի 65 վիճակների 130 ձայները տալ եռանուն ցուցակի թեկնածուներից մեկին: Կաթողիկոսի ընտրության համար առավելագույն քվե ստացած երեք թեկնածուներն էին՝ Կ. Պոլսի նախկին պատրիարք, Պրուսայի հոգևոր առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Քերեստեճյանը, Վասպուրականի հոգևոր առաջնորդ Իգնատիոս արքեպիսկոպոս Գագմաճյանը, Երուսաղեմի պատրիարք Եսայի արքեպիսկոպոս Կարապետյանը, որոնցից առավելագույն ձայներ է հավաքում Գևորգ արքեպիսկոպոս Քերեստեճյանը (ապագա Գևորգ Դ կաթողիկոսը), որին Մ. Օրմանյանը համարում է Հայոց միակ բացարձակ ընտրելին[2]:

1866 թ. հուլիսի 22-ին Ազգային ժողովը որոշում է ընդունում նաև Սսի ու Աղթամարի կաթողիկոսությունների վերաբերյալ: Անվավեր է ճանաչվում Աղթամարի Խաչատուր և Մսի Նիկողոս եպիսկոպոսների կաթողիկոսությունը, քանի որ նրանք

---

աշխ., էջ 39-42, Իզմիրլեան Մ., Հայրապետութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ և Սիս ու Աղթամար, Էջմիածին, 2008, էջ 174-186:

[1] Տե՛ս Մատենադարան, ձեռագիր N 3721, էջ 60ա:

[2] Տե՛ս Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 4756: Թեև Օրմանյանը Գևորգ Քերեստեճյանին համարում է միակ բացարձակ ընտրելին, նշենք, որ երեսփոխաններից շատերը դեմ էին նրա թեկնածությանը: Մասնավորապես Մարկոս Աղաբեկյանը 1866 թ. օգոստոսի 10-ին «Ծիլն Աւարայրի» հանդեսում հայտարարություն էր գրել, որ դեմ է այդ ընտրությանը և բողոքում էր Ազգային ժողովի 29 երեսփոխանների ու նրանց ընտրող ժողովրդի կողմից, որոնք իրենց «չկամեցողութիւնը հայտնեցին Գէորգին՝ Եսայուն քուէ տալով» (Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 332, ց. 1, գ. 535, թ. 1-4):

ապօրինաբար էին ստանձնել իրենց պաշտոնները[1]: Պողոս Թաքթաքյան պատրիարքն էլ շրջաբերական կոնդակով անարժան է ճանաչում երկու կաթողիկոսներին[2]: Սակայն հարցը սրանով չի լուծվում. պայքարը տևում է մի քանի տարի՝ վերածվելով իշխանությունների և թեմականների միջև անիմաստ վեճի, որի արդյունքում տուժում է հայ բնակչությունը[3]:

1863 թ. Սահմանադրության հաստատումից հետո Ազգային Վարչությունը քննարկման է դնում տպագրական օրենքի նախագիծը, բայց մինչ հաստատելը փորձում է այդ օրինագիծը պարտադրել պարբերականներին («Մեղու», «Մասիս», «Ժամանակ», «Զեփյուռ» և այլն): Քաղաքական ժողովը 1863 թ. հոկտեմբերի 25-ի նիստում հրավիրում է պոլսահայ խմբագիրներին և «...առինքնելով ոստիկանական ֆունկցիաներ ... նրանց պարտավորեցնում է ենթարկվել համձնաժողովի մշակած կետերին»[4]՝ հետևյալ հրահանգներով՝ 1. Կրոնի դեմ չգրել, 2. Սահմանադրության դեմ չգրել, 3. Ազգային Վարչության արածների ու անելիքների վերաբերյալ բան չգրել, 4. Անձնական պատվի դեմ չգրել[5]: «Մեղուի» և «Զեփյուռի» խմբագիրները չեն ստորագրում հրահանգների տակ: Որոշ ժամանակ անց «Մեղուն» փակվում է, սակայն շուտով վերսկսում է իր աշխատանքները:

Ժամանակի մամուլն իրարամերժ դիրքորոշում է դրսևորում Քաղաքական ժողովի տպագրական օրենքի նախագծի վերաբերյալ, որն, ի վերջո, չի հաստատվում[6]:

---

[1] Այս երկու կաթողիկոսների գործունեության մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 193, ց. 2, գ. 268, թ. 1-13: Նաև՝ Իզմիրլեան Մ., նշվ. աշխ., էջ 321-325, Ակինեան Ն., Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 185-192:

[2] Տե՛ս Մատենադարան, ձեռագիր N 3721, էջ 65ա: Տե՛ս նաև՝ Իզմիրլեան Մ., նշվ. աշխ., էջ 190, 222-224:

[3] Տե՛ս Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2008, էջ 163-168:

[4] Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Ե., 1955, էջ 386:

[5] Տե՛ս «Մեղու», 1863, N 222, էջ 313-315, «Ծաղիկ», 1864, N 69, էջ 51:

[6] Տե՛ս Խառատյան Ա., Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908), Ե., 1989, էջ 46-74:

Փաստորեն, թուրքական իշխանություններն արևմտահայ մամուլի նկատմամբ վերահսկողությունն ու գրաքննությունն իրականացնում էին ազգային մարմինների միջոցով:

Ազգային ժողովի գործունեության ամբողջ ընթացքում ծառացած հիմնախնդիրներից էր քվորումի բացակայության հարցը: Գրեթե միշտ դժգոհություն էր առաջանում 140 երեսփոխանների մեծագույն մասի (71 հոգի) ներկայության ապահովման խնդրի շուրջ: Շատ հաճախ հնարավոր չէր լինում անգամ Կ. Պոլսի 100 երեսփոխանից 71-ի ներկայությունն ապահովել, որը վնասում էր Ազգային ժողովի բնականոն գործունեությանը: Հարցը պաշտոնապես քննարկվում է 1865 թ. մայիսի 21-ին, երբ Սերվիչեն երեք առաջարկություն է ներկայացնում Ազգային ժողովին[1]: Դրանցից մեկի էությունը կայանում էր հետևյալում՝ գավառական երեսփոխանների թիվը իջեցնել 20-ի, իսկ Կ. Պոլսինն ավելացնել 120-ի, որի դեպքում հնարավոր կլինի անհրաժեշտ 71-ի ներկայությունն ապահովել: Նման առաջարկը լիովին խախտում էր ընտրատարածքների համամասնությունը: Առանց այն էլ միայն Կ. Պոլսից ընտրվում էին 100, իսկ Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներից միասին՝ 40 երեսփոխաններ: Ինքնըստինքյան, հարցերի վճռական լուծումն էլ պատկանում էր մայրաքաղաքին, իսկ գավառահայության մասնակցությունն Ազգային ժողովի աշխատանքներին ձևական բնույթ էր կրում. «... Սահմանադրութիւնը երբէք հասնել չէ կարող իւր նպատակին, քանի որ Կ. Պօլսի մէջ է միայն կենդրօնանում»[2]:

Սերվիչեի առաջարկը մերժվում է Գրիգոր էֆենդի Մարկոսյանի կողմից: Վերջինս առաջարկում է մինչև գավառական երեսփոխանների ընտրությունը, Կ. Պոլսի երեսփոխանների մեծագույն մասի, այն է՝ 51 հոգու ներկայությունն օրինական համարել: «51 հոգով օրինաւոր նիստ ընելը առժամանակեայ կերպով» հարցը քվեարկության է դրվում և ընդունվում, նաև որոշ-

---

[1] Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, 1860-1870, էջ 227:
[2] «Մշակ», 1873, N 35, էջ 44:

վում է կարևոր հարցերի համար նամակով քվե խնդրել երեսփոխաններից, որպեսզի որոշումներ կայացնելիս 71 ձայնն ապահովվի[1]: Այս ձևով էլ 1866 թ. հուլիսի 22-ի նիստում կատարվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության քվեարկությունը, ինչն ապօրինի է համարում թուրքական կառավարությունը, դադարեցնում է Սահմանադրությանը՝ վերաքննելու պահանջով, լուծարում է Կրոնական և Քաղաքական ժողովները, արգելում նոր ընտրություններ կատարել:

Ի մի բերելով Ազգային ժողովի՝ 1863-1866 թթ գործունեությունը՝ տեսնում ենք, որ Ազգային ժողովի 12 նիստերում քննարկվել են ամենատարբեր բնույթի հարցեր, ընդունվել որոշումներ, օրենքներ, որոնք հասարակական մեծ հնչեղություն են ունեցել: Չնայած այդ օրենքների մեծ մասը գործնականում անհնար է եղել կիրառել պետականության բացակայության պայմաններում, կամ էլ մասամբ է կիրառվել: Կայացված որոշումները կիրառվել է այնքանով, ինչքանով որ կարող էր Ազգային ժողովն իրավունք ունենալ Օսմանյան կայսրության կողմից հպատակ ժողովրդին «շնորհված» կանոնադրությամբ: Այստեղ տեղին է հիշել Ա. Ալպոյաճյանի խոսքերն այն մասին, թե «օրէնքը չէ յանցաւորը, այլ մեզ շրջապատող պայմանները, որ զայն չեն կրցած իր առաջադրուած նպատակին ծառայեցնել»[2]:

Սակայն չպետք է մոռանալ, որ բազմաթիվ որոշումները վերջնական կետին չհասցնելու, օրենքների չգործադրման մեջ իր թերություններն ու դժվարություններն ուներ նաև Ազգային ժողովը: Նշենք դրանցից մի քանիսը.

ա. Ազգային ժողովի նիստերի մեծ մասի ընթացքում անիմաստ վեճեր էին տեղի ունենում:

բ. Շատ հաճախ Վարչության անդամներ էին ընտրվում գաղափարական տարբեր հայացքների տեր անձինք, որոնք հիմնականում զբաղվում էին հարցեր պարզաբանելով կամ հրաժա-

---

[1] Տե՛ս Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, էջ 229:
[2] ՀԱԱ, ֆ. 193, ց. 2, գ. 261, թ. 14:

րականներ ներկայացնելով, իսկ Ազգային ժողովն էլ նրանց հետ բերելով կամ նոր ընտրություններ կատարելով: Իրականում Քաղաքական ժողովն «... արդեմաք գործելու համար յարատևութեան, սկզբունքի և միաձայնութեան պէտք ունէր: Քաղաքական ժողովն այս պայմաններէն զուրկ էր... Իսկ Կրոնական դասն էլ թույլ ու ծույլ էր...»[1]:

գ. Ազգային ժողովի նիստերը գումարվում էին հիմնականում առանց քվորում ապահովելու:

դ. Խախտված էր մայրաքաղաքի ու Արևմտյան Հայաստանի գավառների հայ բնակչության ընտրական իրավունքի համամասնությունը՝ Կ. Պոլսին պայմաններ ընձեռելով գրեթե միանձնյա որոշումներ կայացնելու համար:

ե. Ե՛վ Սահմանադրության գործադրման առաջին շրջանում, և՛ հետագայում Ազգային ժողովը չի կարողանում լուծել բյուջեի խնդիրը:

զ. Նիստերին չներկայանալու, իրենց լիազորությունները չկատարելու համար, բացի «բարոյական պատասխանատվությունից» երեսփոխանները որևէ այլ պատասխանատվություն չէին կրում:

Այս թերությունների մեջ «մեղավորության» իր բաժինն ուներ նաև ժողովուրդը: Մ. Մամուրյանն իրավացիորեն նշում է, որ «... անտարբերության ոգին էր մեր մէջ իշխում», ժողովուրդը տեսնելով, որ Քաղաքական ու Կրոնական ժողովները լավ չեն աշխատում, ասաց. «Ես այս Սահմանադրութենէն բան մը չհասկացայ»[2] ու մի կողմ քաշվեց:

Թերևս Ազգային ժողովի գործունեության, թույլ տված բացթողումների ու սխալների ուսումնասիրումը հնարավորություն կտա մեզ և ապագա սերունդներին դասեր քաղել պատմությունից և միջոցներ ձեռնարկել պետության հետագա զարգացման ու առաջընթացի համար:

---

[1] Մամուրյան Մ., Հայկական նամականի, էջ 28:

[2] Նույն տեղում, էջ 34:

**МАНЯ НАДЖАРЯН**
**ИИ НАН РА**

## ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ КОНСТАНТИНОПОЛЯ В 1863-1866 ГГ.

### РЕЗЮМЕ

В армянской действительности XIX в. первым шагом конституционно-парламентской деятельности западных армян можно считать принятие Национальной конституции.

Не имея государственности, армянская община Константинополя сумела посредством Национального собрания разрабатывать и принимать новые законы и каноны, которые имели важное значение в установлении определенных норм.

В 1863-1866 гг. Национальное собрание провело 12 заседаний, на которых обсуждались различные вопросы, такие как избрание патриарха Иерусалима, принятие Устава братства св. Иерусалима, проблемы, связанные с католикосами Эчмиадзина, Ахтамара, Сиса и множество других.

Большая часть этих вопросов осталась нерешенной, но их обсуждение вызвало большой общественный резонанс.

**MANYA NAJARYAN**
**IH NAS RA**

## THE ARMENIAN NATIONAL ASSAMBLY ACTIVITIES OF CONSTANTINOPLE IN 1863-1866

### SUMMARY

In the 19th century in Armenian reality constitutional-parliamentary activities' first step may be considered the acceptance of Western Armenians National constitution.

Without statehood the Armenian community of Constantinople with the help of the National Assambly was able to accept laws, rules which were of importance to Western Armenians in establishing relationship for maintaining certain norms.

In 1863-1866 the National Assambly called 12 meetings. At each meeting they discussed different kinds of questions, for example, the patriarch's election in Jerusalem, the congregation regulations there, the question of Catholicoses in Ejmiatsin, Sis and Aghtamar.

Most of the questions remain unsolved, but their discussions got the public's attention.

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# ԼԵՈՆ՝ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄԱԲԱՆ

Լեոն հայ պարբերական մամուլի հմուտ ուսումնասիրողներից մեկն է, առաջին ուսումնասիրողն այս հասկացության արդիական իմաստով, որն իր հետազոտության առարկան դարձրել է հայեցակարգային վերլուծության նյութ: Մեզանում նա առաջինն էր նաև, որ մամուլի, դրա գործիչների և առաջին հերթին՝ հրապարակախոսների հայտնությունն ու գործունեությունը բացատրեց հասարակական պահանջմունքով և անհրաժեշտությամբ: Այստեղից՝ Լեոյի այն մոտեցումը, որ հրապարակախոսը կրում է անհատի և միջավայրի փոխհարաբերությունների անմիջական կնիքը, որտեղ անհատին կարևոր դեր է վերապահվում ներգործել հասարակության վրա, ներարկել նրան որոշակի գաղափարներ: Աշխարհայացքային իմաստով Լեոն անհատից է մեկնում դեպի հասարակություն, և ոչ թե հակառակը՝ հասարակությունից դեպի անհատ, որով և կտրուկ սահմանազատվում է սոցիալիստական գաղափարներից: Առհասարակ, ինչպես մամուլի և հրապարակախոսության ասպարեզում, անհատներն են առաջ մղում մտքերի շարժումը, ուրեմն և հասարակության զարգացումը՝ սա է Լեոյի՝ որպես մամուլի պատմաբանի ելակետը: Իսկ հասարակությունը, հատկապես հայ հասարակությունը, դժկամությամբ ու կասկածանքով, հաճախ և քամահրանքով է ընդունում նոր արժեքները, որով էլ ծայր է առնում պայքարը նորի և հնի միջև, հրապարակախոսի և ավանդական հասարակության միջև՝ առաջինին դատապարտելով անընդհատ խոչընդոտներ հաղթահարելու լարված առօրյայի և դրամատիզմի՝ անձնական ու հասարակական կյանքում: Լեոյի մեծ համակրանքը հենց այս անհատի կողմն է, որովհետև նրան է վերապահված իր զոհողությունների ու կորուստների գնով առաջ մղել հասարակության զարգացումը, նրա առաջընթացը: Այդպիսիք են նրա գրչի տակ հանդես եկած հայ խոշորագույն հրապարակախոսները՝

Ստ. Նազարյանը, Գր. Արծրունին և նրանց համախոհները: Լեոն հատկապես ուշադրություն է դարձնում նրանց հասարակական հայացքների ձևավորմանը որոշակի միջավայրում՝ նախապես տալով վերջինի բնութագիրը: Ստ. Նազարյանը, նրա կարծիքով, «հասարակական բարելավման» հավատամքի և աշխարհայացքի ձևավորման համար պարտական էր Դորպատին՝ գիտական այն կենտրոնին, որ «մաքուր ու անխառն պահպանեց իր համալսարանի մեջ այն ոգին ու ուղղությունը, որ հատուկ էր գերմանական համալսարաններին»[1]:

Ստ. Նազարյանի պայքարը հայ իրականության արատների դեմ, ինչպես և հայացքների չափավորությունն այդ պայքարում՝ նա բխեցնում է «Երիտասարդ Գերմանիայի» նոր, արմատական հայացքներից, իսկ մյուս կողմից, մինչև 1830-ական թթ. կենսունակ՝ եվրոպական պահպանողական ռոմանտիզմից կրած ազդեցությունից: «Նազարյանցը,-գրում է Լեոն,-կատարելապես նոր ուղղությունը չյուրացրեց...Դա անցողական շրջանի մի մարդ էր. ռոմանտիկ և ռեալական ուղղությունների մեջ էր կանգնած, բայց ավելի հակվեց դեպի վերջինը, ավելի վերջինի առաքյալ, քան առաջինի»[2]: Նույն կերպ, Լեոն Գր. Արծրունու անհատականության ձևավորումը միանգամայն իրավացիորեն վերագրում է, 1860-ական թթ. երկրորդ կեսի պետերբուրգյան մտավորականության միջավայրին, հայրերի և որդիների հակադրության պայմաններում «անհատի կատարյալ ազատագրման» և դրական գիտությունների առաջնայնության գաղափարների յուրացմանը[3]:

Որևէ պարբերականի վերլուծությունն ու բնութագիրը Լեոն տալիս է իր մշակած ուրույն մեթոդով, որ հայ մամուլի պատմաբանների համար երկար ժամանակ պահպանեց իր ազդեցությունը՝ շատ կողմերով հարատևելով մինչև մեր օրերը: «Հյուսիսափայլի» բովանդակության մեջ նա նախ առանձնացնում է նրա նպատակը, քննում է ծրագիրը՝ իր դրական և քննադատելի կող-

---

[1] Լեո, Երկերի ժողովածու, հ. VI, Ե., 1987, էջ 33:

[2] Նույն տեղում, էջ 39:

[3] Տե՛ս Լեո, Գրիգոր Արծրունի, հ. 1, Թիֆլիս, 1902, էջ 98-99:

մերով, կրած փոփոխություններով և այլն: Այդ ամսագրի գրական ու գեղագիտական արժեքն ըստ ամենայնի ընդգծելով հանդերձ՝ նա բավարար չի համարում նրա ծրագրում հրապարակախոսությանը հատկացված «համեստ ու տարրական» տեղը: Միաժամանակ հավելում է, որ, հակառակ դրա, «Հյուսիսափայլի» հրապարակախոսությունն իրականում հաղթահարեց ծրագրային սահմանափակումը և շատ ավելի «լայն թռիչք ունեցավ կյանքի մեջ»: Լեոն ուսումնասիրել է 1850-1870-ական թթ. հայ մամուլի պատմությունը, ուստի «Հյուսիսափայլի» առթիվ նրա արած ընդհանրացումները հենվում են այդ իմացության վրա: Այսպես, այդ ամսագրում նա նկատում է մի օրինաչափություն՝ հրապարակախոսությունն այստեղ հանդես է գալիս ոչ միայն հոդվածների, այլն գրաքննադատության՝ կրիտիկայի ձևով: Այդպիսիք են և՛ Նազարյանի, և՛ Նալբանդյանի «կրիտիկաները», եզրակացնում է Լեոն:

Բացի գրաքննադատական մտքի հետ ունեցած առնչություններից, հրապարակախոսության ժանրի մեջ Լեոն հայտնաբերում է մեկ այլ օրինաչափություն՝ վերջինի անմիջական ազդեցությունը գրականության վրա: «Մշակի» օրինակով, սակայն, հրապարակախոսություն-գրականություն աղերսները նա հասցնում է միակողմանիության՝ պնդելով, թե արևելահայ գրականության պատմությունը ցույց է տալիս, որ տաղանդավոր հրապարակախոսությունը ազդել է գեղարվեստական գրականության վրա՝ ի դեմս մշակական գաղափարների՝ Րաֆֆու վրա թողած ազդեցության: Ընդգծելով Րաֆֆու վեպերի «տենդենցիան» գաղափարը, Լեոն այս գործոնն էր համարում նրա գեղարվեստական երկերում առաջնայինը և այս կերպ մի հայտնի չափով Րաֆֆուն կախման մեջ էր դնում Արծրունու հրապարակախոսությունից: Անկասկած, Լեոն գերագնահատում էր «Մշակի» խմբագրից Րաֆֆու կրած ազդեցությունը, որքան էլ հաստատեր վերջինիս ինքնուրույնությունը: Մինչդեռ ազդեցության փաստից առավել և անգամ այն հիրքելու չափ կարևորն այստեղ այն է, որ Արծրունին և Րաֆֆին համախոհներ էին, ազգի ներքին խոցերի ցու-

ցաղրմամբ դրանք հեռացնելու, բռնակալության դեմ նրա ընդվզումները վերարծարծելու և նրան քաղաքակրթության մեջ տեղ պատրաստելու տեսակետից: Ճիշտ նույնպիսի գերագնահատում է առկա Լեոյի հայեցության մեջ, երբ նա քննում է Նազարյան-Նալբանդյան աղերսները՝ հօգուտ խմբագրի և դարձյալ՝ գլխավոր աշխատակցի ինքնուրույնությունը հավաստելուն ուղղված իր ոչ այնքան համոզիչ դիտողություններով: «Այն, ինչ Նազարյանցը հայտնում էր իր լուրջ ու ծանրախոհ բարձր ոճով և հաճախ կաբինետային ոճով գրած հոդվածներում, Նալբանդյանը ժողովրդականացնում էր իր թեթև ու վառվռուն գրչով: Գրելու գեղեցիկ շնորհի էր տրված նրան»,- եզրափակում է Լեոն[1]: Այս դեպքում նա, Լեոն բացարձակացնում էր նրանց գաղափարական ընդհանրությունները՝ Նալբանդյանին վերապահելով սոսկ ձևի, հրապարակախոսական ոճի փայլն ու ինքնատիպությունը: Իսկ բուն հրապարակախոսության, ասել կուզի՝ հասարակական գաղափարների կրողները մնում էին մի դեպքում Նազարյանը, մյուս դեպքում՝ Արծրունին: Հետազոտական նման մեթոդի առկայության պարագայում Լեոն չէր կարող մեկից ավելի մրցանակ շնորհել առաջնության հավակնող դեմքերին: Ավելին, նախապաշարմունքի տեսք ստացած այսպիսի կարծրատիպով, Լեոն պետք է անցանկալի որակներ համարեր Նալբանդյանի գաղափարական ինքնատիպության և ինքնուրույնության դրսևորումները, հակառակորդների մերկացումները ոչ միայն հասարակական կյանքում, այլև ընտանեկան առօրյայում, բանավիճային կրքի պոռթկումներում և այլուր: «Իբրև կրքոտ մարդ, իբրև կռվի մարդ, Նալբանդյանցը շատ անգամ էր ընկնում ծայրահեղությունների մեջ, շատ էր սիրում դիմել գրական այնպիսի միջոցների, որոնք դատապարտելի պիտի լինեն մանավանդ նրա պես լուսամիտ, տաղանդավոր գրողի համար: Մի շարք պատճառներ, որոնց մասին այստեղ չենք կարող երկար խոսել, ճակատագրական կերպով հարկադրում էին նրան մնալ նեղ, մանր-մունր հարցերի մեջ: Նա

---

[1] Տե՛ս Լեո, Գրիգոր Արծրունի, հ. 1, Թիֆլիս, 1902, էջ 99:

հրապարակ էր հանում այս կամ այն մասնավոր անձի ընտանեկան կյանքը, չէր քաշվում պասկվիլներից, նրա հարձակումների մեջ մեծ դեր էին կատարում անձնական հաշիվները»,- գրում է Լեոն[1]:

Մյուս կողմից, չի կարելի չհամաձայնել Լեոյի այն կարծիքին, որ «Մխիթար և մխիթարյանք» ուսումնասիրության մեջ Նալբանդյանը հանդես է բերել «կանխակալ նախապաշարմունք» միաբանության դեմ «ոչ բոլորովին անաչառ վերաբերմունք», թեև այն «մեր քննական գրականության լավագույն էջերից մեկն է»[2]: Կարծում ենք՝ Լեոն նկատի ուներ Մխիթարյանների դավանական նկարագրի հանդեպ Նալբանդյանի բացասական, ավանդականորեն կանխակալ դիրքորոշումը, որի պահպանողական բնույթը վեր է ամեն մի կասկածից: Մ. Նալբանդյանի առիթով պետք է նկատենք նաև, որ մամուլի պատմաբան Լեոն հանդես է բերում հրապարակախոսական ոճի նրբին զգացողություն՝ «Հյուսիսափայլում» «Ս. Նազարյանց» ստորագրությամբ տպագրված «Ազգային թշվառություն» հոդվածը գնահատելիս (և որի հեղինակը իրականում Մ. Նալբանդյանն է): Լեոն կռահում է, որ այդ հոդվածը, անկախ ստորագրությունից, չի կարող լինել Նազարյանցի գրչի արդյունքը: Այդ հոդվածի «Նմանը չեք գտնի Նազարյանցի գրվածքների մեջ: Ժողովրդական իրավունքի, ազատության և առաջադիմության սկզբունքները այդտեղ նկարագրված և պաշտպանված են մի անսովոր եռանդով ու գեղեցիկ տրամաբանությամբ: Նույնիսկ ոճն էլ այստեղ ուրիշ է և Նազարյանցի լեզվին, գրելու ձևին վարժ մարդը դժվարությամբ է կարենում հավատալ, թե այդ հոդվածն էլ պատկանում է նրա գրչին, այնքան թեթև է նա, ազդու՝ իր կարճ նախադասություններով, իր խստությամբ, իր ոգևորությամբ»[3]:

---

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս Լեո, Գրիգոր Արծրունի, հ. 1, Թիֆլիս, 1902, էջ 100:

[3] Լեոյի «Ստեփանոս Նազարյանց» (հ. 1-2, Թիֆլիս, 1902) աշխատության տպագրությունից առաջ, դեռևս 1893 թ., Գ. Աղայանն իր «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» նուշագրությանքն մեջ (Թիֆլիս, 1893, էջ 56) հայտնում էր, որ «Ազգային

Վերադառնանք, սակայն, Լեոյի՝ որպես մամուլի պատմաբանի հետազոտական եղանակին: Տեսանք, որ որնէ պարբերականում նա ամենից առաջ կարևորում է հրապարակախոսությունը՝ ամենևին էլ ոչ միայն ժանրային իմաստով, այլև քարոզած գաղափարների, ուղղության: Այնուհետև նա քննարկում է գրական բաժինը, որի արժեքը դիտարկում է հրապարակախոսության անվիճելի առաջնայնության տեսանկյունից: «Հյուսիսափայլի» գեղարվեստական գրականությունը նա բաժանում է երկու մասի՝ թարգմանական և՝ ինքնուրույն: Հետազոտական մյուս օբյեկտը Լեոյի համար մնում է գիտական բաժինը՝ և «Հյուսիսափայլում» և «Մշակում» դրական գիտությունների արժեքավորմամբ: Այստեղ ուշագրավ է մի հանգամանք. անպայման նկատի առնելով, որ հայ գրականությունը զարգացել է մամուլի էջերում և անվիճելի համարելով այդ մամուլի կարևոր նշանակությունը մեր գրականության զարգացման մեջ՝ Լեոն պետք է պատասխաներ այն հարցադրմանը, թե հայ մամուլի գիտական արժեքավորումը գիտահետազոտական որ տիրույթներում պետք է որոնել՝ հասարակական ուղղության, պատմության, թե՝ գրականության: 1850-1880-ական թթ. հայ մամուլի քննության մեջ Լեոյի պատասխանը միանշանակ է, դատելով նրա շոշափած հիմնահարցերից՝ անշուշտ, պատմության և հասարակական ուղղության: Իրականության, հասարակական կյանքի, դրանց գնահատման հիմնահարցերը, ինչպես տեսանք վերը, Լեոն տեղադրում էր «հրապարակախոսություն» ծավալուն հասկացության մեջ՝ բնավ չշրջանցելով գրականության նշանակությունը, բայց և այս վերջինը մի հայտնի չափով կախման մեջ դնելով հրապարակախոսությունից: Հենց հրապարակախոսությունն էլ Լեոն դարձնում է չափանիշ՝ թե «Հյուսիսափայլի», թե «Մշակի», անգամ հայ անդրանիկ

---

թշվառության» իրական հեղինակը ոչ թե Ստ. Նազարյանն է, այլ Մ. Նալբանդյանը: Ամենայն հավանականությամբ Լեոն դրան ուշադրություն չի դարձրել, թեև Ա. Մակարյանը պնդում է, որ Լեոն «ծանոթ էր Ղ. Աղայանի վկայությանը, բայց դրան չէր հավատում» (տե՛ս Նալբանդյան Մ., Ազգային թշվառություն, Ե., 1939, էջ 81, նաև՝ նույնի՝ Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Ե., 1940, էջ 466):

պարբերականի՝ «Ազդարարի» գործունեությունը գնահատելիս: Ավելին, Լեոն առաջ է քաշում (գրեթե բառացիորեն կրկնելով Արծրունուն) հասարակական քնած միտքն արթնացնող և ձևավորող ներգործական մամուլի անհրաժեշտության խնդիրը: Ընդսմին, ներգործական լրագրի առաջին հատկանիշը պետք է լինի նրա «խիստ և որոշակի ուղղությունը»: Հայերի մեջ նա այդպիսի կայացած լրագիր է համարում Գր. Արծրունու «Մշակը». «Հետազոտող խմբագիր, ներգործական լրագրի ղեկավար՝ սա մի նոր հիմք էր, որի վրա դրվում էր հայ լրագրությունը 1872 թվականից: Հետազոտող խմբագիրը ուժեղ է, տպավորիչ է մանավանդ իր մի հատկությամբ. նա գիտե ժամանակին յուրացնել, գիտե օրվա խնդիրները, այժմեություն ներկայացնող երևույթները ըմբռնել, արձագանք տալ նրանց, քննության հանել»[1]:

Եվ ընդհակառակն, «Հյուսիսափայլի» խմբագրի հրապարակախոսական խառնվածքի, թերևս ամենախոշոր թերությունը Լեոն համարում է (հատկապես ամսագրի առաջին շրջանում) ոչ բավարար հետևողականությունը՝ իր քարոզչությունը փաստերի վրա չհենելու համար: Իհարկե, նա այստեղ ևս վերապահումներ է անում՝ մեղմելու իր քննադատական սլաքի թափը, անգամ վկայակոչում է Նազարյանի հրապարակախոսական զարգացումները, բանավեճերն ու «թուրքահայերի գործերով» հետաքրքրվելը: Կարևորը, սակայն, Լեոյի մյուս մեղմացուցիչ փաստաբկն է՝ «մերկացնող հրապարակախոսությունը նոր էր սկիզբ առնում մեզանում»[2]: Այդպիսի հրապարակախոսության լիարժեք շարունակող և կիրառող նա համարում էր, ինչպես տեսանք, Գր. Արծրունուն: Այս առթիվ Լեոն ծայրահեղության է հասցնում «Հյուսիսափայլի» հրապարակախոսության քարոզչական բնույթի քննադատությունը՝ գրաքննադատական չափանիշների երկրորդական նշանակությունը Նազարյանի և Նալբանդյանի «կրիտիկաներում», նշելով, որ «նրանց հետաքրքրում է միայն քարոզչու-

---

[1] Լեո, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 430-431:

[2] Տե՛ս Լեո, Գրիգոր Արծրունի, հ. 1, Թիֆլիս, 1902, էջ 91:

թյունը, միայն տենդենցիան»[1]: Ի դեպ, մամուլի բաժանորդների քանակը Լեոն համարում է հայտանիշ՝ նրա գաղափարական ներգործության չափը հասարակության մեջ որոշելու համար: Ճիշտ այնպես, ինչպես մերօրյա հարցումների տոկոսայնությունը՝ որևէ գաղափարի վարկանիշը որոշելու համար: Հասարակության համակրանքը «Հյուսիսափայլի» հակառակորդների կողմն էր, նշում է Լեոն, «Ամենքն էլ» «Հյուսիսափայլից» շատ բաժանորդ ունեին, նույնիսկ խղճուկ «Ճռաքաղ» ամսագիրը իր հրատարակության առաջին տարին ուներ 405 բաժանորդ, չնայած որ իրան աջակցող «զավազան» էլ ուներ (նկատի ունի իշխանություններին – Ա. Խ.)»[2], մինչդեռ «Հյուսիսափայլը» 1858 թ. ուներ ընդամենը 305 բաժանորդ: Դրա պատճառը Լեոն բացատրում է Նազարյանի «կծու քննադատություններով», որ դուր չէին գալիս «ինքնագոհ ազգասերներին»:

Կարելի է կարծել, որ Նազարյանին տված Լեոյի դիպուկ բնութագրերի կողքին տեղ են գտել ոյոշ հակասություններ, մանավանդ այն դեպքերում, երբ նա համադրում է Նազարյանին և Արծրունուն: Դրվատելով Արծրունու մտրակող ուղղությունը՝ Լեոն հարում է, որ դրա անդրանիկ, փայլուն օրինակը տվել էր «Հյուսիսափայլը»: Քիչ անց նա կտրուկ հերքում է այս «ժառանգականությունը», երբ արդեն բնութագյում է նաև իրեն՝ Արծրունուն. «Հյուսիսափայլի» խմբագիրը մի մեղմ ու հեզ, կյանքասեր, խաղաղություն ու ընդհանուր համաձայնություն երազող քարոզիչ էր, մինչդեռ Արծրունին մի կրակոտ բնավորություն էր, մի ըմբոստ ու ազնիվ կրքերով լի մի մարդ, որ կովի մեջ ցույց էր տալիս անհուն եռանդ»[3],- գրում է նա: Հիրավի, յելանելն արեգական խավարին աստեղք, ինչպես ասում էին հները:

Վերը տեսանք, որ Լեոյի համոզմամբ, մամուլն արտահայտում է ոչ միայն հասարակական գաղափարներ, այլև որոշակի ուղղության հասարակական գաղափարներ՝ պայքարելով դրանց

---

[1] Լեո, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 95:

[2] Նույն տեղում, էջ 86-87:

[3] Նույն տեղում, էջ 384:

հաստատման համար: Նա այսպես է անվանում հասարակական ուղղություններն ու մամուլը՝ վերջինս լցնելով առաջինի բովանդակությամբ: Հայ իրականության մեջ հասարակական ուղղությունները, ինչպես հիմնավորում է Լեոն, ի հայտ են գալիս հենց մամուլում, որը նպաստում է այդ ուղղությունների ձևավորմանը և դրանց միջև հակասությունների զարգացմանն ու գաղափարական բախումներին: Եվ այս իմաստով «Ստեփանոս Նազարյանց» և «Գրիգոր Արծրունի» աշխատություններում Լեոն հանդես է գալիս որպես ոչ միայն հայ մամուլի, այլև հասարակական հոսանքների առաջին լուրջ ուսումնասիրողը մեր իրականության մեջ: Այդ աշխատություններում Լեոն, ելակետ ունենալով մամուլը, առանձնացնում է հասարակական երկու ուղղություններ՝ ազատամիտ (առաջադիմական) և պահպանողական (հնապաշտ): «Մեզ համար,-գրում է նա,-նշանակալից պիտի լինի այն հանգամանքը, որ 1858 թվականից ռուսահայերի մեջ երևան եկած հրապարակախոսությունն ունի իր բոլոր սարք ու կարգը: Դա միակողմանի գործ չէ: Հենց առաջին օրից գործում են երկու անհրաժեշտ ծայրերը՝ ազատամիտ, առաջադիմական ուղղությունը և նրա դեմ կանգնած պահպանողական հնապաշտ ուղղությունը: Կան հարձակվողներ, կան և դիմադրողներ»[1]: Լեոն չի շրջանցում նաև այն «բնորոշ հանգամանքը», որ նոր ուղղությունը սովորաբար մենակ է պայքարի մեջ նետվում՝ ունենալով վաղուց արդեն կայացած թշնամիներ: Հենց այս մեկնակետից էլ Լեոն բնութագրում է «Հյուսիսափայլի» ու «Մշակի» հակոտնյա պահպանողական «Մեղու Հայաստանի», «Ճռաքաղ», «Մասյաց աղավնի», որոշ վերապահումներով՝ «Կռունկ հայոց աշխարհին» պարբերականները: Սրանցից առաջին երեքի և «Հյուսիսափայլի» հակադրությունը Լեոն առանձնապես սրված է տեսնում կրոնին և եկեղեցուն տրված տարբեր գնահատականներում և դրանց շուրջ բախումներում: Նա այս հարցին հանգամանորեն անդրադառնում է

---

[1] Լեո, Երկերի ժողովածու, h. VI, էջ 87:

Ստ. Նազարյանի «Մենդելսոն, Լեսինգ և Լավաատեր» հոդվածի[1] առթիվ, որտեղ «Հյուսիսափայլի» խմբագիրը հստակ տարբերում էր կրոնի և ազգության գաղափարները՝ հանուն տարադավան հայերի ազգային միասնության, և քարոզում «եղբայրասիրություն, հայրենասիրություն, միաբան անձնազոհություն՝ հասարակաց հայրենիքի համար»:

Լեոն ընդհանուր գծերով, բայց ճշմարտացի է գնահատում հատկապես 1860-ական թթ. ազատամիտ մամուլը՝ «Հյուսիսափայլի» համախոհ պարբերականներ համարելով Հ. Սվաճյանի «Մեղուն» և Ստ. Ոսկանի «Արևմուտքը»: Նա նկատում է, որ կրոնն ազգությունից բաժանելու սկզբունքը պաշտպանում էր նաև Ստ. Ոսկանյանը՝ Փարիզի իր «Արևմուտք» պարբերականում: Այդ սկզբունքի գործնական կիրառման փարձերը Լեոն տեսնում է նաև Կ. Պոլսի «Համազգյաց» ընկերության գործու- նեության մեջ:

Հայտնի է, որ պահպանողականները հատկապես թշնամաբար վերաբերվեցին Նազարյանցի՝ վերոհիշյալ հոդվածում առաջ քաշած այն մտքին, որ հայոց եկեղեցին կարիք է զգում արմատական վերանպագության: Ստ. Նազարյանի պահպանողական հակառակորդների մեջ Լեոն առանձնանշում է Հ. Չերքեզյանին, որը «Հյուսիսափայլի» խմբագրի դեմ իր անարգ հարձակումներն իրականացնում էր «Մեղվում», «Ճռաքաղում» և «Մասյաց աղավնիում»: Լեոն նկատում է ազատամիտների և պահպանողականների՝ տրամագծորեն տարբեր ընկալումները ոչ միայն ազգային եկեղեցու պատմական նշանակության և գործառույթների, այլև ազգային լեզվի ու պատմության հիմնահարցերում: Արևելահայ պահպանողականների մեջ Լեոն առավել լայնախոհ է համարում «Կռունկ հայոց աշխարհին» ամսագիրը, որը բանակռիվ չէր մղում Նազարյանի դեմ՝ հարգելով նրա գիտական ու խմբագրական գործունեությունը: Եվ միայն եկեղեցականների «նորոգման» մասին վերոհիշյալ հոդվածը «նրան ստիպեց հանդես գալ Նազարյանցի դեմ»[2]: Իբրև հասարակական ուղղությունների մեջ կա-

[1] Տե՛ս Հյուսիսափայլ, 1860, N 10, էջ 298-313:

[2] Լեո, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 118:

տարված ուշագրավ իրողություն, Լեոն ուշադրություն է դարձնում դրանցում կատարված սերնդափոխությանը: Համալսարանավարտ նոր սերնդի մեջ նս հայտնվում են պահպանողականներ՝ ի դեմս վերոհիշյալ Հ. Չերքեզյանի: Մատթեոս կաթողիկոսին գրած իր գրության մեջ նա Նազարյանին մեղադրել էր լութերականության և հայ եկեղեցին ռեֆորմի ենթարկելու մտադրության մեջ՝ այդ ռեֆորմը վերագրելով ոչ թե եկեղեցականության կրթությանն ու բարոյական վերափոխմանը (ինչին հետամտում էր իրականում Նազարյանը), այլ կյոնադավանական համակարգին: Հ. Չերքեզյանի ջանքերի և կաթողիկոսի կոնդակի հիման վրա սինոդը «Հյուսիսափայլը» դատապարտել էր վերջնական դադարի և միայն Պետերբուրգի գրաքննական կոմիտեի միջամտության շնորհիվ ամսագիրը փրկվեց: Բռնության այս փորձը Լեոն համայում է խայտառակություն՝ արևելահայ մամուլի պատմության մեջ «եզակի և անօրինակ մի դեպք»[1]: Նա նրբերանգներ է հայտնաբերում պահպանողական ուղղության գործիչների հայեցության մեջ, որոնք հարկադրված էին մասամբ ընդառաջել նոր ժամանակների պահանջներին, բայց սկզբունքային հարցերում շայտւնակում էին ավագ սերնդի պահպանողական ընթացքը: Նկատի ունենալով Մանդինյան քահանային փոխարինած՝ Մ«եղու Հայաստանիի» նոր խմբագիր Պ. Սի- մեոնյանի «տարօրինակ համակյաւթյունը» Նազարյանի նկատմամբ՝ Լեոն այդ վերագրում է այն բանին, որ «պահպանողական նոր սերունդը հաշտվում էր առաջադեմ ուղղության նախապետի հետ», մինչդեռ կտրականապես հակադրվում էր նույն առաջադիմականների նոր սերնդին[2]: Բայց բանավեճի բացակայությունը դեռևս չէր նշանակում, որ հակադրություն չկար, մանավանդ, Նազարյանը և Սիմեոնյանը համատեղ լրագրական հրապարակի վրա են եղել շատ կարճ՝ մեկ տարուց վաքր-ինչ ավելի (1863 թ. վերջ-1864 թ.): Իսկ 1860-ականի երկրորդ կեսին արևելահայ իրականության մեջ որևէ ազատամիտ պարբերական չէր հրատարակվում, որի դեմ

---

[1] Լեո, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 123:

[2] Նույն տեղում, էջ 146:

պայքարեր պահպանողական «Մեղու Հայաստանին»: Այս ուղղությունների միջև գաղափարական պայքարը պետք է սկսվեր 1872 թվականից, երբ ասպարեզում հայտնվեց ազատամիտ «Մշակը»: Լեոն քննադատում է, միշտ «մշակական» ազատամտության դիրքերից, պահպանողական «Փորձ», «Արձագանք», «Նոր դար» և «Մուրճ» պարբերականները: Այս տեսակետից ուշագրավ է «Արձագանքին» տված՝ Լեոյի բնորոշումը, այն, որ այդ պարբերականը նախապես ուներ «մի որոշ ինքնուրույն ուղղություն», թեև նրա մեջ կար նույն «մեղվական» պահպանողականությունը, և որ «Մշակի» դեմ արած նրա առարկությունները, ի վերջո, այդ թերթը նետեցին «Մեղվի» և «Նոր դարի» գիրկը[1]: Այստեղ կարևոր է մեզ թվում այն հանգամանքը, որ «Արձագանքի» նշված երկվության վերաբերյալ (մի որոշ ինքնուրույն ուղղություն և, մյուս կողմից, մեղվականություն) լեոյական նրբամիտ դիտողությունները հիմք դարձան խորհրդային պատմաբանների համար՝ պահպանողական ընդհանուր հոսանքից առանձնացնելու լիբերալ-պահպանողականներին՝ «Փորձ» և «Արձագանք» պարբերականներով, որպես ինքնուրույն հոսանք:

Որքան էլ Լեոն եզակի դեր վերապահեր «Մշակին», այնուհանդերձ, հենց բուն Թիֆլիսի իրականության մեջ նկատում է նրա դաշնակիցներին, որոնք այս կամ այն չափով բաժանում էին նրա ծրագրերը և մոտեցումները: Այդ կերպ նա համառոտ գնահատում է վրաց «Դրոեբա» և «Տիֆլիսսկի վեստնիկ» թերթերը: Ազգային լեզվի, դպրոցի, Թիֆլիսի քաղաքային վարչության, տեղական տնտեսական և այլ հարցերում «Մշակը» և «Դրոեբա»-ն սատարում էին միմյանց: Ավելին, նրանք համատեղ դիմակայում էին Թիֆլիսում լույս տեսնող «Կավկազ» թերթի ռուսականացման քարոզչությանը: Լեոն արժանին է հատուցում հայկական ու վրացական թերթերի «համերաշխությանն ու փոխադարձ անկեղծ բարյացակամությանը»: Նա, սակայն, վախում է իր դատողու-

---

[1] Լեո, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 676:

թյունների ընթացքը, երբ դրանք հենում է 1900-ականների իրողությունների վրա. «Մեր այժմյան օրերում, - գրում է նա, - ազգայնամոլությունը այնքան կուրացրել է վրացի գործիչների մի մասը, հայերի դեմ համարյա խաչակրաց արշավանք է քարոզվում, և այդ ատելությունը հայերի դեմ վրացի ազգայնամոլները հիմնում են այն իրողության վրա, որ Վրաստանում վաշխառու են մեծ մասամբ հայերը: Մի քանի վաշխառուների պատճառով ատելություն քարոզել մի ամբողջ ազգի դեմ... այս է մեր օրերի վրացական հայրենասիրության ամենամեծ արտահայտությունը առաջավոր դասակարգի մի հայտնի շրջանում»[1]: Իսկապես, «Դրոեբա»-յի խմբագիր Մեսխիի մահից հետո այդ թերթն անցել էր հայատյացների ձեռքը, որի մասին ցավով էր նշում նաև Գր. Արծրունին:

Լեոն հանդես է գալիս նաև որպես արևմտահայ մամուլի պատմաբան, և այս դեպքում նրա ելակետը մեկն է՝ Կ. Պոլսի պարբերականները նա որակում է ըստ «Մշակի» հանդեպ դրանց ցուցաբերած վերաբերմունքի: Մի որոշ չափով դա Լեոյին մղում է կանխակալության: «Կ. Պոլսում, - գրում է նա, - միայն «Մանզումե» լրագիրն էր իրան փոքրիշատե օրինավոր պահում: Նույնիսկ «Մասիսը», որ... լուրջ և խոհեմ թերթի համբավ ուներ, պարտք համարեց ամենախիստ հարձակում գործել «Մշակի» դեմ»[2]: Իր գնահատականներում Լեոն բավական զգալիորեն կրում է Գր. Արծրունու մոտեցումների ազդեցությունը, որ ակնհայտորեն երևում է արևմտահայ մամուլին և Ազգային սահմանադրությանը վերաբերող հատվածներում: Առաջնորդվելով «Մշակի» խմբագրականներով ու հոդվածներով, որոնք, բնականաբար, հաճախ օրախնդիր քարոզչական բնույթ են կրում, Լեոն ևս պնդում է, որ Կ.Պոլսի հայ մամուլը, բացի «տեղային եկեղեցական հարցերից, ոչինչ չէր ճանաչում»[3]: Լեոն բացառապես մշակականության ազդեցությամբ է բացատրում Կ. Պոլսի «Արևելքի», այնուհետև «Հայ-

---

[1] Լեո, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 474:

[2] Նույն տեղում, էջ 529:

[3] Նույն տեղում, էջ 512:

րենիքի» ուղղությունը 1880-1890-ական թթ.: Նա անգիտանում է արևմտահայ առաջադիմական կամ ազատամիտ մամուլի համազգային նպատակները, Կ. Պոլսի «նոր լրագրության» (Զոհրապի բնորոշումն է)[1] էջերում, առհասարակ նոր մտավոր շարժման համազգային դրսևորումները և ամեն ինչ վերագրում է Արծրունու և Արփիար Արփիարյանի համագործակցությանը, անշուշտ, առաջինի առաջատարությամբ: «Մոտ 12 տարի Կ. Պոլսում տիրապետող հանդիսացած մշակականությունը, - գրում է նա, - թուրքահայ մամուլի պատմության ամենագեղեցիկ էջերը դարձավ»[2]: Նույն ոգով Լեոն ամբողջովին համամիտ է Արծրունուն՝ արևմտահայերի Ազգային սահմանադրության քննադատության գործում: Այդ քննադատության մեջ, իհարկե, բավական հիմնավորված դրույթներ կան, բայց և չպետք էր անտեսել դրա թողած դրական մի քանի հետևանքները՝ նույնիսկ Արծրունու կողմից քանիցս դատապարտված ամիրայության առանձնաշնորհումների վերացումը Կ. Պոլսի և Արևմտահայաստանի իրականության մեջ, լուսավորության, դպրոցի ու մշակույթի զարգացման հնարավորությունների ընդլայնումը հայերի համար և այլն: Սահմանադրական պայքարում, ի դեպ, զարգացման անվիճելի ընթացք ունեցավ արևմտահայ ազատամտական ուղղությունը, որը գործնականում պատրաստ էր համագործակցելու մշակականության հետ և կրելու դրա ազդեցությունը, ընդսմին, լինելով ոչ թե այդ ազդեցության հետևանքը, այլ արևմտահայ 1880-ական թթ. հասունացած հասարակական ու մտավոր պահանջների: Հենց այս իրողությունների անտեսումն է պատճառը, որ Լեոն գրեթե նույնությամբ կրկնում է Արծրունու քամահրական կեցվածքը արևմտահայ, հասկանալի է, ոչ մշակական մամուլի հանդեպ:

Արևմտահայերի սահմանադրության գնահատման մեջ Լեոն, սակայն, տարբեր դիրք է գրավում արծրունիական հախուռն մերժումների համեմատությամբ՝ հետևելով բելգիացի

---

[1] Տե՛ս Զոհրապ Գրիգոր, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1962, էջ 317:

[2] Նույն տեղում, էջ 663:

իրավաբան Մ. Ռոլեն-Ժեկմենի հայտնի տեսակետին, ըստ որի, թուրքերի և քրդերի բռնությունների դեմ սահմանադրությունը հայերին ընձեռում էր բողոքելու իրավունք[1]: Նկատի առնելով գավառական հարստահարությունների վերաբերյալ Կ. Պոլսի Ազգային ժողովի տեղեկագրերը (1872 և 1876 թթ.)՝ նա նկատում էր, թե «որքան էլ գավառների դրությունը Ազգային ժողովի առանձին ուշադրության չէր արժանանում, կար այն կարևոր հանգամանքը, որ գոնե գավառների արձագանքը դարձավ, հավաքեց հարըստահարությունների փաստերը, կազմեց գավառների տանջանքների պատմությունը»[2]: Այդուհանդերձ, Լեոն առաջինն է մեր պատմաբանների մեջ, որ ուշադրություն է դարձնում Ռուսաստանի և Թուրքիայի հայերի գաղափարական ընդհանրություններին, առավել ևս հասարակական ուղղությունների ընդհանրությունների վրա: Վերը տեսանք «Մշակի» և Կ. Պոլսի «Արևելքի» և ապա «Հայրենիքի» «մշակական» ուղեգծի, այսինքն՝ ազատամտական ընդհանուր ուղղության վերհանումը Լեոյի կողմից: Նույն կերպ, «Մեղու Հայաստանիի» հակադրությունը «Մշակին»՝ նա բացատրում է ոչ միայն պահպանողական թերթի խմբագրի անձնական նախասիրություններով, այլև նրա՝ մի ամբողջ հոսանքի արձագանք լինելու հանգամանքով: «Մեղվի» գաղափարները, նշում է նա, դավանում էին ոչ միայն Թիֆլիսում, այլև Կ. Պոլսում: Իսկ որ Լեոն իրազեկ էր Թուրքիայում հայ մամուլի կացությանը, անառարկելի է: Այսպես, 1876 թ. հալածանքների ենթարկվեցին Կ. Պոլսի հայկական «Արարատ», «Հայրենիք» և «Մեծմուայը հավատիս» (հայատառ թուրքերեն) թերթերի խմբագիրները, որի պատճառը լավ հայտնի էր Լեոյին, և որը այդ փաստը ծառայեցնում է 1876 թ. օսմանյան սահմանադրության շուրջ թուրքերի քարոզչական կեղծիքների բացահայտմանը: Այն միջոցին, նկատում է նա, երբ խմբագրվում էր օսմանյան սահմանադրությամբ հռչակված՝ մամուլի ազատությունն ապահովող օրենքը, «երեք հայ խմբագիրներ բանտարկվեցին, ծեծի ենթարկվեցին այն

---

[1] Տե՛ս Положение армян в Турции, до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 23.
[2] Լեո, Երկերի ժողովածու, հ. VI, էջ 512:

պատճառով, որ համարձակվել էին տպագրել Տրապիզոնի Շանա հայաբնակ գյուղում տեղի ունեցած հարստահարությունները»[1]:

Գրեթե միշտ և հետևողականորեն Լեոն պարբերական հրատարակությունները բնութագրում է մի որոշակի չափանիշով՝ դրանց հասարակական ուղղության, գաղափարների և վերջիններիս հաստատման համար սկզբունքային գործելակերպի չափանիշով: Անձնական հատկանիշները (խմբագիրների, գլխավոր աշխատակիցների և այլն), որքան էլ Լեոն դրանք հաշվի առնի այս կամ այն պարբերականի ընթացքը գնահատելու համար, նա դիտարկում է մամուլի հասարակական արժեքի կամ ուղեգծի հետ ունեցած միասնության մեջ, որոնք միմյանց ոչ թե հակասում են, այլ, ի վերջո, լրացնում: Եվ այս մոտեցման շնորհիվ Լեոն նան առաջինը եղավ մեզանում, որ մամուլի պատմությունը դարձրեց գիտություն՝ հակառակ մինչ այդ մամուլում շրջանառվող նկարագրական կամ զուտ մատենագիտական բնույթի համապատասխան աշխատությունների: Այնուհետև, Լեոն սկիզբ էր դնում հայ մամուլի՝ լինի արևելահայ, թե արևմտահայ, ուսումնասիրության մեջ համազգային ընդհանրական չափանիշներ կիրառելու մեթոդին: 1850-1890-ական թթ. հայ մամուլը նա բնութագրում է հասարակական հոսանքների հետ միասնաբար՝ ճանաչելով և սահմանելով հասարակական երկու հոսանքներ՝ պահպանողականություն և ազատամտություն, որյանք իրենց քարոզչությունն իրականացնում էին սեփական ուղղությունն արտահայտող պարբերական հրատարակությունների միջոցով: Սրանում է, կարծում ենք, հայ մամուլի ուսումնասիրության անդաստանում Լեոյի ներդրած խոշոր վաստակը, որի գիտականությունն ու կենսունակությունն այսօր էլ չի կորցրել իր որակները, ավելի քան մեկ դար անց՝ հայ մամուլի մի ամբողջ ժամանակաշրջանի պատմությունը համակողմանիորեն վերարտադրող իր «Ստեփանոս Նազարյանց» և «Գրիգոր Արծրունի» աշխատություններում:

---

[1] Նույն տեղում, էջ 538-539: Տե՛ս նաև Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ կեսարիո, հ. Բ, Կահիրե, 1937, էջ 2039-2040:

**АЛЬБЕРТ ХАРАТЯН**
**ИИ НАН РА**

## ЛЕО КАК ИСТОРИК АРМЯНСКОЙ ПЕРИОДИКИ


### РЕЗЮМЕ

Лео является одним из опытных исследователей истории армянской периодики. Являясь одним из первых исследователей в этой области (в современном понимании), Лео разработал концептуальный подход к исследуемому материалу.

В своих работах, посвященных как восточноармянской, так и западноармянской периодике, Лео положил начало методу обобщающих критериев. Армянскую периодику 1850-1890-х годов он охарактеризовал сквозь призму общественных течений, выделив два течения – консервативное и либеральное, осуществлявших свою пропаганду посредством периодических изданий. В этом и заключается выдающаяся заслуга Лео как исследователя истории армянской периодики, весомая часть изысканий которого нашла отражение в работах "Степанос Назарянц" и "Григор Арцруни".


**ALBERT KHARATYAN**
**IH NAS RA**

## LEO AS A HISTORIAN OF ARMENIAN PERIODICALS


### SUMMARY

Leo is one of the most experienced researches of the history of Armenian periodicals. Being one of the first researchers of this field (in the modern sense), he developed a conseptual approach to the material under study.

In his works dedicated both to Eastern and Western Armenian periodicals, Leo laid the foundation for the method of generalizing criteria. He characterized the Armenian periodicals of the 1850-1890s through the prism of public course, separating two courses-conservative and liberal, realizing his propaganda by means of periodicals. This is the merit of Leo as the investigator of the history of Armenian periodicals, the fundamental part of whose research found their reflection in the works "Stepanos Nazaryants" and "Grigor Artsruni".

ԱՐԿԱԴԻ ԱԿՈՊՈՎ
ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ

# ՕԼԹԻԻ ՕԿՐՈՒԳԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1878-1897 ԹԹ.

1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսի ռուս-թուրքական պայմանագրի կնքումից հետո Ախալցխայի նախկին նահանգի Կիսկիմի, Օլթիի, Տայոցքարի (Թավուսքեր), Մամրվանի (Նարիման), Բանակի (Փանակ, Փենեք) գավառները և նախկին Կարսի նահանգի Կողի (Գյոլե) գավառը, հայտնվում են Էրզրումի նահանգի կազմում[1]: Այդպիսով, Տայքի բոլոր գավառներն ընդգրկվում են Էրզրումի ընդարձակ նահանգի մեջ[*]:

Վարչատարածքային այսպիսի բաժանումը պահպանվում է մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: 1877 թ. ապրիլի 12-ին Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերը լայնամասշտաբ հարձակման են անցնում Ախալցխա-Արդահան, Ալեքսանդրապոլ-Կարս և Իգդիր-Բայազետ ուղղություններով:

Ռուսական զորքերը, գնդապետ Կոմարովի գլխավորությամբ մտնելով Տայք, 1877 թ. մայիսի 20-ին գրավում են ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Օլթին և Բանակը[2]: Տայքի գավառներից թուրքերը կարողանում են իրենց ձեռքում պահել միայն Կիսկիմի և Պարխարի գավառների մի մասը:

Օլթիի գրավումից հետո թուրքական իշխանությունները լքում են քաղաքը: Ռուսների կողմից այնտեղ կազմակերպվում է ժամանակավոր վարչություն, իսկ բնակչությանը հայտարարվում է, որ Օլթին, Մամրվանը և շրջակա բնակավայրերը միանալու են Ռուսաստանին, հետևաբար Օլթիի գավառի բնակչությանը պարտադրվում է պարենամթերքով ապահովել ռուսական բանակին:

---

[1] Տե՛ս Маламма Я.Д., Описание Эрзерумского вилайета, СПб., 1874, с. 5.
[*] Տայքի գավառներից էր նաև Թորթումը, որն իր ձևավորումից ի վեր մշտապես եղել է Էրզրումի նահանգի կազմում:
[2] Տե՛ս Погосян А.М., Карсская область в составе России, Ер., 1983, с. 46.

Իր հերթին ռուսական հրամանատարությունը, հաշվի առնելով Օլթիի ռազմավարական կարևորությունը, վարձում է ուժեղացնել տեղի կայազորը՝ ներգրավելով Քութայիսյան 158-րդ հետևակային գնդի առաջին գումարտակը[1]: Օլթիի՝ իբրև հենակետի ամրացումը, մի քանի կարևոր նպատակ էր հետապնդում: Նախ, ապահովվում էր Կարսի և Ալեքսանդրապոլի հետ անխափան կապը, ապա, գրավելով հակառակորդից մի ընդարձակ տարածք, ռուսները պարենամթերքի հայթայթման այլընտրանքային ճանապարհներ էին ձեռք բերում:

Բոլոր ուղղություններով ռուսների տարած հաղթանակն ստիպում է թուրքական կառավարությանը հաշտություն խնդրել: 1878 թ. փետրվարի 19-ին Սան-Ստեֆանոյում կնքված նախնական պայմանագրի համաձայն՝ Թուրքիան հօգուտ Ռուսաստանի զիջեց Տայքի տարածքների մեծագույն մասը՝ Կողի, Բանակի Օլթիի և Տայոցքարի գավառներն ամբողջությամբ, ինչպես նաև Թորթումի և Մամրվանի գավառների հյուսիսային հատվածները[2]: Սակայն «Մեծ տերությունների» ջանքերով այս պայմանագիրը 1878 թ. Բեռլինի վեհաժողովում վավախության ենթարկվեց: Փոփոխվում է նաև ռուս-թուրքական սահմանագիծը: Եթե Սան-Ստեֆանոյի պայմանագրով ռուս-թուրքական սահմանը լեռնագրական էր և անցնում էր բնական սահմանագծեյավ, ապա Բեռլինի պայմանագյավ այն դառնում է գլխավորապես երկրաչափական՝ միացնելով պետական սահմանի ոյաշակի կետեր՝ առանց հաշվի առնելու տեղանքի ռելիեֆային պայմանները: Այս փոփոխությունները հետագայում հանգեցնում են լուրջ դժվարությունների ռուս-թուրքական պետական սահմանների հստակեցման

---

[1] Տե՛ս Նույն տեղում, էջ 181:

[2] Սան-Ստեֆանոյի պայմանագրով ռուս-թուրքական սահմանագծի, ինչպես նաև դրա Բեռլինի վեհաժողովի ձևափոխումների վերաբերյալ տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», կազմողներ՝ Ջ.Ս. Կիրակոսյան, Ռ.Գ. Սահակյան, Ե., 1972, էջ 93-94, 127:

գործում[1]: Տայքի՝ ռուս-թուրքական սահմանի երկայնքով ձգվող գյուղերի մի խումբ, որը Սան-Ստեֆանոյի պայմանագրով անցել էր ռուսական կայսրությանը, Բեռլինի պայմանագրով մնում է ռուս-թուրքական սահմանից այն կողմ: Թուրքերին է վերադարձվում Թորթումի գավառի հյուսիսային մասը՝ Թորթումի լճով, հանրահայտ ջրվեժով, Օշկվանքի և Խախուի հոչակավոր տաճարներով, Աշմիշեն, Օսխա, Թև, Ծխիկ, Լեք, Ընկուզեկ և այլ գյուղերով, Տայոցքարի գավառի արևմտյան մասը՝ Ավարես, Էրախանի (Իրխան), Օխորբերդ, Գելուտ և Իշխան գյուղերով՝ Իշխանի Ներսեսաշեն տաճարով հանդերձ, Օլթիի գավառի Անձավի գյուղախմբի մի մասը՝ Դիվաձոր, Ասփակ, Ռսկյան և Խուվուտ գյուղերով, ինչպես նաև Մամրվանի գավառի* մեծ մասը՝ հանրահայտ Իդ, Ախա, Արտոստ, Քարշեն և այլ գյուղերով:

Բեռլինի պայմանագրով Ռուսաստանին անցած շրջաններից Կարսը, Կաղզվանը, Արդահանը և Օլթին ընդգրկվեցին նորաստեղծ Կարսի մարզի մեջ: Տայքի Կող գավառը հայտնվում է Արդահանի օկրուգի կազմում՝ իբրև Գյոլեի տեղամաս: Ռուսաստանին անցած Տայքի մյուս շրջանները՝ Օլթին, Մամրվանը, Բանակը, Բարդուսը, Փանազկերտը և Տայոցքարն ընդգրկվում են 2627,2 քառ. վերստ (2800,6 քառ. կմ) տարածքով Օլթիի օկրուգի (շրջան) մեջ[2], որն զբաղեցնում էր Կարսի մարզի հարավարևմտյան մասը[3]: Առաջին չորսը միավորվում են Օլթիի տեղամասի

---

[1] Տես Материалы для описания русско-турецкой войны 1877-1878 гг. на Кавказско-Малоазиатском театре, т. III, Тифлись, 1907, с. 225.

* Մամրվանի գավառից Ռուսաստանին է անցնում Մամրվան բնակավայրն ու նրա շրջակա մի քանի գյուղերը:

[2] Центральный государственный исторический архив Грузии (ЦГИАГ), ф. 1438, оп. 1, д. 323, л. 1.

[3] Վրացի հնագետ Է. Թաղայշվիլիի կարծիքով, Օլթիի, ինչպես նաև Արդահանի օկրուգների ընդգրկումը Կարսի մարզի մեջ արհեստական էր ու սխալ, քանի որ թե՛ աշխարհագրական, թե՛ պատմական, և թե՛ ազգագրական տեսանկյուններից այդ օկրուգները ոչ մի ընդհանուր բան չունեին Կարսի մարզի մյուս օկրուգների՝ Կարսի և Կաղզվանի հետ: Վերջիններս Է. Թաղայշվիլին պատմական և ազգագրական տեսանկյունից համարում էր բուն հայկական տարածքներ, ի տար-

(նախկին Օլթիի լիվայի Արևահայաց, Ստվերոտ, Բարդուսի (Պարտեզ) և Անձավի (Անզով) նահիեները՝ Օլթի գետի միջին հոսանքի շրջանում, Բանակի լիվայի Բանակի և Քիամխիսի (Կաղամախիի) նահիեները՝ Բանակ գետակի և նրա Բանջրուտ վտակի ավազաններում, Մամրվանի լիվայի հյուսիսային փոքր մասը), իսկ Փանազկերտը և Տայոցքարը՝ Տայոցքարի տեղամասի մեջ (Օլթի գետի Փանազկերտ և Տայոցքար վտակների ավազաններում)[1]:

Օլթիի օկրուգը հյուսիսից սահմանակից էր Բաթումի մարզի Արդվինի օկրուգի Արտանուջի տեղամասին, արևմուտքից և հարավից՝ Օսմանյան կայսրության Էրզրումի նահանգի նույնանուն գավառի Թորթումի և Բասենի գավառակներին, հարավ- արևելքից, արևելքից և հյուսիս-արևելքից՝ Կարսի մարզի Կաղզվանի, Կարսի և Արդահանի օկրուգներին:

---

բերություն «Վրաստանի անբաժանելի հատվածներ» Օլթիի ու Արդահանի, որոնց բնակչությունը միջնադարում «Կրօնիւ վրացի» էր, չնայած որ նրանք «հայի լեզուաւ խօսէին»: (տե՛ս Յակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 18): Է. Թաղայշվիլին գտնում էր, որ Ճորոխի ավազանում ընկած Օլթիի օկրուգը պիտի կցվեր Բաթումի մարզին, իսկ Կուր գետի վերնագավառն զբաղեցնող Արդահանի օկրուգը՝ որպես Ջավախքի մի մաս, Թիֆլիսի նահանգին: (տե՛ս Такайшвили Э., Археологическая экспедиция 1918 г. в южные провинции Грузии, Тб., 1952, с. 17): Է. Թաղայշվիլիի տրամաբանությամբ, անիմաստ էր Կարսի մարզի՝ որպես վարչական միավորի գոյությունն ընդհանրապես, քանի որ կարելի էր Կարսն ու Կաղզվանը միացնել Երևանի նահանգին իբրև Արաքսի ավազանում ընկած շրջաններ:

[1] Վրաստանի պատմության կենտրոնական պետական արխիվի (այսուհետև՝ ՎՊԿՊԱ) թիվ 415 ֆոնդում (Անդրկովկասի վիճակագրական կոմիտե) պահպանվում է մի անթվագիր վավերագիր Օլթիի օկրուգի վերաբերյալ, որտեղ ներկայացված է նրա վարչական բաժանումը: Այդ վավերագրի համաձայն՝ Օլթիի օկրուգը բաժանված էր 2 տեղամասի՝ Օլթիի և Տայոցքարի, սակայն ուշագրավն այն է, որ Տայոցքարի տեղամասն իր մեջ ընդգրկում էր նաև Բանակ գետակի ավազանի բնակավայրերը: Այս փաստաթուղթը, ամենայն հավանականությամբ, պետք է վերաբերեր 1878-1881 թթ. միջև ընկած ժամանակաշրջանին, քանի որ 1881 թ. վարչական փոփոխություններ տեղի ունեցան Կարսի մարզում և նախկին 6 օկրուգների փոխարեն առաջացան 4-ը (տե՛ս ЦГИАГ, ф. 415, оп. 1, д. 233, л. 1-2):

1878 թ., մինչն սահմանների վերջնական ճշգրտումը, Անդրկովկասյան վիճակագրական կոմիտեն Անդրկովկասի քաղաքացիական մասի գրասենյակի հանձնարարությամբ, հաշվառում է անցկացնում Օլթիի օկրուգում՝ պարզելու համար ինչպես բնակչության, այնպես էլ գաղթելու ցանկություն ունեցողների մոտավոր թիվը: Ստորն ներկայացնում ենք Օլթիի օկրուգի բնակչության թիվն ըստ ծխերի և անձերի՝ համաձայն Անդրկովկասի վիճակագրական կոմիտեի 1879 թ. հունվարի 1-ի հաշվառման[1].

| N | Բնակավայրի անվանումը | Ծխերի քան. | Անձե-րի քան. | N | Բնակավայրի անվանումը | Ծխերի քան. | Անձե-րի քան. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ավարես | 4 | 17 | 29 | Դադի-Կալլի աշիրեթ | 17 | 160 |
| 2 | Արրինս | 81 | 485 | 30 | Ջուչուրիս | 55 | 350 |
| 3 | Ավդոս | 20 | 135 | 31 | Ծաղկոց | 6 | 28 |
| 4 | Ագրիս | 11 | 61 | 32 | Ջուլաս | 19 | 138 |
| 5 | Ազունդիլ | 7 | 35 | 33 | Ջուլաքար | 25 | 160 |
| 6 | Ակուրտիս | 20 | 123 | 34 | Ջասզերակ | 15 | 69 |
| 7 | Ափրայքք | 14 | 76 | 35 | Ջակիմ | 46 | 218 |
| 8 | Այոս | 4 | 27 | 36 | Ջարդոնիս | 7 | 30 |
| 9 | Անձավ | 5 | 33 | 37 | Ջվարթ | 8 | 40 |
| 10 | Արսիշեն | 8 | 40 | 38 | Իչխան | 12 | 63 |
| 11 | Ասփակ | 62 | 350 | 39 | Ինիսեթ | 16 | 101 |
| 12 | Արքունիս | 30 | 120 | 40 | Իծաձոր | 15 | 94 |
| 13 | Արսենիկ | 40 | 120 | 41 | Իշխան | 40 | 251 |
| 14 | Աափեք | 8 | 57 | 42 | Քիլի | 20 | 129 |
| 15 | Հայդոս | 17 | 80 | 43 | Քարնավազ | 60 | 400 |
| 16 | Բեդմուդլի | 4 | 27 | 44 | Խարան | 15 | 80 |
| 17 | Բաղչադմակ | 6 | 43 | 45 | Կապք | 10 | 40 |
| 18 | Բեզ | 3 | 17 | 46 | Քեյզիր | 35 | 213 |
| 19 | Բարդուս | 120 | 715 | 47 | Քեչեք | 4 | 250 |
| 20 | Բարիք | 16 | 80 | 48 | Քեյվանք | 21 | 105 |
| 21 | Բերետաեի և Քետանի աշիրեթներ | 71 | 503 | 49 | Քիվ/խա/ | 3 | 22 |
| 22 | Վաղավեր | 5 | 25 | 50 | Կիզիլջալ | 80 | 300 |
| 23 | Վարդանուս | 16 | 96 | 51 | Կինեպոս | 7 | 41 |
| 24 | Վաշեյան | 6 | 35 | 52 | Կոնք | 6 | 51 |
| 25 | Գելուա | 7 | 35 | 53 | Կոնձոր | 15 | 100 |
| 26 | Գեսմանլի | 30 | 150 | 54 | Կուփք | 40 | 243 |
| 27 | Գյորաշկյան | 35 | 243 | 55 | Կոտիք | 40 | 200 |
| 28 | Դադեր | 12 | 45 | 56 | Ղշլաղ Կատրիս | 33 | 236 |

[1] Տե՛ս ЦГИАГ, ф. 415, оп. 1, д. 12, л. 20-22.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 57 | Գուրջի | 19 | 138 | 92 | Փանազկերտ | 130 | 430 |
| 58 | Քարաշուք | 6 | 30 | 93 | Սարտուն (Սարդոն) | 4 | 27 |
| 59 | Քյամիս | 20 | 90 | 94 | Սոդոմոն | 12 | 62 |
| 60 | Կյոխ | 17 | 103 | 95 | Սալաջուր | 29 | 178 |
| 61 | Քյաշր Քեփրի | 11 | 61 | 96 | Սաձոր | 25 | 150 |
| 62 | Քարագլուխ | 7 | 30 | 97 | Սաղեք | 25 | 150 |
| 63 | Սեանր | 10 | 55 | 98 | Սուղկյանս | 10 | 63 |
| 64 | Մայաքեղ | 19 | 115 | 99 | Ցրտաձոր | 4 | 28 |
| 65 | Մթնղեր | 15 | 64 | 100 | Թավաձոր | 18 | 105 |
| 66 | Մերինես | 22 | 88 | 101 | Տաճարիկ | 9 | 45 |
| 67 | Մոխոշ | 8 | 51 | 102 | Թարնիթ | 12 | 77 |
| 68 | Մուշեղ | 13 | 65 | 103 | Տաջրեք | 11 | 46 |
| 69 | Լազարվանս | 7 | 35 | 104 | Տայոցքար | 65 | 397 |
| 70 | Նիազոմ | 7 | 39 | 105 | Թամոռտ | 22 | 80 |
| 71 | Նորբերդ | 7 | 35 | 106 | Թոիրակ կալե | 20 | 131 |
| 72 | Նարիման | 135 | 722 | 107 | Թոփրակ | 31 | 187 |
| 73 | Օրթուլի և Ազրակ | 112 | 700 | 108 | Թուրքմեն աշիրեթ | 40 | 200 |
| 74 | Օրթիզ | 25 | 155 | 109 | Ուկամ | 55 | 350 |
| 75 | Օրի | 67 | 403 | 110 | Ույտ-Փանազկերտ | 80 | 300 |
| 76 | Օլոր | 110 | 400 | 111 | Ուրեք | 14 | 70 |
| 77 | Օդգիր | 26 | 155 | 112 | Ուռութ | 13 | 63 |
| 78 | Օղթաբաթ | 10 | 65 | 113 | Խեյփես | 5 | 31 |
| 79 | (անրնթեռնեյի) | 36 | 174 | 114 | Քերս | 40 | 243 |
| 80 | Օխոր | 31 | 187 | 115 | Խուվայս | 33 | 197 |
| 81 | Բաղեր | 1 | 3 | 116 | Խոհակերտ | 23 | 141 |
| 82 | Բանակ | 40 | 200 | 117 | Չայջուր | 23 | 148 |
| 83 | Փերիքիս-խոսոր | 40 | 250 | 118 | Չարձոր | 15 | 92 |
| 84 | Փակյախ | 9 | 63 | 119 | Ջերմուկ | 20 | 120 |
| 85 | Փառաձոր | 35 | 150 | 120 | Էզնաք | 4 | 20 |
| 86 | Բանջրուա | 13 | 64 | 121 | Էտոց | 10 | 55 |
| 87 | Բերդուս | 50 | 250 | 122 | Էգաձոր | 6 | 21 |
| 88 | Փոսիք | 12 | 62 | 123 | Էրուկ | 13 | 81 |
| 89 | Բյդանոց | 64 | 441 | 124 | Էրուկ Անձայի | 22 | 135 |
| 90 | Բերդվանք | 18 | 182 | 125 | Էսիձոր | 6 | 40 |
| 91 | Բյուր | 17 | 103 | *Ընդամենը Օլթիի օկրուգում* | | 3288 | 18026 |

Օլթի քաղաքը 1878 թ. ռուսներին անցնելու ժամանակ 290 տուն (մոտ 2000 մարդ) բնակիչ ուներ[1]: Այսինքն, Օլթիի օկրուգում, ներառյալ Օլթի քաղաքը, մինչև մահմեդականների արտագաղթը բնակվում էր շուրջ 20 հազար մարդ:

[1] Տե՛ս Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, էջ 181:

Անդրկովկասի վիճակագրական կոմիտեն Անդրկովկասի քաղաքացիական մասի գրասենյակի պետ Վ. Շեպելևի հանձնարարությամբ ուսումնասիրում է նաև ամբողջ Անդրկովկասի, այդ թվում Օլթիի օկրուգի հայաբնակ բնակավայրերը, այստեղ առկա եկեղեցիներն ու վանքերը, առաքելական հայության թիվը, հոգևորականների թիվը և այլն: Այդ տեղեկությունները նախատեսվում էր ուղարկել կայսրության օտարադավանների հոգևոր գործերի վարչություն, որն իր հերթին դրանք զետեղելու էր հետագայում լույս տեսնելիք վիճակագրական ժողովածուի մեջ: Անդրկովկասյան վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ Օլթիի ս. Գևորգ և ս. Հովհաննես եկեղեցիների հայազգի ծխականների թիվը հասնում էր 458-ի, Ջուջուրիս գյուղի ս. Հակոբ եկեղեցունը՝ 245-ի, Բարդուս գյուղի ս. Հովհաննես եկեղեցունը՝ 210-ի: Քյամիս, Ագրակ, Ջարդոնիս, Թամռոտ և Էրուկ գյուղերում, ճիշտ է, գործող եկեղեցիներ չկային, սակայն այս բնակավայրերը ևս հայաբնակ էին*: Այսպես, Քյամիսն ուներ 57, Ագրակը՝ 102, Ջարդոնիսը՝ 88, Թամռոտը՝ 183 և Էլտւկը՝ 71 հայ բնակիչ[1]: Հետագա տարիներին Օլթի քաղաքում և օկրուգում հաստատվում են հայ վերաբնակիչներ Արտանուշից, Արդվինից, Ախալցխայից, Ախալ-

---

* Մեծ ցանկության դեպքում անգամ Օլթիի օկրուգում անհնար է հանդիպել վրացական տեղանունների կամ բնակավայրերի: Հակառակ դրան, ամենուր հանդիպում ենք գավառի հայկականության անհերքելի ապացույցների, որոնցից ամենանշանավորը VII դարի կեսերին կաթողիկոս Ներսես Գ Տայեցու կողմից կառուցված Բանակի հոչակավոր տաճարն է: Օլթիի օկրուգի «վրացական» անցյալի վերաբերյալ ուշագրավ վկայությունների ենք հանդիպում ՎՊԿՊԱ թիվ 1438 ֆոնդի (Էսաձե եղբայրների անձնական ֆոնդ) 116-րդ վավերագրում: Այսպես, Քիամխիս գյուղից բացվում է «վրացական» Սոդոմոն-կալա բերդի տեսարանը, Ավդոս գյուղից մեկ վերստի վրա է Ջերմուկ տաք հանքային ջրի աղբյուրը և Օլոր գյուղից 15 վերստի վրա են «վրացական Վանք վանական համալիրի» ավերակները (ընդգծումները մերն են – Ա. Ա.): Տե՛ս ЦГИАГ, ф. 1438, оп. 1, д. 116, л. 5-7.

[1] Տե՛ս ЦГИАГ, ф. 415, оп. 1, д. 21, л. 30: Թամռոտ գյուղի 183 բնակիչներն արևմտահայ վերաբնակիչներ էին: Թվարկված հայաբնակ բնակավայրերում ծառայություն էին կատարում հոգևոր 7 սպասավոր:

քալաքից, Ալեքսանդրապոլից, որոնք զբաղված էին գլխավորապես արհեստներով և առևտրով[1]:

1879 թ., համաձայն Կ.Պոլսի 1879 թ. փետրվարի 8-ի համաձայնագրի 27-րդ հոդվածի, սկսվում է մահմեդականների զանգվածային գաղթն Օսմանյան կայսրության տարածք: Այդ համաձայնագրով, եթե Ռուսաստանին զիջած տարածքների բնակչությունը ցանկություն հայտներ տեղափոխվել կայսրության տարածք, ապա եռամյա ժամկետում կարող էր իրականացնել այն՝ վաճառելով անշարժ գույքը:

Համաձայնագրի կնքումից հետո Օլթիի մահմեդական բնակչության մի մասը ցանկություն հայտնեց անցնել սահմանը: Ա. Պողոսյանի կարծիքով՝ գաղթելու ցանկության հիմնական պատճառն այն չէր, որ մահմեդականները վախենում էին «ռուսների համակրանքը վայելող» հայերից, ինչպես նրանք էին շատ հաճախ պնդում, այլ այն, որ մահմեդականները զրկվում էին իրենց արտոնյալ կարգավիճակից, որից նրանք լայնորեն օգտվում էին թուրքական տիրապետության ժամանակահատվածում[2]:

Ռուսական կառավարությունը խրախուսում էր մահմեդականների արտագաղթը: Մինչև 1879 թ. հոկտեմբերի 1-ը Օլթիի օկրուգից Թուրքիա տեղափոխվեց 117 ընտանիք կամ 1006 մարդ[3]: Արտագաղթը շարունակվեց նաև 1880-1881 թթ.: Ընդհանուր առմամբ 1879-1881 թթ. Օլթիի օկրուգից արտագաղթեց 1063 ընտանիք կամ 10180 մարդ[4]: Միաժամանակ ցարական կառավարությունն արգելեց արևմտահայության զանգվածային վերաբնակեցումը Կարսի մարզ և Ռուսաստանին ենթակա այլ տարածքներ: Դա մեծ անհանգստություններ առաջացրեց արևմտահայության շրջանում, քանի որ այս անգամ ևս հայության՝ ռուսներին հարելը զանգվածային բնույթ էր ունեցել:

---

[1] Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 181:

[2] Տե՛ս Погосян А.М., նշվ. աշխ., էջ 120-121:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 123:

[4] Տե՛ս Бакрадзе Д., Историко-этнографический облик Карсской области, б. м. и г., с. 6:

Ռուսական կողմի նման գործելաոճը պայմանավորված էր Կարսի մարզում ռուսներին վերաբնակեցնելու և այնտեղ ռուս էթնիկ խմբերի թվային գերակշռություն ստեղծելու ցանկությամբ, որը ըստ կառավարող շրջանակների, ավելի կուժեղացներ ինքնակալության դիրքերը տարածաշրջանում[1]: Կովկասյան բանակի հրամանատար իշխան Սվյատոպոլկ-Միրսկին 1879 թ. փետրվարի 4-ի իր «ամենահպատակ զեկուցագրում» գրում էր. «... մեր գլխավոր նպատակը պիտի լինի կարելվույն չափ մեծ թվով ռուսներ բնակեցնել Կարսի մարզում: Հակառակ դեպքում, հարկադրված կլինենք ձեռք քաշել Անդրկովկասում ռուս բնակչություն ստեղծելու մտքից: ... Այժմ արդեն չի կարելի չցավել, որ 1829 թ. Ախալքալաքի ու Ալեքսանդրապոլի գավառների հարուստ վայրերը ռուսների փոխարեն հայերով ու հույներով բնակեցվեցին: Այդպիսի սխալի կրկնությունը, համարձակվում եմ ասել, աններելի կլինի»[2]: Այս և նմանատիպ բազմաթիվ զեկուցագրերն առիթ տվեցին ռուսական իշխանություններին ենթադրելու, որ «Կովկասը միայն այն ժամանակ կյանք կստանա, երբ նրա ազատ տարածությունները ռուս բնակչությամբ լցվեն»[3]:

Չնայած ռուսական կառավարող վերնախավի ձեռնարկած միջոցառումներին, այսուհանդերձ արևմտահայերի մի զգալի թիվ կարողացավ վերաբնակվել Կարսի մարզում: Փաստի առաջ կանգնելով՝ ցարական կառավարությունը ստիպված էր որոշակի օժանդակություն ցուցաբերել վերաբնակիչներին, որը, սակայն, նրանց թշվառ վիճակը չբարելավեց և ըստ էության, հայ վերաբնակիչները Կարսի մարզի և մասնավորապես Օլթիի օկրուգի բնակչության ամենաանապահով մասն էին[4]: Ավելին, կառավարությունը հետագայում ավելի խստացրեց իր վերաբերմունքը

---

[1] Տե՛ս Погосян А.М., նշվ. աշխ., էջ 124:

[2] Հայրապետյան Ա., Ռուս վերաբնակներն Ալեքսանդրապոլի գավառում,- «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը», միջազգային VIII գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 22-24 հոկտեմբերի, 2010, էջ 91:

[3] Նույն տեղում, էջ 92:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 125:

հայ վերաբնակիչների նկատմամբ: 1900 թ. Կարսի մարզի ղեկավարը վերադասից թույլտվություն էր խնդրում, որպեսզի կարողանա մարզի տարածքում հաստատված արևմտահայությանը վտարել ռուսական կայսրության սահմաններից:[1] Իբրև պատճառ՝ նա ներկայացնում էր մարզի հայության ծանր վիճակը, որն էլ ավելի էր ծանրացել, քանի որ նրանք ստիպված էին հոգ տանել նաև արևմտահայ հայրենակիցների մասին: Նրա պնդմամբ, միայն 1899 թ., ռուս-թուրքական սահմանն ապօրինաբար հատելով, Կարսի մարզում հաստատվել էին 80 արևմտահայեր, իսկ ընդհանուր առմամբ, մարզի տարածքում այդպիսիք 14400 հոգի էին, որոնք, չնայած սահմանների խիստ հսկողությանը, փոքր խմբերով հատել էին պետական սահմանը[2]:

Մահմեդականների արտագաղթից և նրանց տեղում ռուսների հայտնվելուց հետո, այսուհանդերձ, Օլթիի օկրուգում մահմեդականները շարունակում էին մեծամասնություն կազմել: 1880-ական թվականներին Տայոցքարի տեղամասում նրանք կազմում էին բնակչության շուրջ 89 %-ը, իսկ Օլթիի տեղամասում՝ 43,1%-ը[3]: Հետագա տարիներին Օլթիի օկրուգում հայ բնակչության թիվը գնալով ավելանում էր, որը պայմանավորված էր ինչպես բնական աճով, այնպես էլ մեխանիկական շարժով: 1897 թ. համառուսաստանյան մարդահամարի համաձայն Օլթիի օկրուգի բնակչությանը կազմում էր 31519 մարդ[4]: Հայությունը մեծամասնություն էր կազմում միայն Օլթի քաղաքում: Քաղաքի 2373 բնակչից հայ էին 1056-ը (44,5 %), ռուս՝ 709-ը (29,87 %), թուրք՝ 357-ը (15,04 %), քուրդ՝ 7-ը (0,29 %), հույն՝ 101-ը (4,25 %), լեհ՝ 31-ը (1,3 %), այլ ազգերի ներկայացուցիչներ՝ 112-ը (4,72 %): Օլթիի օկրուգի կտրվածքով պատկերը հետևյալն էր. օկրուգի

---

[1] Տե՛ս ЦГИАГ, ф. 1438, оп. 1, д. 734, л. 1:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 2:

[3] Տե՛ս Погосян А.М., նշվ. աշխ., էջ 126:

[4] Տե՛ս Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., LXIV, Карсская область, тетрадь II, под редакцией Н. А. Тройницкаго, С.-Петербург, 1904, էջ 1: Համտ. ЦГИАГ, ф. 1438, оп. 1, д. 323, л. 1:

31519 բնակչից թուրք էր 19719-ը (62,56%), քուրդ՝ 3505-ը (11,12 %), հայ՝ 3125-ը (9,9 %), հույն՝ 2704-ը (8,57 %), ռուս՝ 1038-ը (3,29 %), թուրքմեն՝ 999-ը (3,17 %), լեհ՝ 48-ը (0,15 %), այլ ազգերի ներկայացուցիչներ՝ 381-ը (1,2 %)[1]: Հայերը հիմնականում բնակվում էին Ջուջուրիս, Ջարդոնիս, Կուբաթ, Բարդուս, Ազրակ, Օլոր, Թամռոա, Ջերմուկ, Բանջրուտ և Փոսիկ գյուղերում:

Օլթիի օկրուգի էթնոժողովրդագրական պատկերի փոփոխության գործում, բացի մեխանիկական շարժից և բնական աճից, ոյոշակի դեր ունեին նաև էթնոկրոնական գործընթացները, որոնց շարքում կարելի է առանձնացնել 1880 թ. Օլթիի օկրուգում տեղի ունեցած ուշագրավ մի իրադարձություն: Այսպես, 1880 թ. Օլթիի և օկրուգի մի շարք գյուղերից մահմեդականներ են գալիս Կարսի առաջնորդ Աղվանյան եպիսկոպոսի մոտ՝ խնդրելով, որ իրենց մկրտեն և ընդունեն հայոց եկեղեցու գիրկը: Խնդրատուները, որ իրենց հետ տարել էին պապենավանդ մագաղաթներ, շարականներ, ավետարաններ, սկիհ, մասնատուփ, մեռոնի ամաններ, ասում են. «Մեր պապերը մեզ ավանդ էին թողել, որ երբ լույսը գայ, մենք բերենք ձեզ յանձնենք այս աւանդները և խնդրենք, որ մեզ նորից ընդունէք ձեր մեջ, որտեղից մեզ հեռացրել էին բռնաւորները»[2]: Խնդրագիրը կաթողիկոսին ներկայացվեց, որն էլ իր հերթին այն ներկայացրեց փոխարքային, որպեսզի թույլատրեն ժողովրդի ցանկությունն ի կատար ածել: 1883 թ. խնդիրն ուղղվում է Կարսի նահանգապետին: Վերջինիս օգնական գնդապետ Պետանդերը, պարտավորված լինելով այդ մասին զեկուցելու պետական խորհրդին, հայ գրող, պատմաբան և աշխարհագրագետ Ատրպետի հետ (վերջինս այդ տարիներին Հայոց պատմություն էր դասավանդում Կարսում) մեկնում է Օլթիի օկրուգի գյուղեր՝ խնդրին տեղում ծանոթանալու և լուծում տալու նպատակով[3]:

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Ատրպետ, նշվ. աշխ., էջ 11:

[3] Նույն տեղում:

Թե ինչպես շարունակվեց այս գործընթացը, արդյո՞ք բավարարվեց խնդրատուների պահանջը, թե ոչ, հայտնի չէ: Մեր կարծիքով, ցարական կառավարությունը չցանկանալով Օլթիի օկրուգում հայկական էթնիկական մեծամասնություն ունենալ, չպիտի աջակցեր բռնի մահմեդականացվածների՝ իրենց առաքելական քրիստոնյա ակունքներին վերադառնալու գործընթացին: Դա միանշանակ կհակասեր հայ ժողովրդի և Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ ինքնակալության վարած քաղաքականությանը, ուստի և Օլթիի օկրուգի մահմեդականների հայացման գործում ռուս կառավարող վերնախավի բացասական դիրքորոշումը, նրանց ոչ հայամետ կեցվածքի պարագայում, կլիներ ավելի տրամաբանական:

Այսպիսով, չնայած ռուսական իշխանությունների վարած էթնոժողովրդագրական ոչ հայանպաստ քաղաքականությանը և Օլթիի օկրուգից Թուրքիա արտագաղթած մահմեդականների փոխարեն մեծամասամբ ռուսների հաստատմանը՝ այսուհանդերձ, Օլթիի օկրուգում XIX դ. վերջին հաստատված հայությունը տեղաբնիկ հայերի հետ միասին մեղմում էր թուրքական տիրապետության շրջանում ձևավորված էթնոկրոնական բացասական դիմագիծը:

АРКАДИЙ АКОПОВ
ШЦАИ НАН РА

# ЭТНО-ДЕМОГРАФИЧЕСКАЯ КАРТИНА ОЛТИНСКОГО ОКРУГА В 1878-1897 ГГ.

## РЕЗЮМЕ

Согласно Берлинскому договору 1878 г. значительная часть древнеармянской территории Тайка отошла к России. На территории бывших османских санджаков Олти, Тайоцкар, Банак и Мамрван был образован Олтинский округ Карсской области – с двумя участками – Олти и Тайоцкар. В 1878-1881 гг. около 10 тысяч мусульман из Олтинского округа переселились на территории Османской империи. Одновременно царское правительство запретило переселение западных армян в Карсскую область и пошло на заселение русскими пограничных с Османской империей территорий. Несмотря на искусственные преграды, небольшое количество западных армян смогло пересечь русско-турецкую границу и основаться в Олтинском округе.

ARKADI AKOPOV
SCAR NAS RA

# THE ETHNO-DEMOGRAPHIC PICTURE OF OLTI DISTRICT IN 1878-1897

## SUMMARY

According to the Berlin contract of 1878 the considerable part of the ancient Armenian territory of Tayk passed to Russia. In the territories of former Turkish sanjaks - Olti, Tajotskar, Banak and Mamrvan have been formed the district (okroug) of Olti – the part of the region of Kars – with two sections – Olti and Tajotskar. In 1878-1881 about 10 thousand Moslems from Olti district have moved in territory of Ottoman empire. The imperial government banned the relocation of the Western Armenians in Kars region and went to the Russian settlement on the territory bordering with the Ottoman Empire with Turkey. Despite of the barriers, a small number of Western Armenians managed to cross the Russian-Turkish border and settled in Olti district.

ՆԱՐԻՆԵ ԵՐԱՆՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# 1894 - 1896 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ «ԱԼ-ՄՈՒՇԻՐ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ

XIX դարավերջին Եգիպտոսը, որը հասարակական-քաղաքական մտքի վերաձնավորման, ազգային ինքնագիտակցության վերածնունդ էր ապրում, և որտեղ առկա էր ազատ մամուլի զարգացմանը նպաստող համեմատաբար բարենպաստ միջավայր, ժամանակի արաբերեն, ինչպես նաև օտարալեզու որոշ առաջադիմական պարբերական հրատարակությունների կենտրոնի էր վերածվել[1]: 1882 թ. Եգիպտոսում հաստատված Մեծ Բրիտանիան, ձգտելով իր դիրքերն ամրապնդել այնտեղ, աջակցում էր հակաթուրքական տարրերին, ինչն արաբ մտավորականներին և ազգայնական գաղափարներին հետամուտ գործիչներին թուրքական բռնակալությունն ու հետամնացությանը քննադատելու հնարավորություն էր ընձեռում: Անգլիական հյուպատոսներն ամեն կերպ խրախուսում էին բարենորոգչական նախաձեռնությունները՝ գերադասելով եգիպտական մտավորականությանն ու երիտասարդությանը զբաղված տեսնել մշակութային, կրոնական, սոցիալական բարենորոգումների խնդիրներով՝ բրիտանական գաղութարարության դեմ պայքարելու փոխարեն: Բացի այդ, երկրի իրական իշխանությունը գաղութարարներից վերցնելու եգիպտական խդիվի[2] վարձերը պայմաններ էին ստեղծել քննադատելու նաև բրիտանացիների ներկայությունը: Այս ամենը պարարտ հող էր նախապատրաստել լրագրության զարգացման համար, որն էլ պետք է դառնար մտավորականության հիմնական

[1] Տե՛ս Ami Ayalon, The press in The Arab Middle East, New York, 1995, էջ 51-62:

[2] Եգիպտոսի կառավարչի տիտղոս: Այն առաջինը Իսմայիլ փաշային շնորհվել է 1867 թ. օսմանյան սուլթանի հրապարակած ֆերմանով և գործածության մեջ մնացել մինչև 1914 թ. (տե՛ս The Encyclopaedia of islam, vol. V., Leiden, E.J. Brill„ 1986, p. 4 ):

ուղղորդողը՝ միաժամանակ մեծ դերակատարում ունենալով արաբական ազգային ինքնագիտակցության ձևավորման և զարգացման գործում[1]:

Օսմանյան կայսրության տարածքում հասարակական շարժումների ընդհանուր ակտիվացմանը և երիտթուրքական կազմակերպությունների վերաձևավորմանը զուգընթաց՝ արաբ վտարանդի ընդդիմադիրների հրատարակչական գործունեությունը Եգիպտոսում ևս նկատելիորեն աշխուժանում է[2]: Ժնևի, Լոնդոնի, Փարիզի կողքին Կահիրեն ևս դառնում է ընդդիմադիր երիտթուրքերի ազատ պարբերական հրատարակությունների հերթական հանգրվան է դառնում[3]:

Արաբ մտավորականները մեծ ներդրում ունեին երիտթուրքական պարբերականների հրատարակման, ինչպես նաև դրանց գլխավոր կազմակերպության՝ «Իթթիհադ վե Թերաքքը»-ի մամուլի հիմնադրման գործում: «Երիտասարդ Թուրքիայի» հայտնի գաղափարախոս Ահմադ Ռիզայի հետևորդներից էր Խալիլ Ղանեմը (բարենորոգումների ակտիվ ջատագով, Բեյրութի նահանգի ներկայացուցիչը օսմանյան խորհրդարանում և դրա առաջին նախագահը): Վերջինների ջանքերով 1895 թ. Փարիզում սկսեց հրատարակվել երիթուրքական շարժման առաջին պաշտոնական պարբերականը՝ «Մեշվերեթը» (Խորհրդակցություն)[4],

---

[1] Տես Левин З.И., Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, М., 1972, էջ 69-71:

[2] Օսմանյան խորհրդարանի լուծարումից հետո ընդդիմադիրների գործունեությունը սահմանափակվում էր միայն վտարանդի մամուլի միջոցով իրականացվող քարոզչությամբ: Փարիզում, Ժնևում, Նեապոլում դեռևս Աբդուլ Համիդի գահակալության առաջին տարիներից հրատարակվում էին ընդդիմադիր պարբերականներ, որոնց շարքում կարևոր տեղ էին գրավում նաև արաբերեն պարբերականները (տե՛ս Котлов Л.Н., Становление национально-освободительного движения на Арабском Востоке, М., 1975, с. 256-274).

[3] Այս մասին տե՛ս Петросян Ю.А., Младотурецкое движение, М., 1971, էջ 164 - 216, Котлов Л.Н., նշվ. աշխ. էջ 256-274:

[4] Ահմադ Ռիզան պարբերականի էջերում սուր ելույթներով հանդես է գալիս հայկական կոտորածների դեմ, միաժամանակ նա և Խալիլ Ղանեմը վերստին կյանքի են կոչում օսմանական միասնական հայրենիքի հայեցակարգը՝ դեմ

իսկ 1896 թ. Կահիրեում սկսում է վերստին լույս տեսնել շարժման ամենակարևոր հրատարակություններից մեկը՝ «Միզանը» (Կշեռք)՝ Միզանջի Մուրադի խմբագրությամբ:

«Ալ-Մուշիր» (խորհրդական) երկլեզվյա (արաբերեն և անգլերեն) քաղաքական, գրական, քննադատական շաբաթաթերթը[1] սկսում է լույս տեսնել 1894 թ., նախ՝ Ալեքսանդրիայում, ապա՝ Կահիրեում: Հիմնադիր-խմբագիրը բեյրութցի վտարանդի Սելիմ Սարգիսն էր[2]: Վերջինս երկար դեգերումներից հետո, խուսափելով Կ. Պոլիս մեկնելուց, որն անվանում է «մտքերի դամբարան, ուղեղների գերեզման, որտեղ ոչ մեկն ականջալուր չէ իրեն»[3], ի վերջո հաստատվել էր Եգիպտոսում:

«Ալ-Մուշիրի» ուղղվածությունը և հրատարակչի դիրքորոշումը (1890-ականներին Կահիրեում լույս տեսնող աբդուլհամիդյան վարչակարգի դեմ կտրուկ արտահայտվող մյուս պարբերականների օրինակով), ևս կարելի է բնորոշել որպես իշխող վարչակարգի նկատմամբ ծայրահեղ թշնամական: Պարբերականն արձագանքում էր երիտթուրքերի քարոզչությանը և գաղափարախոսության հիմնական հայեցակետերին:

Օսմանականության ուղղվածությունը, որը նոր օսմանների անմիջական ժառանգորդը հանդիսացող երիտթուրքերի գաղափարախոսության հիմնաքարերից էր և բնորոշ էր երիտթուրքական պարբերականների մեծ մասին, որոշ դրսևորումներ է գտել նաև «Ալ-Մուշիրում»՝ ի դեմս թերթի խմբագիր Սելիմ Սարգիսի հոդվածների (թերթում շարունակաբար հրատարակված է նաև

---

արտահայտվելով կայսրության տարածքում հայերին հատուկ կարգավիճակ շնորհելու գաղափարին, ինչպես նաև մեծ տերությունների կողմից կայսրության ներքին գործերին միջամտելուն (տե՛ս Желтяков А.Д., Печать в общественно-политической и культурной жизни Турции, М., 1972, с. 249-254):

[1] Պարբերականի ամբողջական արաբերեն անվանումն է՝ "المشير", جريدة سياسية انتقادية ادبية تصدر يوم الخميس من كل اسبوع باللغتين العربية والانكليزية

[2] Տե՛ս (Ֆիլիպ Դի Տարազի, Արաբական մամուլի պատմություն, հ. 2, Բեյրութ, 1913, էջ 29): فيكونت فيليب دى طرازي , تاريخ الصحافة العربية, الجزء الثاني, بيروت, 1913, ص.29.

[3] Այսպես է արտահայտվում հեղինակը թերթում հրատարակած իր ինքնակենսագրական հոդվածում, որը վերնագրված է «1894-ի հուլիսի 10-ից մինչև 1895-ի հուլիսի 10-ը՝ ինչպես այսօր» (տե՛ս «Ալ-Մուշիր», Կահիրե, 10 հուլիսի 1895):

նրա «Միր ուլ-Մամլաքա» («Կայսրության գաղտնիքը») վեպը), Խալիլ Ղանեմի, Ամին Արսլանի բողոք-նամակների, որոնք, լինելով օսմանականներ, դեմ էին ազգային-ազատագրական շարժումներին[1]: Նրանք միևնույն ժամանակ հանդես էին գալիս կայսրության տարածքում արաբների և իսլամի դերն ընդգծող նամակներով՝ սուլթանին հիշեցնելով նրա ոչ բարեհաճ վերաբերմունքը կայսրության մուսուլման բնակչության, հատկապես մեծամասնություն ներկայացնող արաբների նկատմամբ:

Հարկ է նշել, որ եգիպտական ազգայնական շարժումն իր ձևավորման սկզբնական շրջանում զարգանում էր օսմանիզմի և իսլամիզմի շրջանակներում, որը հնարավորություն էր ընձեռում պայքարել գաղութարարների դեմ ու պահանջել նրանցից՝ կատարել տրված խոստումը՝ լքել Եգիպտոսը[2]: Սակայն շատ շուտով եգիպտոսյան ազգայնականությունը, որպես տեղական հայեցակարգ, սկսում է մերժել նշված տեսությունները՝ ձգտելով դեպի աշխարհիկանացում, որի արդյունքում եգիպտոսցիների ազգային ընդհանրության գաղափարը սկսում է գերիշխող դառնալ նրանց կրոնական միասնության գաղափարի նկատմամբ: Եգիպտոսյան հասարակական մտքի բազմաշերտ խճանկարի համատեքստում լիովին բացատրելի է «Ալ-Մուշիրի» հնգամյա գոյության (1894-1899 թթ.) փաստը:

---

[1] Ընդհուպ երիտթուրքական հեղաշրջումը, արաբական ազգայնական շարժումն Օսմանյան կայսրության սահմաններում ինքնավարությունից ավելին չէր պահանջում: Կրոնական միասնության գաղափարը հակադրվում էր ազգային միասնության գաղափարին և լրջորեն թուլացնում էր արաբների ազգային-ազատագրական պայքարի սրությունը: Այդ իսկ պատճառով Օսմանյան կայսրության ասիական մասերում թուրքական բռնակալության դեմ պայքարը սահմանափակվում էր վարչակարգը քննադատելով, երբեմն՝ թուրքական սուլթանի՝ խալիֆի տիտղոսը կրելու իրավունքը վիճարկելով: Իսկ Եգիպտոսում հավատակիցների համախմբման պանիսլամիստական գաղափարը, անկախ դավանական կամ ցեղային պատկանելությունից, համարվում էր գաղութարարների դեմ պայքարում ինքնապաշտպանական հզոր միջոց (տես՝ Котлов Л.Н., նշվ. աշխ., էջ 104-105):

[2] Луцкий В.Б., Новая история арабских стран, М., 1965, с. 201-203.

Ի տարբերություն 1894-1896 թթ. հայկական կոտորածների վերաբերյալ օսմանյան մամուլում գրաքննության ճնշման տակ տպագրվող ապատեղեկատվության[1], որտեղ դրանք ներկայացվում էին որպես աննշան միջադեպեր, «Ալ-Մուշիրի» էջերում արտացոլված է Արևմտահայաստանի[2] իրական վիճակը:

Պարբերականի լրատվությունը գլխավորապես հիմնվում էր սեփական թղթակիցների, արաբ և օտարազգի բազմաթիվ հեղինակավոր անձանց, ճանապարհորդների նամակների, բրիտանական ազատ և պահպանողական հայտնի պարբերականների հաղորդած տեղեկությունների հիման վրա: Ընդ որում, Թուրքիայի հայկական նահանգներում տիրող իրավիճակը լուսաբանելիս, խմբագրի կողմից դրական է գնահատված այն, որ պահպանողական «Թայմսը», «Դեյլի թելեգրաֆը», ինչպես նաև «Ռոյթեր» լրատվական գործակալությունը համամիտ են ազատ «Դեյլի նյուզի» հետ:

Հետաքրքիր է, որ «Ալ-Մուշիրի» խմբագիրը բազմաթիվ հոդվածներում պարբերաբար դիմում է ընթերցողներին՝ հաստատելով, որ հայկական կոտորածների վերաբերյալ թերթում տպագրված լուրերը համապատասխանում են իրականությանը: Նաև խոստանում է այն լույս ընծայել շաբաթը երկու անգամ, որպեսզի հնարավորություն ունենա հայերին վերաբերող հնարավորինս շատ տեղեկություններ ներկայացնել իր ընթերցողին. հետագա համարներն արդեն լույս են տեսնում եռօրյա պարբերականությամբ:

Հայերին առնչվող իրադարձությունները լուսաբանված են պարբերականի գրեթե բոլոր համարներում՝ «Հայաստան», «Հայկական ճգնաժամ», «Իրավիճակը Հայաստանում», «Հայկական հարց» խորագրերով հոդվածաշարերում և բազմաթիվ այլ հոդվածներում: Հիմնականում արտացոլված են Սասունի, Ուրֆայի,

---

[1] Խառատյան Ա.Ա., Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը, Ե., 1984, էջ 5-15:

[2] Պարբերականում Արևմտյան Հայաստանը հիշատակվում է «Արմինիա» կամ «Թուրքական Արմինիա» անվանումներով:

Կ.Պոլսի կոտորածները, Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, Հայկական հարցը, եվրոպական դիվանագիտության դիրքորոշումը Օսմանյան կայսրության նկատմամբ:

Ակնհայտ է պարբերականի կողմից Հայկական հարցի և կոտորածների խնդրում բրիտանական դիվանագիտությանը տրվող քննադատական գնահատականը: Իրագործված կոտորածները հաստատող առաջին վստահելի աղբյուրը թերթը համարում է բրիտանական «Դեյլի թելեգրաֆ» պարբերականին Մուշի թղթակցի կողմից ուղարկված «Հավաստի տեղեկություններ Հայաստանի մասին» խորագրով զեկուցագիրը, որը նա մեծ դժվարությամբ էր կայողացել ուղարկել Կարսի հեռագրային միջոցներով: Հեղինակն այն սկսում է հետևյալ տողերով. «Ուղարկում եմ իմ առաջին զեկուցագիրը, չնայած թուրքերի կողմից եղած մեծ դիմադրությանը: Նրանք ամեն ինչ անում էին՝ խոչընդոտելու իրականացվող քննությանը և թաքցնելու ճշմարտությունը՝ նախքան եվրոպական ներկայացուցիչների հաձնաժողովը կժամաներ Սասուն: Կառավարությունն ու հատկապես Զեքի փաշան ջանքեր էին գործադրում թաքցնելու սարսափելի կոտորածի հետքերը, որը ես պետք է նկարագրեմ ձեզ, և որը ժխտել է Զեքի փաշան: Հայերին հարկադրում էին վերադառնալ իրենց ավերված բնակավայրերը, որպեսզի դրանք վերականգնեն: Թուրք զինվորներին նույնիսկ հրամայվեց նրանց օգնել Գելիեգուզան, Սեմալ և Շենիկ գյուղերը վերանորոգելու հարցում, այդ ժամանակ, զինվորները փորձեցին դատարկել գյուղապետի տան հետևի փոսը, որը լի էր դիակներով և մարմնի կտրատված մասերով...»[1]: Հաջորդ հատվածում պարզ է դառնում, թե դա ինչ փոս էր. «...ներկայացուցիչները գիշերում են Քարաքույրու[2] գյուղում: Այնտեղ

[1] «Ալ-Մուշիր», 14 մարտի 1895:

[2] Ակներևաբար խոսքը Սասունի Քորախոյ գյուղի մասին է, որի մասին հիշատակված է «Մուրճ» պարբերականում տպագրված «Ցուցակ Սասունի աւերւած գիւղերի 1894 թ. (արժանահաւատ աղբիւրից)» հոդվածում (տես «Մուրճ», 1895, թիվ 8, էջ 1554-1555):

Գրգոյի[1] մեծ գերդաստանից, որն ուներ 61 անդամ, մնացել էին միայն 9 հոգի, մնացածը սպանվել էին Գելիեգուզանում, որտեղ գյուղապետի տան մոտ հայտնաբերված հսկայական փոսի մեջ զինվորները հայտնաբերել էին 360 կանանց, երեխաների և տղամարդկանց կտրատված վերջույթներն ու դիակները... Գրգոյի հարազատները պատմեցին, որ երբ հրաման արձակվեց հայերին սրի քաշել, նրանք փախան դեպի Գելիեգուզանի մոտ գտնվող Անդոկ լեռը, թաքնվեցին այնտեղի քարանձավներում և սկսեցին պաշտպանվել հին հրացաններով, իսկ հետո եկան զինվորներն ու հայտնեցին, որ սուլթանական կառավարությունը կպաշտպանի ինքնակամ զենքերը հանձնողներին ու թուրքական բանակում ապաստանողներին: Համաձայնեց հայ քահանան՝ 360 հայերի հետ: Թուրք սպան հրամայեց նրանց հաց և ջուր տալ, սակայն գիշերը նրանց հեռացրին բանակատեղիից, բոլորին սպանեցին, դիակներն ու մարմնի կտրատված մասերը նետեցին փոսը...»[2]:

Ողջ մնացած հայերից մի քանիսը մեծ դժվարություններով են կարողանում տեսնել ներկայացուցիչներին: Հեղինակի խոսքերով՝ լիազորված ներկայացուցիչներին վկայություն տալու նպատակով եկածներին սպասվող խոչընդոտներն ու պատիժներն անտանելի և անօրինակ դաժան էին: Նրանց նստավայրը շրջափակված էր զինվորների շղթայով, որը փակել էր հանձնաժողովին մոտենալու բոլոր հնարավոր ուղիները: Փրկված սասունցիների հետ որպես հանցագործների էին վերաբերվում, իսկ նրանց ապաստան տվող հայերին ճակատագիրը բանտ էր առաջնորդում:

Ականատես փրկվածները պատմում էին սարսափազդու մանրամասներ՝ Գելիեգուզան, Սեմալ և Շենիկ գյուղերի կոտորածների մասին: Նրանք իրենց բողոքում հաստատում էին, որ ոչ պակաս քան 263 ընտանիք, կամ 2500 մարդ Խնուսից փախել են

---

[1] Շենիկի տանուտեր Գրգո (Գրիգոր Մոսեսյան):

[2] «Ալ-Մուշիր», 14 մարտի 1895:

Կովկաս՝ խուսափելով բռնություններից[1]: Այնուհետև զեկուցագրի հեղինակը ներկայացնում է մի քանի հայերի վկայություններ, որոնք լսելուց հետո «...հանձնախմբի անդամները զրի էին առնում, սակայն ոչինչ լիազորված չէին կատարելու»[2]:

Պարբերականը բազմիցս անդրադառնում է այն փաստին, որ թեն Օսմանյան կայսրության հայկական նահանգներում քննություն է իրականացնում եվրոպական ներկայացուցիչների հանձնաժողովը, պետք չէ հավատ ընծայել դրա ներկայացնելիք արդյունքներին, քանի որ «...կենտրոնները թուրքերի հսկողության տակ են, նրանց թույլ են տալիս տեսնել ու խոսել միայն այն բաների մասին, որոնց հետ համամիտ է Թուրքիան»[3]: Բացասաբար է ներկայացվում օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջիկների մուտքը երկրի խորքերը՝ հատկապես հայկական վիլայեթներ սուլթանի կողմից արգելելը՝ մեջբերելով «Թայմսի» թղթակցի դժգոհությունը. «Ցավոք, մեր լրագրողների բոլոր ջանքերը՝ մտնելու Հայաստան, ձախողվեցին...»[4]:

Պարբերականը հայտնում է, որ եվրոպական դիվանագետների զեկուցագրերն ի վերջո հրապարակվել են ու հաստատում են Արևմտյան Հայաստանում կատարվող ոճրագործությունները, ինչպես նաև համապատասխանում են բրիտանական «Ռոյթեր» լրատվական գործակալության և «Դեյլի» պարբերականի տպագրած նյութերին:

Պարբերականը ուշիուշով հետևել է Մեծ Բրիտանիայի քաղաքական գործիչների կողմից Հայկական հարցի արծարծմանը: «Ալ-Մուշիրը» ներկայացնելով Ռոբերտ Սոլսբերիի և Ուիլյամ

---

[1] Բազմաթիվ հոդվածներ լի են ջարդերի և անմարդկային խոշտանգումների ամենավայրագ դրսևորումների տեսարանների նկարագրություններով: Լրագրողները երբեմն նույնիսկ հրաժարվում են շարադրել դրանք՝ վկայակոչելով լրագրական էթիկայի պահանջները («Ալ-Մուշիր», 17 հունվարի, 25 հունվարի, 14 փետրվարի, 14 մարտի, 17 ապրիլի 1895):

[2] Նույն տեղում:

[3] «Ալ-Մուշիր», 7 փետրվարի 1895:

[4] Նույն տեղում:

Գլադստոնի գործունեությունը՝ ընդգծում է, որ նրանց կողմից հարկ եղած ուշադրությունը չի հատկացվում Հայկական խնդրին:

«Հայկական բարենորոգումներ» հոդվածաշարում պարբերականն անդրադառնում է Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից սուլթանին առաջարկած Մայիսյան բարենորոգումների ծրագրին, ընդգծում սուլթանի՝ երկար ձգձգելուց հետո դրան համաձայնելը և դժգոհություն է հայտնում, որ Մեծ Բրիտանիան «միայն Թուրքիայի քիթն է տրորում՝ նրան ոչնչացնելու փոխարեն»[1]:

Մեծ Բրիտանիայի հանդուրժող դիրքորոշումը օսմանյան սուլթանի նկատմամբ պարբերականի էջերում արտացոլված է աստիճանաբար աճող զարմանքի և հուսախաբության տոնայնությամբ. «...թեև Մեծ Բրիտանիան կարող է միջամտել Հայկական խնդրին, սակայն դա չի անում», չնայած Սոլսբերիի խոսքերին, թե «...այս լճացած պետությունը բարենորոգումներ չի իրականացնի, մինչև նրան երկաթե ձեռքով չստիպենք դա կատարել»[2]:

Անդրադառնալով մեծ տերությունների քաղաքականությանը Մայիսյան բարենորոգումներն իրականացնելու հարցում՝ պարբերականը գալիս է այն եզրակացության, թե տերությունները միգուցե այս անգամ Թուրքիային թույլ չեն տա խաղալ «թուրքական դիվանագիտություն», քանի որ արդեն պարզ է, որ Թուրքիան աղվեսից կղ խորամանկ է, և նրա հետ վարվելու ամենաճիշտ ուղին նրան իրենց երկաթե ձեռքում պահելն է, որպեսզի հասկանա, որ նրանց պահանջների հետևում հնազանդեցնող ուժ է կանգնած:

Երգիծանքը «Ալ-Մուշիրի» անբաժան ուղեկիցն էր: Հայերին և Հայկական հարցին վերաբերող հոդվածներում նս հաճախ առկա է երգիծական, հեգնական շեշտը. «Անգլիան զիջել է, և Բ. Դռանը որոշ ժամանակ է հատկացրել՝մինչ կառավարությունը

---

[1] «Ալ-Մուշիր», 22 փետրվարի 1896:

[2] Նույն տեղում:

կուսումնասիրի Հայկական հարցը (որին կառավարությունը քաջատեղյակ է ծնված օրից ի վեր)»[1]: Թերթի բազմաթիվ համարների առաջին էջերաւմ ծաղրանկարների միջոցով կայսրությունը, եվրոպական երկրներից նրա կախվածությունն է ներկայացված: Դրանց շարքում մեծ տեղ են գրավում Հայկական հարցին վերաբերող երգիծական պատկերները, որոնց հիմնական հերոսը միշտ սուլթանն է՝ եվրոպական դիվանագիտության ճնշումների տակ կքած, իսկ հիմնական թեման՝ Հայկական հարցը:

«Հայկական ճգնաժամ» հոդվածաշարի հերթական հատվածում կարդում ենք. «Մինչ գրվում են այս տողերը, Օսմանյան կայսրության լավագույն մասը՝ Սև ծովից մինչև Միջագետք և բիբլիական Արարատի ստորոտից մինչև Փոքր Ասիայի արևմտյան մասերը, բնակեցված պատմական մի ժողովրդով, որն ունի սեփական լեզու և հարուստ գրականություն, վերածվում է ամայի ավերակների: Եկեղեցիները և պաշտամունքի վայրերը հողին են հավասարեցվել, կրոնը ոտնակոխ է արված....

Այսպիսին է Թուրքական Հայաստանի ներկա իրավիճակը, որի համար Եվրոպան և Մեծ Բրիտանիան պետք է իրենց մեղադրեն... Սակայն, ի տարբերություն Հունաստանի, Սերբիայի, Բուլղարիայի, Հերցոգովինայի, հայերի հետ վարած անբարոյական քաղաքականության ժամանակ՝ 1878-ին, մեծ ուժերը խաղից մի կողմ քաշվեցին...»[2]:

Տարբեր առիթներով պարբերականն անդրադառնում է քրդերին, ընդգծում է թուրքական կառավարության կողմից նրանց հայերի դեմ սադրելը, հայերին անպատիժ թալանելու և սպանելու թողտվությունը՝ ասելով, որ քրդերը սանձարձակ և արտոնյալ են, անում են՝ ինչ ուզեն, հայերի ցուցմունքները դատարանում հաշվի չեն առնվում, հարկահանների կողմից նրանց հարստահարումը շարունակվում է: Քրդերը քաղաքակիրթ չեն, գրելու անհրաժեշտության դեպքում դիմում են հայկական կամ

---

[1] «Ալ-Մուշիր», 19 հունիսի 1895:
[2] Նույն տեղում, 8 մայիսի 1895:

պարսկական այբուբենին: Քրդերը լավ զինվորներ չեն, բայց գիտեն լավ գողանալ և թալանել: Էրզրումից Բիթլիս և Վանից Սալմաստ ընկած տարածքների բոլոր գյուղերը ենթարկվել են քրդական ասպատակության: Մի կողմից կարելի է նրանց համարել հայկական հողերի նվաճողներ՝ թուրք իշխանավորների լուռ համաձայնությամբ, իսկ մյուս կողմից՝ թալանողներ, ավազակներ և մարդասպաններ՝ զինված լավագույն զենքերով, որոնց թույլ է տրված անպաշտպան բնակչության դեմ իրականացնել ամեն բռնություն: Նրանց սուլթանը երբեք չի պատժում, եթե նույնիսկ մարդասպանություն կամ գողություն կատարելու պահին են բռնում, մինչդեռ, հայերից որևէ մեկի մոտ զենք հայտնաբերելիս անմիջապես ձերբակալում են, որպես հեղափոխականի[1]:

Ուրֆայի կոտորածը պարբերականում արձագանք է գտել «Նամակ Հայաստանից» վերնագրով: Դա Ուրֆայի մի խումբ հոգևորականների և զինվորների կողմից ուղարկված նամակն է, որը նրանք գրել էին ջարդի նախօրյակին և գաղտնի կարողացել էին ուղարկել Այնթապ:

Նամակում նրանք տեղեկացնում էին, որ իրենց անխուսափելի մահվան ժամը մոտ է, հայերն ընտրության առջն են՝ սուր կամ իսլամ: Նշվում էր, որ իրենք ապստամբություն չէին քարոզում: Սուլթանի համար մի ողջ ժողովրդի հիմնովին ոչնչացնելը չնչին գործ էր, իսկ հայերի միակ մեղքը քաղաքակրթական արժեքներին հետևելն է եղել[2]:

«Սիրելի հայ ազգ»[3] հոդվածում հեղինակը փաստում է, որ սուլթանը կազմել է մի հանձնաժողով, որի մեջ երկուական մուսուլման, կաթոլիկ, առաքելական և ուղղափառ հայեր էին ընդգրկված, որպեսզի այն մեկնի Արևմտյան Հայաստան: «Ինչո՞վ պետք է զբաղվի հանձնաժողովը» հարցին թերթը պատասխանում է. «Սուլթանի հրամանով այն պետք է ֆինանսական հաշվարկներ կատարի, որպեսզի վերակառուցի դպրոցները (սակայն

---

[1] «Ալ-Մուշիր», 8 մայիսի 1895:

[2] Նույն տեղում, 18 փետրվարի 1896:

[3] «Ալ-Մուշիր», 2 հոկտեմբերի 1897:

որտե՞ղ են աշակերտները), և հասարակական վայրերը (սակայն կա՞ արդյոք մեկը, որ հաճախի այդ վայրերը), որոնք ավերվել են պատերազմի ընթացքում (այո.. պատերազմի՝ կանանց, երեխաների և... զինված բանակի միջև)»[1]:

Պարբերականը բազմաթիվ հոդվածներում ընդգծում է, որ հայերն ապստամբներ չեն, որ հայերին «իբր թե պատժում են» իրենց չգործած հանցանքների համար, և հույս է հայտնում, որ բրիտանական հյուպատոսների զեկուցագրերի հրապարակումից հետո ամեն ինչ պարզ կդառնա և մեծ հարված կհասցվի Թուրքիայի՝ առանց այդ էլ թուլացած քաղաքականությանը. «բրիտանական հեռագրերը հայտնում են, որ շուտով հրատարակվելու են հայկական կոտորածների մասին բրիտանական հյուպատոսների զեկուցագրերը: Հայտնի է, որ հյուպատոսներն իրենց պաշտոնական զեկուցագրերում չեն ստում, այդ պատճառով էլ Անգլիայի ժողովուրդը և քաղաքական գործիչները պահանջում են դրանց հրապարակումը»[2]:

Այդ զեկուցագրերն, ըստ թերթի, իրական ապացույց կդառնան այն դառը իրողության, «...*որ հայկական իրադարձությունները տեղական ապստամբություններ չէին, այլ նախապես ծրագրված կոտորածներ, որոնք մտահղացել, ծնվել էին Յլդըզում, և իրականացվել սուլթանի հավանությամբ ու կամքով (ընդգծումը մերն է-Ն.Ե.):* Այդ քայլով սուլթանը զուգև ցանկանում էր ահաբեկել երիտթուրքերին և բարենորոգումների համակիրներին, իսկ այս նպատակի համար սպանված հայերի քանակը որոշ տվյալներով հարյուր հազար է: Սակայն «Ալ-Մուշիրի» և այլ ազատ պարբերականների ընթերցողները քաջատեղյակ են, որ նրանց մեջ Հայաստանից անդամներ չկան, նրանք հիմնականում Կ. Պոլսից, Սիրիայից և Թուրքիայի՝ հայկական վիլայեթներից շատ հեռու ընկած ծայրամասերից են: Այս դեպքում, ինչ ասել այս խայտառակ քաղաքականության մասին, երբ հայ անմեղ ծերեր, կա-

---

[1] «Ալ-Մուշիր», 2 հոկտեմբերի 1897:

[2] Նույն տեղում, 29 օգոստոսի 1896:

նայք և երեխաներ են զոհաբերվում՝ ահաբեկելու համար նրանց, ովքեր կապ չունեն Հայաստանի հետ»[1]:

«Ալ-Մուշիրը» մեղադրում է եգիպտական որոշ թերթերի, որոնք ժխտում են հայերի կոտորածներին թուրք զինվորների մասնակցությունը՝ բերելով ամերիկացի մի միսիոների պատմությունը: Նա ականատես էր եղել Կ. Պոլսի ջարդերի օրերին թուրք զինվորի կողմից մի հայի սպանությանը. նա հային գցել էր փոսորում և անընդհատ կրակում էր նրա մեջքին՝ գնդակներով խաչ նկարելով: Միսիոների հարցին թե ինչու է այդպես վարվում, նա պատասխանել է, թե խաչ է նկարել այդ գյավուրի մեջքին, որ երբ Քրիստոսը ցանկանա փնտրել նրան, հեշտությամբ գտնի[2]:

«Ալ-Մուշիրը», որի խայթող խոսքը սկզբնական շրջանում ուղղված էր հիմնականում աբդուլհամիդյան վարչակարգի դեմ, վաղուց արդեն չէր երկնչում համարձակախոս հոդվածներ տպագրելու նաև բրիտանական իշխանությունների շահախնդիր քաղաքականության վերաբերյալ: Այդպիսի երկսայրի ուղղվածությունը պարբերականին և նրա խմբագրին երկկողմանի թիրախի էր վերածել: Արդյունքում՝ 1899 թ. Սելիմ Սարգիսը ստիպված եղավ լքել Եգիպտոսը և պարբերականը վերահրատարակել Նյու Յորքում, որտեղ այն գոյատևեց մինչև 1902 թ.:

---

[1] «Ալ-Մուշիր», 29 օգոստոսի 1896:

[2] Նույն տեղում:

НАРИНЕ ЕРАНОСЯН
ИИ НАН РА

## ОТКЛИКИ НА РЕЗНЮ АРМЯН 1894-1896 ГГ. В ЕГИПЕТСКОМ ПЕРИОДИЧЕСКОМ ИЗДАНИИ "АЛЬ-МУШИР"

### РЕЗЮМЕ

Резня армян в 1894-1896 гг. была отражена на страницах младотурецкой эмигрантской двуязычной (арабский, английский) еженедельной газеты "Аль-Мушир" (Советник), где были опубликованы свидетельства армян и иностранцев, ставших очевидцами этих трагедий, а также статьи и письма известных деятелей младотурецкого движения и западной политической элиты.

Газета многократно подтверждала, что резня армян была организована и осуществлена по приказу султана и с помощью регулярной турецкой армии, газета также осудила политику великих держав по отношению армян и Армянского вопроса, при этом оставаясь верной основным принципам младотурецкой идеологии.

NARINE YERANOSIAN
IH NAS RA

## ECHOS TO THE ARMENIAN MASSACRES OF 1894-1896 IN THE EGYPTIAN PERIODICAL "AL-MUSHEER"

### SUMMARY

Armenian massacres of 1894-1896 were reflected on the pages of the Young Turk immigrant bilingual (Arabic and English) weekly "Al-Musheer" ( "The Counsellor"), where there were published evidences of the Armenians and foreigners who witnessed these tragedies, as well as articles and letters of well-known figures of the Young Turk movement and Western political elite.

The periodical repeatedly confirmed that the Armenian massacres were organized and carried out by order of the Sultan and by Turkish regular army, also condemned the policy of Great Powers towards the Armenians and the Armenian Question while abiding by basic principles of the Young Turk ideology.

ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ (1896-1900 ԹԹ.)

Եվրոպայում Հայկական հարցի օգտին քարոզչություն կազմակերպելու խնդիրը քննարկման առարկա էր դարձել դեռևս 1895 թ. սկզբին Թիֆլիսում տեղի ունեցած՝ ՀՅ Դաշնակցության (ՀՅԴ) «Ընդհանուր» ռայոնական ժողովում: Այստեղ որոշվել էր Եվրոպական պետությունների քաղաքական շրջանակների հետ կապեր հաստատելու նպատակով պատրաստել սեփական «ագենտներ» (քարոզիչներ-Կ.Հ.)՝ օգտագործելով Եվրոպայի հայ ուսանողության և գաղութահայության հնարավորությունները: Նրանք պետք է անմիջական կապ պահպանեին «Դրօշակ»-ի խմբագրություն հետ՝ անընդհատ նոր տեղեկություններ հայտնելով վերջինին[1]:

Նույն հարցը քննարկվեց նաև ՀՅԴ Կովկասյան մարմինների 1897-98 թթ. տարեկան ռայոնական ժողովում: Այստեղ մարտավարական մի շարք խնդիրների արծարծման հետ մեկտեղ անդրադարձ կատարվեց նաև ՀՅԴ «եվրոպական պրոպագանդի» խնդրին և ընդունվեց որոշում. «...խմբագրութեան (նկատի ունի «Դրօշակին»-Կ.Հ.) վրայ, որը միևնույն ժամանակ և արտասահմանեան Բիւրօն է, պարտականութիւն դնել կանոնաւոր պրոպագանդա անել եւրոպական հասարակութիւնների առաջ, թէ անձնական ծանոթութիւնների, միտինգների և թէ մանաւանդ, եւրոպական մամուլի միջոցով, աշխատելու որոշ թերթերի մէջ կանոնաւոր կերպով տեղեկութիւններ տալ եւրոպացիներին մեր դատի և մեր ընթացքի մասին»[2]:

---

[1] Տե՛ս Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետ՝ Նիւթեր...), հ. Բ, Պէյրութ, 1985, էջ 21:

[2] Նոյն տեղում, էջ 43:

ՀՅԴ-ն 1890-ականների կեսերին արդեն առնչություններ ուներ եվրոպական մի շարք երկրների հասարակական, քաղաքական և պետական գործիչների հետ: Դրանք հիմնված էին որոշակի աշխարհայացքային և գաղափարական ընդհանրությունների վրա: ՀՅԴ եվրոպական առաջին բարեկամների մեջ մեծամասնություն էին կազմում սոցիալիստական շարժման ներկայացուցիչները (Ժ. Ժորես, Ժ. Լոնգե, Է. Վանդերվելդե և այլք), որոնք մշտապես հաղորդակից էին հայությանը հուզող հիմնախնդիրներին:

Այս առումով գոյություն ուներ ևս մեկ կարևոր շարժառիթ: 1890-ական թվականներին Եվրոպայում վերելք էր ապրում սոցիալիստական շարժումը, որի արդյունքում մեծանում էր սոցիալիստական կուսակցությունների դերը հասարակական-քաղաքական կյանքում: Եվ դա կարող էր ծառայել իբրև կարևոր ազդակ՝ միջազգային ասպարեզում Հայկական հարցի առաջխաղացման համար:

Ելնելով այդ նկատառումներից՝ ՀՅԴ-ն առաջին անգամ սոցիալիստական մեծ ընտանիքին՝ Սոցինտերնին, դիմեց 1896 թ. հուլիսի 25-ին՝ Լոնդոնում կայացած հերթական՝ 4-րդ համաժողովի ժամանակ: Կուսակցությանն այստեղ ներկայացնում էր «Դրօշակ»-ի ժնևյան խմբագրատան շուրջը համախմբված երիտասարդներից Մ. Հովհաննիսյանը (Վարանդյան): Համաժողովականներին ՀՅԴ գործունեությանը ծանոթացնելու համար նախապես կազմվել էր «Տեղեկագիր», որում ներկայացվում էր Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը, փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող հալածանքները և հստակորեն բանաձևվում ՀՅԴ նպատակը. «Թուրքահայաստանի (Արևմտյան Հայաստանի-Կ.Հ.) քաղաքական և տնտեսական ազատագրումը հեղափոխական լայնածավալ ապստամբության միջոցով»[1]: «Տեղեկագրի» շարադրանքում

---

[1] Հակոբյան Կ., ՀՅԴ առաջին քայլը՝ Սոցինտերնին անդամագրվելու ճանապարհին, - Բանբեր Հայաստանի արխիվների, 2010, N 2 (116), էջ 40: Տե՛ս նաև՝ Գաղափարագրութիւն ՀՅ Դաշնակցութեան, հ. Ա, Աթենք, 1997, էջ 268:

պարզաբանվում էր ՀՅԴ հիմնադրական ծրագրի համամարդկային բնույթը. «Մենք հեռամուտ չենք այնպիսի մի պատրանքի, ինչպիսին ՚է հին Հայաստանի քաղաքական վերածնունդը, բայց, մենք մեր երկրի (Արևմտյան Հայաստանի-Կ.Հ.) բոլոր ժողովուրդների համար ցանկանում ենք միևնույն ազատությունները և միև նույն իրավունքները՝ ազատ և հավասար Ֆեդերացիայում»[1]:

Ներկայացնելով Օսմանյան կայսրությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը՝ «Տեղեկագիր»-ը պարզաբանում էր նաև ՀՅԴ սկզբունքային և գաղափարական մոտեցումներն ու պատկերացումները սոցիալիստական հասարակության մասին, որին հասնելու համար հարկ էր երկար ճանապարհ անցնել. «Ի դեմս մարդկության զարգացման մեր հայեցակարգի՝ մենք գիտական սոցիալիստներ ենք, ահա հենց դրանով ենք մենք Ձեզ մերձենում և այդ պատճառով Ձեզ ենք հղում այս դիմումը: Թուրքահայաստանի մեր մարզերում չկան ո՛չ ֆաբրիկաներ, ո՛չ գործարաններ: Հասկանալի է, որ բացակայում են Եվրոպայում գոյություն ունեցող կապիտալիստական արտադրությունը, բուրժուազիան, արդյունաբերական պրոլետարիատը, դասակարգային պայքարը: Հետևաբար մեզ մոտ չկա սոցիալ- դեմոկրատական կուսակցություն: Բայց մարդկության սոցիալիստական ճակատագրի հարցում մենք համամիտ ենք Ձեզ հետ և ցանկանում ենք մեզ մոտ դրանց համար ճանապարհ հարթել»,- նշվում էր «Տեղեկագրում»[2]:

Այս փաստաթղթում պարզաբանվում էին նաև ՀՅԴ գործելակերպի առանձնահատկություններն ազգային ու սոցիալական պայքարում[3], ինչպես նաև քարոզչական ասպարեզում. «Բարոյական և կոպիտ ճնշման, մտքի կաղապարմանը, վրդովեցուցիչ գրաքննությանը, մենք հակադրում ենք ակտիվ, բանավոր և գրավոր քարոզչությունը: Մենք տարածում ենք գիտական-սոցիալիս-

---

[1] Հակոբյան Կ., ՀՅԴ առաջին քայլը՝ Սոցինտերնին անդամագրվելու ճանապարհին, էջ 40:

[2] Նույն տեղում, էջ 41:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 40-41:

տական գաղափարները, ժողովրդական զանգվածի մոտ արթնացնում իր իրավունքների և արժանապատվության գիտակցումը, մենք նրան մղում ենք կանխատեսելու երջանիկ սոցիալիստական ապագան, որի սոսկ փուլերից է մեր ժամանակակից պայքարը»[1]։

«Տեղեկագրի» ներկայացման բուն նպատակը բացահայտվում էր նրա վերջաբանում, որտեղ արդարացիորեն խարազանվում էին եվրոպական տերությունները Հայկական հարցի հանդեպ ցուցաբերած անտարբեր վերաբերմունքի համար և կարևորվում էր եվրոպական հանրային կարծիքը, որպես գործոն եվրոպական պետությունների կառավարող շրջանակների վրա ազդելու համար[2]։ Եվ այդ հանրային կարծիքի ձևավորման մեջ մեծ կարևորություն էր տրվում սոցիալիստական աշխարհին. «Դուք չեք սատարի մեր թշնամիների առաջադրած այն անհեթեթ ասեկոսին, որն արձագանքների է արժանացել նույնիսկ սոցիալիստական մամուլում և ըստ որի՝ Հայկական հարցը հրահրել է Ռուսաստանը, և Դուք խրոխտ կբարձրաձայնեք ի նպաստ մեր արդար գործի։ Ամենուր, սկսած խորհրդարանների ամբիոնից մինչև հրապարակային ժողովները, Ձեր լրագրերում և Ձեր հանդեսներում, ասացեք բարձրաձայն, թե մենք ովքեր ենք, ինչ ենք ցանկանում, ուր ենք գնում...»[3]։

Ներկայացնելով Օսմանյան կայսրությունում տիրող կարգերը՝ արևմտահայության տնտեսական ու քաղաքական ծանր կացությունը՝ ՀՅԴ «Տեղեկագիր»-ը վարձում էր սոցիալիստական ուժերի միջոցով Հայկական հարցը ճանաչելի դարձնել եվրոպական հանրությանը։ Իսկ ահա սոցիալիստական սկզբունքներից բխող ՀՅԴ մոտեցումներն ապահովելու էին կուսակցության մուտքը Սոցինտերն։

---

[1] Հակոբյան Կ., ՀՅԴ առաջին քայլը՝ Սոցինտերնին անդամագրվելու ճանապարհին, էջ 41։

[2] Նույն տեղում, էջ 41-42։

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 42։

Լոնդոնի խորհրդաժողովին ՀՅԴ մասնակցության նպատակահարմարության հարցին հետագայում իր դիպուկ գնահատականն է տվել Մ. Վարանդյանը. «Չենք գացել լուծելու միջազգային աշխատաւորութեան կնճռոտ խնդիրները- այդ հոգսը ծանրացած է իրենց մեծ վարպետներու վրա (նկատի ուներ սոցիալիստական շարժման առաջնորդներին՝ Ժ. Ժորեսին, Ավ. Բեբելին և այլոց–Կ.Հ.)-գացել ենք մեր սեփական ցաւերը հոգալու, մեզի վրա ուշադրութիւն հրաւիրելու և օգնութիւն խնդրելու»[1]:

Տասնամյակներ հետո տրված նման գնահատականը խոսում էր ՀՅԴ ղեկավարների քաղաքական իրատեսության մասին: Պետք է ասել, որ սոցիալիստական շարժման հետ ՀՅԴ հարաբերությունները կարևոր դեր խաղացին հայության տառապանքներին եվրոպական հանրությանը հաղորդակից դարձնելու գործում: «Ինտեռնացիոնալը ամբիոն մը էր մեզի համար,- նշում է Մ. Վարանդյանը, - քաղաքակիրթ աշխարհի բարձր ու հմայքոտ ամբիոններէն մէկը-ուրկից կարծարծէինք մեր ազգային դատը, ձգտելով շահագրգռել մեծ երկրներու ընկերվարական պարագլուխները հայ ժողովրդի ճակատագրով...»[2]:

Եվրոպայի սոցիալիստական ուժերի հետ հարաբերությունների հաստատման խնդիրն էլ ավելի կարևորվեց 1890-ական թթ. վերջերին ՀՅԴ առջն կանգնած ազատագրական պայքարի մարտավարության փոփոխման համատեքստում: Դրան պետք է լուծում տար 1898 թ. ապրիլ-հունիս ամիսներին Թիֆլիսում գումարված ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովը: Հետաքրքրական է, որ մինչև մարտավարական հարցերի քննարկմանն անցնելը ժողովը «սկզբունքով միաձայն ընդունեց, թէ առանց եւրոպական, իջամտութեան անկարող ենք մեր ժողովուրդի ազատութեան գործը գլուխ բերել, հետևաբար, գործունէութեան եղանակը որոշելու ատեն ի նկատի պիտի ունենալ այդ միջամտութիւնը յառաջ բերելու բոլոր հնարաւորութիւնները»[3]:

---

[1] Վարանդեան Մ., ՀՅ Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, էջ 418:

[2] Նոյն տեղում, էջ 418:

[3] Նիւթեր..., հ. Բ, էջ 56ա:

Բնական է, որ այս որոշման ընդունումից հետո ՀՅԴ «եվրոպական պրոպագանդ»-ը մեծ թափ ստացավ: Ուստի, մինչև այդ տեղի ունեցած շփումները ՀՅԴ-ի և եվրոպական մի շարք երկրների սոցիալիստ կամ ոչ սոցիալիստ քաղաքական ու պետական գործիչների, մամուլի ներկայացուցիչների հետ կարելի է բնութագրել որպես փոխադարձ ճանաչողության սկիզբ: Ընդհանուր առմամբ, սկզբում դրանք չունեին համա- կարգված բնույթ, ինչը նվազեցնում էր քարոզչական գործի օգտակարության գործակիցը: Ահա այս բացն էր լրացնելու ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովում ընտրված Արևմտյան Բյուրոն: Եվրոպական քարոզչության իրականացման գլուխ անցավ անձամբ Քր. Միքայելյանը, որը իսկույն ևեթ փորձեց կապեր հաստատել Հայկական հարցի նկատմամբ բարեկամաբար տրա- մադրված եվրոպացի գործիչների հետ: Նախ «...1898-1899-ի օրերից ի վեր հաստատուեց կանոնաւոր յարաբերութիւն Դաշնակցության ու Քիյեառի միջև»[1]: Շատ քիչ ժամանակ անց Քրիստափորի ջանքերը պսակվեցին հաջողությամբ, որի մասին նա նշում էր Արևմտյան Բյուրոյի անունից 1899 թ. օգոստոսի 21-ին գրված նամակում. «Aurore» և «Petite Republique»-ն ապահովուած են մեր հարցի համար. առաջինում Grand Assasin վերնագրի տակ գրում է արդէն և գրելու է Պ. Քիեառը, ուզել էր մեզնից մեր բանակցութիւնների պատմութիւնը, որը ի հարկէ, իսկոյն իրեն ուղարկվեցավ»[2]: Ապա իր հաջորդ նամակում, որը գրվել էր 1899 թ. դեկտեմբեր 22-ին, Կ. Պոլիսում գտնվող Գ. Խաժակից Քր. Միքայելյանը պահանջում էր երկրում տեղի ունեցող ամենաչնչին իսկ իրադարձությունների ու դեպքերի մասին անմիջապես հաղորդել իրեն, քանի որ Պ. Քիյառն «անդադար տեղեկութիւններ է ուզում մեզանից և, իհարկե, օրաթերթի (Aurore), այն էլ եվրոպական օրաթերթի առաջնակարգ պահանջներից մէկն է - լուրերի թարմությունը»[3]:

---

[1] Փիեռ Քիյեառի յիշատակին, Կ.Պոլիս, 1913, էջ 57:

[2] Քր. Միքայելյանի նամակները, Պէյրութ, 1993, էջ 81:

[3] Նույն տեղում, էջ 102:

Քր. Միքայելյանը բավարար չէր համարում միայն ֆրանսիական թերթերի միջոցով Հայկական հարցն արծարծելու հանգամանքը: Նա կարծում էր, որ այդ ուղղությամբ պետք է աշխատանք տանել նաև Իտալիայի, Գերմանիայի, Անգլիայի և նույնիսկ ԱՄՆ-ի համապատասխան շրջանակների հետ: Քրիստափորի նամակներից մեկում կարդում ենք. «Տեսնենք, որքան բախտավոր կը լինենք (նկատի ունի ՀՅԴ-ն-Կ.Հ.): Լրագրական կապերի հետ ձեռք են բերվում ինքնըստինքեան նաև պարլամենտական կապեր հարցապնդումների համար սոցիալիստ-տեպուտէ Ռուանը (Ռուանե-խմբ.) արդէն խօսք է տուել մեզ. հարցապնդում անելու աշնանը»[1]:

ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի եվրոպական քարոզչության գրավականը դարձավ «Պրո Արմենիա» թերթը, որի նախապատրաստական աշխատանքներով նույնպես զբաղվում էր Քր.Միքայելյանը Մ. Վարանդյանի հետ միասին:

Մինչև «Պրո Արմենիայի» հրատարակումը, խմբագրապետի պաշտոնում Պ. Քիյառի նշանակման հետ կապված, Արևմտյան Բյուրոյում կային որոշակի մտահոգություններ, որոնք բավականին լավ արտացոլված են Քր. Միքայելյանի նամակներում. «Քիեառը այժմ դէմ է յեղափոխական որևէ ձեռնարկների և հետևաբար շատ դեպքերում կարող է մեզ չպաշտպանել»[2]: Պ. Քիյառը պնդում էր կայսրությունում ապրող և նրա լծի տակ հեծող ազգությունների ընդհանուր պայքար ծավալելու գաղափարի վրա: Նրա կարծիքով՝ այդ պայքարում դերակատարություն պետք է ունենային նաև Եվրոպայում ապաստան գտած թուրքական ընդդիմադիր շարժման ներկայացուցիչները՝ հանձինս երիտթուրքերի: Դրանցից մեկի՝ Ահմեդ-Ռիզայի հետ Պ. Քիյառն ուներ որոշակի առնչություններ, ուստի կարևորում էր ՀՅԴ-ի և երիտթուրքական շարժման համագործակցությունը[3]: Սակայն Քրիստափորը, լավ հասկանալով հայ ազատագրական

---

[1] Քր. Միքայելյանի նամակները, Պէյրութ, 1993, էջ 81:

[2] Նույն տեղում, էջ 119:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 112-114:

պայքարի և թուրք ընդդիմադիր շարժման նպատակների անհամատեղելիության պարագան, այս հարցին զգուշավորությամբ էր մոտենում. «Ինչու թերթը (խոսքը տպվելիք «Պրո Արմենիայի» մասին է-Կ.Հ.), եթէ մենք ենք հրատարակելու, չկրի մեր դատի, մեր ժողովրդի, մեր հայրենիքի, մեր կռուի, մեր արեան, մեր զոհերի, մեր հարցի անունը: Բայց այդպէս չէ մտածում Քիեառը. նա ուզում է միացնել ոչ միայն բոլոր հայ կուսակցութիւնները, այլև բոլոր մյուս ազգերի դժգոհ տարրերը»[1]:

Տեղեկությունների բացակայությունը թույլ չի տալիս պարզել, թե նշված հակասություններն ինչ լուծում գտան, սակայն կարելի է կարծել, որ երկուստեք ձեռք է բերվել փոխհամաձայնություն: Դա փաստում է Ֆրանսիայի մեջ «Պրո Արմենիայի» առաջին համարի լույս ընծայումը 1900 թ. նոյեմբերի 25-ին, որի խմբագրապետ, ինչպես վերը նշեցինք, նշանակվեց Պ. Քիյառը[2]:

Առաջին համարում«Արյունոտ թաթը» վերնագրով խմբագրականով հանդես եկավ Ժ. Կլեմանսոն: Հոդվածներով հանդես եկան նաև Պ. Քիյառը և Ֆ. դը Պրեսանսեն, իսկ թերթի ճակատային մասը զարդարված էր նշանավոր 5  անուններով՝ Ա. Ֆրանս, Ժ. Կլեմանսո, Ժ. Ժորես, Ֆ. դը Պրեսանսե, Դե Ռոբերտի: Շատ կարճ ժամանակ անց հանդեսին սկսեցին թղթակցել Եվրոպայի հասարակական, քաղաքական, մշակութային շրջանակների բազմաթիվ հայտնի գործիչներ. Ֆրանսիայից՝ Վ. Բերարը, Ժ. Լոնգեն, Դետուրնելը, Դ. Գոշենը, Վ. Ժակլարը և այլք, Անգլիայից՝ Ջ. Բրայսը, Իտալիայից՝ Է. Ֆերրին, Ա. Չիպրիանին, Բելգիայից՝ Է. Վանդերվելդեն[3]:

«Պրո Արմենիայի» լույս ընծայումից առաջ Փարիզում տեղի ունեցան մի քանի համաժողովներ, որոնք նպաստ բերեցին Հայկական հարցին: Փարիզում բացվել էր համաշխարհային ցուցա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 131:

[2] Տե՛ս Տասնապետեան Հ., ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ Ընդհանուր ժողով (1890-1924), Աթենք, 1988, էջ 57:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 57: Նաև՝ Բէրբէրեան Ռ., Երկու դարերի շէմքին, - «Հայրենիք» ամս., 1939, N 1 (նոյեմբեր), էջ 140:

հանդեսը, որը հարմար առիթ էր ստեղծում բազմաթիվ կազմակերպությունների և կուսակցությունների համար, որպեսզի նրանք հրավիրեն համաժողովներ և հանրության առջև արծարծեն իրենց հուզող հիմնախնդիրները:

Այստեղ իրենց համաժողովները գումարեցին նաև սոցիալիստական շարժման ներկայացուցիչները. առաջինը տեղի ունեցավ սոցիալիստ ուսանողների համաժողովը, երկրորդը՝ Միջազգային սոցալիստական համաժողովը (պատմության մեջ այն հայտնի է, որպես երկրորդ ինտերնացիոնալի 5-րդ համաժողով -Կ.Հ.) և երրորդը՝ սոցիալիստական մամուլի համաժողովը: ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի անդամների համար նմանօրինակ համաժողովները պատեհ առիթներ էին Հայկական հարցն արծածելու համար: «Սկսվում են սոցալիստական կոնգրէսներ, - գրում էր Քր. Միքայելյանը Արևմտյան Բյուրոյին 1900 թ. սեպտեմբերի 20-ին, - որոնց մէջ ուզում ենք մեր հարցը դրուի»[1]: Ապա շարունակելով իր միտքը, հայտնում էր, որ սոցիալիստական մամուլի կոնգրեսում «գրվել է Մ. Վարանդյանը ( Մ. Վարանդյանն այնտեղ հանդես էր գալիս «Դրօշակի» խմբագրության անունից-Կ.Հ.), իսկ մյուս համաժողովներում ուզում ենք հարցը արծարծել Քիյառի և Ժակլարի միջոցով»[2]:

Առաջին հերթին՝ 1900 թ. սեպտեմբերի 18-ին, բացվեց սոցիալիստ ուսանողների միջազգային համաժողովը, որտեղ ուսանողների հրավերով նախագահում էին Է. Ֆերրին, Ժ. Ժորեսը, Է. Վանդերվելդեն: Նիստերից մեկում մի ուսանողի կողմից առաջարկություն արվեց. «Ցանկալի է, որ ուսանողական կազմակերպութիւնները իրենց գործունէութեան մէջ սրտի մօտ առնեն տաճկական լծի տակ դեգերող մանր ազգութիւնների վիճակը»[3]: Ինչպես վկայում է Քր. Միքայելյանը, այդ առաջարկը ընդունվեց բուռն ծափահարություններով ու բացականչություններով. «...անկցի Համիդը, անկցի Կարմիր Անասունը և մինչն անգամ

[1] Քր. Միքայելյանի նամակները, էջ 179:
[2] Նույն տեղում, էջ 179:
[3] Նույն տեղում, էջ 181: Նաև՝ «Դրօշակ», 1900, հոկտեմբեր, էջ 122:

անկցի Յարը աղաղակներով: Ափսո՜ս միայն, որ կոնգրէն իր քաղաքականութեամբ և կազմով աննշան էր, չնայած նոյնիսկ որ, նախագահում էր Վանդերվելդը»[1]:

Ճիշտ է Արևմտյան Բյուրոյի ներկայացուցիչների առկայությունը սոցիալիստ ուսանողների համաժողովում մի հավելյալ հնարավորություն էր Հայկական հարցի լուսաբանման համար, սակայն դա չէր կարող ունենալ այն նշանակությունն ու դերը, որ պետք է խաղային իրար հաջորդող միջազգային սոցիալիստական համաժողովն ու սոցիալիստական մամուլի միջազգային համաժողովը:

Միջազգային սոցիալիստական համաժողովն իր աշխատանքները սկսեց 1900 թ. սեպտեմբերի 23-ի առավոտյան՝ Փարիզի «Վագրամ» սրահում[2]: Պատգամավորների ընդհանուր թիվը 2500-ից ավելի էր: Համաժողովին մասնակցում էին սոցիալիստական շարժման ներկայացուցիչներ Գերմանիայից, Ֆրանսիայից, Անգլիայից, Ավստրիայից, Իտալիայից, Բելգիայից, Լեհաստանից, Ռուսաստանից, Բոհեմիայից, Իսպանիայից, Շվեդիայից, Դանիայից, Հոլանդիայից, ԱՄՆ-ից, Արգենտինայից, Բուլղարիայից, Իռլանդիայից, Նորվեգիայից, Պորտուգալիայից: Պատգամավորների թվում էին հայտնի սոցիալիստ հրապարակախոսներ, գիտնականներ, պառլամենտական գործիչներ, արհմիությունների, սինդիկատների, տրեդյունիոնների և կուսակցությունների ղեկավարներ:

Համաժողովը պետք է քննության առներ այն հարցը, թե «կարո՞ղ է արդեօք ընկերվարականը ընդունիլ նախարարական պաշտօն — համերաշխ գործել ոչ-ընկերվարական նախարարական դահլիճի մէջ»[3]: Պատճառն այն էր, որ այդ քայլով սոցիալիստ նախարարն իր վրա էր վերցնելու որոշակի պատասխա-

---

[1] Քր. Միքայելյանի նամակները, էջ 181, տե՛ս նաև՝ «Դրօշակ», 1900, հոկտեմբեր, էջ 122:

[2] Տե՛ս «Դրօշակ», 1900, հոկտեմբեր, էջ 123: Նաև՝ Բէրբէրեան Ռ., Երկու դարերի շեմքին, - «Հայրենիք» ամս., 1940, N 3 (հունվար), էջ 76-86:

[3] Բէրբէրեան Ռ., նշվ. աշխ., էջ 76:

նատվություն՝ կառավարությունում ընդգրկված ոչ սոցիալիստական կուսակցությունների համար: Բանն այն է, որ, մինչև Փարիզի համաժողովը, ֆրանսիացի հայտնի սոցիալիստ Ալ. Միլերանը ստանձնել էր աշխատանքի նախարարի պաշտոնը՝ Վալդեկ Ռուսոյի կազմած կառավարությունում, որի մեջ ընդգրկված էին նաև Արմատական, Հանրապետական և Պահպանողական կուսակցության ներկայացուցիչներ[1]:

Համաժողովի հիմնական քննարկումները ծավալվեցին այս հիմնախնդրի շուրջ երկու հակադիր՝ մերժող և արդարացնող, բևեռների միջև: Ի վերջո, շնորհիվ Ժ. Ժորեսի արտակարգ հռետորական տաղանդի և փաստարկված պատճառաբանությունների, հարցը դրական լուծում ստացավ՝ ամրապնդելով այն մտայնությունը, որ սոցիալիստական շարժումը պետք է ընթանա նաև քաղաքական իշխանության համար պայքար մղելու ճանապարհով[2]: Այդ մասին «Դրօշակը» գրում էր. «համաժողովը ... ամբողջապէս զբաղուած է այն ամենատաք խնդրով, որ բոլոր ժամանակ յուզում էր ժողովականներին - այն է 9-րդ, կամ ինչպես ասում էին- «մինիստրական խնդրով» (Միլլերանի առիթով)»[3]:

Այս կնճռոտ հիմնահարցի հանգուցալուծման հետ միասին համաժողովը չանտեսեց նաև այլ՝ ոչ պակաս կարևոր հիմնահարցեր: Դրանցից մեկը օրակարգի 4-րդ կետն էր, որը վերաբերվում էր «Միջազգային խաղաղության» հարցին: Ելնելով սահմանված աշխատակարգից՝ համաժողովը ստեղծել էր տարբեր ազգությունների ներկայացուցիչներից մի հանձնաժողով, որը պետք է քններ վերոհիշյալ օրակարգային կետին վերաբերող դիմումները և նոր միայն ներկայացներ համաժողովին: «Միջազգային խաղաղության» հանձնաժողովի աշխատանքները նախագահում էր հայտնի սոցալիստ, 1870 թ. Փարիզի կոմունայի մասնակից Վայանը:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 76:

[2] Տե՛ս Зайдель Г., Очерки по истории второго интернационала, Прибой, 1931, с. 36:

[3] «Դրօշակ», 1900, հոկտեմբեր, էջ 123:

ՀՅԴ պահանջներն այստեղ ներկայացնում էր «Դրօշակի» խմբագրությունը՝ հանձին Քր. Միքայելյանի և Մ. Վարանդյանի: Քր. Միքայելյանի նամակից տեղեկանում ենք, որ դաշնակցականներին հաջողվել էր համոզել հանձնաժողովին, որ միջազգային սոցիալիստական համաժողովին ուղղված զեկուցման մեջ. «առաջարկեն մի բան նաև յօգուտ հայերի»[1]: «Միջազգային խաղաղության» հանձնաժողովը համաձայնեց և նույնիսկ վճիռ կայացրեց՝ խոսք տալ կոնգրեսում «Դրօշակի» ներկայացուցչին: Այդ որոշման ընդունման համար մեծ ջանք էին թափել Քր. Միքայելյանը և Մ. Վարանդյանը: Հանձնաժողովի 1900 թ. սեպտեմբերի 26-ի նիստում, առանձին անդրադարձ կատարվեց հայկական կոտորածներին և Հայկական հարցին, հնչեցին բազմաթիվ ելույթներ, խոսքի իրավունք տրվեց նաև Մ. Վարանդյանին՝ «հասկանալու համար այն հստակ առաջարկը, որ մենք կուզենաինք անել ժողովին»[2]: Մ. Վարանդյանի բավականին հանգամանալից ելույթը լավ տպավորություն գործեց հանձնաժողովականների վրա, որոնք որոշեցին համաժողովին ուղղված զեկույցի մեջ մտցնել Հայկական հարցը՝ միացնելով դրան նաև հանձնաժողովի բողոքը լեհերի, ֆինների և բոհեմների նկատմամբ գործադրվող ճնշումների վերաբերյալ:

Հաջորդ օրվա երկրորդ կեսից միայն համաժողովը կարողացավ անցնել օրակարգի մյուս կետերի քննարկմանն ու քվեարկմանը: Պատճառն այն էր, որ ժողովի ամբողջ ժամանակը խլել էր Ալ. Միլերանի հարցը, իսկ՝ գաղութային, զինվորական, ընդհանուր գործադուլի, ճնշված ազգերի օրակարգի կետերը մնացել էին: Սակայն, երբ հարցը հասավ ճնշված ազգերին, համաժողովի նախագահ Վան Կոլը ժամանակի սղության պատճառով ելույթի իրավունք չտվեց ոչ մեկին և ինքը կարդաց Վայանի հանձնաժողովի բանաձևերը, որոնք բուռն ծափահարություններով ընդունվեցին ու վավերացվեցին համաժողովականների կող-

[1] Քր. Միքայելյանի նամակները, էջ 182:

[2] «Դրօշակ», 1900, հոկտեմբեր, էջ 123:

ից: Հայկական հարցին վերաբերվող մասը նպատակահարմար ենք համարում մեջբերել ամբողջությամբ. «Փարիզի սօցիալիստական միջազգային համաժողովը, վերստին շեշտելով՝ եղբայրական համակրութեան զգացմունքները, որոնք պիտի միացնեն բոլոր ժողովուրդներին, զայրոյթով բողոքում է Հայաստանում կատարուած բռնաբարութիւնների, խժդժութիւնների ու ջարդերի դէմ, և մատնացոյց անելով երկու աշխարհների բանւորներին զանազան կապիտալիստ պետութիւնների ոճրագործ մեղսակցութիւնը.-հրաւիրում է պարլամենտական սօցիալիստ խմբերին ամէն մի դէպքում միջամտել յօգուտ անարգաբար հարստահարուած հայ ժողովրդի, որին կօնգրէսը ուղղում է իր ջերմ ու սերտ համերաշխութեան հաւաստիքը»[1]:

Միջազգային սոցիալիստական համաժողովին անմիջապես հաջորդեց սոցիալիստական մամուլի միջազգային համաժողովը, որը բացվեց 1900 թ. հոկտեմբեր 1-ին՝ սոցիալիստ հրապարակախոսների սինդիկատի ընդհանուր քարտուղար Վ. Ժակլարի կողմից: «Դրօշակի» խմբագրությունը պաշտոնապես հրավիրված էր մասնակցելու սոցիալիստական մամուլի համաժողովին: Բացի այդ, Քր. Միքայելյանի վկայությամբ, Վ. Ժակլարը խոստացել էր նաև. «մեր հարցը կամ ծրագրի մէջ մտցնել իբր առանձին հարց կամ որևէ ձևով Միքայելից (Մ. Վարանդյան-Կ. Հ.) անկախ՝ ինքը ևս զարթեցնել սոցիալիստական մամուլի կոնգրէսում»[2]:

Մինչև համաժողովի սկսվելը, ծանոթ լինելով օրակարգին, «Դրօշակի» խմբագրության ներկայացուցիչները համաժողովը կազմակերպող հանձնաժողովին առաջարկ էին արել, որպեսզի ընդհանուր խաղաղության և արտաքին քաղաքականության օրակարգային կետի տակ ներառնվի Հայկական հարցը: Կազմակերպող հանձնաժողովը համաձայնվել էր այդ առաջարկին՝ ընդու-

---

[1] «Դրօշակ», 1900, հոկտեմբեր, էջ 124:
[2] Քր. Միքայելյանի նամակները, էջ 199:

նելով նաև մի զեկույց «Aurore» լրագրի աշխատակից՝ Պ. Քիյառից:

Օրակարգի վերոնշյալ կետը, որի տակ պետք է քննության առնվեր նաև Հայկական հարցը, քննարկման դրվեց սոցիալիստական մամուլի համաժողովի երկրորդ՝ վերջին օրը: Այդ օրը նախագահում էր իտալացի հայտնի սոցիալիստ և պառլամենտական գործիչ Անդրեա Կոստան: Պ. Քիյառի բացակայության պատճառով վերջինիս զեկուցումը ներկայացրեց Վ. Ժակլարը: Ժողովը ծափահարություններով ընդունեց Պ. Քիյառի երկու առաջարկները.

«1. Համաժողովը իրաւէր է կարդում միջազգային սօցիալիստական մամուլին հրապարակ հանել ամենալայն ծաւալով այն սարսափելի կոտորածները, որոնք կազմակերպւած էին սուլթան Համիդի ձեռքով՝ հայ ժողովուրդը ջնջելու համար, հրապարակ հանել ընդհանրապէս և այն եղեռնագործութիւնները, որ այս միապետը կատարել է իր պետութեան մէջ գտնւող զանազան ազգութիւնների դէմ, աջակից ունենալով բուրժուա կառավարութիւնների հավանութիւնը:

2. Սօցիալիստական մամուլը կ'աշխատի առաջ բերել մեծ պետութիւնների միջամտութիւնը, որ բացառապէս ուղղւած լինի սուլթանի դէմ, որպէսզի Տաճկաստանում հաստատւի մի տանելի ռէժիմ օտոմանեան բոլոր քաղաքացիների համար՝ առանց խտրութեան ցեղի, ազգութեան և կրօնի»[1]:

Չնայած Պ. Քիյառի այս առաջարկը դարձավ համաժողովի բանաձև և հետագայում, նրան հետևելու համար, որոշման ձևով պետք է փոխանցվեր սոցիալիստական մամուլին՝ այն չէր կարող բավարարել հայկական կողմին, քանի որ «ընդհանուր բարենորոգումների անւան տակ վարագուրում էր զուտ «հայկական հարցը»-այն հարցը, որ սրբագործւած է այսօր այնքան արիւնով և յենւում է միջազգային իրավունքի վրա», - գրում էր «Դրօշակը»[2]:

---

[1] «Դրօշակ», 1900, հոկտեմբեր, էջ 124:

[2] Նոյն տեղում:

Այդ պատճառով հավելյալ պարզաբանման և Հայկական հարցի առանձնակի կարևորությունը շեշտելու համար ելույթ ունեցավ Մ. Վարանդյանը: Իր գոհունակությունը հայտնելով ինչպես միջազգային սոցիալիստական համաժողովի, այնպես էլ սոցիալիստական մամուլի համաժողովի կողմից ընդունված որոշումների համար, նա իր ելույթում հայտնեց այն միտքը, որ սոցիալիստական մեծ կուսակցությունների պարտականություններից մեկն էլ իրենց ժողովներում, պառլամենտներում և մամուլի օրգաններում ընդարձակ և անդադար քարոզչություն անելն է՝ ի նպաստ Հայկական հարցի[1]:

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ բոլոր համաժողովներում Հայկական հարցի շուրջ ստեղծվեց բարենպաստ մթնոլորտ և ընդունվեցին հայանպաստ մի շարք բանաձևեր: Ճիշտ է, բոլոր համաժողովներն էլ իրենցից այս կամ այն չափով կարևորություն էին ներկայացնում Հայկական հարցի արծարծման առումով, սակայն դրանցից պետք է առանձնացնենք սոցիալիստական մամուլի և ամենակարևորը՝ կուսակցությունների և կազմակերպությունների համաժողովները: Վերջինիս դերը կայանում էր նրանում, որ այն իր գործադիր մարմնի՝ Միջազգային սոցիալիստական Բյուրոյի Գործադիր կոմիտեի միջոցով պետք է հրահանգեր Եվրոպայի սոցիալիստներին աշխատանքներ տանել իրենց երկրներում հօգուտ Հայկական հարցի թե օրենսդիր և գործադիր մարմիններում և թե հասարակության մեջ: Իսկ հասարակական կարծիքի ձևավորման մեջ մեծ էր լինելու սոցիալիստական մամուլի դերը, որը համակարգված և փոխհամաձայնեցված կերպով պետք է աշխատեր իրենց երկրների սոցիալիստական ուժերի հետ:

ՀՅԴ եվրոպական քարոզչությունը լավ մշակված և ժամանակին գործադրված մարտավարական մի քայլ էր, որն իր արդյունքների առումով երկար սպասեցնել չտվեց: Համաժողովից հետո սոցիալիստական շարժման շատ ներկայացուցիչներ և

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 124-125:

նրանց հարող ու համակիր շրջանակներ սկսեցին հանդես գալ եվրոպական մամուլի էջերում, թղթակցել նորաստեղծ «Պրո Արմենիային», փորձեր ձեռնարկել Հայկական հարցը կուսակցական համաժողովներում բարձրացնելու ուղղությամբ, միջնորդություններով հանդես գալ իրենց երկրների խորհրդարաններում: Նրանք դարձան միջազգային տարբեր համաժողովներում Հայկական հարցի ամենաակտիվ պաշտպանները:

1890-ական թվականների վերջերին սկիզբ առած ՀՅԴ եվրոպական քարոզչությունը հետագայում բարձրացվեց որակապես նոր մակարդակի, երբ 1907 թ. ՀՅԴ-ն դարձավ Սոցինտերնի լիիրավ անդամ:


КАРЕН АКОПЯН

ИИ НАН РА


## ОТНОШЕНИЯ А.Р.Ф. ДАШНАКЦУТЮН С СОЦИАЛИСТИЧЕСКИМ ИНТЕРНАЦИОНАЛОМ В 1896-1900 ГГ.

## РЕЗЮМЕ


В период подъема армянского национально-освободительного движения в Османской империи А.Р.Ф. Дашнакцутюн установил тесные связи с политическими и общественными кругами европейских стран. Однако ставка А.Р.Ф. Дашнакцутюн была сделана на международное социалистическое движение, с которым партия имела общие мировоззренческие представления.

25 июля 1896 г. А.Р.Ф.Дашнакцутюн представила первый рапорт о своей деятельности Международному социалистическому конгрессу в Лондоне. А в 1900 г. в Париже состоялись конгрессы "Социалистов-студентов", "Социалистической прессы" и очередной 5-й международный социалистический конгресс, которые приняли резолюции в пользу Армянского вопроса.

В результате сотрудничества А.Р.Ф. Дашнакцутюн с международным социалистическим движением, Армянский вопрос стал достоянием государственных и общественно-политических кругов Западной Европы.

**KAREN HAKOBYAN**
**IH NAS RA**

## THE EMERGENSE OF RELATIONS BETWEEN ARF DASHNAKCUTYUN AND SOCIALIST INTERNATIONAL IN 1896-1990

### RESUME

During the ascent of the Armenian national liberation movement in the Ottoman Empire ARF Dashnakcutyun established close relationship with political and public circles of European states. But the wager was made by ARF Dashnakcutyun on the international socialist movement with which the party had common ideological views. On July 25th 1896 ARF Dashnakcutyun presented the first report of its activities to the International Socialistic Congresses in London. In 1900 Paris hosted the "Socialist-students," "Socialist press" Congress, and the 5th International Socialist Congress, which passed resolutions in favor of the Armenian issue. As a result of ARF Dashnakcutyun cooperation with the international socialist movement, the Armenian issue became the property of Government and public- political circles in Western Europe.

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# 1885-1908 ԹԹ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ Ս. ՍԱՊԱՀ-ԳՅՈՒԼՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Հայոց պատմության նոր շրջանում ազգային-ազատագրական պայքարն ըստ էության վճռական փուլ թեւակոխեց 19-րդ դարի 80-ական թվականների կեսերից եւ, փաստորեն, ավարտվեց 1908թ. երիտթուրքական սահմանադրության ընդունմամբ: Առ այսօր մեր պատմագիտության մեջ բաց են մնացել այդ շրջանին վերաբերվող շատ հարցեր, որոնք կարոտ են լուսաբանման. այսպես՝ ազատագրական պայքարում առկա էին տարբեր ուղղություններ, որոնք ունեին ընդհանրություններ եւ տարբերություններ, լրջորեն չի քննարկվել մեր ազատամարտի արդյունավետության հարցը, այդ պայքարի վերելքի շրջանում (1890-ական թթ.) տեղի ունեցան արեւմտահայության առաջին զանգվածային ջարդերը, որոնց պատճառները համակողմանիորեն չեն ներկայացվել եւ այլն: Արդյո՞ք կապ կար հայ ազգային կուսակցությունների առավել հաճախ մեծ տերությունների միջամտության հույսով ազատագրական պայքարի կազմակերպման եւ ջարդերի միջեւ: Արդյո՞ք մեծ տերություններին ապավինելով եւ մասնակի դրվագների կազմակերպումով, թե մեկ նպատակի շուրջ ուժերի համախմբումով էր հնարավոր հասնել ակնկալած հաղթանակին: Սրանք եւ բազում այլ հարցեր դեռեւս չեն գտել իրենց վերջնական պատասխանները: Իսկ այդ պատասխանները, թերեւս, կարելի է գտնել այդ ժամանակահատվածի վերաբերյալ ստեղծված կուսակցական ստվար գրականության ուսումնասիրության եւ այն պատմագիտական հայեցակարգերի ընդունման ճանապարհով, որոնց ընդհանրությունը տեսնում ենք կուսակցական գործիչների եւ պատմաբանների գրական ժառանգություններում:

Ի վերջո, ցավալի, բայց անժխտելի փաստ է, որ հայ ազգային-ազատագրական պայքարը, որը ձեւավորվեց արեւմտահայ խնդրի շուրջ, պարտվեց: Այս պարտության պատճառների համակողմանի ընկալումն անհնար է ինչպես առանց վերլուծելու այդ պայքարի վերաբերյալ ստեղծված բազմաթիվ ու բազմաբնույթ արխիվային նիութերն ու աշխատությունները, այնպես էլ կուսակցական պատմագիտական միտքը: Հենց այս համոզումն էլ մղեց գրելու սույն հոդվածը:

Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության 1885-1908 թթ. շրջանի վերաբերյալ վստահ կարելի պնդել, որ Հնչակյան կուսակցությունը եւս արմենականների նման չունի կուսակցական պատմագրություն[1]: Ուստի, ինչպես Արմենական կուսակցության պարագայում, այս դեպքում էլ, հիմնականում խոսք կարող է լինել այդ ժամանակաշրջանի հայ ազատագրական պայքարի վերաբերյալ հնչակյան կուսակցականների պատմագիտական մտքի մասին: Չնայած առաջին հայացքից այդպիսի տպավորություն է թողնում, սակայն լիարժեք եւ ամբողջական պատմագիտական ուսումնասիրություն դժվար է համարել նույնիսկ Ա. Կիտուրի հեղինակած երկհատոր աշխատությունը[2]:

Իր բնույթով քննական-վերլուծական գործ կարելի է համարել Ս. Սապահ-Գյուլյանի «Պատասխանատուները» աշխատությունը[3]: Այն գրվել է հիմնականում մեկ նպատակով՝ ապացուցելու, թե, ի բացառյալ հնչակյանները, ովքեր էին պատասխանատու[4] հայոց ազգային-ազատագրական պայքարը հաղթական

---

[1] Արմենական կուսակցական գործիչների պատմագիտական բնույթի եւ հուշագրությունների մանրամասն քննական վերլուծությունը տես Ս. Սարգսյան, 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Ե., 2010:

[2] Տե՛ս Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան, 1887-1962, խմբագիր Ա. Կիտուր ուսուցչապետ, Պէյրութ, 1962:

[3] Տե՛ս Սապահ-Գյուլեան Ս., Պատասխանատուները, Փրովիտէնս, 1916:

[4] Հեղինակն ընկնելով չափազանցությունների գիրկը եւ լավ չպատկերացնելով Էլրերի իսկական դրությունը, հայ քաղաքական ղեկավարությանը, կուսակցու-

ավարտին չհասցնելու համար: Գնահատելի է, որ նա վարձում է բացահայտել հայերի գործած սխալները, թերացումներն ու բացթողումները: Սակայն, ընդունելի չէ, որ մեղադրելով հայ մտավորական, ազգային, քաղաքական եւ այլ ղեկավար ուժերին, նա ճիգ ու եռանդ չի խնայում արդարացնելու Հնչակյան կուսակցությանը, նրա գործունեությունը ներկայացնելով անսխալ կամ՝ գրեթե անսխալ: Հեղինակը միանգամայն ճիշտ է, երբ գրում է. «Մեր մէջն էլ, մեր կողմիցն էլ, ուրեմն, պատասխանատուներ կան: Խոսում ենք նրանցից միայն մի քանի տեսակների մասին, ոչ ամենքի»[1]: Բայց արդյունքում խոսում է բոլորի մասին (իհարկե, քննադատաբար), բացի հնչակյաններից: Քննադատում է բոլորին, որոնք չլսեցին վերջիններիս ճշմարիտ ձայնը: Սապահ-Գյուլյանը գրում է. «Եթէ եղան բթամիտներ, քաղաքական ամենափոքր հոտառութիւնից զուրկ՝ սոսկական անհատներ եւ դասակարգային որոշ շերտաւորումների, խմբաւորութիւնների արտահայտիչներ, որոնք անկարող գտնուեցան, ինքնաբերաբար, իրենց ուղեղի եւ զգացմունքների, իրենց բանականութեան օրէնքների գործունեութեամբը, գիտակցելու, ճանաչելու, վերլուծել հասկանալու «իթթիհատի» էությունը եւ միայն **այսօր** է[2], որ իրենց աչքերը բացւում են, երբ թշնամին արդեն զարկել, գետն է անցել ու իր մահասփյուռ գործն է տեսնում, - ապա ինչո՞ւ նրանք, այդպիսիները՝ ժամանակին, դեռ շա՛տ առաջները, իրենց ականջները խցեցին, աչքերը փակեցին, չը լսեցին, չը տեսան, աչքի առաջ չունեցան Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան անկեղծ, անկաշառ, անվերապահ, է՛ն յանդուգն, է՛ն անվեհեր ձայնը, նրա բոցավառ խոսքը, արձակած ճիչը, երբ նրա մամուլը, մեծ ու փոքր գործիչները, իր պատասխանատու մարմինները՝ ամէն տեղ, որ **Հայկական Դատի** համար բաբախող սիրտ կար, ուր ազգային, ժողովրդական ազատագրութեան թրթիռ գոյութիւն ունէր, - բոլոր այդ վայրերում դեռ

---

թյուններին, մտավորականությանը, մեծահարուստներին եւ այլ ուժերի ու կառույցների մեղադրում է ոչ ավել ոչ պակաս հայկական ջարդերի համար:

[1] Սապահ-Գյուլեան Ս., նշվ. աշխ., էջ 3:

[2] Աշխատությունը գրվել է 1916 թ.:

շատ երկար ժամանակներից ի վեր, նրանք ասում, գոռում, փաստում, աղաղակում, բացատրում էին՝ թէ ո վ է, ինչ է, ի՞նչ նպատակների, քաղաքական որպիսի փիլիսոփայութեան, պետական ինչպիսի տեսաւթիւնների է հետապնդում «Իթթի- հատը »[1]:

Այս երկարաշունչ եւ զգայական ելոյթն այնքան էլ համոզիչ չի հնչում: Եվ դա այն պարզ պատճառով, որ նախ՝ երբ խոսք է գնում «Հայկական Դատի» համար բաբախող սրտերի մասին, դա նշանակում է, որ ինչ քայլեր որ ձեռնարկել են ազգային-ազատագրական պայքարի ղեկավարներն ու մասնակիցները, ձեռնարկել են հանուն այդ դատի արդարացի լուծման, իսկ եթե չեն կանխատեսել դրանց բացասական հետեւանքները, ապա դա բնորոշ է եղել ոչ միայն ազատագրական պայքարի ելած բոլոր նվիրյալներին, այլեւ հենց իրենց՝ հնչակյաններին: Երկրորդ, իրոք հնչակյանները չմասնակցեցին օսմանյան ընդդիմադիր տարրերի Բ կոնգրեսին (1907 թ. Փարիզ), բայց դա չի նշանակում, որ նրանք դեմ էին երիտթուրքերի հետ համագործակցությանը: Նրանք առաջինն էին հայ քաղաքական կազմակերպություններից, որ դեռեւս 1891-92 թթ. բանակցում էին «Միություն եւ Յառաջադիմություն» կազմակերպության հիմնադիր Ահմեդ Րիզայի հետ: Փաստ, որի մասին գրում է հենց ինքը՝ Մապահ-Գյուլյանը[2]: Այնպես որ՝ համագործակցության ձգտել են ոչ միայն հայ հոգեւոր, մտավորական եւ քաղաքական մյուս ուժերը, այլ նաեւ հնչակյանները: Սահմանադրության շրջանում նրանք համագործակցում էին «Հուրիեթ վե իթիլյաֆ» կազմակերպության հետ եւ ոչ մեկը չի կարող երաշխավորել, որ եթե վերջինները գային իշխանության՝ կիրականացվեր «Ինքնավար Հայաստանի» հնչակյան ծրագիրը: Մի բան ակնհայտ է, որ Արեւմտյան Հայաստանի վերաբերյալ ծրագրված որեւէ մոդել չիրականացավ:

---

[1] Սապահ-Գյուլեան Ս., նշվ. աշխ., էջ 13:

[2] Նույն տեղում, էջ 129-139: Ի դեպ, սա այն Ահմեդ Րիզան է, որը Փարիզում հրատարակում էր «Մեշվերեթ» պարբերականը («Քննարկում»), իսկ 1908 թ. հեղափոխությունից հետո դարձավ Ազգային Ժողովի նախագահ:

Սապահ-Գյուլյանն անդրադառնալով Ահմեդ Րիզայի գործունեության հիմնական ուղղվածություններին, հետեւյալն է գրում. «Սկզբում, ուրեմն, «Մեշվերէթը» շեշտած կերպով հակահայկական գույն չուներ, ուզում էր հայերին բաժանել, Տաճկահայ եւ Ռուսահայի խնդիր յարուցանել, ձեռքի տակից՝ կասկած ներշնչել դէպի Հայ յեղափոխականները եւ նրանց արտադրած գործերը, ժողովրդական շարժումները: Իր նախընտրական նիւթերն էին՝ «Կարգ եւ Յառաջադիմութիւն», «Սահմանադրութիւն», «Ամբողջականութիւն», «Օսմանցիութիւն», «Ոչ միջամտութիւն»:

Մեր յարաբերութիւնները, առանց ծանր ընդհանլտումների, շարունակում էին բարի դրացիութեան, լայնախոհ հակառակորդութեան հողի վրայ՝ գէթ մեր կողմից»[1]: Ընդգծվածից պարզ է դառնում, որ հնչակյանները Ահմեդ Րիզայի հետ ձգտել են բարիդրացիական հարաբերությունների այն պատճառաբանությամբ, որ «Մեշվերեթը» «Շեշտուած կերպով հակա-հայկական գույն չուներ»: Բայց արդյո՞ք, երբ դաշնակցականները բանակցում էին երիտթուրքերի հետ, վերջիններս հակահայկական գույն ունեին: Անշուշտ, ոչ: Ուրեմն, հեղինակի կողմից հայ ազգային-ազատագրական պայքարը ղեկավարող ուժերին եւ հատկապես Դաշնակցությանը ջարդերի համար «պատասխանատու» համարելը չի հիմնավորվում:

Շարունակելով թեման՝ Սապահ-Գյուլյանը գրում է. «Ս. Դ. Հնչակեանութիւնը ցոյց տուեց, ապացուցեց, որ մեր իսկական, անվերծանելի թշնամին «Իտտիհատն»ն էր, եւ նրա գլխին էր, որ պէտք էր զարկել, հարուածել, առանց խնայելու, առանց սպասելու՝ առաջին վայրկենից իսկ թոյլ չը տալու, որ նա զարգանար, ուռճանար եւ իր ցանցերով պատէր երկրի չորս կողմերը, իր դիրքը ամրապնդէր, երբ յետոյ՝ այլեւ ո՛ւշ, շատ ո՛ւշ, շա՛տ դժուար կը լինէր նրան գլորել, տապալել, ոտքի տակ առնել, տրորել»[2]:

---

[1] Նույն տեղում, էջ 138-139: Այս եւ հետագա բոլոր ընդգծումները մերն են:
[2] Նույն տեղում, էջ 14:

Բայց, արդյոք հայության ուժերն ու միջոցները ներում էին, որ արգելք դառնային «իթթիհատի» զարգացմանը եւ ծավալմանը: Անշուշտ, ոչ: Դա դյուրին խնդիր չէր: Բայց, չպետք է մոռանալ նաեւ, որ հայ քաղաքական ղեկավարների, այդ թվում եւ հնչակյանների պայքարի նպատակը նախ եւ առաջ Աբդուլ Համիդի ռեժիմի եթե ոչ տապալումը, ապա գոնե՝ բարեփոխումն էր: Իսկ սա ենթադրում էր համիդյան ռեժիմին ընդդիմադիր բոլոր ուժերի այդ թվում եւ թուրքերի հետ համագործակցություն: Եվ այդ համագործակցության անհրաժեշտությունը գիտակցել ու չեն անտեսել նաեւ հնչակյանները: Այլ հարց է, որ 1908 թ. Սահմանադրությունից հետո Հ.Յ. Դաշնակցությունը, ընտրելով ոչ լավագույն ուղին, ամբողջովին նվիրվեց օսմանյան հայրենիքի վերաշինության եւ վերափոխության գործին՝ անհեռատեսորեն աչքաթող անելով ու դրանով իսկ ակամա վնաս հասցնելով արեւմտահայության ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Քանի որ մեր նպատակը 1885-1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ հնչակյանների տեսաբաններից մեկի՝ Սապահ-Գյուլյանի պատմագիտական մտքի գնահատումն է, ուստի ավելորդ ենք համարում ավելի խորամուխ լինել նրա՝ «երիտթուրքերի» հետ ՀՅԴ եւ այլ ուժերի համագործակցության միակողմանի քննադատականների մեջ: Թեպետ ակնհայտ է, որ երիտթուրքերին այդ համագործակցությանը մղեց հայ ազգային-ազատագրական շարժումը: Բայց արդյոք այդ շարժումն ընթացավ ամենաարդյունավետ ուղիով: Կարծում ենք, ոչ: Ինչպես կուսակցական ցանկացած հուշագիր կամ պատմաբան, Սապահ-Գյուլյանը նույնպես, նկարագրելով հայ ազատամարտի որեւէ դրվագ, որ ձեռնարկել էին հնչակյանները, չափազանցված է ներկայացնում դրա դրական հետեւանքները, վտր-ձում ավելի խոհեմ ներկայացնել իր կուսակցության մարտավարությունը. այն դեպքում, երբ մեծ առումով այն ոչնչով չի տարբերվել, ասենք, Դաշնակցության մարտավարությունից:

Իր աշխատության մեջ հեղինակն ազատագրական շարժումը ղեկավարող բոլոր ուժերին (Դաշնակցությանը, Կ. Պոլսի Ազ-

գային ժողովին, պատրիարքարանին, մտավորականներին, առեւտրականներին եւ այլն) պատասխանատու է համարում հայոց ջարդերի համար, որովհետեւ նրանք համագործակցել են երիտթուրքերի հետ: Փորձում է ապացուցել, որ այս առումով ամենաազգոնն ու հեռատեսը Հնչակյան կուսակցությունն էր:

Քաղաքական համակ միամտություն է «բուրում» հնչակյան կուսակցության կազմակերպած գործողություններին (Փոքր-Հայքի 1891-93 թթ. շարժումներ, Բաբը Ալիի ցույց, Սասունի 1894 թ. ապստամբություն եւ այլն) հեղինակի տրված գնահատականներից: «Անգլիական մամուլը կրակ էր ժայթքում, - գրում է նա, - ահագին չափեր էր տուել Հայկական Խնդրին: Դոքտոր Դիլլոնը, «Դէյլի Տելեգրաֆ»ին ուղղած իր հռչակավոր թղթակցութիւններով՝ Սասնո անհաւասար կռիւը դիւցազներգակ ոճով նկարագրել, աշխարհի առաջն էր դրել: Կ. Պոլսի անգլիական դեսպան՝ Սըր Ֆիլիպ Քըրին, Դիլլոնի գրածների տրցակը թեւքի տակ, Սուլթան Համիդին էր ներկայացրել եւ նրա առաջը փռել այն՝ ինչ որ իր դիւանագիտական ներկայացուցիչները եւ սպասարկութեան մէջ գտնուող դեղին մամուլը, ժխտում էին: Լոնդոնի մէջ բազմազանգուած ժողովներ, հաւաքոյթներ, դասախօսութիւններ էին ունենում: Հրապարակ էին եկած համբաւաւոր գլուխներ, անվիճելի հեղինակութիւն ունեցող անձնաւորութիւններ»[1]:

Ինչպես համոզվում ենք, Սապահ-Գյուլյանը շատ է ոգեւորված հնչակյան ձեռնարկների Եվրոպայում ունեցած արձագանքներից: Նա նաեւ այն կարծիքին է, որ դրանք հանգեցրին մայիսյան բարենորոգումների ծրագրին[2]:

Հետաքրքիր է, որ, ըստ նրա, «Մեշվերեթի» շուրջ համախմբված գործիչներն Ահմեդ Րիզայի գլխավորությամբ կանչում են իրենց եւ հորդորում առաջ չքաշել տարանջատման խնդիր, այլ՝ աշխատել ներմուծել ամբողջ Օսմանյան պետության բոլոր ժողովուրդների վրա տարածվող բարենորոգումներ: Բայց ստանում

---

[1] Սապահ-Գյուլեան Ս., նշվ. աշխ., էջ 140:

[2] Նույն տեղում, էջ 140-142:

են մերժում: Իր իսկ՝ Սապահ-Գյուլյանի արտահայտությամբ՝ «հոգեզմայլության քաղցր վայրկյանները» երկար չեն տեւում, քանզի դրանց հետեւում են հետապնդումներն ու ջարդերը:

Իսկ ինչո՞ւ: Դժբախտաբար, Սապահ-Գյուլյանն այս հարցին չի պատասխանում: Իսկ պատասխանը միանշանակ պարզ է՝ Եվրոպան հետամուտ էր իր քաղաքական շահերին, իսկ այդ շահերում առկա հակասությունները հնարավորություն չէին ընձեռում նրանց հանուն հայոց բարենորոգումների միասնական ճնշում գործադրել Թուրքիայի վրա: Իսկ սա թեւավորում էր թուրքական իշխանություններին եւ արդյունքում նպաստում ջարդերի քաղաքականությանը:

Սապահ-Գյուլյանը փորձում է արդարացնել հնչակյան տարանջատ ձեռնարկները, բայց նույնը չի անում Դաշնակցության՝ նմանաբնույթ ձեռնարկների վերաբերյալ: «Տեղի ունեցավ, - գրում է նա, - Կ. Պոլսոյ «օսմանյան բանկայի դեպքը»: 26 օգոստոս 1896: Հեռագիրը հասավ Պարիզ: Երեկոյեան թերթերը "Դեպքի" գլխաւոր գծերը պատմելով՝ ամենաբուռն յարձակումներ գործեցին հայերի դեմ: Եկաւ եւ ահռելի կոտորածի բոթը»[1]:

Այնինչ թե՛ Բանկ-Օտոմանի (Օսմանյան բանկ), թե՛ Գում-Գափուի եւ թե՛ Բաբը Ալիի դեպքերին անհրաժեշտ է մոտենալ նույն չափորոշիչներով: Ակնհայտ ճշմարտություն է, որ դրանց հիմնական նպատակը եվրոպական տերությունների միջամտությանը հասնելու ձգտումն էր: Բայց Բանկ-Օտոմանի դեպքի հետ կապված հետաքրքիր տեսություն է զարգացնում Սապահ-Գյուլյանը: Նա գտնում է, որ դա բխում էր «Եվրոպայի շահերի խանգարումի» տեսությունից, որով ժամանակին առաջնորդվել են նաեւ հնչակյանները[2]:

Հարկավ, Բանկ-Օտոմանում էր պահվում Թուրքիայում ներդրված եվրոպական կապիտալը եւ նրա պայթեցումով խոշոր հարված կհասցվեր այդ երկրների՝ Թուրքիայում ունեցած տնտե-

[1] Նույն տեղում, էջ 164:
[2] Նույն տեղում, էջ 165:

սական շահերին: Բայց արդյո՞ք հայ հեղափոխականներն այս դեպքում չէին ըմբռնում, որ նման արարքով ոչ թե իրենց կողմ, այլ՝ իրենց դեմ կտրամադրեին թուրքերին: Իսկ եթե հասկանալով են ձեռնարկել այդ քայլը, ապա գնացել են արկածախնդրության: «Եվրոպական շահերի խանգարումի» տեսության հնչակյան հետագա ըմբռնումների հետ կապված՝ հեղինակը գրում է, թե հնչակյանները դրանով «ուզեցել են հասկացնել, որ Հայկական Դատը եւ նրա բազուկը ներկայացնող Հայ Յեղափոխականը պիտի զար Հայաստանից եւ Հայ Ազգից քաղաքական այնպիսի նոր գոյացություններ ստեղծելու, որ Եվրոպական պետութիւնները նոյն իսկ իրենց քաղաքական եւ տնտեսական շահերի տեսակէտով՝ աւելի լաւ պիտի համարէին Հայ քաղաքական մարմնի վրայ յենուելու, քան թուրք, որ արդէն մեռնում էր եւ չէր կարողանում ժամանակակից կեանքի բարդ պահանջներին յարմարուելու»[1]:

Տեսականորեն այս խնդիրը միանգամայն ճիշտ էր դրվում, բայց արդյո՞ք գործնականում դրա իրականացնելն այդքան դյուրին էր: Կարծում ենք, որ՝ ոչ: Հայաստանի, որի պատմական տարածքների ժողովրդագրական պատկերը թուրքական իշխանությունների կողմից ամբողջովին այնպես էին փոխվել, որ շերտընդմեջ ապրող եւ հաճախակի վարչական ձեւափոխումների ու զանգվածային արտագաղթի հետեւանքով արհեստականորեն «փոքրամասնության» վերածված հայ ժողովրդից «նոր գոյացություններ» անհնար էր ստեղծել, այն է՝ այնպիսին, որի վրա հենվեր Եվրոպան մեռնող Թուրքիայի փոխարեն: Այն համոզմունքին ենք, որ ստեղծված պայմաններում առավելագույնը, ինչին կարող էր հասնել հայ ազատագրական պայքարը, ազգային քաղաքական ուժերի միասնականությամբ ժողովրդի կարող ուժերի ընդհանուր զինումն ու նախապատրաստումն էր՝ ենթադրվող ստեղծվելիք բարենպաստ պահին վճռական ու հաղթական հարվածով ցանկալի արդյունքի հասնելու համար: Բայց, հակառակ

---

[1] Նույն տեղում, էջ 165:

դրան՝ մի կողմից տարանջատ պայքարով շարունակաբար ջլատվում էին հայոց սակավաթիվ ուժերը, մյուս կողմից մեծ տերությունների միջեւ խորացող հակասությունները չէին թողնում, որ «մեռնի անբուժելի հիվանդ» Թուրքիան:

Անընդունելի է նաեւ այն, որ հայկական առաջին մասսայական ջարդերը Սապահ-Գյուլյանը փորձում է պատճառաբանել[1] Բանկ-Օտոմանի ձեռնարկով, որը, նրա կարծիքով, բացատրվում էր «Եվրոպական շահերի խանգարումի» տեսությամբ: Սակայն, հեղինակը մոռանում է, որ նման ջարդերի առիթ հանդիսացավ նաեւ Բապը Ալիի ցույցը, որը ծրագրված էր եվրոպական միջամտությանը հասնելու նույն թյուր համոզմունքով: Թե՛ Եվրոպայի շահերին հարվածելու (եթե իրոք դրանք գոյություն ունեին) եւ թե՛ նրա միջամտությունը ձեռք բերելու տեսություններով առաջնորդվելը միշտ հանգեցրել են դժբախտ հետեւանքների: Աա է պատմական ճշմարտությունը, որն ընդունում է նաեւ Սապահ-Գյուլյանը, բայց, ափսոս, որ դա անում է միայն դաշնակցական գործողությունների մասին խոսելու դեպքում:

Բավականին հետաքրքիր է աշխատության «Անբարոյական եւ հուսալքման ազդակներ» գլուխը[2]: Այստեղ Սապահ-Գյուլյանը հայ ազգային-ազատագրական պայքարի ավարտը կամ իր իսկ արտահայտությամբ «Հայ հեղափոխութեան վիժելը» կապում է «Միոհատեան Սահմանադրութեան» երկրորդ կիրառության, այսինքն՝ 1908 թ. Սահմանադրության ընդունման հետ: Թերեւս կարելի է նրա հետ այս հարցում համաձայնվել, բայց, պնդել, որ մինչեւ այդ «Հայ Յեղափոխութիւնը ո՛չ կանգ էր առել ո՛չ էլ վիժել, այլ իր կատարեալ կենսունակութեան մէջն էր, նա շարունակում էր իր եղանելու, լինելու վիճակը եւ մտել էր մի նոր փուլի մէջ, գոր-

---

[1] Հեղինակը շփոթում է պատճառն ու հետեւանքը: Ընդգծենք, որ հայկական բոլոր ջարդերը թուրքական իշխանությունների ծրագրված պետական քաղաքականության արդյունք էին եւ, մեր կարծիքով, դրանք կլինեին անկախ այն բանից, թե ինչպիսի քայլեր կձեռնարկեին հայերը:

[2] Տե՛ս Սապահ-Գյուլեան Ս., նշվ, աշխ., էջ 89-98:

ծում էր իր ունեցած նորագոյն պայմաններին համեմատ»[1], այնքան էլ ճիշտ չի լինի: Արեւմտահայ ազատագրական պայքարը 20-րդ դարսակզբին, հատկապես Սասունի 1904 թ. ինքնապաշտպանությունից հետո, աստիճանաբար անկում էր ապրում: Բայց հեղինակը միանգամայն իրավացի է, երբ գրում է. «Եւ մի թէ «միտհատեան Սահմանադրութեան» երկրորդ կիրառութիւնը, որպէս պարզ դիվանագիտական խաղ, հետեւանք չէր Հայ Յեղափոխականութեան բարձրացած ալիքներին եւ դա մի թէ պատմական պարզ ճշմարտութիւն չէր, կարո՞ղ էր տարակուսանք վերցնել»[2]:

Իսկապես, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, որը չգիտես ինչու ժամանակի գրականության մեջ «հեղափոխություն» է անվանվել, նպաստեց նաեւ թուրք տարրի մեջ հեղափոխական խմորումների աճին, ովյոնք, ձգտելով սուլթան Համիդի վարչակարգի տապալմանը, փորձեցին փրկել Օսմանյան կայսրությունը մասնատումից: Սակայն, ըստ հեղինակի, սահմանադրությամբ արբեցողները սա չհասկացան եւ ամեն առիթով գրում էին, «որ Հայ Յեղափոխութիւնը այլեւս վիժելի է»[3]:

Թերեւս ճիշտ կլիներ գրել, որ ոչ թե «վիժել է», այլեւ՝ ավարտվել է: Քանզի առաջինը նշանակում է ձախողվել: Բայց սուլթանի տապալումը, դեպքերը ժամանակի մեջ գնահատելու դեպքում, պետք է համարել հաղթանակ, որով ավարտվեց հայ հեղափոխությունը: Այլ հարց է, որ հետագայում երիտթուրքերը երկդիմի եւ կեղծ դուրս եկան:

Մեծ ցավ ապրելով եւ ափսոսանքով Սապահ-Գյուլյանը գրում է, որ 1908-ից հետո «Այլեւս ոչ Հայ ազգ կար, ոչ Հայաստան: Հայ ազգը օսմանեան ազգութեան մի տարրն էր դարձել, Հայաստանն էլ լոկ աշխարհագրական արտահայտութիւն՝ անցեալից մնացած»[4]:

---

[1] Տես Սապահ-Գյուլեան Ս., նշվ. աշխ., էջ 89:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 90:

[4] Նույն տեղում:

Բայց արդյո՞ք մինչեւ սահմանադրությունը «Հայաստան» հասկացություն կար Օսմանյան կայսրությունում: Եթե բացառենք հատուկենտ հայալեզու հրատարակություններում հանդիպող հիմնականում որպես պատմական տերմին, ապա՝ ոչ: Իսկ հայ ազգը ոչ թե օսմանյան ազգության մի տարրն էր դարձել, այլ «Օսմանյան հայրենիքի մասը»՝ ձգտելով հասնել նրա վերափոխմանը եւ ժողովրդավարացմանը: Եվ եթե այդ առումով չհասավ հաջողության, դա միայն Դաշնակցության եւ մյուս քաղաքական ուժերի մեղքը չէր: Չէ՞ որ կյանքի չկոչվեց նաեւ հետսահմանադրության շրջանում հնչակյանների որդեգրած «ինքնավար Հայաստանի» ծրագիրը:

Ի մի բերելով Ս. Սապահ-Գյուլյանի աշխատության գաղափարները եւ տեսական ընդհանրացումները, պետք է շեշտել, որ.

1. Նրա հիմնական նպատակն է ապացուցել, որ հայկական ջարդերի համար առիթներ տալու պատասխանատվությունը կրում են հայ ղեկավար քաղաքական, հոգեւոր, մտավորական եւ բոլոր այլ ուժերը, բացի հնչակյաններից:

2. Հայ ազգային-ազատագրական պայքարի միեւնույն նպատակով կազմակերպված դրվագները դրական է գնահատում, եթե դրանք կազմակերպել են հնչակյանները, իսկ եթե նույն՝ եվրոպական միջամտության հույսով, դրանք կազմակերպել են այլ քաղաքական ուժեր եւ հատկապես՝ դաշնակցականները, խստորեն քննադատում է:

3.Մեղադրում է Դաշնակցությանը երիտթուրքերի հետ համագործակցելու համար. այն դեպքում, երբ առաջիններից մեկն իր կուսակցությունն է ձեռնարկել համագործակցության նմանատիպ փորձեր, ասենք՝ Իթիլաֆի հետ:

Եվ, վերջապես, Հնչակյան կուսակցության գործունեության անսխալականությունն ապացուցելու նրա ձգտումներն ամենեւին չեն հիմնավորվում: Մի բան ակնհայտ է, որ եթե այդ կուսակցությունն իսկապես գործում էր արեւմտահայության շահերին համահունչ եւ բոլոր հարցերում իսկապես անթերի էր, ապա այդքան արագորեն չէր պառակտվի եւ արդեն 1890-ական թթ. երկ-

րորդ կեսից չէր զրկվի հայ ազատամարտի առաջատարի իր դերից: Կարծում ենք, սա տրամաբանական փաստարկ է, որով ամեն ինչ ասված է:

Ավելացնենք նաեւ, որ Ս. Սապահ-Գյուլյանի մյուս ուսումնասիրությունները[1] նպատակահարմար չենք համարում քննարկել, քանզի վերլուծած այս աշխատությունը ստեղծված է մեր հիշատակած նախորդների հիման վրա եւ իր մեջ հիմնականում ներառում է նրանցում արտահայտած տեսակետները:


СУРЕН САРГСЯН

ИИ НАН РА


## НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА АРМЯНСКОГО НАРОДА 1885-1908 ГГ. В ОЦЕНКЕ С. САПАХ-ГЮЛЯНА

### РЕЗЮМЕ


В 1880-ых годах - в период формирования национальных партий, освободительная борьба армянского народа переживала бурный подъем, становясь более организованной и зрелой. Однако, в 1908 г. ввиду многих объективных и субъективных причин она пришла в упадок. Младотурецкий переворот и конституция 1908 г. притупили бдительность не только рядовых граждан, но и представителей партий и опытных деятелей - руководителей борьбы. В результате, воспользовавшись созданной ситуацией и хаосом Первой мировой войны, младотурки сумели осуществить план посредством геноцида армян. Наряду с другими партийными историографами к теме обратился также выдающийся деятель партии Гнчакян Сапа-Гюлян. Излагая историю своей партии, он пытается показать, что ошибки и недостатки имели место в деятельности всех партий, за исключением партии Гнчакян. Неоднократно осуждая партию Дашнакцутюн в действиях, которые давали повод


[1] Տե՛ս Սապահ-Գյուլեան Ս., Երիտասարդ Հայաստան, Փարիզ, 1908, նույնի՝ Ինքնավար Հայաստան, Թիֆլիս, 1915, նույնի՝ Փոքր Հայքի յիշատակները, Չիկագո, 1917 եւ այլն:

турецким властям преследовать и истреблять армян, Сапа-Гюлян забывает о том, что история самой партии Гнчакян также богата подобными действиями.

Освещая отмеченные вопросы, в статье сделана попытка объективного анализа и научной оценки работы С. Сапа-Гюляна.

SUREN SARGSYAN
IH NAS RA

## THE ARMENIAN NATIONAL LIBERATION STRUGGLE OF 1885-1908 IN S. SAPAH-GYULYAN'S APPRAISAL

### SUMMARY

In the eighties of XIX century, during the period of formation of the National parties, the national-liberation struggle of the Armenian people outlived its upsurge, getting mature and more organized. Anyway, in 1908 it fell because of many objective and subjective causes.

The Young Turk's upheaval and the Constitution of 1908 dulled the vigilance of the representatives of the national parties and the active figures-leaders of the struggle as well as the common citizens. As a result the Young Turks, taking advantage of the created situation and the favorable chaos of WW I, started to carry out their inhuman plan of "solving" the Armenian question through Genocide of the Armenian people.

About the national - liberation struggle of 1885-1908 is written a lot .The historyographer of Hnchakian party Sapah-Gyulyan also wrote about it as well as the representatives of the other Armenian national parties. He introduced the complete history of his party and tried to show that there were mistakes and shortcomings in the activities of all parties except Hnchkian party. Sapah-Gyulyan, often blaming Dashnaktsutiun party for the actions that brought the Turkish rulers to persecution and massacres of the Armenian people, overlooked that the history of Hnchakian party is also rich in such activities.

Taking into consideration the mentioned problems, we tried to introduce the objective analyze and scientific appraisal of S. Sapah-Gyulyan's work.

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Խորհրդային Հայաստանում միակուսակցական կառավարման համակարգի ձևավորման հարցը հայ պատմագիտության մեջ առանձին ուսումնասիրության առարկա չի հանդիսացել: Մինչ այժմ կատարված հետազոտություններում հիմնականում ներկայացվել է խորհրդային կարգերի հաստատման գործընթացի հանգամանալի պատմությունը՝ առանց ուշադրություն դարձնելու միակուսակցական համակարգի ձևավորման պատճառներին, յուրահատկություններին և հետևանքներին:

Այդ գործընթացի ուսումնասիրության համար հատկապես կարևորվում է կառավարման ինստիտուտների ստեղծման և դրանց գործառույթների ձևավորման ընթացքի հետազոտությունն ու վերլուծությունը:

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի բոլշևիկյան-կոմունիստական կուսակցության գաղափարախոսության մեջ և ծրագրային դրույթներում կարևորվում էր իրենց նպատակներին հասնելու համար «պրոլետարական դիկտատուրայի» հաստատման անհրաժեշտությունը: Դիկտատուրա-անսահմանափակ իշխանություն հասկացությունն ինքնին դասակարգային մենիշխանության հաստատում է նշանակում: «Պրոլետարիատի դիկտատուրան» մարքսիզմի քաղաքական տեսության հիմնական հասկացություններից է: Ըստ մարքսիզմի՝ կապիտալիստական և սոցիալիստական հասարակարգերի միջև ընկած է անցումային շրջան, որի քաղաքական էությունը բանվոր դասակարգի դիկտատուրան է՝ ուղղված իշխանությունից զրկված դասակարգերի

դիմադրության հաղթահարմանը[1]: Կոմունիստական գաղափարախոսությունում դիկտատուրային կցված է պրոլետարական բառը՝ ինչը նշանակում էր, թե այդ իշխանությունը վերապահվում էր բանվոր դասակարգին՝ հետագայում, ըստ Վ. Լենինի, բանվորագյուղացիական դաշինքին կամ աշխատավորությանը: Հասկանալի է, որ հասարակության նշված սոցիալական շերտերն իրենց ամբողջությամբ չէին կարող իրացնել նման գործառույթներ, ուստի տվյալ գործառույթը տրվում էր բանվոր դասակարգի շահերն արտահայտող քաղաքական ուժին՝ կոմունիստական կուսակցությանը, ժողովրդի կողմից ընտրված պատգամավորական խորհուրդների (սովետների) իշխանության ձևով, ինչը կիրառվեց Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, քանի որ այդ երկրի գոյություն ունեցող խորհուրդներում արդեն իսկ մեծամասնություն էին կազմում բոլշևիկները[2]: Մինչ այդ՝ պրոլետարիատի կամ բանվոր դասակարգի կուսակցությունը ՌՍԴԲԿ-ն էր, որը ժամանակի ընթացքում բաժանվել էր երկու թևերի՝ մենշևիկների (չափավորների) և բոլշևիկների (կոմունիստ-ծայրահեղականների): Նրանց պառակտման գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ ռուսաստանյան առաջին հեղափոխության ժամանակ (1905-1907 թթ.) մենշևիկները չէին ընդունել երկրում զինված ապստամբության և պրոլետարական դիկտատուրայի հաստատման անհրաժեշտությունը: 1905 թ. ՌՍԴԲԿ 3-րդ համագումարում բոլշևիկները հայտարարեցին, որ հեղափոխության հաղթանակից հետո պետք է ստեղծվի ժամանակավոր հեղափոխական կառավարություն, որը պետք է լինի «հաղթանակած դասակարգերի դիկտատուրայի կառավարություն, այսինքն պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա»[3]: Այստեղ ավելորդ չէ մեջբերել բոլշևիկների առաջնորդ Վ. Լենինի այն խոսքերը, որ «...մեկ

---

[1] Տե՛ս Քաղաքագիտություն, Հանրագիտական բառարան (Պողոսյան Վ., Միրումյան Կ. և ուր.), Ե., 2004, էջ 343:

[2] Տե՛ս История Коммунистической партии Советского Союза, М., 1984, էջ 203:

[3] ՍՄԿԿ-ն բանաձևերում և որոշումներում, Ե., 1954, էջ 98:

դասակարգի դիկտատուրան անհրաժեշտ է ոչ միայն ընդհանրապես ամեն մի դասակարգային հասարակության համար, ոչ միայն բուրժուազիային տապալած պրոլետարիատի համար, այլև մի ամբողջ պատմական ժամանակաշրջանի համար, որը բաժանում է կապիտալիզմն «անդասակարգ հասարակությունից»՝ կոմունիզմից»[1]: Դրանից հետևում է, որ իբրև բանվոր դասակարգի շահերը ներկայացնող միակ ուժ՝ կոմունիստական կուսակցությունը պետք է ստանձներ դիկտատուրայի հաստատման իրականացումը, ինչը և տեղի ունեցավ Ռուսաստանում, որտեղ ժամանակի ընթացքում Վ. Լենինի գործի շարունակող Ի. Ստալինը կարողացավ երկրի կառավարումն ամբողջությամբ ենթարկել կոմկուսին, որի ղեկին կանգնեց հենց ինքը:

Հասկանալի է, որ ռուսական կարմիր բանակի օգնությամբ խորհրդայնացած Հայաստանը պետք է գնար նույն ճանապարհով, առավել ևս, որ 1922 թ. մարտին արդեն իսկ ընդգրկվել էր Անդրդաշնության մեջ, իսկ 1922 թ. դեկտեմբերին՝ դարձել նոր կազմավորված ԽՍՀՄ բաղադրատարրերից մեկը:

Սակայն Հայաստանում նոր կառավարման համակարգի ինստիտուտների ձևավորման և նրանց վրա կոմկուսի ազդեցության կայացման, ապա ամբողջությամբ իշխանությունն իրեն ենթարկելու գործընթացն ունեցավ իր որոշ յուրահատկությունները, որոնք իրենց հերթին պայմանավորված էին առանձին օբյեկտիվ պատճառներով:

Ինչքան էլ Հայաստանի խորհրդայնացումը ընթանում էր ՌԿ(բ)Կ-ի թելադրանքով և հաշվի էր առնվում Ռուսաստանի փորձն ու շատ դեպքերում պատճենահանվում էր նրա անցած ուղին, այնուամենայնիվ Հայաստանում չկային այն անհրաժեշտ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պայմանները, որոնք թույլ կտային այդ աշխատանքները համեմատաբար սահուն և արագ անցկացնելու:

Ամենից առաջ Հայաստանի խորհրդայնացման նախօրյակին հանրապետության արտաքին և ներքին դրությունը ծայրա-

[1] Ленин В.И., Полное собрание сочинений, 5-е изд., т. 33, М., 1974, с. 35.

հեղ ծանր էր, քանի որ երկիրը հայտնվել էր Թուրքիայի հետ պատերազմական վիճակում և ծանր պարտություն էր կրել: Բացի այդ, գոյություն ունեին տարածքային խնդիրներ, առկա էր տնտեսական ողբալի վիճակ, քայքայում, սով, համաճարակ, հարյուրհազարավոր գաղթականներ և այլ դժվարություններ, որոնք, անշուշտ, հրատապ լուծումներ էին պահանջում: Ասվածին պետք է հավելել այն, որ, խորհրդայնացած Հայաստանում իշխանության ղեկին անցած Հայհեղկոմի վարած ոչ ճիշտ քաղաքականության հետևանքով, 1921թ. տեղի ունեցավ փետրվարյան հակախորհրդայինի ապստամբությունը, որն էլ ավելի բարդացրեց կացությունը երկրի ու նոր իշխանության համար:

Մյուս կարևոր հանգամանքը, որը հնարավորություն չէր տալիս կուրորեն պատճենահանել Ռուսաստանի փորձը, այն էր, որ Հայաստանը գերազանցապես գյուղատնտեսական երկիր էր և գործնականում չկար ձևավորված մեծաքանակ բանվոր դասակարգ, որի վրա կայաղ էր հենվել հայկոմկուսը՝ խորհրդային կարգեր հաստատելիս: Ավելին, երբ խորհրդային կարգեր հաստատելուց հետո Ռուսաստանի օրինակով իսկույն սկսեցին կիրառել «ռազմական կոմունիզմի» բռնագրավումների քաղաքականությունը, այն խիստ բացասական հետևանքներ ունեցավ Հայաստանի համար:

Արանից բխում էր նաև այն իրողությունը, որ իրականում ծանրակշիռ քաղաքական ուժ չէին ներկայացնում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, որոնք առավել թուլացել էին 1920 թ. Մայիսյան ապստամբությունից հետո: Հայաստանի ակտիվիստ բոլշևիկների մի մասը բանտարկվել, իսկ մյուս մասը հիմնականում խորհրդայնացված Բաքու էր անցել: Տարածաշրջանում կուսակցության աշխատանքները կազմակերպում էր ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոն, որն իր հիմնական գործունեությունը ծավալում էր Ադրբեջանում: 1920 թ. հունիսի 30-ին վերոնշյալ կուսակցական մարմինը որոշում կայացրեց հիմնել Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն (ՀԿ(բ)Կ)՝ նրան տալով կուսակցության մարզային կազմակերպու-

թյան իրավունքներ և ենթարկելով Կենտկոմի Կովկասյան բյուրոյին[1]: Այս որոշման հիմնական նպատակը ապստամբության նախապատրաստումն ու խորհրդային կարգերի հաստատումն էին: 1920 թ. սեպտեմբերին ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոն հաստատեց ՀԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեի կազմը, որի մտան Ի. Դովլաթյանը, Ա. Նուրիջանյանը, Հ. Կոստանյանը, Ա. Տեր-Գաբրիելյանը և Ա. Խանջյանը (մի փոքր ավելի ուշ՝ Ս. Կասյանը և Ա. Մռավյանը) [2]:

Ձևականորեն այդ կազմակերպության խնդիրն է դառնում Հայաստանում սոցիալիստական ապստամբության կազմակերպումը: Ասվածի հաստատումը տեսնում ենք ՌԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեի 1920 թ. հոկտեմբերի 14-ի որոշման մեջ, որտեղ համաձայնվում է Հայաստանի Կոմկուսի Կննտրոնական կոմիտեի և ՌԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեի Կովկասյան բյուրոյի այն կարծիքի հետ, որ անհրաժեշտ է Հայաստանում վճռական գործողությունների դիմել խորհրդային իշխանություն հաստատելու համար, քաղաքական օգնություն ցույց տալ թուրքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար և պաշտպանել նոր խորհրդային կառավարությունը[3]: Իրականում դա ձևականություն էր, քանի որ, ինչպես արդեն նշվեց, որպես կազմակերպչորեն գործող և հեղինակություն վայելող կուսակցություն Հայաստանի տարածքում ըստ էության այն չէր գործում, թեև կային ընդհատակյա մի քանի կազմակերպություններ ու բջիջներ: Պարզ է, որ դա հասկանում էին նաև Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկ առաջնորդները, ուստի նախատեսում էին արտաքին ռազմական միջամտություն իրենց նպատակներին հասնելու համար:

---

[1] Տես Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, էջ 299:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 64, ց. 1, գ. 1, թ. 20:

[3] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», կազմ.՝ Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ.Գ. Սահակյան, Ե., 1972, էջ 456:

1920 թ. նոյեմբերի կեսերին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի կողմից Բաքվում ստեղծվեց Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե (ՌՀԿ)՝ Սարգիս Կասյանի նախագահությամբ: Միաժամանակ ստեղծվում է «Հատուկ գունդ»[1], որը 11-րդ բանակի ուղեկցությամբ մտնում է Իջևան և հայտարարում, թե Հայաստանի աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ երկիրը հռչակվում է խորհրդային հանրապետություն: Այդ նույն օրերին Երևանում բանակցություններ էին ընթանում ՀՀ կառավարության և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի միջև, ինչի արդյունքում 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևա-նում համաձայնագիր է ստորագրվում, որով ՀՀ կառավարությունը որոշ պայմաններով հեռանում է իշխանությունից՝ այն հանձնելով Դ.Կանայանի (Դրո) և ՌՍՖԽՀ կոմիսար Օ.Սիլինի համատեղ ղեկավարությամբ գործող զինվորական հրամատարությանը՝ մինչև Ռազմհեղկոմի ժամանումը Երևան: Հայաստանի ՌՀԿ-ի անդամներն էին հայ կոմունիստներ Ա. Մռավյանը, Ա. Նուրիջանյանը, Ի. Դովլաթյանը, Ա. Բեկզադյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը[2]:

Դրոն և Օ. Սիլինը նույն օրը հրաման են ստորագրում Հայաստանը խորհրդային հանրապետություն հայտարարելու մասին: Դա, ի տարբերություն Հայաստանի Ռազմհեղկոմի նոյեմբերի 29-ի հայտարարությանը, իրավական տարրերին համապատասխանող քայլ էր, ուստի կարելի է համաձայնել այն կարծիքների հետ, որ Հայաստանում իրական հեղափոխությունը տեղի է ունեցել դեկտեմբերի 2-ին: Ճիշտ է նկատում պրոֆ. Վ. Ղազախեցյանը, որ իրականում սխալ է Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ այդ երկու օրերը (նոյեմբերի 29-ը և դեկտեմբերի 2-ը) միմյանց հակադրելը, քանի որ երկուսն էլ պատմական իրողու-

---

[1] Այսպես է կոչվում նրա համար, որ իբր 11-րդ կարմիր բանակի կազմում հայ կամավորներից կազմվել էր հատուկ խնդիր հետապնդող խումբ (տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թվականներին, Ե., 2007, էջ 41):

[2] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 7, Ե.,1967, էջ 118:

թյուններ են և դրանով իսկ Հայաստանի խորհրդայնացման գործընթացի (ընդգծումը մերն է-Ա. Մ.) բաղկացուցիչ տարրերը[1]:

1920 թ. դեկտեմբերի 4-ին Երևան ժամանած Հայաստանի ՌՀԿ-ի նախագահ Ս. Կասյանը, հեղկոմի անդամ Ա. Նուրիջանյանը, մի քանի օր անց նրանց միացած Ա. Բեկզադյանն ու Ի. Դովլաթյանն իշխանությունը վերցնում են իրենց ձեռքը և սկսվում են Խորհրդային Հայաստանի կառավարման մարմինների ստեղծման և խորհրդային իշխանության հաստատման գործընթացները: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման առանձնահատկություններից է այն, որ, ի տարբերություն Ռուսաստանի, որտեղ 1917-1918 թթ. բոլշևիկները ձախ էսէռների հետ ստեղծեցին կոալիցիոն կառավարություն, Հայաստանում, թեև Երևանի Դրո-Լեգրան համաձայնագրով խոստացվեց կառավարության մեջ ներառել երկու դաշնակցականի, սակայն դա այդպես էլ չկենսագործվեց: Պարզվեց, որ դա մարտավարական քայլ էր:

Հայաստանում բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների խորհուրդների բացակայության պայմաններում ու նախքան դրանց կազմավորումը, ի տարբերություն Ռուսաստանի, երկրի կառավարման բարձրագույն գործադիր և փաստորեն օրենսդիր մարմինը դառնում է Հայհեղկոմը, որն իսկույն ձեռնամուխ է լինում առանձին ժողովրդական կոմիսարիատներ ստեղծելու աշխատանքին: Նրանց ղեկավարությունը հիմնականում դրվում է հենց այդ կոմիտեի անդամների վրա: Հայհեղկոմը, փաստորեն, նույնանում է կառավարության հետ՝ միաժամանակ իր վրա վերցնելով օրենսդիր մարմնի գործառույթները: Կնշանակի խոսք չի կարող լինել իշխանության մարմինների տարանջատման մասին: Մյուս կողմից էլ հարկ է նշել, որ, ինչպես և Հայաստանի Առաջին հանրապետության տարիներին, այնպես էլ այդ օրերին, իշխանության գլուխն անցած հայ գործիչները չունեին պետական կառավարման անհրաժեշտ փորձ: Սակայն, ի

---

[1] Տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, էջ 13:

տարբերություն իրենց նախորդների, Ռուսաստանի կոմունիստների օգնությամբ կարողացան ինչ-որ չափով լրացնել այդ բացը՝ Հայաստան ուղարկված ու կառավարման որոշակի փորձ ունեցող պետական, հասարակական և կուսակցական գործիչների շնորհիվ:

Հայաստանի նոր իշխանության առաջնահերթ խնդիրը դարձավ պետության կառավարման համակարգի արագ ստեղծումը: Այն, հասկանալի պատճառներով, չէր կարող կատարվել նախկին իշխանությունների թողած «ժառանգության» հիմքի վրա, մասնավորապես նրանց կադրերի օգտագործմամբ: Հաշվի առնելով Խորհրդային Ռուսաստանի փորձը և ուղղորդվելով Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կողմից՝ Հայաստանի իշխանությունների համար կարևոր հարցերից են դառնում խորհրդային իշխանության իրական, օրինական նորմերով հաստատման գործընթացը, այդ իշխանության պաշտպանության խնդիրները, երկրի կառավարման համակարգի ստեղծումը: Իբրև առանձնահատկություն, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանում բացակայում էին Խորհուրդները, ուստի ի տարբերություն Ռուսաստանի, Ուկրաինայի[1] խորհրդայնացման գործընթացների, որտեղ իշխանությունն իսկույն անցավ Խորհուրդներին, մեզանում իշխանությունն անցավ Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի ձեռքը: Ինչպես նշել է պատմաբան Մ. Նիկողոսյանը. «Հեղկոմները հանդես եկան ոչ միայն որպես դաշնակների դեմ մղվող պայքարի օրգաններ: Հայաստանում սովետական իշխանության գոյության առաջին շրջանում նրանք իրականացնում էին պրոլետարական դիկտատուրայի ֆունկցիաները»[2]: Կառավարման այս մարմինը նշանակովի էր և կազմված էր միայն կոմունիստական կուսակցության ղեկավար անդամներից, ինչը նշանակում էր, որ իշխանությունն անցավ կոմունիստներին: Հեղկոմների ստեղծումը պատմաբան Շ. Պետրոսյանը

---

[1] Տե՛ս Սուբտելնի Օրեստ, Ուկրաինա, պատմություն, Վաղարշապատ, 2010, էջ 318: http://ukrainestory.nl/ustanovlenie-sovetskoi-vlasti-v-ukraine.html.
[2] Նիկողոսյան Մ., Սովետները Հայաստանում, Ե., 1968, էջ 164:

հետնալ կերպ է բացատրում. նախ, որ բանվոր դասակարգը ավելի թույլ էր, քան կենտրոնական Ռուսաստանում: Երկրորդ, խորհուրդների գաղափարը Հայաստանում չուներ այնպիսի ավանդույթներ, ինչպես Ռուսաստանում: Երրորդ, հեղափոխական կոմիտեները որպես իշխանության մարմիններ Հայաստանում սկսեցին առաջանալ դեռևս երկրում սովետական իշխանության հաստատումից առաջ[1]: Սակայն ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ դա իրավական տեսանկյունից դեռևս խորհրդային իշխանություն չէր, այսինքն, Հայաստանում դեռևս խորհրդային կարգեր չէին հաստատվել: Այդ նույն սկզբունքով դեկտեմբերի 5-ից վերոնշած կոմիտեն Հայաստանում սկսում է ձևավորել տարածքային հեղկոմներ, մասնավորապես այդ օրը Թավաքյալյանի նախագահությամբ ստեղծվեց Արարատյան նահանգի հեղկոմը, որը վարչական նորամուծություններից հետո (վերացվեցին նահանգները և կազմավորվեցին 9-ը գավառ և 30 շրջան կամ գավառակ) վերանվանվեց Երևանի գավառային հեղկոմ: Այդ սկզբունքով հեղկոմներ ստեղծվեցին Հայաստանի բոլոր գավառներում և գավառակներում, ինչի հիմնական նպատակն էր վերջ տալ անիշխանությանն ու երկրում հաստատել բանվորագյուղացիական դիկտատուրա[2]:

Խորհրդային իշխանություն իրականում հաստատելու, պետական կյանքի առանձին ոլորտները ղեկավարելու նպատակով Հայհեղկոմը ստեղծեց ներքին գործերի, արտաքին գործերի, հողագործության, ռազմական, լուսավորության, արդարադատության, ֆինանսների, պարենավորման, աշխատանքի, առողջապահության, սոցիալական ապահովության և ճանապարհների, փոստի ու հեռագրի ժողովրդական կոմիսարիատներ:

Նրանց մեջ հատուկ դեր էր տրված ներքին գործերի կոմիսարիատին, որի ղեկավար է նշանակվում հեղկոմի անդամ Ի. Դովլաթյանը: Այդ կոմիսարիատը Հայաստանի բարձրագույն

---

[1] Տե՛ս Պետրոսյան Շ.Ն., Հայկական ՍՍՀ սահմանադրությունը և նրա պատմական զարգացումը, Ե., 1982, էջ 13:

[2] Ղազախեցյան Վ., նշվ. աշխ., էջ 15:

վարչական մարմինն էր, որին իրավունք էր արված տեղերում իշխանության կազմակերպումը, բոլոր վարչական մարմինների գործունեության հսկողությունը: Այդ կառավարման մարմինը Հայհեղկոմի համաձայնությամբ կարող էր հեռացնել տեղական հեղկոմների անդամներին և նշանակել նորերին[1]:

Խորհրդային իշխանությունը պաշտպանելու համար կարևոր նշանակություն ուներ նաև Ռազմական ժողկոմատը, որի ղեկավար նշանակվեց հեղկոմի անդամ, «հեղափոխության թշնամիների» նկատմամբ իր կարծր դիրքորոշմամբ հայտնի Ա. Նուրիջանյանը, ով իսկույն ձեռնամուխ է լինում Հայաստանի նախկին բանակի վերակազմավորմանը:

Նորաhռչակ Խորհրդային Հայաստանի կառավարման համակարգում բոլշևիկները կարևոր դեր էին հատկացնում նաև Հայհեղկոմի նախագահ Ա. Կասյանի դեկտեմբերի 6-ի առաջին իսկ դեկրետով հիմնված Արտակարգ հանձնաժողովին (ԱՀ): Հենց այս պատժիչ մարմնի վրա է հիմնականում դրվում ոչ պրոլետարական կուսակցությունների վերացման և այլ բռնաճնշումների կատարումը:

Արտակարգ հանձնաժողովը կոչված էր պայքարելու «հակահեղափոխության, սպեկուլյացիայի և պաշտոնական հանցագործությունների դեմ»[2]:

Հավելենք նաև, որ նույն դեկրետով Հայաստանի կարմիր բանակում հակահեղափոխական հանցագործությունների դեմ պայքարելու նպատակով ստեղծվեց ԱՀ-ին կից Հատուկ բաժին:

1921 թ. հունիսին ԱՀ-ն արդեն կոչվում էր ՀԱԽՀ հակահեղափոխության, զեղծումների, չարաշահության և լրտեսության դեմ պայքարող Արտակարգ հանձնաժողով[3]:

---

[1] Տե՛ս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1960, էջ 426:

[2] Տե՛ս Апинян Н.А., Органы Государственной безопасности Советской Армении в период строительства социализма, Е., 1980, էջ 15:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 19, թ.90:

ՀՍԽՀ ԱՀ-ի առաջին նախագահ է նշանակվում Այվազյանը, տեղակալ՝ Ամատունին, 1921 թ. հունվարի վերջին այն արդեն ղեկավարում էր բոլշևիկ Շավարշ Ամիրխանյանը (մինչև 1924 թ.), որի տեղակալն էր Սերգեյ Մելիք-Օհիպովը (1924-1929 թթ. ղեկավարել է այդ համակարգը): 1921թ. հունվարի կեսին Հայաստան գործուղվեց ՀԱՀ-ի համակարգում աշխատանքի մեծ փորձ ունեցող Գ. Աթարբեկյանը[1]:

Հայաստանում բռնաճնշիչ այդ մարմնի ստեղծումը կատարվում էր Ռուսաստանի փորձի հիման վրա, որտեղ ճանաչված բոլշևիկ Ֆ. Ձերժինսկու ղեկավարությամբ Համառուսաստանյան ԱՀ-ն մեծ և շատ կարևոր աշխատանքներ է կատարել հակահեղափոխության դեմ պայքարում[2]: Հայաստանի խորհրդային իշխանությունների առջև նույնպես ծառացել էին նման խնդիրներ: Եվ այս կառույցների ստեղծման նպատակն իշխանությունն ուժի միջոցով պահելն ու ամրապնդելն էր:

Հայաստանում իշխանությունը պահելու խնդիր կար, որովհետև ՀԿ(բ)Կ-ն որպես քաղաքական կազմակերպություն դեռևս այն քանակական և կազմակերպչական ներուժը չուներ, որ կարողանար իր ձեռքը վերցնել իրական իշխանությունը:

1920 թ. դեկտեմբերին Երևանում ձևավորվել էր Հայաստանի կոմկուսի կազմբյուրոն, որի անդամներն էին՝ Հ. Կոստանյանը, Հ. Լազյանը, Գ. Ալիխանյանը, Ի. Դովլաթյանը, Ս. Բաղդատյանը, ապա այդ կազմը համալրեցին Ա. Խաչինը, Ա. Լալանան, Աշ. Հովհաննիսյանը: ՀԿԿ կենտկոմի տեխնիկական քարտուղարի պարտականությունները դրվեցին Գ. Ալիխանյանի վրա:

1921 թ. կուսակցական կոմիտեներ ստեղծվեցին Հայաստանի 9 գավառներում և 39 գավառակներում (շրջաններում)[3]:

---

[1] Տե՛ս Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Ե., 2002, էջ 22:

[2] Տե՛ս Красная книга ВЧК, т. 1, 2, М., 1989. Голиков Д., Крушение антисоветского подполья в СССР, кн. 1, 2, М., 1986.

[3] Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, էջ 333:

Ինչպես ցույց տվեցին 1921 թ. մայիսին և դեկտեմբերին անցկացված Հայաստանի կոմկուսի անդամ-թեկնածուների վերացուցակագրման ու զտման արդյունքները՝ հանրապետության կոմունիստների և թեկնածուների թիվը հուլիս ամսին անցնում էր 5000-ից[1]:

Հանրապետությունում լուրջ խնդիրներ կային ղեկավար կադրերի, հատկապես կուսակցական կադրերի հարցում, ուստի Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը կոչ արեց բոլոր հայ պատասխանատու ընկերներին գալ Հայաստան: Այդ դիմումին ընդառաջեց ՌԿ(բ)Կ կենտկոմը, որը Հայաստան գործուղեց հայազգի մի քանի հարյուր կոմունիստների, այդ թվում՝ Ա. Մյասնիկյանին, Ս. Լուկաշինին, Պ. Մակինցյանին, Ա. Կարինյանին և ուրիշների:

ՀԿ(բ)Կ-ի միակուսակցական համակարգի կայացման ճանապարհին կազմակերպած կարևոր քայլերից էր 1922 թ. հունվարին հրավիրած 1-ին համագումարը, որտեղ ընտրվեց Կենտկոմի նոր կազմ, ապա Կենտկոմի քարտուղար ընտրվեց Աշոտ Հովհաննիսյանը, ով, փաստորեն, ղեկավարեց այդ կազմակերպությունը մինչև 1927 թ. հուլիս: Հետագայում նրան փոխարինեց Հ. Հովսեփյանը, իսկ 1930–1936 թթ. Հայաստանի կոմկուսի ղեկավարն էր Ա. Խանջյանը:

Հարկ է նշել, որ Հայաստանի կոմկուսը, որպես կազմակերպություն, 1920-ականների սկզբներին իրավաբանորեն չէր հանդիսանում իշխանության գործառույթներ կատարող մարմին և պետական շինարարության մեջ առավել կարևորվում էր Հայաստանի ՌՀԿ-ի (թեև Հայաստանի ՌՀԿ-ն իր կազմով նույնանում էր ՀԿ(բ)Կ կենտկոմի հետ) և ապա Ժողկոմխորհի դերը: 1921 թ. մայիսից վերջինիս ղեկավար էր հաստատվել ճանաչված բոլշևիկ Ալ. Մյասնիկյանը: Հասկանալի է, որ իշխանության այդ մարմինները հիմնականում ուղղորդվում էին Մոսկվայից և Թբիլիսիից (Անդրերկրկոմից), սակայն բուն Հայաստանում ունեին որոշակի

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 21 հուլիսի 1921 թ.:

ղեկավարություն: Միայն 1925 թ. Ալ. Մյասնիկյանի ողբերգական մահից հետո նկատվում է կուսակցական մարմինների և նրանց քարտուղարների դերի աստիճանական բարձրացումը հանրապետության կառավարման մեջ: Արդեն Ա. Խանջյանի ղեկավարության օրոք Հայաստանի կոմկուսը դառնում է հանրապետության իրադրության լիիրավ տերը: Սակայն այս գործընթացը տեղի էր ունենում ամբողջ Միության մասշտաբով, որովհետև այդ ընթացքում ՀամԿ(բ)Կ կենտկոմի 1-ին քարտուղար Ի. Ստալինը ճանապարհ էր հարթում մենիշխանության և տոտալիտարիզմի հաստատման համար:

Հայաստանում խորհուրդներն առաջին անգամ կազմավորվել են 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Ալեքսանդրապոլում, Երևանում, Կարսում, Կապանում, Սարիղամիշում և այլն: Սակայն 1918թ. սկզբներին, թուրքական ներխուժման և «երկրում ազգային-բուրժուական կարգերի հաստատման հետ, նրանք դադարեցին գոյություն ունենալ»[1]:

1922 թ. հունվար-փետրվար ամիսներին, համապատասխան ընտրություններից հետո տեղի է ունենում Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդների 1-ին համագումարը Երևանում, որին մասնակցող 252 պատգամավորներից 218-ը կոմունիստներ էին: Փաստորեն, այդ ժամանակ է իրավաբանորեն Հայաստանում հաստատվում խորհրդային իշխանությունը և ընդունվում ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը, որն օրինականացնում է այդ իշխանությունը, մասնավորապես 11-րդ հոդվածով օրենսդրորեն ամրապնդվում է պրոլետարիատի դիկտատուրան[2]: Այդ համագումարում ընտրվում է Կենտրոնական գործադիր կոմիտեի առաջին կազմը, որի նախագահ ընտրվեց Մ. Համբարձում-

---

[1] Эльчибекян А.М., От Ревкомов к Советам, Е., 1978, с. 8.

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ օրենքների, Գերագույն Սովետի նախագահության հրամանագրերի և Հայկական ՍՍՌ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու, 1920 թ. նոյեմբերի 29-1938 թ. դեկտեմբերի 31, Ե., 1963, էջ 88:

յանը, իսկ ժողովրդական կոմիսարների խորհրդի (կառավարության) նախագահ հաստատվեց Ա. Մյասնիկյանը:

Հատկապես Ա. Մյասնիկյանի՝ Հայաստան գալուց հետո ակնհայտ է դառնում գործադիր իշխանության փաստացի գերակայությունը երկրում: Դա ինչ-որ առումով կրկնում էր 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում ստեղծված իրավիճակը, որտեղ կոմունիստական կուսակցության առաջնորդ Վ. Լենինը ստանձնեց ժողկոմխորհի նախագահի (կառավարության ղեկավարի) պաշտոնը և ոչ թե կուսակցության ղեկավարի:

Իրականում երկրի միակուսակցական համակարգի ձևավորումը տանում էր ամբողջատիրության (տոտալիտարիզմի) և անձի պաշտամունքի հաստատմանը: Դա նախ և առաջ արտահայտվում էր նրանով, որ ամբողջ պետության (ԽՍՀՄ-ի) մասշտաբներով կյանքի բոլոր ոլորտներին վերաբերող որոշումները կայացվում էին կուսակցական մարմիններում, իսկ հանրապետությունում իրական, թե, որպես կանոն, ձևական որոշումները կայացնում էին հանրապետական կոմունիստական կուսակցության մարմնում: Վերջինս կրկնօրինակում և տեղայնացնում էր վերադասի որոշում-հրահանգները: Այդ որոշումների հիմնական կատարողները կոմկուսի անդամներն էին, իսկ կատարման վերահսկողությունն ամբողջությամբ դրված էր կուսակցական մարմինների վրա:

Միակուսակցական համակարգն ամբողջատիրության հաստատման առաջին և գլխավոր պայմանն է, ուստի Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը ևս ընթացավ ամբողջատիրության ստեղծման ճանապարհով և չէր էլ կարող այլ կերպ լինել:

Այսպիսով, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման և միակուսակցական համակարգի ձևավորման գործընթացներում կարելի է առանձնացնել հետևյալ առանձնահատկությունները՝

- Խորհրդային կարգերը հաստատվեցին արտաքին ուժերի մասնակցությամբ, իսկ ավելի ստույգ՝ ճնշմամբ, ինչին նպաստեց այդ ժամանակաշրջանում Հայաստանի ծանր արտաքին և ներքին դրությունը:

- Հայաստանի Առաջին Հանրապետության դաշնակցական ղեկավարությունը ստիպված էր կամավոր հանձնել իշխանությունը բոլշևիկներին, սակայն Հայաստանը չխուսափեց քաղաքացիական կռիվներից, ինչն իր հետևանքներն ունեցավ խորհրդային կարգերի հաստատման գործընթացի վրա՝ դժվարացնելով այն, զգաստացնելով և դասեր տալով այդ իշխանություններին:

- Որոշ ժամանակ Խորհրդային Հայաստանի իշխանությունը գտնվում էր կոմունիստներից կազմված Հայաստանի ՌՀԿ-ի ձեռքին, որը կատարում էր իշխանության բոլոր գործառույթները (օրենսդրական, գործադիր և դատական), այսինքն՝ երկիրը, անգամ ձևականորեն, չէր ղեկավարվում խորհուրդների կողմից:

- Ի տարբերություն Ռուսաստանի, Ուկրաինայի և առանձին երկրամասերի՝ Հայաստանում գործել են ոչ ընտրովի իշխանության մարմիններ (Հեղկոմներ): Ընտրովի մարմինները (խորհուրդները) ձևավորվել են միայն իշխանության հաստատումից մեկ տարի անց:

- Իբրև յուրահատկություն, ի տարբերություն ՌՍՖԽՀ-ի, Հայաստանում չստեղծվեց կոալիցիոն կառավարություն, թեև 1920թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով նախատեսվում էր Հայհեղկոմի կազմի մեջ ներառել երկու դաշնակցականների:

- Իշխանությունը բոլշևիկներին անցնելուց հետո Հայաստանում ընտրովի մարմինների և այդ մարմինների կողմից գործադիր իշխանության բացակայության պայմաններում՝ իշխանության գործառույթներում առաջնային դերակատարություն ստանձնեցին նշանակովի ուժային կառույցները՝ հանձինս Ռազմական և Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատների ու Արտակարգ հանձնաժողովի, որոնցից վերջին երկուսը փաստորեն ձևավորում, ամրապնդում են կոմունիստական կուսակցու-

թյան մենատիրությունը Հայաստանում 1920-ական թվականներին:

- Կոմունիստների կողմից իշխանությունը վերցնելու պահին Հայաստանում չկար մեծաքանակ և կազմակերպչորեն ամուր կոմունիստական կազմակերպություն (կուսակցություն): Այն որպես ՌԿ(բ)Կ-ի մարզային կազմակերպություն, ստեղծվել էր Բաքվում, ապա նոր տեղափոխվել Հայաստան: Հանրապետությունում կոմկուսն ուժեղացնելու նպատակով ՌԿ(բ)Կ-ի որոշմամբ Հայաստան աշխատանքի տեղափոխվեցին հարյուրավոր հայազգի կոմունիստները, որոնք ժամանակի հետ ամրապնդում են կոմկուսը և դառնում իշխանության իրական կրողները:

- 1920 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին Հայաստանում չկային բանվորագյուղացիական և զինվորական խորհուրդներ, որոնց ընտրությունները տեղի ունեցան միայն 1921 թ. վերջերին, իսկ առաջին համագումարը կայացավ 1922 թ. հունվար-փետրվար ամիսներին, որն ընտրեց ԿԳԿ-ի և ժողկոմխորհի նախագահին, ընդունեց Սահմանադրությունը, ինչով կարելի է ասել, որ ձևականորեն օրինականացվեց իշխանությունների անցումը խորհուրդներին: Այդ իմաստով, կարելի է նշել, որ իրականում Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման գործընթաց է տեղի ունեցել, որը սկսվել է 1920 թ. նոյեմբերի 29-ին, երբ Հայաստանի ՌՀԿ-ն հայտարարեց այդ մասին, ապա դեկտեմբերի 2-ին ՀՀ կառավարությունը իշխանությունը կամավոր փոխանցեց ՀՌՀԿ-ին, հետագայում կազմավորվեցին Հայաստանի խորհուրդները, որի առաջին համագումարում՝ 1922 թ. հունվար-փետրվար ամիսներին ձևավորվում են Խորհուրդներն ու կառավարության ղեկավար մարմինները և ընդունվում է հանրապետության առաջին Սահմանադրությունը:

- «Պրոլետարական դիկտատուրայի» հաստատման իրավական փաստաթուղթը դարձավ ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը, որի 11-րդ հոդվածը ամրապնդեց այդ փաստը: Դա ոչ այլ ինչ էր, քան կոմկուսի մենիշխանության հաստատման օրինականացում:

Այդպիսով, օրինականացվեց կոմկուսի մենիշխանությունը, որը 1920-ական թթ. վերջերից և 1930-ականների սկզբներից ԽՍՀՄ-ը, բնականաբար և նրա մասը կազմող Հայաստանը, տարավ դեպի տոտալիտարիզմ: Կյանքի բոլոր ոլորտներում իրագործվող քայլերի մասին որոշումները սկսեցին կայացնել կուսակցական մարմինները և դրանց իրականացման վերահսկողությունն ամբողջովին դրվեց այդ մարմինների վրա:

АРАМ МАНУКЯН
ИИ НАН РА

## УСТАНОВЛЕНИЕ СОВЕТСКОЙ ВЛАСТИ И ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ОДНОПАРТИЙНОЙ СИСТЕМЫ ПРАВЛЕНИЯ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1920-х ГГ.

### РЕЗЮМЕ

Формирование однопартийной системы правления в Советской Армении не было предметом отдельного изучения в армянской историографии. Для исследования данного процесса особенно важно изучение и анализ процесса формирования институтов правления.

В Армении процесс установления советской власти и формирование однопартийной системы проходили под руководством РКП(б) и во многом были схожи с теми процессами, которые проходили в Советской России. Однако имели и свои особенности, что было связано с конкретным внутренним и внешним положением Армении. В частности, в Армении добровольная передача власти большевикам проходила под давлением внешних сил, чему способствовало тяжелое внутреннее и внешнее положение республики.

Процесс установления советской власти проходил в течение почти двух лет с 29 ноября 1920 г. по февраль 1922 г., когда была

принята первая Контитутция Арм. ССР. За этот период власть Армении находилась в руках Армревкома. Единоличное правление коммунистов в Армении окончательно установилось в конце 1920-х - начале 1930-х гг.

ARAM MANUKYAN
IH NAS RA

## ESTABLISHMENT OF SOVIET POWER AND PECULIARITIES OF FORMATION OF ONE-PARTY RULE IN SOVIET ARMENIA IN THE 1920-S

SUMMARY

Formation of one-party rule in Soviet Armenia has not been the subject of a separate study in the Armenian historiography. To study this process, it is important to analyze the formation of institutions of governance.

In Armenia, the process of establishment of the Soviet power and the formation of one-party system took place under the guidance of RC(b)P and in many respects was similar to those processes that took place in Soviet Russia, but had its own characteristics, which were associated with a specific internal and external situation of Armenia. In particular, voluntary transfer of power to the Bolsheviks in Armenia took place under the pressure of external forces, in conditions of a hard internal and external situation in the country. The process of establishment of the Soviet power was held for nearly two years from November 29, 1920 to February 1922, when was adopted the first Constitution of Soviet Armenia. During that period the government of Armenia was in the hands of Armrevcom. Personal rule of communists in Armenia was established in the late 1920 - early 1930.

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԽՍՀՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմների տարիներին հանդիսանալով ԽՍՀՄ սահմանամերձ տարածք և ռազմական գործողությունների հավանական թատերաբեմ՝ Խորհրդային Հայաստանը կարևոր տեղ էր զբաղեցնում ԽՍՀՄ «ռազմական նախապատրաստություններում»: Իր հերթին՝ խորհրդա-թուրքական, իսկ պատերազմի ավարտական փուլում՝ նաև ԽՍՀՄ-Արևմուտք դիվանագիտական դիմակայության ոլորտում էր հայտնվել 1921 թ. մարտի 16-ի մոսկովյան պայմանագրով Թուրքիային անցած հայկական տարածքների (Կարս, Սուրմալու, Արդահան) Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարցը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբից խորհրդային երկրի քաղաքական ղեկավարությունը և կարմիր բանակի հրամանատարությունը սկսեցին հատուկ ուշադրություն հատկացնել ԽՍՀՄ հարավային սահմանների, այդ թվում՝ անդրկովկասա-թուրքական, ամրապնդման և ռազմականացման խնդիրներին: Անդրկովկասի խորհրդային հանրապետություններում կուտակվում էին ռազմական զգալի ուժեր և միջոցներ, հիմնականում՝ ռազմական ավիացիա և հակաօդային պաշտպանության սպառազինություն:

Ռազմական նախապատրաստություններն առաջին հերթին պայմանավորված էին նրանով, որ, խորհրդային ռազմական հետախուզության գաղտնի տվյալների համաձայն, անգլո-ֆրանսիական դաշինքում քննարկվում էր Բաքվի նավթարդյունաբերական համալիրի և ԽՍՀՄ հարավային սահմանների ուղղությամբ ավիացիոն ռմբակոծությունների հնարավորությունը: Պետք է նկատել, որ 1940 թ. մարտի սկզբին անգլիական շտաբի

ղեկավարությունը կառավարությանը հանձնարարել էր նախապատրաստվել հնարավոր ռմբակոծություններին[1]: Հայտնի է նաև, որ նշված ժամանակաշրջանում նկատվում էին անգլիական լրտես-ինքնաթիռների թռիչքներ ԽՍՀՄ օդային տարածքում[2]: Մինչև ԽՍՀՄ-ի վրա ֆաշիստական Գերմանիայի անակնկալ հարձակումը Խորհրդային Միության ղեկավար Ի. Ստալինը, համոզված էր, որ երկրի հիմնական հակառակորդների թվում առաջին հերթին Մեծ Բրիտանիան է: Խորհրդային ղեկավարությանը հայտնի էին դարձել Մեծ Բրիտանիայի ծրագրերը՝ ԽԱՀՄ-ի վրա հնարավոր հարձակման դեպքում, որպես ռազմական հենադաշտ օգտագործելու Թուրքիայի տարածքը: Այդ համատեքստում Խորհրդային Միությունը չէր բացառում նաև ռազմական ընդհարումը Թուրքիայի հետ, որպես Արևմուտքի, ինչպես նաև ֆաշիստական Գերմանիայի գլխավոր դաշնակցի: Վերջիններիս ծանրակշիռ օգնությամբ Թուրքիայի ռազմականացումը չէր կարող չանհանգստացնել խորհրդային ղեկավարությանը և կարմիր բանակի հրամանատարությանը:

Ելնելով նշված դատողություններից, խորհրդային ղեկավարությունը միջոցառումների կոնկրետ համալիր ծրագրեր ընդունեց՝ Թուրքիայի տարածքից Մեծ Բրիտանիայի հնարավոր հարվածներին պատրաստ լինելու համար: Այսպես, արդեն 1940 թ. սկզբին Անդրկովկասի ռազմական շրջանում սկսեցին տեղակայվել ավիացիոն զորամասեր, ռազմական կործանիչներ և ռմբակոծիչներ, ռազմական այլ միջոցներ ու տեխնիկա: Մեկ տարում դրանց քանակը ռազմական շրջանում աճեց ավելի քան 4 անգամ[3]: ԽՍՀՄ ռազմական այլ շրջաններից Անդրկովկաս տեղափոխվեցին հրաձգային մի քանի դիվիզիաներ, հրետանային, զենիթային և տանկային զորամասեր, որոնք հիմնականում տե-

---

[1] Տե՛ս Якушевский А., Агресивные планы и действия западных держав против СССР в 1939-1941 гг., "Военно-исторический журнал", Москва, 1981, №8, էջ 52-53:

[2] Տե՛ս Документы внешней политики СССР , т. 23, кн. I, Москва, 1995, էջ 227-228:

[3] Տե՛ս Мельтюхов М.И., Упущенный шанс Сталина, Советский Союз и борьба за Европу: 1939-1941 (документы, факты, суждения), Москва, 2002, էջ 215-216:

ղակայվում էին Խորհրդային Ադրբեջանում, սակայն բաժին հասավ նաև Հայաստանին ու Վրաստանին: Վերջինս, իր հերթին, հրատապ դարձրեց վերակառուցելու Անդրկովկասի հանրապետությունների արդյունաբերական որոշ գործարանները և ձեռնարկությունները՝ վնասված ռազմական տեխնիկան առաջ վերանորոգելու, ինչպես նաև ռազմաարդյունաբերական պատվերներ կատարելու համար: Այդ նպատակով Անդրկովկասի խորհրդային հանրապետություններ, այդ թվում՝ Հայաստան, ներմուծվեցին մեծ քանակությամբ սարքավորումներ և հումք: Խորհրդային Հայաստանում ռազմական տեխնիկա, մասնավորապես տանկեր վերանորոգելու առաջադրանքներ ստացան Երևանի ավտոնորոգման և Լենինականի (Գյումրի) մեխանիկական գործարանները: Այսպես, Խորհրդային Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղակայված ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմիսարիատի Անդրկովկասյան ռազմական շրջանի ռազմխորհրդի կողմից ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահին 1940 թ. մայիսի 10-ին ուղղված թիվ 0041730 գրությունով, «Պատերազմական ժամանակի միջոցառումների նախապատրաստական աշխատանքների անցկացման կարգին համապատասխան, խնդրվում էր.

1. Պարտավորեցնել ՀԽՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի ժողկոմատին, որպեսզի ընթացիկ տարում ամենասեղմ ժամկետներում կառուցի 8 բենզալցակայան և կազմակերպի դրանց շահագործումը հետևյալ վայրերում. Լենինական՝ 200 խորանարդ մետր տարողությամբ և լիցքավորման 4 կետով, Համամլու՝ համապատասխանաբար՝ 100 և 2, Դիլիջան, Սևան և Վորոնցովկա՝ 60 և 1, Սարդարապատ, Միկոյան և Ապարան՝ 60 և 2:

2. Պարտավորեցնել ՀԽՍՀ ավտոմոբիլային և տեղական արդյունաբերության ժողկոմատներին, ինչպես նաև Երքաղխորհրդի տեղական արդյունաբերության վարչությանը, ձեռք առնելու համապատասխան միջոցներ՝ Պաշտպանության ժողկոմատի տանկերի, ռազմական և այլ ավտոմեքենաների ու տրակտորների

ամենամսյա վերանորոգումը պատերազմական ժամանակում ապահովելու նպատակով»[1]:

Մասնավորապես, հանձնարարվում էր Երևանի ավտոնորոգման և Լենինականի մեխանիկական գործարաններում վերանորոգման ընդունել համապատասխանաբար՝ 15 և 10 հատ Տ-26 մակնիշի տանկեր: Երևանի և Լենինականի մեխանիկական գործարաններից բացի ռազմական և այլ մեքենաների ու տրակտորների վերանորոգում պետք է իրականացնեին նաև Կիրովականի, Ախտայի, Արթիկի, Հոկտեմբերյանի և Նոր Բայազետի վերանորոգման կայանները:

Նշված ծրագրի կատարումն ապահովելու նպատակով հանձնարարվում էր կարգադրել ժողկոմատներին, որպեսզի վերջիններս անհապաղ հայտեր ներկայացնեն ԽՍՀՄ Ժողտնտխորհուրդ՝ անհրաժեշտ քանակի պահեստամասեր և նյութեր ստանալու համար: Կարգադրվում էր նաև «Անդրկովկասյան ռազմական շրջանի համապատասխան ստորաբաժանումից անմիջապես ընդունել անհրաժեշտ քանակությամբ մեքենաներ՝ վերանորոգման աշխատանքները յուրացնելու նպատակով»: Գրությունը ստորագրել էին Անդրկովկասյան ռազմական շրջանի առաջին դեմքերը՝ զորքերի հրամանատար, բանակի երկրորդ աստիճանի հրամանատար Ի.Վ. Տյուլենևը, ռազմխորհրդի անդամ, դիվիզիոնի կոմիսար Դորնինը և շտաբի պետ Ֆ.Ի. Տոլբուխինը[2]: Վերջինս վկայում է Անդրկովկասյան ռազմական շրջանի ղեկավարության կողմից խնդրին մեծ կարևորություն տալու մասին: Նշենք, որ 1940 թ. հիմնադրված և ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողկոմատի համակարգում ընդգրկված Երևանի թիվ 447 գործարանում 1942 թ. աշնանից սկսեցին իրականացվել նաև մարտերում վնասված ռազմական ինքնաթիռների վերանորոգման աշխատանքներ: Մինչև տարեվերջ գործարանը վերանորոգեց շուրջ 36 միավոր ինքնաթիռ[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 8, գ . 7, թ. 613-614:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 614:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 8, թ. 103-104:

Անդրկովկասում ռազմական ներուժի կուտակմանը զուգահեռ՝ երկրի ղեկավարությունը և բանակի հրամանատարությունը հատուկ ուշադրություն էին դարձնում ինչպես Թուրքիայի վերաբերյալ հետախուզական տվյալների հավաքմանը, այնպես էլ Մերձավոր արևելքում ռազմական գործողությունների հնարավոր թատերաբեմի ուսումնասիրությանը: ԽՍՀՄ ռազմածովային նավատորմիղի հետախուզության տվյալների համաձայն՝ 1940 թ. փետրվարի 1-ի դրությամբ թուրքական հակաօդային պաշտպանության համակարգը (ՀՕՊ) պարունակում էր 13 զենիթային դիվիզիա և 3 առանձին զենիթային մարտկոց: Խորհրդային հետախուզության փաստաթղթերում ուշադրություն էր դարձվում Թուրքիայի ռազմական ավիացիայի գնահատականին: 1940 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ նրանում առկա էր 800 ինքնաթիռ, որոնցից 350-ը՝ ժամանակակից տեսակի: Նշվում էր նաև, որ, չնայած այն օգնությանը, որ Թուրքիային տրամադրում են Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, թուրքական ՀՕՊ-ը, այնուհանդերձ, խոցելի է, քանի որ արդյունավետ չեն գործում ռադարային սարքավորումները, ցածր է հրամանատարական կազմի ռազմական պատրաստվածությունը և այլն[1]:

Արդեն 1940 թ. ապրիլին, ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմատի և Գլխավոր շտաբի համապատասխան կարգադրությամբ, կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարությունը կարգադրում է Անդրկովկասյան ռազմական շրջանի հեռահար ռմբակոծիչների զնդերին ուշադրություն դարձնել, մշակել և ուսումնասիրել ավիահարվածների հնարավորությունը ռազմավարական այնպիսի կարևոր շրջանների վրա, ինչպիսիք են Ալեքսանդրիան, Բեյրութը, Նիկոսիան, Ստամբուլը, Անկարան, Բոսֆորի և Դարդանելի նեղուցները և այլն: ԽՍՀՄ սևծովյան նավատորմիղի ռազմաօդային ուժերի առաջ խնդիր էր դրվում՝ պատրաստ լինել հարվածներ հասցնելու Թուրքիայի ռազմածո-

---

[1] Տե՛ս Степанов А.С., Военные планы и оборонная промышленность СССР накануне и в начале Второй мировой войны: британский фактор. Отечественная история, Москва, 2006, № 3, էջ 36-37:

վային նավատորմիղի, Մարմարի ծովի և Բոսֆորի նեղուցի շրջանում տեղակայված ռազմակայանների ուղղությամբ[1]:

Նշված մոտեցումները և կարմիր բանակի առջև դրված մարտական առաջադրանքերն առաջին հայացքից թեև բախտախնդիր ու ցնորքային էին, սակայն ցույց են տալիս, որ ԽԱՀՄ-ը շարունակում էր Թուրքիային դիտել որպես հնարավոր հակառակորդ: Ավելին, խորհրդային առաջնորդների անդրկուլիսյան գաղտնի բանակցություններում երբեմն առաջ էին քաշվում Թուրքիայի հնարավոր մասնատման վերաբերյալ գայթակղիչ գաղափարներ: Այսպես, Կոմինտերնի գործկոմի գլխավոր քարտուղար Գեորգի Դիմիտրովի հետ 1940 թ. նոյեմբերի 25-ին ունեցած զրույցի ժամանակ Ի. Ստալինը արտահայտվում է բավական հստակ. «Մենք թուրքերին կվռնդենք դեպի Ասիա: Դա ի՞նչ Թուրքիա է, այնտեղ 2 մլն վրացի կա, 1,5 մլն հայ, 1 մլն քուրդ և այլն: Թուրքերը միայն 6-7 միլիոն են»[2]: Ստալինը, իհարկե, չափազանցնում էր, բայց դրանից նրա հեռահար մտադրությունների բուն էությունը չէր փոխվում:

1941 թ. մարտի 25-ին Մոսկվայում և Անկարայում թեև հրապարակվեց կողմերի նկատմամբ հնարավոր ռազմական ագրեսիայի դեպքում չեզոքության մասին խորհրդա-թուրքական համատեղ հռչակագիրը, սակայն դա չէր խանգարում, որպեսզի խորհրդային հետախուզությունը շարունակեր գաղտնի նոր տեղեկություններ հավաքել Թուրքիայի ռազմական ներուժի մասին: Մասնավորապես, Անդրկովկասյան ռազմական շրջանի՝ Խորհրդային Հայաստանում տեղակայված հետախուզության բաժինն ապրիլ ամսին գաղտնի տեղեկանք էր պատրաստել Էրզրումում (Կարինում), Սարիղամիշում, Արդվինում և այլ շրջաններում տեղակայված թուրքական զորամիավորումների և նրանց սպառազինության մասին[3]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 35:

[2] Димитров Г., Дневник (9.III.1933 - 6.II.1949), София, 1997, с. 203.

[3] Տե՛ս Степанов А.С., նշվ. աշխ., էջ 86-87:

Թուրքիայի հակախորհրդային քաղաքականության դրսևորումն էր 1941 թ. հունիսի 18-ին՝ Հայրենական մեծ պատերազմի սկսվելուց ընդամենը 4 օր առաջ, ստորագրված գերմանաթուրքական բարեկամության և չհարձակման մասին պայմանագիրը: Ուստի պատերազմի սկզբից նեթ Ի. Ստալինը շարունակում էր չվստահել Թուրքիային: Արդեն 1941 թ. հուլիսի 4-ին Անդրկովկասի հանրապետությունների կոմկուսների առաջին քարտուղարների (Հայաստանի՝ Գ. Հարությունյանի, Վրաստանի՝ Կ. Չարկվիանիի և Ադրբեջանի՝ Մ. Բաղիրովի) հետ հանդիպման ժամանակ Ստալինը հայտարարեց. «Ռազմաճակատը ձեզանից հեռու է, բայց, համենայնդեպս, դուք գտնվում եք վտանգավոր գոտում: Մենք չենք կարող վստահ լինել, որ Թուրքիան չեզոքություն կպահպանի»[1]:

Թուրքական վտանգի մասին շարունակում էին վկայել նաև Անդրկովկասյան ռազմական շրջանի հետախուզության նոր տվյալները: 1941 թ. օգոստոսի 15-ի տվյալների համաձայն՝ թուրքանդրկովկասյան սահմանին տեղակայված թուրքական 48 հետևակային դիվիզիաներից 28-ը կենտրոնացված էին Վան-Երևան, Կարս-Գյումրի և Արդահան-Ախալցխա-Ախալքալակ ուղղություններով: Միաժամանակ, թուրքական կողմը ծավալել էր ճանապարհաշինարարական մեծածավալ աշխատանքներ՝ ռազմական փոխադրումների նպատակով[2]:

Անդրկովկասում խորհրդային ռազմական նախապատրաստությունները, կապված թուրքական վտանգի ուժգնացման հետ, 1942 թ. գարնանից ավելի ծավալվեցին: Անդրկովկասի հանրապետություններում տեղակայված խորհրդային զորքերի քանակը հասավ մինչև 25 դիվիզիայի. այն ժամանակ, երբ այդ ուժերը խիստ անհրաժեշտ էին այլ ռազմաճակատներում ընթացող կատաղի մարտերում: 1942 թ. փետրվարից Անդրկովկասյան ռազ-

[1] Горьков Ю., Государственный комитет обороны постановляет (1941-1945), Москва, 2002, с. 230.

[2] Տես Арутюнян К.А., Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941–1945), Ереван, 2004, էջ 51:

մական շրջանի հրամանատար նշանակվեց բանակի գեներալ Ի.Վ. Տյուլենևը, որը շրջանի ղեկավարման մեծ փորձ էր կուտակել դեռևս 1939-1940 թթ.: 1942 թ. մարտի 12-ին Թբիլիսիում Մ. Բաղիրովի, Կ. Չարկվիանիի և Գ. Հարությունյանի մասնակցությամբ կայացած խորհրդակցության ժամանակ որոշվեց մարտի 13-ից Անդրկովկասյան ռազմական շրջանում անցկացնել ռազմաուսումնական խաղեր, և որպես հավանական հակառակորդ նկատի ունենալ Թուրքիան:

«Ռազմական գործողությունները» սկսվելու էին Թուրքիայի հյուսիս-արևելյան տարածքների վրա խորհրդային զորքերի հարձակումով և պետք է ավարտվեին Օլթիի, Սարիղամիշի, Տրապիզոնի և Էրզրումի գրավմամբ: Նախատեսվում էր, որ ռազմական գործողությունների երրորդ փուլում՝ 31-րդ օրը, կարմիր բանակի առաջավոր զորամասերը մտնելու էին Էրզրում[1]:

Անդրկովկասյան ռազմական շրջանի իրադրությունը քննարկելու նպատակով 1942 թ. ապրիլի 25-ին Մոսկվայում ընդունելով Տյուլենևին, Ստալինը, Պաշտպանության պետական կոմիտեի անդամների, Գլխավոր շտաբի պետի և այլոց ներկայությամբ նրան հրամայում է ուժեղացնել ռազմական շրջանը՝ հագեցնելով ռազմական տեխնիկայով և զինամթերքով: Գլխավոր շտաբի ապրիլի 26-ի հրահանգների համաձայն՝ տարածաշրջան էին ուղարկվելու հրետանային զորագունդ, 6 զրահագնացք, 6 ավիազորագունդ, 100 բեռնատար: Նախատեսվում էր նաև Անդրկովկասի խորհրդային հանրապետություններ (այդ թվում՝ Հայաստան) ուղարկել լրացուցիչ սարքավորումներ և հումք՝ ռազմաարդյունաբերական պատվերներն ավելի լայն ծավալներով իրականացնելու համար[2]:

---

[1] Տես Безугольный А.Ю., Ни войны, ни мира: Положение на советско-турецкой границе, меры советского руководства по предотвращению турецкой угрозы в первый период Великой Отечественной войны, "Военно-исторический архив", Москва, 2003, № 5, էջ 67-73:

[2] Մանրամասն տես Хачатрян К.Г., Советская Армения и Армянский вопрос в сфере военных приготовлений СССР и советско-турецкого противостояния в

Ի զարգացումն վերը նշված հրահանգների, 1942 թ. մայիսի 1-ին կազմավորվում է Անդրկովկասյան ռազմաճակատը: Վերջինիս դիվիզիաների հրամանատարները շուտով հրահանգ են ստանում՝ պատրաստ լինելու Թուրքիայի հետ հնարավոր պատերազմին: Սակայն 1942 թ. մայիսի 26-ին Լոնդոնում անգլո-խորհրդային դաշինքի մասին ստորագրված պայմանագիրը որոշ ժամանակով արգելակեց Թուրքիայի դեմ խորհրդային ռազմական նախապատրաստությունները: Պայմանագրի ստորագրմանը նախորդել էր կողմերի միացյալ հայտարարությունը, ուր նշվում էր, որ Մեծ Բրիտանիան և ԽՍՀՄ-ը «պատրաստ են ազնվորեն պահպանելու Թուրքական հանրապետության տարածքային ամբողջականությունը... և Թուրքիային տրամադրել ցանկացած օգնություն ու աջակցություն այն դեպքում, եթե նա հարձակման ենթարկվի մեկ այլ տերության կողմից»[1]: Այսպիսով Անգլիան հերթական անգամ կանխում էր ԽՍՀՄ-ի հնարավոր հարձակումը Թուրքիայի վրա:

Այդուհանդերձ, թուրքական զորքերի շարունակվող կուտակումը խորհրդաթուրքական սահմանում և Ստալինգրադյան ճակատամարտի ամենաթեժ օրերին բարձրաստիճան թուրք ղեկավարների հակախորհրդային հայտարարությունները նյարդայնացնում էին խորհրդային ղեկավարությանը: Հայտնի է, որ գերմանաթուրքական գաղտնի պայմանավորվածությունների համաձայն, անդրկովկասաթուրքական, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանի սահմանի երկայնքով տեղակայված թուրքական 26 զորագնդերը կազմ ու պատրաստ էին ներխուժելու խորհրդային տարածք, եթե ֆաշիստական բանակները գրավեին Ստալինգրադը և ամրապնդվեին Կովկասում:

---

годы Второй мировой войны //История: электронный научно-образовательный журнал. – 2011. – Вып.7: Содружество Независимых Государств: Историческое пространство обществ, народов, стран, регионов [Электронный ресурс], http://mes.igh.ru/magazine/content/armenian-iIssue.html.

[1] Ржешевский О.А., Сталин и Черчилль. Встречи. Беседы. Дискуссии: Документы, комментарии 1941-1945, Москва, 2004, с. 188-189.

Պետք է նշել, որ պաշտոնական Անկարայի դիրքորոշումը պատերազմի ողջ ընթացքում ուներ ընդգծված հակախորհրդային, կարելի է ասել, հակառուսական բնույթ[1]: Բնորոշիչ են Թուրքիայի վարչապետ Շ. Սարաջօղլիի հետևյալ հայտարարությունները. «Ռուսական խնդիրը Գերմանիան կլուծի միայն այն դեպքում, եթե ոչնչացվեն Ռուսաստանում բնակվող ռուսների առնվազն կեսը» և, «որպես թուրք, ինքը մոլեգնաբար ցանկանում է Ռուսաստանի ոչնչացումը, ինչը կհանդիսանա ֆյուրերի ամենամեծ սխրանքը, որը կարող է կրկնվել հարյուր տարին մեկ»[2]: Խորհրդային հատուկ ծառայությունների տեղեկացմամբ՝ Թուրքիայի արտաքին գործերի նորանշանակ նախարար Ն. Մենեմենջիօղլին մեկ առիթով հայտարարել էր, որ «Եթե գերմանաթուրքական համաձայնագիրն անգամ որոշակի նպաստ ունենա ԽՍՀՄ-ի պարտությանը պատերազմում, ապա այն դրական կարելի է համարել»[3]:

Սակայն ֆաշիստական Գերմանիայի դեմ պատերազմում կարմիր բանակի և դաշնակից զորքերի հաղթանակները շուտով սթափեցրին թուրքական իշխանություններին: Ավելին, 1945 թ. փետրվարի 23-ին Թուրքիան ստիպված էր պատերազմ հայտարարել Գերմանիային և Ճապոնիային, ինչն, իհարկե, ձևական բնույթ էր կրում, թուրքական ճկուն դիվանագիտությունը դրանով փորձում էր սիրաշահել Խորհրդային Միությանը և չեզոքացնել սպառնացող վտանգը: Սակայն ԽՍՀՄ ղեկավարությունն աչալուրջ էր և անմիջապես՝ 1945 թ. մարտի 19-ին, հանդես եկավ կառավարության հայտարարությամբ այն մասին, որ 1925 թ. դեկտեմբերի 17-ի խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքու-

---

[1] Մանրամասն տե՛ս Хачатрян К.Г., Советско-турецкие отношения на начальном этапе холодной войны и Армянский вопрос (1945-1949 гг.), "Вестник РАУ", Ереван, 2003, № 1, էջ 50-57:

[2] Документы МИД Германии. Вып. 2. Германская политика в Турции (1941-1943), Москва, 1946, док. 27, с. 98.

[3] Гасанлы Дж., СССР-Турция: от нейтралитета к холодной войне (1939-1953), Москва, 2008, с. 110.

թյան պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ, այն չեղյալ է հայտարարվում (դենոնսացիա):

Այսպիսով, Խորհրդային Միությունն ակտիվացնում էր իր քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ[1]: Դրա վկայությունն էր նաև այն, որ «1945 թ. ապրիլի 6-ին ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեն որոշում ընդունեց Անդրկովկասի ավտոմոբիլային ճանապարհները վերակառուցելու մասին, որը հեռու գնացող նպատակ էր հետապնդում և փաստորեն ռազմական նախապատրաստությունների սկիզբ էր»[2]:

1945 թ. մայիս-հունիսին տեղի ունեցած խորհրդա-թուրքական բանակցությունների ժամանակ խորհրդային կողմը թուրքերին ծանուցեց, որ պատրաստ է նոր պայմանագիր կնքելու Թուրքիայի հետ, եթե վերանայվի Բոսֆոր ու Դարդանել նեղուցների վերահսկողության վերաբերյալ Մոնտրոյի համաձայնագիրը և Թուրքիան Խորհրդային Միությանը վերադարձնի 1921 թ. մարտի 16-ի մոսկովյան պայմանագրով Թուրքիային զիջած տարածքները՝ Կարսը, Սուրմալուն, Արդահանը, Արդվինը: Համաձայնություն, սակայն, չկայացավ. թուրքական կողմը վճռականորեն մերժեց խորհրդային պահանջները: Այդ հարցում Թուրքիան ստացել էր Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի անթաքույց քաղաքական և ռազմական աջակցությունը. սկսվում էր սառը պատերազմի դարաշրջանը[3]:

Թուրքիային Խորհրդային Միության կողմից ներկայացված տարածքային պահանջները քննարկման առարկա դարձան նաև

---

[1] Մանրամասն տե՛ս Хачатрян К.Г., Армянский вопрос и репатриация армян в Советскую Армению в 1945-1949 гг., "Историческое пространство (Проблемы истории стран СНГ)", Москва, 2007, № 2, էջ 124-133:

[2] Տե՛ս Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. հասարակական-քաղաքական կյանքը (1945-1957 թթ.), Երևան, 2001, էջ 37:

[3] Մանրամասն տե՛ս Хачатрян К.Г., Армянский вопрос в сфере советско-турецкого противостояния в годы Второй мировой войны и на начальном этапе холодной войны. //Актуальные проблемы Второй мировой и Великой Отечественной войн /к 65-летию Великой Победы//, Минск, 2010, էջ 326-337:

Մեծ տերությունների ղեկավարների 1945 թ. հուլիսին տեղի ունեցած Պոտսդամի կոնֆերանսում: Սակայն պատերազմում ԽՍՀՄ-ի երբեմնի դաշնակիցները՝ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը, վճռականապես հանդես եկան Թուրքիային պաշտպանելու դիրքերից: Թուրքիայի նկատմամբ խորհրդային տարածքային պահանջները դիտարկելով «կոմունիզմի ծավալումը զսպելու» դիրքերից՝ ԱՄՆ և Մեծ Բրիտանիան չպաշտպանեցին Հայկական հարցում ԽՍՀՄ քաղաքականությունը: Պատմական տվյալ ժամանակաշրջանում խնդիրը ներքաշվեց ԽՍՀՄ-ի և Արևմուտքի առճակատման, սկսվող սառը պատերազմի գաղափարական, ռազմավարական և քաղաքական հակամարտության ոլորտը:

Այսպիսով, Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանը դիտվում էր որպես ռազմական գործողությունների հավանական թատերաբեմ, միաժամանակ՝ հուսալի պատնեշ թուրքական հնարավոր հարձակման դեպքում: Հայաստանը, նրա պաշտպանունակության, ռազմական պատրաստվածության, ռազմական արդյունաբերության ներուժի զարգացման խնդիրները կարևորվում էին խորհրդային ղեկավարության և բանակի հրամանատարության կողմից:

КАРЕН ХАЧАТРЯН
ИИ НАН РА

# СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В СФЕРЕ ВОЕННЫХ ПРИГОТОВЛЕНИЙ СССР В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

## РЕЗЮМЕ

В годы Второй мировой и Великой Отечественной войн являясь приграничной территорией СССР, а в контексте военно-политической международной ситуации послевоенных лет - и "холодной войны", Советская Армения занимала важное место в "военных приготовлениях СССР". В свою очередь - в сферу советско-турецкого, а в более широком понимании - в сферу противостояния между Советским Союзом и Западом, был вовлечен и Армянский вопрос. В данном контексте - вопрос возвращения Советской Армении территорий, отторгнутых Турции по Московскому и Карсскому договорах 1921 г.

Накануне Великой Отечественной войны Советский Союз рассматривал Турцию как потенциального противника и вынашивал определенные планы. Милитаризация Турции при весомой поддержке Англии и Франции не могла не беспокоить советское руководство. Оно приступило к наращиванию военного потенциала в Закавказье, с начала 1940 г. в Закавказский Военный округ стали перебрасываться авиационные части военных истребителей и бомбардировщиков, а также артиллерийские и танковые части из других военных округов страны. В основном эти силы перебрасывались в Советский Азербайджан, но доставалось также и Армении с Грузией. Отметим, что с началом Великой Отечественной войны многие промышленные предприятия Советской Армении были переоборудованы на военный лад и начали выпускать военную продукцию, в годы войны было освоено производство около 10 видов боеприпасов, в том числе корпусов

авиабомб, противотанковых, противопехотных мин и т.д.; 2 вида вооружений, в том числе некоторые виды ротных минометов; 6 видов средств связи т. д. На заводах республики ремонтировались танки, самолеты, другая военная техника.

Таким образом, являясь приграничной территорией СССР, Советская Армения в годы войны воспринималась как территория вероятных военных действий и, одновременно, как заслон против возможной турецкой агрессии. В этом контексте, вопросы обороноспособности Армении, наращивания ее военно-промышленного потенциала находились в центре постоянного внимания советского руководства и военного командования.

**KAREN KHACHATRYAN**
**IH NAS RA**

## SOVIET ARMENIA IN THE SPHERE OF SOVIET MILITARY PREPARATIONS DURING II WORLD WAR

### SUMMARY

During the World War II and the Great Patriotic War, being a border area of the Soviet Union, and in the context of military-political situation of the international post-war years and the "Cold War", Soviet Armenia had an important place in the "Soviet military preparations." The Armenian question had been involved in the sphere of the Soviet-Turkish, but in a broader sense, in the scope of the confrontation between the Soviet Union and the West. In this context - the return to Soviet Armenia of the territories annexed by Turkey by the Moscow and Kars Treaties in 1921.

On the eve of the Great Patriotic War the Soviet Union saw Turkey as a potential enemy and had certain plans on it. The militarization of Turkey by the weighty support of Britain and France

disturbed the Soviet leadership. It began to build up military potential in the Transcaucasia. Since the beginning of 1940 military aircraft parts of fighters and bombers, as well as artillery and tank units from other districts were transferred to the Transcaucasian Military District. In general, these forces were moved to Soviet Azerbaijan, but Armenia and Georgia also got some of it. Note that with the beginning of the World War II, many industrial enterprises of Soviet Armenia were reconstructed and began to produce military products. During the years of war there had been mastered about 10 types of ammunition, including shells of airbombs, antitank and antiinfantry mines, 2 types of weapons, including company mortars, 6 types of communications etc.

Thus, as a frontier territory of the USSR, during the war Soviet Armenia was perceived as an area of possible military actions and at the same time as a barrier against possible Turkish aggression. In this context, the issues of the defense of Armenia and increasing its military-industrial potential were at the focus of the constant attention of the Soviet leaders and military commanders.

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ
# СОКРАЩЕНИЯ

**ՀՀ ԳԱԱ ՊԻ** – Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտ
**ИИ НАН РА** – Институт истории Национальной академии наук Республики Армения
**IH NAS RA** – Institute of History of National Academy of Sciences of the Republic of Armenia

**ԵՊՀ** – Երևանի պետական համալսարան
**ЕГУ** – Ереванский государственный университет
**YSU** – Yerevan State University

**ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ** – ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
**ШЦАИ НАН РА** – Ширакский центр арменоведческих исследований НАН РА
**SCAR NAS RA** – Shirak Armenology Research Center of NAS RA

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**ԱԼԻՍԱ ԴՈՒՄԻԿՅԱՆ**
ՏԱՅՔԸ (ԴԱՅԱԵՆԻ/ ԴԻԱՈՒԽԻ) ՍԵՊԱԳԻՐ ԵՎ ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ........................3

**ԿԱՐԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ**
ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ........................22

**ՄԱՐԻԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
ՇԻՐԱԿԱՎԱՆԻ 862 Թ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ........................47

**РОМАНОВА МАРИЯ**
ВООРУЖЕНИЕ И ОБМУНДИРОВАНИЕ АРМЯНСКОГО КИЛИКИЙСКОГО ВОИНА (1073-1375 ГГ.) ........................64

**ԶՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ**
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1201-1337 ԹԹ.) ........................81

**ԱՐՄԵՆ ՎԻՐԱԲՅԱՆ**
ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑՈՒ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՄԲ........................108

**ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻԻ ԵՎ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ........................124

**ՄԱՄՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ........................134

**ՄԱՆՅԱ ՆԱԶԱՐՅԱՆ**
Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1863-1866 ԹԹ........................147

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ
ԼԵՌՆ՝ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄԱԲԱՆ....................................................................162

ԱՐԿԱԴԻ ԱԿՈՊՈՎ
ՕԼԹԻԻ ՕԿՐՈՒԳԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ
1878-1897 ԹԹ...............................................................................................179

ՆԱՐԻՆԵ ԵՐԱՆՈՍՅԱՆ
1894 - 1896 ԹԹ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
ԵԳԻՊՏՈՍԻ «ԱԼ-ՄՈՒՇԻՐ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ ..................................................192

ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ (1896-1900 ԹԹ)....................206

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
1885-1908 ԹԹ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԸ Ս. ՍԱՊԱՀ-ԳՅՈՒԼՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ.........................................223

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՄԻԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ...........237

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԽՍՀՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ....................................................................................255

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ...................................................................................................270

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ........................................................................................271

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
# (ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

# THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
# (A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

# ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
# (СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

**12**

Տեխնիկական խմբագիր՝ Գայանե Բոբոխյան
Տպագրիչ՝ Լևոն Մուրադյան

Հանձնվել է տպագրության 15.12.2011 թ.

Տպաքանակը՝ 200 օրինակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24 Գ